

Ա. Հ. ԲԱՆԴԱՍԱՐՅԱՆ - ԹԱՓԱԼՅՅԱՆ

ՄՇՈ
ԲԱՐԲԱՌԸ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА

№ 4 ДИАЛЕКТЫ АРМЯНСКОГО ЯЗЫКА № 4

С. А. БАГДАСАРЯН - ТАПАЛЦЯН

МУШСКИЙ ДИАЛЕКТ

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1958

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ
ԼԵԶԻԿՈՆՈՄԻԱ

4/47.925/
P-24

№ 4 ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐՔԱՌՆԵՐ № 4

Ս. Հ. ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ-ԹԱՓԱԼՑՅԱՆ

ՄՇՈ ԲԱՐՔԱՌԸ

1334 15709



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1958



Տպագրվում է Հայկական ՍՍՌ-ի տարբերակների ակադեմիայի
հմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

«Մշու էրդիբ մշուշ է,
Ուր հոգն ու ջուրն անուշ է,
Հարաք քամին օրրէ գիտ,
Զուր գ'ըրդի մէջ թաղէ գիտ»:
(ժողովրդական բանահյուսությունից)

Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

Մշո բարբառը եղել է մեր լեզվի մեծ բարբառներից մեկը:
Խոսվածքային որոշ տարբերություններով, այն տարածված էր
Վանա լճի հյուսիսային, արևմտյան և հարավ-արևմտյան սահ-
մաններում: Հյուսիսից նրա կիրառման սահմանը հասել էր մինչև
Ալաշկերտ, արևմուտքից՝ մինչև Բուլանըխ, իսկ հարավից՝ մին-
չև Բաղեշը ներառյալ:

Այս մեծ տերիտորիայի սահմաններում տարածված բար-
բառը չէր կարող ամենուրեք միատարր լինել: Նկատելի են խոս-
վածքային տարբերություններ Բաղեշի, Ալաշկերտի, Խլաթի, Խնու-
սի և բուն Մշո շրջանի բարբառի մեջ:

Մշո բարբառում հայերենի հ-ն հիմնականում մնում է ան-
փոփոխ, իսկ Խլաթում, Բաղեշում, Քիթլիսում, Արծկեում, ինչպես
և Ալաշկերտի որոշ գյուղերում (Մանկասար) հ-ի դիմաց կա *խ*
(խուրնիզ - խըրեղեն, խարսնիս, խաց): Խլաթում հանգիպում ենք
ու > ու, ա > ա, օ > օ նաև *գ > գ', ք > ք', կ > կ', օրինակ. գ'անցէք,*
կ'անրըրուգ, ջոն, գ'ըլուն, կ'անրանել, ք'ն և ալն. մինչդեռ բուն
Մշում և նրա շրջակայքում այդ հնչյունները իրենց արտասա-
նությամբ չեն տարբերվում հայերենից: Այսպիսի և նման այլ
տարբերություններ կան Մշո բարբառի այլ հատվածների խոս-
վածքներում:

11448

Այս ամենն ասում է, որ Մշո բարբառի ուսումնասիրութիւնը պետք է տեղայնացնել: Անհրաժեշտ է ալ Մշո բարբառի նկարագրութիւնը այն ձևով, ինչպես խոսվել է բուն Մուշ քաղաքում և նրա շրջաններում, Խլաթում, Մանգլիքաում, Քաղեշում, Խնուսում, Ալաշկերտում և այլն:

Իրանից հետո միայն որոշակի կդառնան Մշո բարբառի խոսվածքների նմանութիւններն ու տարբերութիւնները:

Այդ նկատառումով մենք Մշո բարբառը նկարագրում ենք այնպես, ինչպես նա խոսվում էր հիմնականում Մշո շրջանում, որն իհարկաւ, որոշ տարբերութիւններ ունի Մշո բարբառի այլ հատվածներից:

Չնայած հայ ժողովրդի զլխին պայթած՝ 1915 թվականի ողբերգութեանը, որից առժեց նաև Մշո բարբառով խոսող հայ հատվածը, այնուամենայնիվ, այժմ էլ Սովետական Հայաստանում, ինչպես և նրա սահմաններից դուրս Մշո բարբառով խոսողները բավական մեծ թիվ են կազմում:

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Որքան էլ մշակված ու հարուստ լինի արդի գրական լեզուն, այնուամենայնիվ, նրա բառարանը, ինչպես և ոճերի, դարձվածքների, հարադիրների, թեւավոր խոսքերի, ասացվածքների զանձարանը կարելի է հարստացնել բարբառներից. այդ հնարավոր կդառնա միայն այն ժամանակ, երբ լիակատար, բազմակողմանիորեն կուսումնասիրվին մեր լեզվի հարստութիւններից մեկը կազմող տերիտորիալ բոլոր բարբառները: Առանց դրան երբեք չի կարելի ավարտված համարել հայոց լեզվի ամբողջական ուսումնասիրութիւնը:

Մշո բարբառը, որպես հայոց լեզվի հարուստ բարբառներից մեկը, տարբեր ժամանակներում հանդիսացել է լեզվաբանների, բանասերների ուշադրութեան առարկան: Անցյալում թե առանձին հրատարակութիւններով և թե պարբերական մամուլում այդ բարբառին վերաբերող բազմաթիվ ու բազմազան նյութեր են հրատարակվել. դրանք ըստ բնույթի կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի՝ ա) տեսական-հետազոտական, բ) ժողովրդական-բանահյուսական: Համառոտակի նշենք ավելի կարևորները:

1869 թվականին խոշորագույն հայագետ Քերովբե Պատկանյանը հրատարակել է «Исследование о диалектах армянского языка» աշխատութիւնը, որի հավելվածում զետեղված է մի հատված՝ Մշո բարբառով: Նույն հետազոտողի գրչին է պատկանում 1875 թվականին լույս տեսած՝ «Материалы для изучения армянских наречий» երկու հատորից բաղկացած երկասիրութիւնը, որի երկրորդ հատորում հեղինակը ամփոփում է Մշո բարբառով հետաքրքրութիւն ներկայացնող նյութեր:

Բավական մեծ հավատով և վստահութեամբ խոսելով Նախիջևանի բարբառով նյութեր ընդգրկող առաջին հատորի մասին, Պատկանյանը շատ թերահավատ է երկրորդ հատորի նկատմամբ: Այդ մասին նա ասում է, թե դրանք հավաքել է պատահական աղբյուրներից, որոնցից նա նույնիսկ չի կարողացել եզրակացնել, թե որտեղ և ինչ խոսվածքներով են դրանք գրի առնված:

«Քանի որ տեքստերի մեջ ուշադրութիւն չի դարձված ուղ-

դադրութիւն միակերպութիւն վրա, հետեապես հնարավոր չէ ճշտորեն որոշել Մշո բարբառի հնչյունական հարաբերութիւնը գրաբարի հետ: Նույն բարբառը հանդիպում է տարբեր տեղերում, տարբեր ուղղագրութեամբ, այնպես որ դժուար է եզրակացնել նրա ճշգրիտ արտասանութիւնն ու օգտագործումը:— գրում է նա առաջարանում: Պատկանյանի հավաքած և հրատարակած նյութերի մասին գրեթե նույն կարծիքն է հայտնել Լեոն Մսերյանցը: «Этюды по армянской диалектологии» աշխատութեան առաջին մասի առաջարանում կարդում ենք.

«Այդ հրատարակութեան տեքստերը չեն բավարարում խիստ գիտական պահանջներին»:

Նույն հեղինակի մագիստրոսական դիսերտացիայի պաշտպանութեան ժամանակ արտասանված ճառի մեջ ասվում է.

«Երբ ես սկսեցի ուսումնասիրել այդ տեքստերը, ապա իսկույն զգացի նրանց ամբողջ աննպատակահարմարութիւնը լեզվաբանական նպատակների համար: Ի միջի այլոց նշենք, որ նրանք այդ նպատակը չեն էլ հետապնդել: Փոլկոբրիսաները շատ քիչ են ուշադրութիւն դարձրել լեզվի հնչյունական կազմի վրա և գրի են առել տեքստերը, հարմարեցնելով նոր, գրական հայերենի ուղղագրութեանը, այնպես որ բարբառի հնչյունական երևույթը մնացել է քողարկված»¹:

1874 թվականին հայ բանահյուսութեան շանսեր մշակ Գարեգին Սրվանձաթյանը Կ. Պոլսում հրատարակեց «Գրոց-բրոց» խորագիրը կրող գիրքը: Նույն հեղինակի գրչին են պատկանում «Մանանա» և «Համով-հոտով» աշխատութիւնները, որտեղ նմուշներ կան նաև Մշո և նրա շրջակայքի բանավոր գրականութիւնից:

Մշո բարբառով, նրա այլևայլ շրջանների, քաղաքների խոսվածքներով առակներ, առածներ, ասացվածքներ, հանելուկներ, շուտասկիւկներ, օրհնութիւններ, անեծքներ և այլ նյութեր են զետեղված «Էմինյան ազգագրական ժողովածուի» Բ, Դ, Ե, Զ, Ը հատորներում, «Ազգագրական հանդեսի» 1899, 1900, 1904, 1906, 1908, 1910 թթ. գրքերում, ինչպես և «Արծուի Վասպուրականի», «Արծելի Տարօնոյ», «Կոտնի», «Բիւրակին», «Մեղու Հայաստանի» և այլ ամսագրերում ու օրաթերթերում:

Սոսկելով Ս. Հայկունու «Էմինյան ազգագրական ժողովածուում» զետեղած նյութերի մասին, Հ. Աճառյանը գրել է. «Իժմախտաբար

ասոնք գիտական ուղղագրութեամբ չեն»¹: Թվում է, թե սխալված չենք լինի, և թե նշենք, որ մեծ հայագետի, ինչպես և նրա նախորդների՝ այս կամ այն բարբառային նյութերի գիտական ուղղագրութեանը վերաբերող գնահատականները, չնչին բացառութիւններով, հատկանշական են նյութերի գրեթե մեծ մասին:

Մշո բարբառի գիտական ուսումնասիրութեան գործում շնորհակալ աշխատանք է կատարել հայագետ Լեոն Մսերյանցը: 1897—1901 թվականներին նա հրատարակել է. «Этюды по армянской диалектологии» երկու մասից բաղկացած աշխատութիւնը, որը նվիրված է Մշո բարբառին: Մսերյանցի այս աշխատութիւնը ավել բարբառի առաջին ընդարձակ, արժեքավոր ուսումնասիրութիւնն է:

Բազմամասնակ հայագետ Հ. Աճառյանի բեղուն գրչին է պատկանում «Էմինյան ազգագրական ժողովածուի» Ը հատորը: Շուրջ 30 բարբառների համառոտ նկարագիրը և նմուշները տալու հետ մեկտեղ, նա կանգ է առնում նաև Մշո բարբառի վրա, որի մասին քերականական չափազանց արժեքավոր դիտողութիւններ է անում:

Ծանոթ լինելով Մշո բարբառի հետ առնչվող նյութերին, մենք ձգտել ենք միաժամանակ հավաքել ու գրի առնել նոր նյութեր և մեր դիտողութիւնները կատարել ենք հիմնականում այդ նյութերի հիման վրա: Դրանց սկզբնաղբրերները եղել են Մուշից գաղթած և այժմ սեպուրիկայի սահմաններում, ինչպես նաև նրա սահմաններից դուրս բնակվող բարբառախոս հայերը:

Սովիետական Հայաստանում Մշո բարբառով խոսող համեմատաբար շատ հայեր բնակվում են Թալինի շրջանի Յամաքասար, Ահազչի, Ջիթհանքով, Սուսեր, Կարմրաշեն, Մաստարա, Աշտարակի շրջանի Կոշ, Ագարակ, Ավան, Դարաշալար գյուղերում, ինչպես նաև Ալազղազի, Ապարանի, Ն. Բալաղետի, Բասարգեչարի, Արթիկի, Աղինի, Էջմիածնի, Ախուրյանի շրջանների մի շարք գյուղերում²: Հայկական ՍՍՌ սահմաններից դուրս մշեցիներ են բնակվում Վրացական ՍՍՌ Բոգդանովկայի շրջանի Հեշտիա, Թորիա, Ուշ-

¹ Հ. Աճառյան, Հայ բարբառագիտութիւն, ուրվագիծ և դասակարգութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտեզով) Էմինյան ազգագրական ժողովածու, հրատարակութեամբ Լազարյան ճեմարանի արևելյան լեզվաց, Մոսկվա—Նոր-Նախիջևան, ԹԶԿ, 1911, էջ 121:

² Մեր կողմից լրիվ թվարկված չեն Հայկական ՍՍՌ շրջանների այն հանրահայ գյուղերը, որոնք մանրամասն նշված են Հ. Աճառյանի և Ա. Դաբիրյանի բարբառագիտական աշխատութիւններում:

մանա, Փոկա, Դիլիֆ գյուղերում, Բաթումիում, Թբիլիսիում,
Սուչիում, Սուխումիում և այլ վայրերում:

Այսպիսով, պարզ է դառնում, որ Մշից գաղթած հայերը
հիմնականում բնակություն են հաստատել մեր սեպուղիկայի
լեռնային շրջաններում, և, որ չափազանց կարևոր է, գրեթե ա-
ռանձին գյուղերում:

Եթե Արարատյան դաշտի բնակավայրերում, գրեթե ամեն
մի գյուղում հանդիպում ենք տարբեր բարբառների ներկայա-
ցուցիչների, ապա վերոհիշյալ գրեթե բոլոր շրջաններում բնակ-
վում են գերակշռող մեծամասնությամբ մշեցիներ, իսկ որոշ
գյուղերում, բացի Մշո այս կամ այն գյուղի բնակիչներից, այլ
բարբառի ներկայացուցիչների չենք հանդիպում: Այս հանգա-
մանքը անշուշտ բարերար ազդեցություն է ունեցել բարբառի
համեմատաբար անազարտ պահպանման գործում:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՀՆԶՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՆՉՅՈՒՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

1. Մշո բարբառն ունի 45 հնչյուն, որոնցից 9 ձայնավոր՝
ա, ւ, է, ը, ի, ո, ու, օ

36 բաղաձայն՝

Ձայնեղ պայթականներ՝ բ, գ, դ, ձ, շ. ձայնեղ շնչեղ պայթականներ՝ բ', գ', դ', ձ', շ'. խուլ պայթականներ՝ պ, կ, տ, ժ, ճ. խուլ շնչեղ պայթականներ՝ փ, ք, թ, ց, չ. ձայնեղ շփականներ՝ վ, գ, ժ, դ, յ, (Յ). խուլ շփականներ՝ ֆ, ս, շ, խ, հ. ձայնորդներ՝ լ, մ, յ, ն, ո, ր.

Եվ 2 երկբարբառ՝ ալ, ուլ:

2. Մշո բարբառում միավանկ բառերում, ինչպես և բազմավանկ բառերի շեշտված վանկերում զգալի է մեր լեզվի ն, ո ձայնավորների իե, ուօ երկհնչյունային արտասանությունը: Այդ երկհնչյունների մեջ առաջին ձայնավորները ուժեղ շեշտված չեն: Պուսափելով լրացուցիչ նշանների գործածումից, երկհնչյունային արտասանություն ունեցող հնչյունները տառադարձում ենք այսպես՝ իե>ե և ուօ>ո: Միավանկ բառերի սկզբում, սակայն, ե-ի դիմաց կա յե, իսկ մի քանի բառերում ո-ի դիմաց՝ վո, որոնք կարտասանվեն յիե, վոօ:

3. Բացի ընդհանուր հայկական խուլ շփական թ' հնչյունից, Մշո բարբառում առկա է և թ ներասական բառ հնչյունը, որը փոխարինում է «այո» բառին և միայն այդ դեպքում է գործածվում: Այն հիշեցնում է խոռոց և զգալիորեն ավելի շփական է, քան ընդհանուր հայկական թ-ն:

4. Մշո բարբառն էլ, հայերենի մի քանի բարբառների նման, ունի քառաստիճան բաղաձայնական սիստեմ: Բացի ձայնեղներից, խուլներից և խուլ շնչեղներից, կան նաև ձայնեղ շնչեղներ, որոնք գտնվում են բացառապես բառասկզբին:

5. Մշո բարբառը ունի երկու և հնչյուն. խուլ՝ և և ձայնեղ՝ յ: Ձայնեղ և-ն հանդիպում է միայն ձայնավորով սկսվող բառերի սկզբում. ականջ>չանգաջ, աղբիւր>չախպուր, ամեն>չըմէն, արձակ>չարցաղ, ելանել>չէլնալ, երդումն>չէրթում, երեկոլ>չիրգուն, իմանալ>չիմնալ, իջանել>չիջնալ, իւրեար>չիրար, յիրուր: Սակայն ձայնավորով սկսվող բազմաթիւ բառեր բարբառում հանդես են գալիս առանց ալս ձայնեղ յ-ի. աղուէս>աղվէս, աղութ>աղրութ, աղջիկ>ախչիգ, եղունգ>էղունգ, երազ>էրազ, էրած, երեք>իրեք, երամ>էրամ, ընծալ>ընծա, ընծիւղ>ընծուղ, իմ>իմ, իմուն:

6. Հին հայերենի նման, Մշո բարբառում էլ չկան բ և ղ հնչյուններով սկսվող բառեր: Միակ բառը բուրիգ բառն է (ձայնարկութիւն է օրորոցալին երգերի համար), իսկ բոլոր բառը բարբառում ստացել է յըրօրէ ձևը:

2. ՀՆԶՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա.

7. Գրաբարի և ձայնավորի դիմաց Մշո բարբառը մեկ, երկու, ինչպես և ավելի վանկ ունեցող բառերի սկզբում ունի ա. աջ>աչ, աղ>աղ, աղբ>ախպ, աին>աի, ակն>ագ, ասող>ասող, ակօս>ագօս, ակնիւ>ագնիֆ, ալիւր>ալուր, ածելի>արծըլի, ատամն>ագամ, ատենահաս>ադէնահաս, աղքատութիւն>ախքըղութիւն, աղօթարան>աղօթրան, աւազակ>ավազագ, փամէշք>փամէչ, արիւն>արուն, ազգական>ասքագան:

8. Բառամիջում ա-ի դիմաց բարբառս և ունի մեկ և ավելի վանկ ունեցող բառերում. հաց>հաց, ցաւ>ցավ, համ>համ, խակ>խագ, խաղ>խաղ, կալ>կալ, կանթ>կանթ, մահ>մալ, մատն>մադ, ծանր>ծանդըր, անծանօթ>անծանօթ, արիւնաշաղախ>արնաշաղախ, աւազան>ավազան, բարեկամ>բարէգամ, բարեկենդան>բարէկէնթան, դաւաճան>դավաջան, կարկուտ>կարդուդ, հաւատ>հավադ, պաշտպան>պաշպան:

9. Բազմավանկ ալն բառերի մեջ, որտեղ ա-ն գործածված է երկու կամ ավելի անգամ, միջին վանկում սղված է կամ նրա դիմաց առկա է ը հնչյունը: Օրինակները շատ են, բերում ենք հետևյալները. ագանելի>հաքնելիք, ամաչել>ամչընալ, ամաչկոտ>ամչըգող, ամբարել>ամբըրել, անալանալ>ալնընալ, աշակերտ>աշկերդ, ապարանջան>աբըրջան, առաջեալ>չառչէվ, արածել>արձալ, արիւնաթաթախ>արընթըթախ, արտասուք>արտըսունք, աւետարան>ավէդրան, բաղանիք>բաղնիք, բաղնիս, բանալի>բանիք, բանիս, զարդարել>զարթըրել, թաթախել>թանթխել,

խարագան > խարզան, խարակել > խարզել, կատողել > կաղղել, հարսանիք > հարսնիք, հարսնիս, հաւանել > հաղնել, ճախարակ > ճախարագ, ճանապարհ > ճամբախ, ճամփա, մակարդել > մագրթել, մատանէ > մաղնիք, մարգարիտ > մարքըրիդ, մեղադրել > մէկտըրել, պարտակել > պարղըգել, պակասութիւն > պազասութիւն, տապակել > տարգել, պատանել > պաղոնել, փաթաթել > փաթթել, պալծառութիւն > պօձոռութիւն, պալծառանալ > պօձըռնալ, ջրաղացապան > ջ'ախչըրան, սատակել > սաղգել, քառասուն, > քառասուն, քարաման > քարման, կաւառն > կալոռ, համարել > համբրել:

Այս երևույթը բացատրվում է նրանով, որ բարբառը, բացի բառավերջի հիմնական, ուժեղ շեշտից, մի թույլ շեշտ ունի նաև բառակզրում:

Ծ ա ն ո թ ու թ լ յ ու ն . — Վերոհիշյալ երևույթից բացառութիւն է կազմում սրղանա բառը, որտեղ, ինչպես երևում է, երկրորդ ա-ն պահպանվում է, սղվում է առաջին վանկի ա-ն. սատանալ > սրղանա:

10. Միջին վանկի ա ձայնավորի սղման օրինքը, սակայն, բացարձակ է: Բարբառում մեծ լծիվ են կազմում այնպիսի բառերը, որոնց մեջ ա-ն մի քանի անգամ կրկնված է, բայց և այնպես միջին վանկում այն մնում է անփոփոխ: Այդ բառերը մեծ մասամբ գրաբարից, ժամանակակից գրական հայերենից անցած և օտար լեզուներից փոխ առած բառեր են. այսպես, աղակական > ասքազան, ամբարտաւան > ամբարդավան, անդամալոյծ > անթամալուծ, անխշատակ > անհիշագազ, աստուածապաշտ > աստվածապաշտ, գաղափար > գ'աղափար, գաւաղան > գ'ալաղան, բալասան > բ'ալասան, աշկարալ > աշկարա, աղաչանք > աղաչանք, աղատութիւն > աղաղութիւն, անարժան > անարժան, աշխատանք > աշխաղանք, գերդաստան > գ'երդաստան, հանգամանք > հանգամանք¹, աստուածածին > աստվածածին, ասպարածին, ասվածածին:

11. Ա ձայնավորի դիմաց, առանց բացառութիւն ը կա միևնույն արմատի կրկնութիւմբ կազմված բառերի երկրորդ բաղադրիչում. չարչարել > չարչըրել, չարչարանք > չարչըրանք:

¹ Գործ է ածված միայն «հալ ու հանգամանք» հարադրութիւն մեջ: Երբ մի բան է պատմվում, բացատրվում եղելութիւնը մանրամասնորեն, պատմողը վերջում ավելացնում է «հալ ու հանգամանք ըզի էր»:

12. Ան ժխտական նախածանցի ա ձայնավորը բոլոր դեպքերում էլ մնում է անփոփոխ, որովհետև այդ մասնիկի անկախութիւնը բարբառում զիտակցվում է. անոսկր > անօսկոր, անպատիւ > անպաղիվ, անպատուութիւն > անպաղվութիւն, անտեր > անտէր, անփայտ > անփէդ, անօգուտ > անօքուդ, անօրէնութիւն > անօրէնութիւն, անամօթ > անամօթ:

13. Ան նախածանցով սկսվող անկողին բառի մեջ ան-ը ամբողջովին ընկել է, որի հետևանքով բառը Մշո բարբառում, ինչպես և հայոց լեզվի մի շարք բարբառներում, հանդես է գալիս զօղիք ձևով:

14. Բառամիջում ա-ն ընկել է ան ածանց ունեցող բալերի մեջ, երբեմն էլ ալդ ա-ի դիմաց բարբառս ունի ը. անկանել > չընգնալ, անիծանել > անիծել, արթնանալ > զարթնել, բուսանել > բ'ուսնալ, գտանել > գ'ըղնալ, գոլանալ > գ'օլնալ, գողանալ > գ'օղնալ, դժուարանալ > դժարնալ, դիզանել > դիզել, կլանել > յէլնալ, կղանել > էղնալ, զարկանել > զարգել, թուլանալ > թուլնալ, պաղանել > պաքել, թանձրանալ > թանձըրնալ, թիթեանալ > թէթվընալ, թուլանալ > թուլնալ, թքանել > թըքնալ, իմանալ > յիմնալ, իշանել > յիշնալ, լաւանալ > լավնալ, լուսանալ > լուսնալ, խփանել > խրփել, ծանրանալ > ծանդըրնալ, ծառանալ > ծառնալ, ծարաւանալ > ծարվընալ, ծնանել > ծընել, կծանել > կըծել, հասանել > հասնել, հեծանել > հէձնալ:

15. Անց վերջածանցի դիմաց բարբառս ունի նոց' ա-ի անկմամբ. մեկանոց > մէգնոց, տասանոց > տանոց, հնգանոց > հընգնոց և այլն:

16. Բառամիջում ա ձայնավորը ընկել է նաև արար, արան վերջածանցների մեջ. աղօթարան > աղօթրան, լուսարար > լուսրար, ձևարար > ձէվրար:

17. Մշո բարբառում, թեև ոչ ուժեղ, բայց և այնպես նկատվում է ա ձայնավորի քմայնացում՝ հիմնականում փոխառյալ բառերում: Մածու «խելք, ուղեղ», մայթ «դիակ», մագար «արդյոք, միթե», մարտչալէ «կիկլոպ», բալաքա «չալ» և այլն:

18. Ա ձայնավորը Մշո բարբառում կնթարկվում է մի քանի մասնակի փոփոխութիւնների:

Բարբառում առկա են բառեր, որոնց մեջ գրաբարւան բառակցրի կամ բառամիջի ա ձայնավորի դիմաց կան ալլ հնչյուններ.

ա) Աղա բառը Մշո բարբառում ջնջված է, նրա դիմաց կա կիսա բառակեր:

1334 4444 1526



բ) Ամեն բարբառում ստացել է յըմէն ձևը և կիրառվում է սովորական խոսակցութեան մեջ՝ ամեն, բոլորը իմաստով, օր. թըթու է թան չէ, յըմէն մարթու բան չէ, իսկ ամենը ստացել է ամմէն ձևը և զործ է ածվում միմիայն կրօնական իմաստով:

գ) Ա-ի զիմաց բառակցում և բառամիջում բարբառս ըունի մի քանի բառերում. աժել > ըժել, աժէ > ըժէ, անդէն > ընդէն, անցաւոր > յընցվոր, անցուցանել > յընցուցել, ապա > յըբա, ասել > ըսել, արօր > յըրօր, արջ > յըրջ, անկանել > յընգնալ, ամէն > յըմէն, նախ > նըռիս, քան > քընց, քանի > քընի:

դ) Ա-ի զիմաց՝ Է. զարմանալի > զարմանէլի, ռահան > ռէհան, նեղանալ > նէղէնալ, անդառնալի > անդառնէլի, ժախ > ժէխ, աղաւնակ > էղվընեղ, քերական > քէրէզան¹, աղին > էղին, աւելի > յէվէլի:

ե) Ա-ի զիմաց՝ օ. թառամել > թոմել, գաղաուկ > գօխուուգ, կաղկանձել > կօղզընձալ, կաշկառ > կօշկօռ թբուդձ, կոշտ, կաշկառել > կօշկըռել, յօրանջել, յօրանջկատել > օրօջըղալ:

զ) Ա-ի զիմաց՝ Ե. պառակ > պառեղ, կանախի > կանեփ, առաջ > յառեչ, ծիծեռնակ > ծիծըռնեղ, հարկաշ > հարքեշ, փայծաղ > փաձել:

է) Ա է ավելացել. քարջիկ > քարաջիգ բառում:

ՇԵՇՏԻՅ ԿԱՆՎԱԾ ՀՆՁՅՈՒՆ ԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

19. Մշո բարբառում, ինչպես նշեցինք, կարևոր հնչյունափոխական գործոն է շեշտը, որից, շատ հաճախ, կախված է ձայնավորների որակը: Եթե շեշտազուրկ ձայնավորները ընդհանրապես չեն հնչյունափոխվում, ապա շեշտ կրող վանկերի ձայնավորները բառի ձևաբանական, բառակազմական փոփոխությունների հետեւանքով սղվում են, վերածվում ը-ի կամ՝ մի այլ ձայնավորի: Մշո բարբառի՝ գրաբարի հետ համեմատած, հնչյունափոխությունը տալուց բացի, նպատակահարմար ենք համարում կանգ առնել նաև իրեն՝ բարբառին հատուկ՝ շեշտից կախված հնչյունափոխություն վրա: Այս և հետագա, նման վերնագիր ունեցող հատվածներում տալիս ենք, թե բարբառի այս կամ այն հնչյունը ինչ է դառնում բառի ձևաբանական բառակազմական փոփոխությունների հետեւանքով:

¹ Բարբառում այն գործ է ածվում՝ շփու քէրէզան ուհու չըխարթըցվի՝ արտահայտության մեջ, որը նշանակում է շատ անհասկանալի, բարդ, անմատչելի:

20. Մշո բարբառում հոգնակի կազմելու, հօլովման, ինչպես և բարդման ու ածանցման ժամանակ մեկ, մեկիկես վանկանի բառերի և ձայնավորը մնում է անփոփոխ, այսպես.

բախտ	բախտեր	բախտի	բախտավոր,
հաց	հացեր	հացի	հացատուն,
բահ	բահեր	բահի	բահակոթ,
շաղ	շաղեր	շաղի	շաղութեն,
մաղ	մաղներ	մաղի	մաղնաշունչ,
տաք	տաքեր	տաքի	տաքութեն,
կալ	կալեր	կալան	կալատաղ,
գաս	«ազգակից, գասեր	գասան	գասազան,
	ազգական		
թագ	«ցորեն ձե- թագեր	թագան	թագածեծ,
	ձելու գործիք»		
թամք	թամքեր	թամքի	թամքավոր,
մանդըր	մանդըրներ	մանդըրի	մանդըրութեն,
ծանդըր	ծանդըրներ	ծանդըրի	ծանդըրութեն:

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ու ն. — Այս օրենքից բացառություն են կազմում հետևյալ միավանկ բառերը, որտեղ և ձայնավորը, նշված բոլոր դեպքերում դառնում է ը. տաս — տըսնոց — տըսվերգուս, տազ — տըզեր — տըզեվանց, ծագ — ծըզեր — ծըզու — ծըզերով — ծըզան, ճաք — ճըքեր — ճըքերու — ճըքիսխտ, բաց — կիսբըցել:

21. Երկվանկ բառերի շեշտված և ձայնավորը, բառի ձևաբանական, բառակազմական փոփոխությունների հետևանքով շեշտավորույս լինելով, հնչյունափոխվում է, սղվում կամ վերածվում ը ձայնավորի (մեծ մասամբ տեղի է տննում վերջին երևույթը), այսպես.

ա) Բառի հոգնակին կազմելիս՝ շախաթ — շախթըներ, շալագ — շալզըներ, քաղաք — քախքըներ, շարան — շարներ, կարաս — կարսըներ, գաքաթ — գաքթըներ, օխչար — օխչըրներ, կորնդան — կորընդներ, տալար — տալըրներ, ջաղաչ — ջախչըներ, տախտաղ — տախտըզներ, պառավ — պառվըրներ, պաղանք — պաղընքներ, էրգաթ — էրզըթներ, մըշաղ — մըշզըներ, առազ — առզըներ:

բ) Բառը հոլովելիս՝ դանազ — դանգի, հիվանդ — հիվընդի, յանգաջ — յանգըջի, ձէրմազ — ձէրմըզի, ախշար — ախշըրի, գաքաթ — գաքթի, կաքավ — կաքվու, մըշագ — մըշկու, բէրան — բէրնի, ազրադ — ազըրդի, աչառ — աչոռ, դ'արման — դարմընու, պառավ — պառվու, մըզրադ — մըզըրդի, ճագագ — ճագգու, կոշագ — կոշգի, էրագ — էրգի, բագար — բագրի, տափան — տափնի, ադուավ — ազուվու, արբանք — արբընքի, արմազ — արմըզի:

գ) Բառաբարդման և բառակազմութեան ժամանակ՝ սիվդագ — սիվդագութեն — սիվդագհադ, ախքադ — ախքըդութեն — ախքըդնալ, կարգըդան — կարգըդնել — կարգըդնուգ, դարգագ — դարգըգութեն — դարգըգող, դ'անգագ — դ'անգըգել — դ'անգըգվոր, բանշար — բանշըրվոր — բանշըրհան, բէրան — բէրընիոխ — բէրընկալ, պառավ — պառվութեն — պառվընագ, ջաղաչ — ջախշըբան — ջախշըվոր, յանգաջ — յանգըջմըդից — յանգըջցավ, էրագթ — էրգըթէդէն, արծաթ — արծըթէդէն:

Ծ ա ն ո թ ու թ յ ու լ ն . — Բացառութիւն են կազմում մի քանի բառեր, որտեղ հնչյունական նույն դիրքում շեշտավոր ա՛ն պահպանվում է. ազագ — ազագութեն — ազագիչ, պըսագ — պըսագուգ — պըսագող, խըլավ «գեր» — խըլավութեն — խըլավալ, խըզար «մեծ սղոց» — խըզարուգ — խըզարող, անըսքամ — անըսքամութեն — անըսքամնագ, լալգան — լալգանութեն և այլն: Այսպես է և խըռընդառ (դաշտալին, դորշ-կանաչավուն, դուրափառ բույս է, գլուղերում գործ են անում բոնկման, կրակը վառելու համար) բառը, որտեղ ևս շեշտի տակ ա ձայնավորը չի սղվում. այս դեպքում այդ տեղի է ունենում բարեհնչյունութիւնը պահպանելու նպատակով, «խըռընդըդ» բառածեր անբարեհնչյուն է:

22. Ա ձայնավորը Մշո բարբառում վերոհիշյալ բոլոր դեպքերում անփոփոխ է մնում բազմավանկ բառերի շեշտադուրկ վանկերում, օրինակ՝ աղաչանք — աղաչանքի — աղաչանքներ — աղաչել, անարթար — անարթարի — անարթարնալ — անարթարութեն, աղօթրան — աղօթրանախառ, աչօղագ — աչօղագի — աչօղագութեն, անառագ — անառագի — անառագնակ — անառագութեն, անարադ — անարադի — անարադութեն, հիշագագ — հիշագագի, ախշագանք — ախշագանքի — ախշագող, արաշխարանք — արաշխարանքի, արառած — արառածի — արառածութեն, «անխղճութիւն, դաժանու-

թիւն» — արառածնագ «դաժանարար, անխղճարար», ավագագ — ավագագութեն — ավագագնալ, ավէրագ — ավէրագի, գ'ախտագան — գ'ախտագընի — գ'ախտագնութեն, դագաստան — դագաստընի, ախպէրասպան — ախպէրասպանի — ախպէրասպանութեն, էրագանան — էրագանանի — էրագանանութեն, ժամհար — ժամհըրի — ժամհըրութեն, խաղառագ — խաղառագի — խաղառագութեն, կըզավագ — կըզավագի — կըզավգընի:

23. Բառավերջի ա ձայնավորը, որն արդյունք է այ երկրորբառի պարզեցման, բոլոր դեպքերում սղվում է. էրէխա — էրէխու — էրէխութեն, փէսա — փէսի — փէսութեն, արէղա — արէղի — արեղութեն, ազոա — ազոի — ազոիցավ, ամիրա — ամիրի — ամիրութեն, բագլա — բագլի, գ'ուլրա — գ'ուլրի, նօրընձա — նօրընձի — նօրընձութեն, խափէփա — խափէփութեն, ձ'ըմա «ծմակ» — ձ'ըմի, կըթխա — կըթխի, քաանա — քաանի — քաանութեն, տըղա — տղի — տըղութեն, սըզանա — սըզանի — սըզանութեն:

Ե

24. Գրաբարյան և հնչյունի դիմաց Մշո բարբառում, միավանկ բառերի սկզբում կա յն. ևզն > լեզ, ևլ > լել, ևո > լնո, ևս > լնս, ևբ > լնի, ևբգ > լնբ, ևա > լնգ:

Ծ ա ն ո թ ու թ յ ու լ ն . — Բացառութիւն է կազմում միավանկ երկ բառը, որտեղ և-ի դիմաց կա Է — յէրթիկ:

55. Մեկից ավելի վանկ ունեցող բառերում բառասկզբում և հնչյունին համապատասխանում է Է. ևլակ > էլագ, ևկաւոր > էզվոր, ևկեղեցի > էգէգէցի, ևզան > էզան, ևզելութիւն > էզէլութեն, ևոալ > էոալ, ևրակ > էրագ, ևրամ > էրամ, ևրանի > էրնէզ, ևրես > էրես, ևրերալ > էրէրալ, ևրեկի > էրէվէի, ևրեսուն > էրսուն, ևրէց > էրէց, ևրինջ > էրինջ, ևրկաթ > էրգաթ, ևրկաթեղէն > էրգըթէդէն, ևրկա > էրգու:

26. Գրաբարյան և-ի դիմաց բարբառու Է ունի բազմավանկ բառերի անշեշտ վանկերում. ատեհանա > ազէնանա, արծաթեղէն > արծըթէդէն, գերան > գ'էրան, գերանդի > գ'էրընդի, գերաստան > գ'էրաստան, գերի > գ'էրի, գերեզման > գ'էրէզման, բերան > բէրան, ծեփուկ > ծէփուկ, կեզձավոր > կէդձավոր, կերակուր > կէրագուր սկեսուր > կիսուր, լնու > լնու:

27. Գրաբարի և-ին Մշո բարբառում համապատասխանում է և. ա) բոլոր միավանկ բառերի մեջ. բեմ > բեմ, խելք > խելք, մեք >

մենք, թեկ > թեկ, կեր > կեր, կեմ > կեմ, կեղտ > կեխտ, թեղ > թեղ, թեա > թեա «մեծ ջվալ», թեր > թեր, թեփ > թեփ:

բ) Երկվանկ և բազմավանկ այն բոլոր բառերում, որտեղ ե-ն գտնվում է վերջին վանկում. անթեղ > անթեղ, այնտեղ > ինտտեխ, անմեա > անմեա:

գ) Բայերի ել լծորդության մեջ. խափանել > խափանել, գրել > գ'ըրել, ուտել > ուղել, խմել > խըմել, կարգել > կարքել, «ամուսնացնել», կարել > կարել, կեղևել > կըջքել, քեղբել, կըլբել, հագնել > հաքնել, համբերել > համփերել, հասանել > հասանել, մեկնել > մէգնել «միանալ, ձգել, պարզել», լսանել > հարել, նեղասրտել > նէղսրդել:

28. Բացի վերոհիշյալներից, ե-ն հնթարկվում է մի քանի մասնակի հնչյունափոխությունների.

ա) ե-ի դիմաց ի կա. եմ > իմ, ես > իս, երեկոյ > յերգուն, երեք > իրեք, աւերել > աւիրել, երեցակին > իրեցիկին, աւելուկ > ավիլուկ, ծներեկ > ծընէփիկ, մենակ > մինակ:

բ) ե-ի դիմաց ը կա. եղունգ > ըղունգ, ամելի > արձըլի, զեպի > գ'ըբա, սեղմել > սըլմել, լեշի, լեաշի > լըշի, գերփել > գ'ըրփել:

Այս երևույթը առանձնապես ուժեղ է գերանունների, կապերի և օժանդակ բայի ժխտական ձևերի մեջ. մեղէն > մըղնէ, քեղէն > քըղնէ, ձեղէն > ձ'ըղնէ, քեղ > քըղի, մեղ > մըղի, ձեղ > ձըղի, ձեր > ձ'ըր, մեր > մըր, վեր > վըր, դեռ > դըր, չեմ > չըմ, չես > չըս, չեն > չըն, չեք > չըք, վեր > վըր:

գ) ե-ի դիմաց ա կա. եղբայր > ախպեր, եղբայրասպան > ախպէրասպան:

դ) ե-ն սղվել է հայելի > հալլի բառում:

ե) ե-ի դիմաց օ կա լեղակ > լողագ բառում:

զ) ե-ն դուրս է ընկել՝ աւելել > աւլել, եղունգ > ըղունգ:

ՇԵՇՏԻՅ ԿԱԽՎԱԾ ՀՆՁՅՈՒՆԱՓՈՒՅՈՒԹՅՈՒՆ

Ե (Ի:Է)

29. Մշո բարբառում ե-ն, ինչպես տեսանք, հնչում է իլէ: Այս ե-ն բառի ձևաբանական-բառակազմական փոփոխությունների ընթացքում կրում է մի շարք փոփոխություններ:

30. Բառակազմում, այն մի քանի բառերում, ուր նա կա, բառի աճման ժամանակ սղվում է, որի դիմաց ունենում ենք ե-

լեզ — էզներ — էզան — էզարած — էզանլեզու, լեռ — էռալ — էոցուցել, լել — յէլնալ — յէլուգ, սակայն, երբեմն էլ մնում է նույնությամբ:

31. Միավանկ բառերի ե-ն շեշտը կորցնելով դառնում է ե, ը, ի կամ բոլորովին սղվում. ցեց — ցէցեր — ցէցոց — ցէցկէրուգ, ճեղ — ճիղվան — ճիղու — ճիղվանու, ձ'ըմես — ձ'ըմըվա — ձ'ըմընոց, կեր — կէրուգ — կէրկոխ «շատ ուտելուց հիվանդացած», բեմ — բէման — բէմէրու, ծեծ — ծէծուգ — ծէծել, խելք — խէլաց — խէլոք — խէլքով, թեվ — թէվէրու — թէվաց — թէվխաղ, թեղ — թէղան — թէղէրու — թէղուգ, թել — թէլեր — թէլուգ — թէլքաշ:

32. Բազմավանկ բառերում ես շեշտված վանկերում այն կրում է նույն փոփոխությունները. յընգեր — յընգէրոջ — յընգէրովի — յընգէրներ, բօրօղել — բօրօղուգ, սախ — սաքններ — սախի — սախով, անթեղ — անթըղի — անթըղներ — անթըղել:

Է

33. Մեր լեզվի ե ձայնավորի դիմաց Մշո բարբառում բառակազմում ե կա էգ > էք, էշ > էշ բառերում:

34. Է-ի դիմաց բառամիջում ե կա հետևյալ միավանկ բառերում. գէշ > գ'էշ, խէժ > խէժ, պէտ > պէտք, շէն > շէն, դէզ > դէզ, սէր > սէր, տէր > տէր, քէն > քէն, մէջ > մեջ (նաև մըջ), մէջք > մէջք, ձէթ > ձ'էթ, կէս > կէս, գէտ > գ'էդ, գէմ > գէմ, գէն > գէնք, շէկ > շէկ, վէճ > վէջ, վէզ > վէզ, մէկ > մէկ, խէթ > խէթ, պէս > պէս:

35. Բառամիջում հայերենի ե ձայնավորի դիմաց ե կա նաև մեկ և կես, ինչպես և բազմավանկ բառերի շեշտված վանկերում. անգէտ > անգէդ, անէծք > անէծք, աղուէս > աղվէս, շըրէշ, շըրէժ > շըրէշ, բզէզ > բըբզէզ, (նաև զըբզէզ) ապավէն > արավէն, անօրէն > անօրէն, ամմէն > յըմմէն, անօրէն > տընօրէն, բարեկամասէր > բարեկամասէր, ափամէջք > ափամէջ:

36. Հին հայերենի եղեմ վերջածանցի ե-ի դիմաց Մշո բարբառը բոլոր դեպքերում ունի ե. ոսկեղէն > օսկեղէն, մսեղէն > մըսէղէն, չամիչեղէն > չամչէղէն, փայտեղէն > փէղէղէն, մազեղէն > մազէղէն, հրեղէն > հըրէղէն, հողեղէն > հողէղէն, խտեղէն > խօղէղէն, երկաթեղէն > էրգըթէղէն:

37. Հին հայերենի բառավերջի բաց վանկի ե-ին Մշո բարբառում համապատասխանում է ե-ն. չէ > չէ, բոպէ > յըբբէ, մարգարէ > մարքարէ, թէ > թէ:

38. Միավանկ բառերի բառասկզբի և ձայնավորը, բառի անման հետևանքով շեշտակորույս լինելով՝ գառնում է ի. էշ — իշվան — իշու — իշութեն, էձ — իձվան — իձու — իձութեն:

Մյուս միավանկ բառի և ձայնավորը նման գեպքերում մընում է անփոփոխ. էք — էքեր — էքի — էքութեն:

39. Երկու և ավելի վանկ ունեցող բառերի սկզբի և-ն բոլոր գեպքերում մնում է անփոփոխ. էրգիր — էրգրի — էրգրեր — էրգրներ, էրէխա — էրէխէք — էրէխէստան — էրէխու — էրէխութեն, էրազ — էրզրներ — էրզի — էրազահան, էզվոր — էզվորներ — էզվորի, էղէլութեն — էղէլութենի — էղէլութեններ, էրազահան — էրազահանի — էրազահաններ, էրինջ — էրընջներ — էրընջու — էրընջնագ, էգէղէցի — էգէղէցիներ — էգէղէցու, էրգաթ — էրզըթներ — էրզըթի — էրզըթէղէն:

Ծ ա ն ո թ ու թ լ ու ն. — Բացառութիւն է կազմում էրեց բառի սկզբի և-ն, որը հնչյունափոխվելով գառնում է ի. իրիցու — իրիցիլներ:

40. Բառամիջի շեշտագուրի և ձայնավորը երկու և բազմավանկ բառերի մեջ, բառը ձևաբանական, բառակազմական փոփոխութիւնների ենթարկելիս, մնում է անփոփոխ. բէրան — բէրներ — բէրնի — բէրընփոխ, գէրան — գէրներ — գէրնի, սէրան — սէրներ — սէրնի, վէրան «ավերակ» — վէրներ — վէրնի, թէթըվ — թէթվի — թէթվընալ — թէթվութեն, քէնի — քէնիք — քէնու — քէնութեն — քէնէստան, քէռի — քէռիք — քէռէստան — քէռու, ծընէփիզ «շափազանց ամուր կիսած ձու» — ծընէփրզներ — ծընէփրզի, քէրիչ — քէրըններ — տաշտաքէրիչ, լէզու — լէզվրներ — լէզվանից, բարէկամ — բարէկամներ — բարէկամի — բարէկամութեն, ավէղրան — ավէղրըններ — ավէղրընի — ավէղրանատուն:

41. Երկու և ավելի վանկ ունեցող բառերի շեշտավոր և հընչյունը Մշո բարբառում, ձևաբանական, բառակազմական փոփոխութիւնների հետևանքով կորցնելով շեշտը, հնչյունափոխվում է ի-ի կամ սղվում. տընօրէն — տընօրնի — տընօրնութեն, ափամէշ — ափամիշու, արավէն — արավիներ — արավիներութեն, անէցք — անիձել — անիձուգ, յըմէն — յըմնուց, ազվէս — ազվըսու — ազվըսներ — ազվըսութեն, յէրզէնք — յէրզընքի — յէրզընցուցի — յէրզընութեն, ցօրէն — ցօրներ — ցօրնի — ցօրնուգ, մըռչէմ — մըռչըմներ — մըռչըմի և ալլն:

42. Միավանկ բառերում և-ն շեշտը կորցնելիս հնչյուն-

նափոխվում է ի-ի, ևթե այն կա գրաբարյան և-ի զիմաց և մնում է անփոփոխ, ևթե այն երկրարտոնների պարզեցման արդյունք է. ալսպես. տէր — տիրվըգանք — տիրող — տիրութեն, կէս — կիսու — կիսել — կիսար, ձէթ — ձիթի — ձիթել — ձիթիաց «ձիթհանք», շէն — շինել — շինութեն, գէդ — գիդու, գէդ — զիդուգ — զիդրան — զիդու, զէմ — զիմու — զիմել «ուղղել», խէթ — խիթել (նաև խէթել), խէթ — խիթախառ, մէշք — միշաց, սէր — սիրուգ — սիրել — սիրողութեն. բայց գէդ — գէդեր — գէդրան — գէդրանու — գէդագան, սէլ — սէլեր — սէլերու — սէլվոր, փէդ — փէդեր — փէդերու — փէդավոր, սէվ — սէվեր — սէվալ — սէվութեն, ժէո — ժէոի — ժէոդ և ալլն:

43. Բացառութիւն են կազմում գ'ել — գ'իլվան — գ'իլութեն — գ'իլներ — գ'իլնագ, ձ'են — ձ'ինից — ձ'ինով միավանկ բառերը, որտեղ թեև և-ն կա երկրարտոնի զիմաց, բայց հնչյունափոխվում է:

Ծ ա ն ո թ ու թ լ ու ն. — Փեղ բառի և-ն անփոփոխ մնալով բառի հոլովման և հոգնակի կազմելու ժամանակ, հընչյունափոխվում է ի-ի բառարարգվելիս՝ փէդ — փէդի — փէդեր, բայց փիզնալ «սասկել»:

44. Բառավերջի բաց վանկի և-ն Մշո բարբառում, բոլոր գեպքերում մնում է անփոփոխ. յըրօթէ — յըրօթէներ — յըրօթէլա, մարքարէ — մարքարէք — մարքարէութեն — մարքարէնագ և ալլն:

Ը

45. Հին հայերենի ը ձայնավորին Մշո բարբառում, բառասկզբում համապատասխանում է ը, որը բոլոր գեպքերում մնում է անփոփոխ. ընդունել > ընթունել, ընծալ > ընծա, ընկեր > յընգեր, ընծիզ > ընծուզ, ընտիր > յընգիր, ընտրել > յընդրել:

46. Բառամիջում սովորաբար մնում է ը՝ անօսը > նօսըր, բնաւորութեն, բնութիւն > բնութք, բնատեղ > բնատեխ, բընաւոր > բընավոր, բըրգգնալ > բըրթգ՝ ըգնուգ, բըրգգէն > բըրթէղէն, բրինձ > բըրինձ, բրուտ > բըրուդ, գլխաւոր > գ՝ ըլխավոր «ամուսին», զլուխ > գ՝ ըլօխ, գրախտ > զըրախտ, գրանդ, գրանդի > զըրընդի, գրացի > զըրացի, զմտաւ ածել > մըղաձել՝ զմբուխտ > զմբութ, զննել > զըննել, խնամի > խընամի, կծիկ > կըձիգ, կծու > կըձու, կցել >

¹ Գրական լեզվից փոխառված այս բառի զիմաց բարբառու ունի նաև մեզի բառը, որը ավելի շատ է զործածական:

կըցել¹, հնար>հրնարք, հնձել>հրնձել, ջնջել>ջրնջել, թանձր>թանձրր, ծանր>ծանդրր, մանր>մանդրր, ձմէրուկ>ձ'ըմէրուգ, մրել>մըրել, մտանել>մըգնալ, մտամուր>մըգամուր, կրակ>կըրագ:

47. Բառասկզբում սպ, սկ, ստ հնչյունափոխութիւններից առաջ ը-ին համապատասխանում է ը. սկսանել>ըսկսել, ստանալ>ըստանալ, ստեղծանել>ըստեղծանել, ստերջ>ըստերջ, սպանանել>ըսպանանել, սպասել>ըսպասել:

48. Բառասկզբում ը ձայնավորը ընկել է ընկոյգ բառում, որը բարբառում կա գ'ուգ ձևով (ն-ի մասին տես § 272բ, ոյ-ի մասին՝ § 143 և գ-ի մասին՝ § 200գ):

Ը-ի դիմաց ի՝ շվար>շիվար բառում, և ը է ավելացել նրան>ընդրան բառում:

Ի

49. Գրաբարի ի ձայնավորի դիմաց Մշո բարբառում միավանկ և բազմավանկ բառերի սկզբում կա ի. իմ>իմ, իմուն, իսկ>իսկական, իրաւ>իրավ, իրաւունք>իրավունք, ինչ>ինչ, իմանալ>չիմնալ, իմաստուն>չիմաստուն, իմաց>չիմաց «արթուն», ինքնագլուխ>ինքնագ'ըլոխ, իջանել>չիջնալ:

50. Բառասկզբում ի-ի դիմաց ը կա ինձ>ընձի, ընձիգ, ինձէն>ընձէն բառերում:

51. Գրաբարի ի ձայնավորի դիմաց Մշո բարբառը ի ունի միավանկ և բազմավանկ բառերի մեջ. բիբ>բիբ, գին>գ'ին, գինգ>գ'ինգ, գինի>գ'ինի, գիշեր>գ'իշեր, գիտնալ>գ'ինալ, գիտուն>գ'իդուն, գիր>գ'իր, գերկ>գ'իրգ, գիմել>գ'իմել «ուղղել», թիակ>թիագ, թիկունք>թիգունք, ժիր>ժիր, լինգ>լինգ, խիզ>խիխճ, ծիծաղ>ծիծաղ, ծիրան>ճիրան, կիր>կիր, հին>հին, հիմն>հիմ, հինգ>հինգ, միամիտ>միամիդ, միափերթ>միափերթ, միջնորդ>միջնորթ:

52. Գրաբարյան ի-ի դիմաց ի կա մեկ, ինչպես նաև ավելի վանկ ունեցող բառերի վերջում. ձի>ձ'ի, թի>թի, գարի>գ'արի, գինի>գ'ինի, հողի>հօքի, հայելի>հայլի, անալի>ալնի, աղի>աղի, կաշի>կաշի, գօտի>գ'օդի, խնամի>խընամի, բարի>բարի, տարի>տարի, գողի>գ'օթի, գրացի>գ'ըրացի, եկեղեցի>էգէղէցի:

¹ Իր հիմնական իմաստից բացի, ունի նաև սկսելու իմաստ, այսպես. կրցել խօսալ, կրցել լալ. «սկսեց խոսել», «սկսեց լաց լինել»:

53. Բառասկզբում և բառամիջում ի-ի դիմաց ը կա. ինձ>ընձի, ընձիգ, կին>կընիգ, տանտիկին>տանդըզին, ինձէն>ընձէն (կա նաև ընձնէ ձևը), քիրտն>քըրդինք, պիտի>ըրդի, շիճուկ>շըրուգ:

54. Բառամիջում ի-ի դիմաց ը կա մի արգելականում, երբ արգելականին հաջորդում է բաղաձայնով սկսվող բառ. մի խոսիր>մըխօսա, մի կարգա>մըկարթա, մի քալիր>մըքէլէ, մի մտանիր>մըմըգնա, մի քնի>մըքընի, մի խմիր>մըխըմէ, մի մնա>մըմընա, մի բունի>մըբըննէ, մի ցուլց սա>մըցուցու, մի բերի>մըբէրէ, մի գրիր>մըգ'ըրէ, մի թափիր>մըթափէ, և ի-ն ընկնում է, եթե արգելականին հաջորդում է ձայնավորով սկսվող բառ. մի ազատիր>մազադէ, մի աղօթիր>մաղօթէ, մի ուտիր>մուդէ, մի երթա>մէրթա, մի տա>միդա, մի ալրիր>միրիցէ, մի ավիր>մավլէ, մի ասիր>մըսի, է, մի անի>մէնէ, մի ամաչիր>մամչընա:

55. Բացի վերոհիշյալ երևույթներից, ի ձայնավորը ենթարկվել է հետևյալ մասնակի հնչյունափոխութիւնների. ի>է. լիրք>լէրփ բառի մեջ. ի>ու. նինջ>նունջ, վալրի>վէրու, հնտի>հէտու, թինգ>թունգ, կսկիծ>կըսկուծ (կա և կըսկիծ ձևը). ի>ա. գէպի>գըբա, սպի>սըբա. ի է ավելացել մեզ>մըզի, ձեզ>ձ'ըզի, քեզ>քըզի, ժանգառ>ժանգառի:

Ի-ն որպես աճական ավելացել է նաև գալ, տալ, լալ բայերից առաջ չիքալ, իդալ, չիլալ, ինչպես նաև ստացական ա (դ) հոդից հետո որպես օրինաչափ երևույթ սիրգսի, սիրգտի, տունսի, տունտի և այլն:

- ա) ի-ն ընկել է գարշելի>գ'արշել, տեղի>տեխ, տեղ,
- բ) ի>ո. ջուրի>ջուր,
- գ) ի>ե. կոտիմն>լօղեմ, ծիրա>ծերգ և
- դ) ի>ը. գլխիվար>գ'ըլխըվէր բառերում:

ՇԵՇՏԻՅ ԿԱՏՎԱԾ ՀՆՉՅՈՒՆԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆ

56. Միավանկ բառերի բառասկզբի շեշտավոր ի ձայնավորը շեշտակորույս լինելով դառնում է ը. ինն — ըննոց — ըննի — ըննեբու, ինչ — ընչի՞ — ընչե՞ր — ընչէ՞րու:

Ծ ա ն ո թ ու թ լ ու լ ն. — Բացառութիւն է կազմում իմ բառը, որտեղ ի-ն մնում է անփոփոխ. իմ — իմուն:

57. Երկու և ավելի վանկ ունեցող բառերի սկզբում բարբասի անշեշտ ի ձայնավորը բոլոր դեպքերում մնում է անփոփոխ. իրեք — իրէքնոց — իրէքդ՝ ըլխէն, ինազ — ինադու — ինադներ — ինազգան, ինքնագ՝ ըլխս — ինքնագ՝ ըլխսի — ինքնագ՝ ըլխս թեն, իրավունք — իրավունքի — իրավունքներ, իրիցկընիզ — իրիցկընզա — իրիցկընզու թեն:

58. Միավանկ, մեկ ու կես վանկ ունեցող բառերի բառամիջի ի ձայնավորը շեշտակորույս լինելով դառնում է ք. վիզ — վրզներ — շէրզէնվրզիզ, շիր — չըրով — չըրէրու, սիրզ — սըրզան — սըրզոզ, քիթ — քըթեր — քըթէրու — քըթով, աիզ — աըզեր, աըզէրու, ջիլ — ջըլեր — ջըլան, պինչ «սունչ» — պընչեր — պընչան — պընչադ, քըրդինք — քըրդընքի — քըրդնել — քըրդընքոզ, քըցիբ «ժլատ» — քըցըրներ — քըցըրութեն, կըսկիծ — կըսկըծի — կըսկըծալ, աիլ «ցնխ» — աըլեր — աըլոզ — աըլթըթխս, աիզ — աըզեր — աըզան — աըզով, աիզ «պորտաբուլծ, պարագիտ» — աըզեր — աըզան — աըզոզ, խիծ — խըժան — խըժի, ժիր — ժըրուզ — ժըրեր — ժըրըցուցել, ձիք — ձըքել, ձըքնալ — ձըքութեն, շիթ — շըթեր — շըթան, գինզ — գընզեր — գընզան — գընզավոր, գըզիբ — գըզըրներ — գըզրի — գըզըրութեն:

59. Բազմավանկ բառերի շեշտադուրի ի ձայնավորը բոլոր դեպքերում մնում է անփոփոխ. թիփի «բուք» — թիփէստան — թիփու, թիքա «պատառ» — թիքէստան — թիքէք, թիգունք — թիգընքի — թիգընքներ — թիգընքով, շիվար — շիվըրներ — շիվրի — շիվրութեն, բիլագուզ «սպարանջան» — բիլագըզի — բիլագըզներ, անիրավ — անիրավներ — անիրավութեն, ավիլուզ — ավիլըզներ — ավիլզի:

60. Բազմավանկ բառերի շեշտավոր ի ձայնավորը բոլոր դեպքերում, կապված շեշտի տեղափոխման հետ՝ սղվում կամ վեր է ածվում ք-ի.

ա) Բառը հոգնակի դառնալիս. բազնիք — բազնըքներ, ախչիզ — ախչըգներ, ծաղիզ — ծաղըգներ, շարիլ — շարըգներ, էրզիբ — էրզըրներ, պաղիշ — պաղըշներ, թունդիր — թունդըրներ, հարսնիք — հարսընքներ, խորոզիզ — խորոզգներ, մարքըրիզ — մարքըրդներ, բունիզ — բունըգներ, իրիզ — իրըգներ, բօրիզ — բօրըգներ, պըզինծ — պըզընծներ:

բ) Բառը հոլովելիս. անիծ — անծի, իրիզ — իրզան, թունդիր — թունդրան, շարիզ — շարզի, ախչիզ — ախչըգա, ծաղիզ — ծաղզի, կընիզ — կընզա, թաթագիշ — թաթագշի, օրօջիզ «խխունջ» —

օրօջի, մադնիք — մադնըքի, մարքըրիզ — մարքըրդի, էրինջ — էրընջի, շանզըշմըզիզ — շանզըշմըզի հաքնէլիք — հաքնէլքի, բըրինծ — բըրընծի, շօքիլք — շօքըլքի:

գ) Բառակազմության ժամանակ. ժածիզ — ժածգել — ժածգուզ, խորոզիզ — խորոզընալ — խորոզութեն, նախիր — նախրոթ, բօրիզ — բօրընալ — բօրըութեն, իրիզ — իրզաթոզ, շարիզ — շարզան, հարսնիք — հարսընքավոր — հարսընքաուն, անիծ — անըծքեր, կընիզ — կընզուզիզ «կնարարո», հօրթիզ — հօրթըրթոխ, ախչիզ — ախչըգութեն — ախչըգնագ, անխիխ — անխըխուցութեն:

Ծ ա ն ո թ թ ու թ յ ու ն . — Բացառութիւն են կազմում փոխառյալ խաիմ «ամուր» և չաիր «մարգագետին» բառերը, որանդ ի-ն շեշտակորույս լինելով չի հնչյունափոխվում. խաիմ — խաիմալ — խաիմութեն, չաիր — չաիրներ — չաիրով:

61. Բարբասում միավանկ բառերի վերջին ի ձայնավորը բոլոր դեպքերում մնում է անփոփոխ. ձի — ձիան — ձիանու — ձիավոր, թի — թիու — թիագ — թիագներ, լի — լիութեն — լիանալ:

Այսպես է վիճակը նաև, երբ բազմավանկ բառերը ստանում են ներ և իք հոգնակերտ մասնիկները: Այդ դեպքում ևս բառավերջի ի ձայնավորը չի հնչյունափոխվում. գիներ — գինիներ — գինիք, քէնի — քէնիներ — քէնիք, քէռի — քէռիներ — քէռիք, սուչի — սուչիներ — սուչիք, չինի — չինիներ — չինիք, գարի — գարիներ — գարիք:

62. Բարբասում բազմավանկ բառերի բառավերջի ի-ն ստան հոգնակիակերտ մասնիկից առաջ, ինչպես և բառաբարդության ժամանակ դառնում է ք, երբեմն էլ սղվում (հիմնականում բառաբարդման ժամանակ կամ հոլովելիս). գէրի — գէրէստան — գէրութեն — գէրէնագ, գարի — գարէստան — գարէնագ, բօստընջի — բօստընջութեն, խընամի — խընամէստան — խընամութեն, քէռի — քէռէստան — քէռէկին, հօքի — հօքէստան — հօքէնագ — հօքէլարց, տարի — տարէստան — տարէլիս «ողջ տարին», կօրի «սուռ» — կօրիք — կօրէստան, արծըլի — արծըլէստան, մաքի — մաքէստան — մաքու, օրքի — օրքէստան — օրքոզ — օրքու, փօշի — փօշէստան, քամի — քամէստան — քամու — քամափընջուզ — քամափընջել, օրփէվէրի — օրփէվէրէստան — օրփէվէրու — օրփէվէրութեն, անօթի — անօթէստան — անօթութեն — անօթու, գէրընդի — գէրընդէստան — գէրընդու — գէրընդադ, գ'օթի — գ'օթէստան — գ'օթու — գ'օթութեն — գ'օթէնագ,

գլբրացի — գլբրացէստան — գլբացութեն — գլբրացու, օգնի — օգնէստան — օգնութեն:

Ո

63. Գրաբարլան ու-ի դիմաց Մշո բարբառում միավանկ և բազմավանկ բառերի սկզբում կա օ. ոգնի>օգնի, օձնի, ոլոր>օլոր, ողբալ>օխալ, ողողել>օղղել, ողորմած>օղորմած, ողորմութիւն>օղորմութեն, ողջոյն>օխչում, ոչխար>օխչար, ոչիլ>օչիլ, ոտնալ>օտնալ, ոսկի>օսկի, ոսկր>օսկոր, ոտնակոտոր>օղնակօղոր, ոտնաման>օղնաման, ոտնատեղի>օգացտեխ, ոտնաւոր>օղավոր, որ>օր, որբանոց>օրփանոց, որգի>օրթի, որդնել>օրթնել, ործալ>օրծկալ, որոճ>օրոջ, որոտումն>օրօղում, օրօղուն, որքին, որքիւն>օրքի, որքինոտ>օրքոդ:

Ման ո թ ու թ լ ու ն. — Բացառութիւն և կազմում մի քանի բառեր, որտեղ բառասկզբում ու-ի դիմաց կա վո. ողջ>վոխջ, ողջութիւն>վօխջութեն, ոսպն>վոսպ, ոտն>վոդ, որբ>վորփ, որձ>վորջ:

64. Մշո բարբառում միավանկ բառերի մեջ գրաբարլան ու-ին համապատասխանում է ու-ն, որը, ինչպես նշեցինք, բարբառում երկբարբառային ուօ հնչմունքը ունի. սոխ>սոխ, փոր>փոր, փող>փող, մոմ>մոմ, գոմ>գոմ, գոլ>գոլ, գործ>գործ, գորդ>գորդ, խող>խող:

Ման ո թ ու թ լ ու ն. — Բացառութիւն է կազմում քող միավանկ բառը, որտեղ ու-ի դիմաց կա ը. թող>թըխ:

65. Գրաբարլան ո ձ ա ի ն ա լ ո թ ի ն ո է համապատասխանում նաև բազմավանկ բառերի շեշտավոր վանկում. խնձոր>խրնձոր, խմոր>խրմոր, բոլոր>բօլոր Եկոր, շուրջանակի, բորբոս>բօրփոս, ոլոր>օլոր, խոլոր>խօլոր և այլն:

66. Ու-ի դիմաց բարբառում ո կա նաև վերջածանցների մեջ. գլխաւոր>գլխավոր, սգաւոր>սքքավոր, ոտքաւոր>օղավոր, սալաւոր>սէլվոր, հնձաւոր>հրնձվոր, խարտոց>խարդոց, բորոտ>բօրոդ:

67. Բազմավանկ բառերի երկրորդ ու-ի դիմաց Մշո բարբառում կամ առկա է ը հնչյունը, կամ այդ ու-ն սղվում է: Այդ բառ-

ըր մասամբ նույն արմատի կրկնութիւնը կազմված բառեր են. խոշորանալ>խօշորնալ, բոլորել>բօլբրել, բորբոքել>բօրփրքել, գողգողալ>գօղղղալ, ոլորել>օլբրել, ողողել>օղղղել, հոտոտել>հօտթթնթթել, սովորեցուցանել>սօվբրցուցել, սովորել>սօրվել, մոլորել>մօլբրել, շողշողել>շօղշղղալ, շողշողուն, շողշղղան, թոթոթվել>թօթթվել, լումլումել>լումլմմել, ժողովել>ժօղվել, ժողովող>ժօվող:

68. Ո հնչյունը ենթարկվել է մի քանի մասնակի փոփոխութիւնների. ո>ու. քոլ, քո>քու, թոնդիր, թոնիր>թունդիր:

ՇԵՇՏԻՅ ԿԱԽՎԱԾ ՀՆՁՅՈՒՆԱՓՈՒՅՈՒՅՈՒՆ

Ո(ուօ)

69. Մշո բարբառում ո, ինչպես տեսանք, կա ու-ի դիմաց միավանկ բառերում, ինչպես և բազմավանկ բառերի շեշտված վանկերում:

Բառի աճման հետեանքով այն շեշտակորույս է լինում, որի անմիջական հետեանքը լինում է այն, որ այդ ո (ուօ)-ն հնչյունափոխվում է:

70. Միավանկ բառերի մեջ շեշտը կորցնելով այն դառնում է օ. ալսպես՝ փող—փօղբր—փօղասիրութեն — փօղով, շօք — շօքել — շօքուդ — շօքուցել, ջոգ — ջօգել — ջօգուդ — ջօգող, հորթ — հօրթարած — հօրթեր — հօրթըրթող, հող — հօղեր — հօղաշէն — հօղադորձ, կոշա — կօշաուդ — կօշաւնալ — կօշաութեն, կոդ — կօղել — կօղուդ, ծոց — ծօցեր — ծոցվոր, խոց — խօցեր — խօցողուդ — խօցուդ, խոփ — խօփեր — խօփան, լող — լօղղընալ — լօղղուցել — լօղղուցուդ, վող — վօղալ — վօղղըվոր — վօղղըվորութեն, գորդ — գօրդեր — գօրդան — գօրղընող:

71. Երկվանկ, ինչպես և բազմավանկ բառերի շեշտված վանկերում, շեշտը կորցնելու հետեանքով կրում է նույնանման փոփոխութիւն, հալվոր — հալվօրնադ — հալվօրնալ — հալվօրութեն, ախպանոց — ախպանօցի — ախպանօցներ, անդորձ — անդօրձներ — անդօրձութեն — անդօրձնակ, կօղոր — կօղօրել — կօղօրում — կօղօրած, անհօք — անհօքներ — անհօքութեն, աչոխ — աչօղադ — աչօղութեն, զօրավոր — զօրավօրնադ — զօրավօրութեն, յընգնավոր — յընգնավօրնադ — յընգնավօրութեն, թընթոց — թընթօցներ — թընթօցի, ժօլխք — ժօլօխքի, գլթօխք — գլթօխքի, խարդոց — խարդօցել — խարդօցներ, խրնձոր — խրնձօրի — խրնձօրներ, մէտոն — մէտօնի — մէտօնել:

72. Հախերենի օ-ին Մշո բարբառում բառակերպում համապատասխանում է օ-ն, օրհնել > օրհնել, օտար > օղար, օտարութիւն > օղարութիւն:

73. Օ-ին օ է համապատասխանում և բառավիշում. անօւրը > նօւրը, անօթի > ննօթի, աղօթք > աղօթք, ախօ > ազօս, ցօղ > ցօղ, անօրէն > անօրէն, նարօտ > նարօք, արօտ > արօղ, արօր > յըրօր, յօթար > յօթար, մօրուք > մօրուք (նաև միրուք), հօտ > հօդ, ծօտ > ծղօղ, յօթն > յօթ, գօտի > գօդի, գօրեղ > գօրեղ, գօրք > գօրք > զօրք > զօրք: «հօրութիւն», գօրավոր > գօրավոր:

Ծ ա ն ո թ թ ու թ լ ու ն. — Այս և նման այլ դեպքերում տեղի չի ունենում միավանկ, ինչպես և բազմավանկ, բառերի շեշտված վանկերի օ հնչյունի հնչյունափոխութիւն կամ երկձայնի փոխակերպ, ինչպես այդ, որպես օրենք, կատարվում է ո-ի հետ:

Յօնք բառի բառակերպի օ-ին համապատասխանում է ու-ն. յօնք > ունք:

ՇԵՇՏԻՅ ԿԱԽՎԱԾ ՀՆՁՅՈՒՆԱՓՈՒՅՈՒԹՅՈՒՆ

74. Միավանկ, ինչպես և ավելի վանկ ունեցող բառերի բառակերպի օ-ն, որը առկա է գրաբարյան օ-ի դիմաց, կամ արդյունք է աւ երկբարբառի և ո-ի պարզեցման, բոլոր դեպքերում մնում է անփոփոխ. օի — օիել — օիուդ «կուտակված», օրթ — օրթունք — օրթան — օրթընել — օրթընուդ, օսիի — օսիիք — օսկու — օսկեստան — օսկէրիչ, օր — օրեր — օրէրու, օց — օցու — ուցէրու, օսկոր — օսկըրներ — օսկըրի — օսկրահան, օչիլ — օչըրներ — օչիլ — օչուդ, օրփանոց — օրփանօցներ — օրփանօցի, օրքի — օրքիք — օրքեստան — օրքոդ, օխպ — օխպալ — օխպացող — օխպալէն, օխչար — օխչըրներ — օխչըրի:

75. Մշո բարբառում միավանկ բառերի մեջ օ պարզ հնչյունը, որը առկա է գրաբարյան օ-ի կամ աւ երկբարբառի դիմաց, բոլոր դեպքերում մնում է անփոփոխ անկախ բառի վանկերի հավիւրմից. ցօղ — ցօղեր — ցօղաթըթախ, գօդիդ — գօդըրներ — գօդու, յօթ — յօթնոց — յօթվերք, արօղ — արօղներ — արօղի, յըրօր — յըրօրներ — յըրօրի, ազօս — ազօսներ — ազօսնէրու — ազօսուդ, անօթի — անօթանալ — անօթիք — անօթութիւն, նօւրը — նօւրընալ — նօւրութիւն — նօւրըցուցել, աղօթք — աղօթքներ — աղօթել — աղօթուդ:

76. Բազմավանկ բառերի անշեշտ օ-ն (հաճախ ո-ի դիմաց գոյութիւն ունեցող) ձևաբանական, բառակազմական փոփոխութիւնների ժամանակ մնում է նույնը.

ա) Բառը հոգնակի դարձնելիս. կօրէդ — կօրդըներ, բօրադ — բօրդըներ, շօրդիդ — շօրդդներ, կօրընգան — կօրընգներ, շօքիւք — շօքըրներ, բօրիդ — բօրդներ, բօրուդ — բօրօդներ, հօքի — հօքիք — հօքեստան:

բ) Հոլովելիս. գօդիդ — գօդդի, բօրուդ — բօրուդի, անօթի — անօթու, կօչնադ — կօչնըդի, կօղեմ — կօղմի:

գ) Բառակազմութեան ժամանակ. ժօղվել — ժօղըրար «մուրացկան», մօլըրել — մօլրուդ, խօրօղիդ — խօրօղութիւն, խօրունդ — խօրընդալ, կօշագ — կօշգել — կօշգուդ:

77. Գրաբարյան բառակերպի ու ձայնավորին Մշո բարբառում միշտ համապատասխանում է ու-ն. ուլ > ուլ, ուխտ > ուխտ, ուխտել > ուխտել, ունկն > ունկ, ունջ > քունջ, ուշք > ուշք, ուռուցանել > ուռուցել, ուրադ > ուրաք, ուրախ > ուրախ, ուրանալ > ուրանալ, ուրբաթ > ուրբաթ, ուրց > ուրց:

78. Գրաբարյան ու ձայնավորի դիմաց միավանկ և բազմավանկ բառերի մեջ կա ու. կուշտ > կուշտ, կուպր > կուպրը, ցուրա > ցուրդ, տուն > տուն, թուղթ > թուխա, թումբ > թումբ, լուծք > լուծ, լուծք, խուփն > խուփ, հում > հում, դարուն > դարուն, ապերախաութիւն > արէրախաութիւն, ուրուր > ցուրուր, լուսարար > լուսարար:

79. Գրաբարյան ու-ի դիմաց բարբառու ու ունի և բառակերպում. առու > յառու, ձու > ձու, լու > լու, լեզու > լէզու, կատու > կադու, դու > դու, թթու > թթու, երկու > էրգու, էրգուս, ախրացու > ախրացու, հերու > հէրու «անցյալ տարի»:

80. Բացի այս օրինաչափ երևութիւններից, ու-ն ենթարկվել է մի քանի մասնակի փոփոխութիւնների.

ա) Ու-ի դիմաց ը կա ուն > հըլու, հըլուն, քուրջ > քըրջ, ուխտաւոր > ըխտավոր բառերում:

բ) Ու-ի դիմաց օ ուղղորդ > օղորթ, ուղղորդութիւն > օղորթութիւն, խուլինջ > խօլինջ, գլուխ > գլուխ բառերում:

գ) Ու-ն դուրս է ընկել. ուղիդ > օղդ, ուղարկել > խըրգել:

80. Միավանկ բառերի բառասկզբի ու ձայնավորը բառի ձև-
վարանական, բառակազմական փոփոխութիւնների հետեանքով,
շեշտը կորցնելով՝ հնչյունափոխվում է ը-ի. ունք — ընքան — ընք-
ներ, ուխտ — ըխտավոր — ըխտացող — ըխտավորութեն, ունկ — ըն-
կանի բառերում և անփոփոխ է մնում ութ — ութի — ութնոց, ուշ —
ուշանալ — ուշացող, ուլ — ուլեր — ուլերու — ուլարած, ուրց — ուր-
ցան — ուրցեր, ուշք — ուշքեր բառերում:

81. Բազմավանկ բառերի բառասկզբի շեշտագուրկ ու-ն բոլոր
ղեկաքերում մնում է անփոփոխ. ուրփաթ — ուրփթի — ուրփթմուղ,
ուրաք — ուրքի — ուրքըներ, ուրախ — ուրախութեն, ուրախնալ, ու-
րիշ — ուրբշներ — ուրբշնագ, ուրացող — ուրացողի — ուրացողութեն:

82. Միավանկ բառերի ու ձայնավորը բառի ածման հետե-
վանքով հնչյունափոխվելով՝ դառնում է ը.

ա) Բառը հոգնակի դարձնելիս. թուխտ — թրխտեր, խուրց —
խըրցեր, ծուռ — ծըռեր «անհաշտ, խելագար», ծուխ — ծըխեր,
պուգուգ — պուգըներ, պըղուղ — պըղըներ «բիբ, աչք», ցուրդ —
ցըրդեր, փուշ — փըշեր:

բ) Բառը հոլովելիս. թումբ — թըմբան, թուխպ — թըխպան,
ժում — ժըման «ժամանակ», թուք — թըքի, խունգ — խընգան,
ծուռ — ծըռու, դուռ — դըրան, կուռ — կըռան, կըղուց — կըղըցան, կը-
ռունգ — կըռընգու, գ'ուփ — գ'ըփան «փոս», հունձ — հընձան, նուռ —
նըռան, շուրթ — շըրթան, փուշ — փըշու, փուռ — փըռան, գ'ունդ —
գ'ընդան:

գ) Բառակազմության ժամանակ. թուփ — թըփակալուգ,
թուխ — թըխութեն, թութ — թըթակալուգ «վերքապատ», խուլ —
խըլնալ — խըլութեն, լուձ — լըձգան, փութ — փըթանոց, փուշ —
փըշութեն, ջուր — ջըրթըթախ, սուք — սըքախտո — սըքավոր, սուրփ —
սըրփութեն — սըրփընագ, բուշտ — բըշտել, բուք — բըքիսխտ:

83. Միավանկ, ինչպես և ալիլի վանկ ունեցող բառերի բոլոր
աջն ու հնչյունները, որոնք արդյունք են երկրաբառի պարզեց-
ման, բառի՝ վերոհիշյալ նման փոփոխութիւնների ժամանակ մնում
են անփոփոխ. լուս — լուսարար — լուսնալ — լուսվոր, հուս — անհուս —
հուսովալ — հուսովութեն, բուս — բուսնալ — բուսուգ, թուլ — թուլ-
նալ — թուլութեն — թուլնագ «թուլի նման, թուլի պես, թուլորեն»,
կուս — կուսութեն — կուսեր — կուսնագ, անուշ — անուշներ — անու-
շութեն, անթամալուձ — անթամալուձներ — անթամալուձութեն:

Մ ան ո թ ու թ լ յ ու ն. — Բացառութիւն է կազմում հուխք
բառը, որի ու ձայնավորը բոլոր ղեկաքերում հնչյունափոխ-
վում է ը-ի. ճուխք — ճըխքան — ճըխքեր — ճըխքանի —
ճըղնակողոր — ճըխքակողոր:

84. Երկու և ալիլի վանկ ունեցող բառերի շեշտագուրկ ու
ձայնավորը բոլոր ղեկաքերում մնում է անփոփոխ. թունդիր — թուն-
դըրներ — թունդրան, շուռչալ — շուռչըներ — շուռչըլի, դուռնա —
դուռնէք — դուռնի, արքաութեն — արքաութէնի, բարգութեն «շի-
կացվածութիւն» — բարգութէնի, գ'ուրա — գ'ուրէք — գ'ուրէստան —
գ'ուրի, գ'ուսան — գ'ուսներ — գ'ուսնի, լուսարար — լուսարարութեն,
լուսնագ — լուսնըգի:

85. Բազմավանկ բառերի շեշտավոր ու ձայնավորը շեշտա-
կորույս լինելով՝ հնչյունափոխվում է ը-ի և կամ սղվում. յախպուր —
յախպըրի — յախպըրներ — յախպըրագ, ձըմէրուգ — ձ'ըմէրգի —
ձ'ըմէրըգներ — ձ'ըմէրգնոց, համբարցում — համբարցմի — համ-
բարցման, անուն — անըններ, օքուգ — օքըղներ, արբըշում —
արբըշմներ — արբըշմէ — արբըշմէղէն, զըթում — զըթմըներ —
զըթմի — զըթմընագ:

86. Բառավերջի ու ձայնավորը Մշո բարբառում, շեշտակո-
րույս լինելով՝ հնչյունափոխվում է վ-ի. յառու — յառվըներ — յառ-
վի, ձ'ու — ձ'ըվեր — ձ'ըվան — ձ'ըվածեղ, լու — լըվեր — լըվան —
լըվողել, թըթու — թըթվըներ — թըթվի — թըթվութեն, լէղու — լէղ-
վըներ — լէղվի — լէղվանի, լէղվանիգ, կըձու — կըձվի — կըձվութեն
ճըրաքու — ճըրաքվըներ — ճըրաքվի:

Ա Մ Փ Ո Փ Ո Ի Մ

87. Մշո բարբառում, ինչպես և հայոց լեզվի ճյուղավորում-
ները հանդիսացող մյուս տերիտորիալ բարբառներում, հնչյունա-
փոխութիւնը, հին գրական հայերենի հետ համեմատած, լինում է
ավանդական և շեշտից կախված: Ձայնավորների համակարգով Մշո
բարբառը, որոշ չափով, տարբերվում է գրաբարից. երբեմն գրա-
բարյան այս կամ այն ձայնավորի գիմաց առկա են այլ հնչյուններ:

88. Ա ձայնավորը պահպանվում է բառասկզբում և բառա-
միջում այն ղեկաքերում, եթե այն կրկնված չէ: Բառամիջում, մե-
կից ալիլի անգամներ կրկնված լինելու ղեկաքում, երկրորդ՝ շեշտից
զուրկ ա-ն սղվում է՝ վերածվելով ը-ի: Սակայն միջին վանկի ա-ի

սղման այս օրինքը բացարձակ չի գործում: Բարբառում բազմաթիվ բառեր, նույն դիրքում պահպանել են այդ ձայնավորը:

89. Բացի այս երևույթներից, բարբառս ա-ի դիմաց ունի ը, և, օ ձայնավոր հնչյունները:

90. Ե-ին ի է համապատասխանում միավանկ բառերում, ինչպես նաև բազմավանկ բառերի շեշտված վանկերում, որը տառադարձել ենք Ե:

91. Բազմավանկ բառերի սկզբում, սակայն, Ե-ին համապատասխանում է Է:

92. Բացի վերոհիշյալից, բարբառում Ե-ի դիմաց կան ի, ը, ա ձայնավորները:

93. Ե-ի դիմաց ը-ն մեծ մասամբ առկա է դերանունների, կապերի և օժանդակ բայի ժխտական ձևերի մեջ:

94. Է ձայնավորը, դրաբարյան Է-ի հետ համեմատած, գրեթե անփոփոխ է մնում, նույն վիճակումն է և ը-ն:

95. Գրաբարյան ի ձայնավորին բարբառում մեծ մասամբ համապատասխանում է ի-ն, սակայն, սակավադեպ, այդ հնչյունի դիմաց բարբառում առկա են ու, ա, ը ձայնավորները:

96. Որոշ փոփոխությունների է ենթարկվում ո-ն: Բառասկզբում նրա դիմաց հիմնականում կա օ: Միավանկ բառերում, ինչպես և բազմավանկ բառերի շեշտված վանկերում, շատ հազվադեպ և բառասկզբում հնչում է ուօ, որը և տառադարձել ենք ո:

97. Ու ձայնավորի դիմաց բարբառում մեծ մասամբ կա ու: Երբեմն, ու-ի դիմաց առկա են ը, օ և այլ ձայնավորներ:

98. Օ ձայնավորի դիմաց, գրեթե միշտ, կա օ:

99. Բարբառում, կարևոր հնչյունափոխական գործոն է շեշտը, որի դիրքից հաճախ կախված է ձայնավորների որակը:

Բ. ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա.Յ

100. Գրաբարյան այ երկբարբառի դիմաց Մշո բարբառում, բառասկզբում գտնում ենք Է պարզ հնչյունը. այլ>էլ, այօր>էլօր, այծ>էձ, այս>էս և այլն:

Այդ, այն դերանունների այ-ին Մշո բարբառում, բառասկզբում համապատասխանում են ը և ի, երբեմն նաև Է ձայնավորները. այդ>իդա, ըդի, էդ, այն>ինա, ընի, էն, այդչափ>ըդչափ, իդաչափ, այդպէս>ըդպէս, իդապէս, այդքան>ըդքան, իդաքան, այդտեղ>ըդտեղ, իդատեղ, այնտեղ>ինտեղ, ընտեղ, էնտեղ, էնատեղ և այլն (առկա են նաև ախ և դրանից բարդված բառաձևերը):

101. Բառասկզբում այ երկբարբառին ի է համապատասխանում նաև այլ>իրիդ, այրել>իրիցել, այրում>իրիցուդ, այրեցող>իրիցող և այլ բառերում:

Մ ա ն ո թ ու թ յ ու ն. — Վերոհիշյալ բոլոր բառերը Մշո բարբառում ունեն իրենց կրկնակ ձևերը, որտեղ այ երկբարբառի դիմաց հանդես է գալիս Է ձայնավորը, այսպես. այրել>էրել, այրում>էրուդ և այլն:

102. Այ երկբարբառը բառասկզբում պահպանված է այր բառում, որը զբաղան փոխառություն է և գործածական է միմիայն հեռակալ կապակցություն մեջ.

«Այրի կրգոր չըկա գ'ըլօխ» (խիտ տղետ է, անգրագետ է):

103. Այ երկբարբառը բառասկզբում սղվել է այսօր բառում, որը բարբառում ստացել է յըսօր, սօր ձևերը:

104. Այ երկբարբառի դիմաց, Մշո բարբառում միավանկ բառերի մեջ կա Է. հայր>հէր, լայն>լէն, մայր>մէր, ձայն>ձէն, փայտ>փէդ, քալ>քէլք, գալ>գ'էլ, սալ>սէլ, ժայռ>ժէռ, ծայր>ծէր, կալծ>կէձ, փալ>փէլք:

Այ երկբարբառի դիմաց բարբառս Է ունի նաև բազմավանկ բառերի, ինչպես շեշտված, այնպես էլ շեշտազուրկ վանկերում. երկայն>յէրդէն, որբեայրի>օրփէվէրի, քայլել>քէլել, փայտեղէն>փէդէղէն, կալծակ>կէձադ, խալթել>խէթել, խալթիչ>խէթիչ, եղբայր>ախպէր, փայտեա>փէդէ, գլխիվայր>գ'ըլխըվէր, գալթել>քէթըրել, անծայր>անծէր, վայրի>վէրու, վալիլել>վէլել, կնքահայր>կընքահէր, կիսածայն>կիսած'էն, սկեսրայր>կէսրէր, սանահայր>սանահէր, սանամայր>սանամէր, մայրութիւն>մէրութիւն, երկայն>յէրդէն, մայրիկ>մէրիդ:

Մ ա ն ո թ ու թ յ ու ն. — Բարբառում գործածական է նաև մայրիդ ձևը, որը կոչական անուն է և որպես այլախոն ենթարկվում է այլ հոլովման: նույն կերպ էլ «վայելել» գրական փոխառությունը, որը բարբառում հանդիպում է և՛ հնչյունափոխված, և՛ չհնչյունափոխված՝ վայելել, վելել ձևերով:

105. Բառամիջում այ երկբարբառի դիմաց ի կա փայլել, փայլուն, փայլափայլուն բառերում, որոնք բարբառում ստացել են փիլալ, փիլան, փիլփըլուն ձևերը:

106. Բառամիջում այ երկբարբառի դիմաց առկա են և այլ հնչյուններ.

ա) Այ-ի դիմաց օ. պայծառ > պօճառ, պայծառութիւն > պօճառութիւն, պայծառեցուցանել > պօճրոցուցել, պայծառանալ > պօճրոհնալ բառերում:

բ) Այ-ի դիմաց ը. ճայթիլ > ճրթալ, փայլփայլուն > փրփրլան:

գ) Այ-ի դիմաց ա. փայծաղ > փածկի (առկա է և փիճկի ձևը):

դ) Բառամիջի այ երկրարբառի յ կիսաձայնի դիմաց ճ կա պայման > պահման, անպայման > անպահման գրականից փոխառալ բառերում:

ե) Բառամիջում այ հնչյունախումբը սղակ է ծառայական > ծառագան բառում, որը գործածական է միայն յայտարան—ծառագան» (խիտ հյու, հնազանդ) կապակցութիւն մեջ:

107. Բառավերջի այ-ի դիմաց Մշո բարբառում, բոլոր դեպքերում առկա է ա ձայնավորը. փեսայ > փէսա, քահանայ > քահանա, վիայ > վրգա, սատանայ > սրդանա, նորընծայ > նորընծա, մեղայ > մէղա, կթխայ > կթթխա, խարերայ > խափէփա, ընծայ > ընծա, երեխայ > էրէխա, գուլպայ > գ'ուլբա, բակայ > բագլա, անլուայ > անլըլա, արեղայ > արէղա և այլն:

108. Գրաբարյան բառավերջի այ այ հնչյունախումբը բառի ձևարանական, բառակազմական փոփոխութիւնների հետեւանքով Մշո բարբառում բոլորովին սղվում է. երեխայութիւն > էրէխութիւն, փեսայութիւն > փէսութիւն, սատանայութիւն > սրդանութիւն:

Բառավերջի այ-ի դիմաց է կա. կասկարայ > կասկարէզ բառում:

109. Սակայն Մշո բարբառում կան գրական լեզվից, գրաբարից անցած բառեր, որոնց մեջ պահպանված է այ երկրարբառայայտնա. խայտառակ > խայդառագ, խայտառակութիւն > խայդառագութիւն, լայտնի > հայդնի, հայիլի > հայլի, դայիակ > դայէզ և այլն:

110. Բառամիջում այ երկրարբառը առկա է և մի քանի փոխառալ բառերում. մայմուն «կապիկ», խայլա «սուրճ», լայլա «գուրկ, չքավոր», խայդա «ձև, կերպ», մայրում «գուրկ», մայլամ «անպայման»:

111. Գրաբարյան այ-ը բառավերջում պահպանվում է միայն հայ > հայ և վայ > վայ բառերում՝ ինչպիսի փոփոխութիւններ էլ որ կրելու լինեն դրանք. հայ — հայէր — հայութիւն — հայտարարութիւն — հայէվար և այլն:

112. Բառավերջում այ կա և մի քանի փոխառալ բառերում, ինչպես. թայ «հասակակից», տրմայ «ժլատ», խօլայ «հեշտ, դլուրին», դայ «փխաս» և այլն:

Ա.Ի

113. Բառակղբում աւ երկրարբառի դիմաց Մշո բարբառում ևս կա օ. աւլուտ > օքուզ, աւդ > օթ, աւձ > օց, աւդ > օդ և այլն: Բառակղբում աւ հնչյունախմբի ա-ի դիմաց է կա աւելի > չէվէլի, աւելնորդ > չէվէլնորթ բառերում:

114. Բառակղբում և բառամիջում աւ հնչյունախումբը նույնութիւնը պահպանված է բաց վանկում. աւագ > ավաք, աւագ > ավազ, աւագան > ավագան, աւագակ > ավագազ, աւետարան > ավէդրան, գորաւոր > գորավոր, աւերել > ավիրել, հաւանել > հավանել, հաւատ > հավադ, ճգնաւոր > ճրքնավոր, ձիաւոր > ձիավոր, շնորհաւոր > շընավոր, ցաւագար > ցավագար, տնաւէր > տընավէր, նաւակատիկ > նավակաղիզ, ձաւար > ձավար, լաւութիւն > լավութիւն, կտաւնատ > կրդավազ, կաւառն > կավրու և այլն:

115. Բառամիջում աւ երկրարբառին Մշո բարբառում համապատասխանում է օ-ն. անաւթի > անօթի, խաւել > խօսել, խօսալ, խաւք > խօսք, լաւթ > լօթ, մաւտ > մօզ, կարաւտ > կարօզ, ծնաւդ > ծընօզ, նարաւտ > նարօզ, ծանաւթ > ծանօթ, անամաւթ > անամօթ, աւրաւոց > օրօրոց, խելաւք > խէլօք, մաւրաք > մօրուք, միրաք > հաւրաքոյր > հօրքուր, մաւրաքոյր > մօրքուր, հաւրեղալր > հօրօխպէր նաև հօխպէր:

Մ ա ն ո թ ո լ թ ի ու ն.— Բացառութիւն է կազմում նաք բառը, որտեղ աւ երկրարբառը մի դեպքում մնացել է անփոփոխ: Սակայն, բարբառում նավք բառը ունի և իր տարբերակը՝ նըվք ձևը, որտեղ աւ-ի դիմաց կա ը:

116. Բառակղբում գրաբարյան աւ հնչյունախմբին Մշո բարբառում համապատասխանում է աւ-ը. ցաւ > ցավ, հաւ > հավ, ծարաւ > ծարավ, պառաւ > պառավ, լաւ > լավ, կաքաւ > կաքավ, կտաւ > կրդավ, խաւ > խավ, գրաւ > գ'ըրավ:

117. Աւ հնչյունախմբի յ կիսաձայնը բարբառում կրել է մի քանի մասնակի փոփոխութիւններ: Նրա դիմաց Մշո բարբառում առկա են ալլ հնչյուններ.

ա) աւ-ի ւ-ի գիմաց յօ. տղմաթաթաւ > տըլթըլթախ.

բ) ւ-ի գիմաց բ. թաւալ > թարալ, թաւալ տալ > թարալ
իդալ, մոխրաթաւալ > մոխրաթարալ:

գ) ւ-ի գիմաց ֆ. շարաւ > շարաֆ, «թարախ», հարաւ > հարաֆ:

դ) ւ-ն բոլորովին սղվել է զմտաւ ածել > մըղաձել բառում:

ԵՍ.

118. Գրաբարյան եւ երկբարբառին Մշո բարբառում, շեշտ-
ված վանկերում համապատասխանում է Է. լեռան > լէո, ցօրեան >
ցօրէն, լեարդ > լէրթ, սարեակ > սարէգ, սեամ > շէմ [թ], դայեակ >
դայէգ, վառեակ > վառէգ, կորեակ > կօրէգ:

119. Բառամիջում եւ-ի գիմաց ա կա հետեւյալ դեպքերում՝
իւրեանք > ուրանք, իւրեանց > ուրանց, իւրեան > ուրան, լուսնեակ >
լուսնագ:

եւ-ի գիմաց բառամիջում ի կա. իւրեան > ուրին, որը, ինչպես
տեսանք, բարբառում առկա է և ուրան ձևով: Բացի դրանից, եւ-ի
գիմաց ու կա. իւրեար > չիրուր, ընդ իրեար գալ > չիրուր չիքալ:

120. Գրաբարյան անցյալ դերբայի վերջավորության եւ երկ-
բարբառի գիմաց Մշո բարբառը ունի է. գրեալ > գ'ըրէր, բէրեալ >
բէրէր, կերեալ > կէրէր, ածեալ > աձէր, նստեալ > նըստէր, տար-
եալ > տարէր, հասեալ > հասէր, մեռեալ > մէռէր:

Մ ա ն ո թ ու թ յ ու ն. — Ննջեցեալ բառը մեռածի իմաս-
տով բարբառում պահպանվում է նույնությամբ, որտեղ
եւ-ի գիմաց բարբառս ունի յա: Եւ-ի գիմաց բարբառս
յա ունի և մանեակ > մանյագ, կեանք > կյանք բառերում:

121. Գրաբարյան և խոնարհման բայերի հրամայական եւ
վերջավորության գիմաց բարբառս ունի Է, ի կամ ա՝ կախված բա-
լի սեւից. քընեա > քընի, խօսեա > խօսա, նստեա > նըստի, գրեա >
գ'ըրէ, սիրեա > սիրէ, դիզեա > դիզա, դիզէ և այլն¹:

ԵՍ.Գ

122. Եւյ եւաբարբառով բարբառում չի սկսվում և ոչ մի
բառ: Այն չի հանդիպում և բառամիջում:

123. Բառավերջում եւյ-ի գիմաց բարբառումս կա Է. մագ-
եալ > մագէ, արծաթեալ > արծըթէ, քարեալ > քարէ, հողեալ > հողէ,

¹ Մանրամասն տե՛ս «Բայերի խոնարհումը» գլխում:

փայտեալ > փէդէ, երկաթեալ > էրգըթէ, թղթեալ > թըլտէ, մար-
գարտեալ > մարքըրդէ:

Մ ա ն ո թ ու թ յ ու ն. — Միայն քրիստոնեայ բառն է, որը
բարբառում կա քրիստոնյա ձևով, որտեղ եւյ-ին համա-
պատասխանում է յա-ն:

ԵՍ.Ի

124. Այս եւաբարբառով Մշո բարբառում միայն երեք բառ
կա, որոնց մեջ երկու դեպքում եւ-ին համապատասխանում է Է,
մյուս դեպքում՝ օ:

Մեալ > սէվ, առաջեալ > յառչէվ, բարեալ > բարօվ:

Է

125. Բառասկզբի իւ երկբարբառը Մշո բարբառում կրել է
մի քանի փոփոխություններ.

ա) Իւ-ի գիմաց կա ու. իւրեան > ուրին, ուրան, իւրեանք >
ուրանք, իւրեանց > ուրանց, իւր > ուր:

բ) Իւ-ի գիմաց կա ի. իւրեար > չիրուր, չիրար:

գ) Իւ-ի գիմաց՝ յն, Է. իւղալի > էղալի, իւղել > էղել, իւղ >
լիղ:

126. Բառամիջում իւ-ի գիմաց ու կա հետեւյալ միավանկ,
ինչպես և բաղմավանկ բառերի շեշտված վանկերում. սիւն > սուն,
ձիւն > ձ'ուն, հիւս > հուս, ձիւթ > ձ'ութ, ճիւղ > ճուղ, խիւս > խուս,
արիւն > արուն, աղբիւր > յախպուր, առիւծ > առուձ, հիւսիս > հուսիս,
հերիւն > հէրուն, ընձիւղ > ընձուղ, երկձիւղ > էրդձուղ, էրդուիւր:

127. Բառամիջում իւ երկբարբառի գիմաց Ե ունենք շեշտ-
ված վանկերում ութիւն վերջածանցի մեջ. տէրութիւն > տէրու-
թեն, լաջողութիւն > աջողութեն, մեծութիւն > մէնձութեն, ազատու-
թիւն > ազաղութեն, արքայութիւն > արքաութեն, եղբայրութիւն >
ախպրութեն:

128. Միավանկ ինչպես և բաղմավանկ մի քանի բառերի մեջ
իւ երկբարբառի գիմաց առկա է Է ձայնավորը. գիւղ > գ'էղ,
գիւղացի > գ'էղացի, մըջիւն > մըրչէմ:

Բառավերջում իւ հնչյունախումբը պահպանվել է նույնու-
թյամբ. ճիւ > ճիվ, շիւ > շիվ, պատիւ > պաղիվ, ցրիւ > ցըրիվ, կռիւ >
կըռիվ, հաշիւ > հաշիվ, անպատիւ > անպաղիվ, քոլրաթիւ > քուրա-
թիվ «քուլրացու»:

129. Բառամիջում իւ-ը պահպանվել է նույնութիւմբ. շիւան > շիվան, հիւանգ > հիվանգ, գիւան > գիվան, գիւահար > գիվահար, հիւանդոտ > հիվընդոտ:

130. Իւ-ի ւ-ի գիմաց բարբառս ունի ֆ հետեյալ բառերում. արծիւ > արձիֆ, ազնիւ > ազնիֆ:

131. Իւ երկբարբառը բոլորովին սղվել է արիւնել > արնել, արիւնաշաղախ > արընշաղախ, արիւնաթաթախ > արընթթախ, արիւնագին > արընգին, բնաւորութիւն, բնութիւն > բընութթ բառերում:

ՈՅ

132. Բառակցքում ոյ երկբարբառը կա միայն մի գեպքում, որտեղ ոյ-ին համապատասխանում է ու. ոյթ > ութ:

133. Բառամիջում ոյ-ի գիմաց ու կա հետեյալ միավանկ և բազմավանկ բառերում. քոյր > քուր, գոյն > գուն, լոյս > լուս, անոյշ > անուշ, խոյլ > խուլ, շոյա > շուգ, ճկոյթ > ճրգոթ, բոյս > բուս, գրոյց > գրուցք, ընկոյզ > գուզ, կոյս > կուս, բոյն > բուն, կապոյտ > կարուզ, հանգոյց > հանգուրց, կտոյց > կրդուց, ողջոյն > օխչում, թոյլ > թուլ, անդամալոյծ > անթամալուծ, բոյթ > բութ, կոյր > կուր, նմոյշ > նմուշ, պատրոյգ > պաղրուք, լոյս > հուս, սովորոյթ > սովորութթ, սատոյց > սառուց, հոգեկորոյս > հօքէկորուս:

134. Բառավերջում ոյ-ի գիմաց ունենք ու. երեկոյ > յիրգուն: Բառավերջում ոյ-ի օրինակներ ալլես չկան:

Միակ օրինակը, որտեղ ոյ-ի գիմաց ունենք օ, հետեյալն է. պտոյս > պղոզ, պտոյտ գալ > պղոզել:

Եւ

135. Բազմավանկ բառերի շեշտագութիւն վանկերում եւ-ի գիմաց բարբառս ունի եվ. սեւանալ > սէֆնալ, երեւալ > էրէվալ, որբեալրի > օրբէվէրի, թեւաւոր > թէվալոր, թեւաթափ > թէվաթափ, արեւմուտք > արէվմուտք, արեւելք > արէվելք:

136. Բառավերջում ինչպես միավանկ, այնպես և բազմավանկ բառերի շեշտված վանկերում եւ-ին բարբառում համապատասխանում է եվ-ը. անձրեւ > անձրեվ, արեւ > արեվ, տերեւ > տերեվ, թեւ > թեվ, ձեւ > ձեվ:

137. Թերեւ բառի եւ-ի ե-ին բարբառում համապատասխանում է ր-ն, որի հետեանքով այդ բառը ստացել է քեթըվ ձևը, (հանդիպում է և քեթվ):

138. Եւ-ը զգալի փոփոխութիւն է ենթարկվել բնեւ բա-

ռում, որին բարբառում համապատասխանում է ր'իրեւ ձևը, որտեղ առաջին ե-ի գիմաց ի, իսկ ւ-ի գիմաց ր կա:

Կեղեւ-ի բառավերջի ւ-ի գիմաց Մշո բարբառն ունի բ. կեղեւ > քէղէր:

ՈՒՅ, ՈՒԷ, ՈՒԵ, ՈՒԻ

139. Գրաբարյան ուա երկբարբառին Մշո բարբառում բոլոր գեպքերում համապատասխանում է վա-ն. շուարել > շրվարել (կա և շիվարել ձևը), աստուած > աստված (կա և ասպած, ասված), աստվածածին > աստվածածին (կա և ասպարածին, ասվածածին), լիզուանի > լէզվանի'գ, թթուաշ > թրթվաշ, չուան > չրվան, նուազ > նրվազ, ձուածեղ > ձ'րվածեղ, զուարթ > զրվարթ, թուական > թրվազան, բուրուս > բուրվաւ, լուացք > վրլացք:

140. Գծուար, գծուարանալ բառերում ուա երկբարբառի ու-ն սղվել է, և բառերը ստացել են դ'ըծար, դ'ըծարնալ ձևը:

Ապսպուարել բառում ուա երկբարբառը բոլորովին սղվել է և բառը կա արքսպրել ձևով:

141. Ուե, ուե, ուի երկբարբառներով բառերը Մշո բարբառում շատ սակավաթիվ են. այդ երկբարբառներին համապատասխանում են հետեյալ հնչյունները. աղուեսաքուն > աղվըսքուն, աղուես > աղվէս, բուեձ > բրվէջ, աղուեսուկ > աղվըսուկ, ցրուել > ցրվրել, քրթուել > քրթվել, թթուել > թրթվել, նուիկ > նրվիկ:

ԵՕ

142. Եօ երկբարբառը սակա է եօք բառում, որը ունենք յօք ձևով: Այդպես են հնչյունափոխվում և յօք-ից կազմված բոլոր բարդ բառերը:

Ա Մ Փ Ո Փ Ո Ի Մ

143. Ամփոփելով տեսնում ենք, որ Մշո բարբառում գրաբարյան երկբարբառները կրել են հետեյալ կարեւոր փոփոխութիւնները.

Տեղի է ունեցել երկբարբառների պարզեցում, այսինքն գրաբարյան այս կամ այն երկբարբառին Մշո բարբառում, ինչպես և մեր լեզվի շատ և շատ բարբառներում, համապատասխանում է պարզ հնչյուն. այսպես.

- ա) Այ երկբարբառի գիմաց կան ե, ը, ի, օ, ա ձայնավորները:
- բ) Այ երկբարբառը պարզեցվում է բառավերջում:
- գ) Աւ երկբարբառի գիմաց մեծ մասամբ կա օ ձայնավորը:
- դ) Եա երկբարբառին համապատասխանում է Է-ն:

ե) Եւ-ի գիմաց բարբառում, բացի Է-ից, առկա են և ա, ի- ու ձայնավորները:

144. Նույն ձևով իւ, ոյ, եւ, ուա, ուե, ուն, ուի երկբարբառների և եայ, եաւ եռարբարանների գիմաց առկա են պարզ հնչյուններ:

ա) Իւ-ի գիմաց բարբառս ունի ի, Է, յե, ու:

բ) Ոյ-ի գիմաց՝ ու, օ:

Տեղի է ունեցել երկբարբառների այս կամ այն ձայնավոր հնչյունի սղումը կամ վերափոխումը մի այլ հնչյունի. բացի գրանից, Մշո բարբառում առկա են գրաբարյան երկբարբառներով բառեր:

Գ. ԲԱՂԱՉԱՅՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Չայնեղ պայթակաճճեր

Յ

145. Գրաբարի բ ձայնեղ պայթակաճճի գիմաց Մշո բարբառում կա ձայնեղ շնչեղ պայթակաճճի բ՛. բաժան>բաժան, բակլալ>բազլա, բաղնիք>բաղնիք, ս, բաղձանք>բալիցանք, բանալի>բանիք, ս, բարակ>բրբազ, բարեաւ>բ՛արօզ, բարեխօս>բ՛արեխօս, բարեկամատէր>բ՛արեկամատէր, բարձ>բ՛արց, բարձր>բ՛անցր, բեռն>բ՛եռ, բեւեռ>բ՛իրեռ, բոլորել>բ՛օլորել, բոպիկ>բ՛օրիգ, բորակ>բ՛օրագ, բորոտ>բ՛օրոգ, բուռն>բ՛ուռ, բուսանել>բ՛ուսնալ, ել:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. — Չայնեղ պայթակաճճի բ-ի, ինչպես և մյուս ձայնեղ պայթակաճճիների գիմաց կողմ ձայնեղ շնչեղ պայթակաճճիները (բ>բ՛, գ>գ՛, զ>զ՛, ձ>ձ՛, ջ>ջ՛) պահպանվում են և բարդ, սծանցված բարդածանցված բառերի մեջ, եթե բարդութիւն կզրի բառերը բարբառում առանձին գործածական են:

146. Բառամիջում բ ձայնեղ պայթակաճճի գիմաց բ կա մ և ն անգայիններից հետո. բամբակ>բ՛ամբազ, համբարձումն>համբարցում, ամբուլ>ամբուլ, թումբ>թումբ, համբուրել>համբուրել (գործածական է միմիայն կրոնական իմաստով «ավելորան համբուրել, խաչ համբուրել»), ամբար>ամբար, գմբէթ>քումբէթ:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. — Բացառութիւն են կազմում համբերել>համփերել և սրանից բարդված բառերը, որտեղ հնչյունական նույն դիրքում՝ մ անգայինից հետո կա

փ. այսպես. համբերող>համփէրող, համբերանք>համփէրանք, համբերութիւն>համփէրութիւն և այլն:

147. Բ ձայնեղ պայթակաճճի գիմաց, բոլոր դեպքերում բ՛ կա բարդված և սծանցված բառերի երկրորդ բաղադրիչ մասում: Ըստ որում բ՛, ինչպես նշեցինք, հիմնականում կա այն բառերում, որոնց մեջ բարդութիւնը գիտակցվում է. բերանաբաց>բացբէրան, միաբանութիւն>միաբանութեն, միաբերան>միաբէրան, անբախտ>անբախտ, անբան>անբ՛ան, անբարեկամ>անբարէկամ, անբաժան>անբ՛աժան, գլխիբաց>գ՛լխիբաց:

148. Բառամիջում բ ձայնեղ պայթակաճճի պահպանվել է նաև երկու ձայնավորների միջև. ինչպես և ձայնավորից հետո. արեղայ>արեղա, բարեկական>բ՛արեղագան (կա և բարբառագան ձևը):

149. Բառավերջում բ ձայնեղ պայթակաճճի նույնութիւնը պահպանվել է այք>այք, թումբ>թումբ բառերում, որոնցից առաջինը գրական փոխառութիւն է, իսկ երկրորդում բ-ի պահպանումը բացատրվում է մ շրթնայինի առկայութեամբ:

150. Բառամիջում, ինչպես և բառավերջում բ-ի գիմաց խուլ պայթակաճճի կա ղր հնչյունախմբի մեջ, որը ամբողջապես հընչյունափոխվել է իւլ-ի (ղ-ի մասին, տես § 242):

Բ ձայնեղ պայթակաճճի խլացման այս օրենքը, առանց բացառութեան, գործում է բոլոր այն դեպքերում, երբ ձայնեղ պայթակաճճի բ-ն հանդես է գալիս խուլ պայթակաճճիների կամ խուլ շփականների հետ. աղբ>ախպ, աղբանոց>ախպանոց, աղբիւրակն>ախպրագ, աղբիւր>ախպուր, եղբայր>ախպէր, եղբայրասպան>ախպէրասպան, եղբայրութիւն>ախպրութեն, թուղբ>թուխպ, ողբ>օխպ, ողբալ>օխպալ, հօրեղբայր>հօխպէր, հօրեղբորկին>հօխպրկին:

151. Բառամիջում, ինչպես և բառավերջում բ-ի գիմաց շրնչեղ խուլ փ կա բ ձայնորդից հետո. արեկնալ>հարփել, բորբոս>բ՛օրփոս, բորբոքել>բ՛օրփրնքել, դարբին>դ՛արփին, դարբնոց>դ՛արփրնոց, լրբութիւն>լ՛րփութեն, լրբութիւն, սրբանոց>օրփանոց, ուրբաթ>ուրփաթ, սրբութիւն>սրփութեն, սրբել>սրփել, որբեայրի>օրփէվէրի, սուրբ>սուրփ:

152. Եթե մի կողմից ձայնավորից հետո և ձայնավորների միջև բ-ին համապատասխանում է բ (տես § 148), ապա մյուս կողմից, հնչյունական նույն պայմաններում բ-ի գիմաց առկա է փ. խաբել>խափել, խաբբալ>խափէփա, ծնեբեկ>ընէփիգ շրջափ տեսակ, չափազանց ամուր կփած ձու:

153. Բ-ի դիմաց փ կա նաև բոլոր այն դեպքերում, երբ բ-ն նախորդում է ք շնչեղ խուլին. երեքշարթի > իրեքշարթի, չորեքշարթի > չորեքշարթի և այլն:

154. Բ ձայնեղ պայթականի դիմաց բառավերջում բոլոր դեպքերում, բացի § 149, 150 նշվածներից, բարբասս ունի փ. դուբ > գ'ուփ, խար > խափ, երբ > լեփ:

155. Բ-ն կրել է սակավաթիվ ալլ փոփոխություններ.

ա) Բառակազմում բ-ի դիմաց փ կա բալախ > փալախ բառում.

բ) Բ-ի դիմաց դ կա բղէզ, բղիզ > դղէզ բառում.

156. Բառամիջում մը հնչյունախմբի մեջ ավելացել է բ. համարել > համբրել, թմրել > թմբրել և սրանցից բարդված ու ածանցված բառերում:

Գ.

157. Գրաբարի ձայնեղ պայթական գ-ի դիմաց Մշո բարբառը բառակազմում ունի ձայնեղ շնչեղ պայթական գ'. գաղաթն > գ'աքաթ, գաղտուկ > գ'ոխտուգ, գան > գ'ան եղզվանք, գարշիկ > գ'արշել, գետառ > գ'էդառ, գերանդի > գ'էրընդի, գերփել > գ'ըրփել, գինդ > գ'ինդ, գլխավար > գ'ըլխըվեր, գլուխ > գ'ըլօխ, գողի > գ'օթի ճծուլ, պղերգ, դուբ > գ'ուփ, դունդ > գ'ունդ, դուշ > գ'ուշ, գուսան > գ'ուսան, դօտի > գ'օդի, գտանել > գ'ըգնալ, գորտ > գ'որդ, գուլպալ > գ'ուլբա:

158. Բառամիջում գ ձայնեղ պայթականի դիմաց գ կա.

ա) Երկու ձայնավորների միջև և ձայնավորից հետո. հետևյալ գրական փոխառությունների մեջ, ազուգալք > ազուգա, տուգատ > տուգազ ճթուլ, վհատ, նիհար, ազուա > ազուավ, ցաւազար > ցավազար.

բ) Ն ռնգայինից հետո. անգ > անդ, գանգ > գ'անդ, դանդակ > դանդագ, դանդակատուն > դանդադատուն, կորնգան > կորընգան:

159. Բառամիջում գ ձայնեղ պայթականը հնչում է շնչեղ ձայնեղ բարդ և ածանցյալ բառերի երկրորդ բաղադրիչ մասում. ամենագէտ > ամենագ'էդ, անգէտ > անգ'էդ, անգին > անգ'ին, արենագին > արընգ'ին, արինագոյն > արընգ'ուն, արծաթագործ > արծաթագ'ործ, բարեգործութիւն > բ'արէգ'օրծութիւն, ժամագիրք > ժամգ'իրք, ձեռագիր > ձ'եռացագ'իր, տարեղլուխ > տարէգ'ըլօխ:

Ծանոթութիւն.— Այս դեպքում ևս, ինչպես և մյուս ձայնեղների դեպքում գործում է նույն օրենքը, որը նշվեց բ'-ի մասին խոսելիս:

160. Բառամիջում գ ձայնեղ պայթականի դիմաց խուլ շնչեղ պայթական ք կա. ա) երկու ձայնավորների միջև. ագանելի > հաքնէլիք, անհոգի > անհօքի, անօգուտ > անօքուդ, գաղաթն > գ'աքաթ, երկրպագութիւն > էրզըրպաքութիւն, թագաւոր > թաքավոր, թաքուհի > թաքուի, հոգալ > հօքալ, հոգեդարձ > հօքէվարց, հոգի > հօքի, ճրագու > ճրաքու, շոգալիք, շոգոլի > շօքիլք, ոգի > հօքի, տայգր > տէքըր, պագանել > պաքել:

բ) Ձայնավորից հետո. ճգնաւոր > ճըքնավոր, մզահոտ > մըքլահոդ:

գ) Բ-ից հետո. կարգել > կարքել, Մարգար > Մարքար, մարգարէ > մարքարէ, մարգարիտ > մարքըրիդ, պարգև > պարքիվ, Սարգիս > Սարքիս:

161. Բառավերջում գ-ի դիմաց բոլոր դեպքերում կա ք.

անոգ > անոք, պատարագ > պատարաք, գոգ > գ'ոք, երզ > լերք, էգ > էք, կարգ > կարք, հոգ > հոք, ձագ > ձաք, ձիգ > ձ'իք, ճրագ > ճրաք, մարագ > մարաք, շոգ > շոք, սրագ > սրաք, պատարագ > պագարաք, պատրոյգ > պագրուք, սուգ > սուք, փափագ > փափաք:

162. Գ-ի դիմաց խուլ շնչեղ պայթական ք կա նաև զգ հընչունախմբի մեջ, որը ամբողջապես հնչյունափոխվելով դառնում է սք, թե բառամիջում և թե բառավերջում (Ջ-ի մասին տես § 235). սզգ > սսք, ազգական > սսքագան, ազգասէր > սսքասէր, անզգամ > անըսքամ, անզգամութիւն > անըսքամութիւն, ազգատոհմ > սսքատոյմ, անզգամեցուցանել > անըսքամեցուցել:

163. Բառամիջում և բառավերջում գ-ի դիմաց գ կա և ռնգայինից հետո. գանգատ > գ'անգադ, գանգատել > գ'անգըդել, էղունդ > էղունգ, ըղունդ, երանդ > աննգ, ժանդ > ժանգը, ժանգահամ > ժանրգահամ, ժանգատեցուցանել > ժանգրօղցուցել, ժառանգ > ժառանգ, հանգամանք > հանգամանք, հանգիստ > հանգիստ, հանգուց > հանգուրց, հինգ > հ'ինգ:

164. Բառամիջում նույն հնչյունական դիրքում և ռնգայինից հետո ք կա անգամ > անքամ բառում:

165. Բացի նշված օրինաչափություններից, գ-ն կնթարկվել է մի քանի փոփոխությունների, որոնց օրինակները շատ չեն.

ա) գայթիլ > քեթիլ, որտեղ բառակազմում գ-ի դիմաց կա ք-բ) գ-ն դուրս է ընկել. կանգնել > կանել, կանել:

166. Գրաբարի ձայնի պայթական զ-ի դիմաց բառակերպում Մշո բարբառը ունի ձայնի շնչի պայթական զ'. դադար > գ'աթար, դադան > գ'ասց, դաշա > գ'աշտ, գատարի > գ'արդուդ, գատուն > գ'ագում, դարբին > գ'արբին, դարձ > գ'արց, դարպաս > գ'արվազա, դրոմ > գ'րթում, դեղադիր > գ'էղգ'իր, դեռ > գ'րո, դերձան > գ'էրցան, դէզ > գ'էզ, դէմ > գ'էմ, դէպ > գ'ըբա. դժուար > գ'րժար, դիւան > գ'իվան, դող > գ'ող, դրացի > գ'ըրացի, դիպուկ > գ'իբուգ ճիւմար, խելագարված:

167. Բառամիջում զ-ի դիմաց զ' կա բարդ և անանցավոր բառերի երկրորդ բաղադրիչ մասում. անդարձ > անգարց, չգողալ > չըգողալ, արդարագատ > արթարագադ, անդաւանան > անդավաւան, անդաւանալի > անդ'աւանէլի, անդադար > անդաթար, դեղադիր > գ'էղգ'իր:

168. Բառամիջում, ինչպես և բառակերպում զ-ի դիմաց ք կա ք ձայնորդից հետո. անարդար > անարթար, անմարդ > անմարթ, արդար > արթար, աւելորդ > յէվէլնորթ, բարդ > ք'արթ ճիւտի դեզ, բարդի > ք'արթի ճիւտի, բուրդ > ք'ուրթ, բրդագգեալ > ք'ըրթ գ'ըզուգ, բրդեղէն > ք'ըրթէղէն, բրդի > ք'ըրթի, երդ > յէրթիգ, երդուն > յէրթում, գարդ > գարթ, գարդարանք > գարթարանք, գարդնուլ > գարթնի, լեարդ > լէրթ, մարդ > մարթ, վարդ > վարթ, մարդակ > մարթակ, մարդագլուխ > մարթագ'ըլօխ, միջնորդ > միջնորթ, ուղղորդ > ողորթ, փոխանորդ > փօխնորթ, մակարդի > մագըրթի, հաղորդ > հողորթ, ճանապարհորդ > ճամփորթ (կա նաև ճամխորթ ձևը):

Մանրթութուն.— Բացառութուն ևն կազմում զրական լեզվից անցած գերդաստան > գ'էրդաստան, խարդախ > խարդախ, խարդախութիւն > խարդախութին, կորդ > կորդ և օտար լեզվից փոխառնված դարդ > դարդ բառերը, որտեղ նույն հնչյունական պայմաններում զ-ն մնացել է անփոփոխ:

169. Բառամիջում, ինչպես և բառակերպում զ ձայնի պայթականը և ընդգլխից հետո պահպանվել է նույնութիւնը. անդ > հանդ, անդէն > րնդէն, անդունք > յանդունք¹, գերանդի > գ'էրընդի, դինդ >

գ'ինդ, գնդել > գ'ընդել, գունդ > գ'ունդ, գրանդ, գրանդի > գ'ըրընդի, թինդ > թունդ, խոնդատ > խըընդատ, ծնդական > ծըընդական, ծնունդ > ծընունդ, հիւանդ > հիվանդ, հիւանդոտ > հիվընդոդ, հնազանդ > հընազանդ, մարմանդ > մարմանդ, պինդ > պինդ, սանդ > սանդ, քանդել > քանդել, փոխինդ > փօխինդ (կա և փօխինձ ձևը), սանդուղք > սանդուխք, սանդուխտ:

170. Բառամիջում զ ձայնի պայթականը նույնութիւնը պահպանվում է նաև մնացած բոլոր դեպքերում, բացի § 168-ում նշվածներէ: Մի քանի բառերում միայն զ-ի դիմաց կա ք. գողի > գ'օթի ճծուլ, պղերդ, գողութիւն > գ'օթութիւն ճծուլութուն, պրդերգութուն, դադար > գ'աթար, դադարել > գ'աթրել ճոգնել, դագարեցուցանել > գ'աթրեցուցել ճոգնեցնել, գրոմ > գ'րթում և այլն:

Բերված այս և մի քանի այլ օրինակների մեջ զ-ի դիմաց ք-ի առկայութիւնը տարնմանման արդյունք է, որի մասին տե՛ս համապատասխան գլխում:

171. Թեև և ընդգլխից հետո զ-ի դիմաց բարբառս հիմնականում ունի զ, բայց շատ բառերում բառամիջում և բառակերպում և ընդգլխից հետո զ-ի դիմաց առկա է և ք:

172. Գ-ի դիմաց խուլ պայթական ա կա ղ գ հնչյունախմբի մեջ, որն ամբողջովին հնչյունափոխվել է խա-ի (զ-ի մասին տես § 242), խեղդ > խխտ, խեղդել > խխտել, բաղդ > ք'ախտ, բաղդաւոր > ք'ախտավոր:

173. Մշո բարբառում, առանց բացառութան, բոլոր դեպքերում եզակի 2-րդ դեմքի դիմորոշ զ հողին համապատասխանում է խուլ պայթական ա-ն. աչքդ > աչքտի, ձեռքդ > ձ'եռքտի, ոտդ > վողտի, գլուխդ > գ'ըլօխտի, հացդ > հացտի, ջուրդ > ջ'ուրտի, տունդ > տունտի, ուժդ > ուժտի:

174. Բացառութունների թվին պետք է դասվի այն փաստը, որ բառակերպում զ-ի դիմաց ք կա ղորդալ > թըըրըթալ բառում: Այս դեպքում երկրորդ զ-ն ք-ից հետո դարձել է ք, որը բխում է բարբառի հնչյունական օրինաչափութիւններից, և այդ ք-ն ազդելով առաջին զ-ի վրա, նրան ևս դարձրել է ք:

175. Բառամիջում ղ է ավելացել և և ք բաղաձայնների միջև. սանք > սանդըր, մանք > մանդըր, ծանք > ծանդըր: Գ է ավելացել և ղրոբի > գ'ըրօրի բառում:

176. Հայերենի և ձայնի պայթականի դիմաց Մշո բարբառում բառակերպում կա ձայնի շնչի պայթական ւ'. ձագ > ձ'աք,

¹ Գործածական է միայն ճիւղուկը պայթում, շոյան քարէ ուն էղի արտահայտութիւն մեջ, որը սսվում է մի շատ տեղում, վատ բան տեսնելիս կամ լսելիս:

ձախն > ձէն, ձաւար > ձ'ավար, ձեղէն > ձ'ըզնէ, ձեռագիր > ձ'էռագիր, ձեռք > ձ'եռք, ձէռնաքաշութիւն > ձ'էռնաքաշութեն, ձեր > ձ'ըր, ձոր > ձ'որ, ձիւթ > ձ'ութ, ձիւն > ձ'ուն, ձուազեղ > ձ'ըվածեղ, ձ'ըվածեխ, ձուկն > ձ'ուկ:

177. Բառամիջում ու բառափերջում և ձայնեղ պայթականը անփոփոխ է մնում և սնդալինից հետո. աղանձ > աղանձ, աղանձակ > աղանձակ, անձն > անձ, անձրե > անձրեվ, անձրեւաջուր > անձրեվաջ'ուր, բրինձ > բ'ըրինձ, ընձիւղ > ընձուղ, թանձր > թանձրր, թանձրանալ > թանձրնալ, թանձրացուցանել > թանձրցուցել, ինձէն > ընձնէ, խանձ > խանձ, խանձել > խանձել, խանձող > խանձող, խանձրահամ > խանձրահամ, խանձրահոտ > խանձրահոդ, խնձոր > խընձոր, կաղկանձել > կողղընձալ, հնձել > հընձել, հունձ > հունձ, հունձք, պղինձ > պըղինձ, սինձ > սինձ:

178. Զ ձայնեղ պայթականի դիմաց և կա բարբաթ և անհղ-ված բառերում. անձախն > անձ'էն, կիսաձախն > կիսաձ'էն, հաւձաղ > հավձ'աք, անձէթ > անձ'էթ, անձաւար > անձ'ավար, քաղցրաձախ > քախցրաձ'էն:

179. Բառամիջում և-ի դիմաց ց կա՝ ր-ից հետո. արձակ > յարցագ, արձակել > յարցըգել, բարձումն > բ'արցում, բարձել > բ'արցել, գերձան > գ'էրցան, փորձանք > փորցանք, բարձր > բ'անցըր, համբարձումն > համբարցում, դարձաւոր > դ'արցըվոր, դարձուցանել > դ'արցուցել, բարձրամիտ > բ'անցրամիդ, բարձրանալ > բ'անցըրնալ:

Մ ան ո թ ու թ յ ու ն. — Բացառութեան են կազմում լորձըն > լորձ, լորձունք գրական փոխառութեանները, որտեղ հնչյունական նունն զիրքում և-ն մնում է անփոփոխ:

180. Ջ-ի դիմաց ց կա և զ հնչյունախմբի մեջ, որը ամբողջովին հնչյունափոխվել է խց-ի. բաղձանք > բ'ախցանք, դաղձն > դ'ախց:

181. Բ-ից հետո և-ի դիմաց ց կա նաև բառափերջում. բարձ > բ'արց, դարձ > դ'արց, խորձ > խուրց, հոգեդարձ > հոքէդարց, որձ > վորց, վարձ > վարցք:

Ջ

182. Հայերենի ջ ձայնեղ պայթականին Մ շո բարբաթում բասկզրում համապատասխանում է ձայնեղ շնչեղ պայթական ջ'.

ջարդել > ջարթել, ջիղ, ջիւ > ջիւ, ջին > ջին, ջոկ > ջոդ շառանձինք, ջոկել > ջոգել, ջուհակ > ջուլաղ, ջուր > ջուր, ջրաթաթախ > ջըրթըթախ, ջրաղաց > ջաղաց, ջաղաչ, ջրաղացապան > ջախըբան, ջրիկ > ջըրիկ, ջրուոր > ջըրվոր, ջրջուր > ջըրըրուր:

183. Բառամիջում ջ ձայնեղ պայթականի դիմաց առանց փոփոխութեան ջ՝ կա բարդ և ածանցված բառերի երկրորդ բաղադրիչ մասում. աղաջուր > աղջուր, արենաջուր > արընջուր, անջրագաց > անջաղաց, անջաղաչ:

184. Բառամիջում և բառափերջում ջ-ի դիմաց ջ կա և սնդալինից հետո. բանջար > բ'անջար, բանջարաւոր > բ'անջըրվոր, երինջ > էրինջ, կամուրջ > կարմունջ, մունջ > մունջ, նահանջ > նըհանջ, նարնջագոյն > նարընջի¹, նինջ > նունջ, ննջեցեալ > նընջեցլալ, տանջանք > տանջանք, տանջել > տանջել, փունջ > փունջ:

185. Ջ-ն պահպանվել է նաև մի քանի գրական փոխառութեաններում. որոջիկ > օրօջիկ, պղպշալ > բըխպըշալ, պղպշակ > բըխպուշ բառերում:

186. Բառամիջում և բառափերջում ջ-ի դիմաց ջ կա ղջ հընչյունախմբի մեջ, որը ամբողջովին հնչյունափոխված է խջ-ի. աղջիկ > ախջիկ, առողջ > առոխջ, առողջութիւն > առոխջութեն, շեղջ > շեխջ, շեղջել > շեխջել, ողջ > վոխջ, ողջոյն > օխջում ողջութիւն > վօխջութեն:

187. Բառամիջում մնացած բոլոր դեպքերում առկա են ջ ձայնեղ պայթականի խլացման դեպքեր, ձայնափոխներից հետո, ձայնափոխների միջև և ր-ից հետո. աջիկ > աչիկ, աջող > յաչող, աջողակ > յաչողակ, առաջաւ > յառչէվ, առաջի > յառչի, արջառ > աչառ, իջանել > յիչնալ, իջաւան > յիչէվան, իջուցանել > յիչուցել, մէջք > մէչք, միջնեկ > միչնեղ, միջնորդ > միչնորթ, ոջիլ > օչիլ, քաջութիւն > քաչութեն:

188. Բառափերջում բոլոր դեպքերում ջ-ին համապատասխանում է ջ. աջ > աչ, առաջ > յառչէ, ափամէջք > ափամէչ, մէջ > մէչ, մըջ:

189. Բառամիջում և վերջում ջ-ի դիմաց ջ կա նաև ր-ից հե-

¹ Կործ է ածվում միմիայն շքմէն ներք ներքվալ, մրնաց նարընջի^ն արտահայտութեան մէջ, որը նշանակում է. իբր ամեն ինչ արվե՞ց, մնաց այս մի բանը, վերջին անգիլե՞ք:

տո. արջ > չըբէ, թըբէ > թըբէ, շուբէ > շուբէ, շըբէ > շըբէ,
ստեբջ > ըստեբջ, վեբջ > վեբջ:

Ծ ա ն ո թ ու թ լ ու ն. — Տվյալ դեպքում բացառութիւն
է կազմում բաղարջ > բ'աղարջ բառը, որտեղ ը-ից հետո ջ-ն
մնացել է անփոփոխ:

190. Միջակ բառի մեջ հակառակ օրինաչափ երևույթի ջ-ն
պահպանվել է, դարձյալ բառի մասնախն կողմը դեր է խաղացել.
միջակ > միջագ, նշանակում է մեծակ միջնակ, իսկ հնչյունափոխ-
ված միջակ > միջագ ձևը՝ միջին:

ԽՈՒՆ ԳԱՅԹԱԿԱՆՆԵՐ

Պ

191. Հայերենի խուլ պայթական վ-ի դիմաց Մշո բարբա
ռում, բառակցրում կա ալ. պագանել > պաքել, պալար > պալար,
պակաս > պագաս, պահել > պալել, պայծառ > պոծառ, պաշտել >
պաշտել, պապ > պար «հայր», պառակ > պառեգ, պառա > պա-
ռավ, պատան > պաղանք, պատարագ > պաղարաք, պատիժ > պա-
ղիջ, պաղիճ, պատրուկ > պաղրուք, պտուտել > պըղոթել «շըբէլ,
զըտանել, պտուլտ գալ, պտտեցնել»:

192. Բառամիջում վ-ն պահպանվում է, եթե նրանով սկսվող
բառը կազմում է բարդված կամ ածանցված բառի երկրորդ բա-
ղադրիչ մասը. ձիւնապատ > ձ'ընապտգ, աստուածապաշտ > աստ-
վածապաշտ, մեծապատիւ > մէնծապաղիվ, հազարապատիկ > հըզա-
րապաղիգ, անպատիւ > անպաղիվ, անպակաս > անպաղաս, անպէս >
էնպէս, ընպէս, կողմնապահ > կողմնապա, կողմնապալ, տնապահ >
տընպա, տընպալ:

193. Բառամիջում և բառավերջում ալ խուլ պայթականը նույ-
նությամբ պահպանված է սալ, շալ հնչյունախմբերի մեջ, որը բա-
ցատրվում է ս, շ խուլ շփականների ազդեցությամբ. սպասել >
ըսպասել, սպանել > ըսպանել, ոսպն > վոսպ, պաշտպանել > պաշ-
պանել:

194. Մնացած բոլոր դեպքերում բառամիջում Մշո բարբա-
ռին հատուկ է ալ խուլ պայթականի ձայնեղացումը: Այն ձայնե-
ղանում է երկու ձայնավորների միջև, ձայնավորներից, ր ձայնոր-
դից առաջ և հետո, ինչպես և ալլ դեպքերում. ապառաժ > աբառաժ,

ապա > չըբա, ապրիշում, ապրշում > արբրշում, բոպիկ > բ'օբիգ, կա-
պան > կաբան, կապել > կաբել, կապոյտ > կաբուդ, կողոպուտ > կօղօ-
բուդ, ճանապարհ > ճամփա (կա և ճամբախ), ճոպան > ճօբան,
ապարանջան > արբրշան, ապրանք > արբանք, ապրուստ > արբուստ,
կապերտ > կարբեդ:

195. Բառավերջում ևս ալ խուլ պայթականի դիմաց Մշո բար-
բառը ունի ձայնեղ ք, բացառյալ բոլոր այն դեպքերը, երբ վ-ին
նախորդում է որևէ խուլ շփական, որի հետևանքով և վ-ն պահպան-
վում է. ականակապ > ազընկաք, ամպ > ամբ, բերանակապ > բ'էբըն-
կաք:

196. Բացի ալս օրինաչափ փոփոխութիւններից, վ-ն են-
թարկվել է մի քանի մասնակի հնչյունափոխութիւնների: Ինչ-
պես արդեն տեսանք, հայերենի խուլ պայթական վ-ին Մշո բար-
բառում, բառասկզբում համապատասխանում է վ-ն, սակայն եր-
բեմն, նրա դիմաց, բառասկզբում հանդես են գալիս ալլ հնչյուն-
ներ:

ա) Պ-ի դիմաց՝ վ. պատտտել > փաթթել, պատել > փաթել,
պրծանել > փըբբընալ (կա և պրծընալ ձևով):

բ) Պ-ի դիմաց՝ բ. պարուրել > բալուրել, պղպջակ > բըբի-
պուջ, պղպջալ, պղպջանալ > բըբապըջալ, պիտի > բըբի, պատա-
տուկ > բաթթթուգ:

գ) Բառամիջում վ-ի դիմաց կա վ. սպիտակ > սիվդագ,
սպիտակել > սիվդըղել, սպիտակուց > սիվդըղուց, սպիտակութիւն >
սիվդըղութիւն, թաթպան > թաթվան:

դ) վ-ի դիմաց՝ փ ճանապարհ > ճամփա, ճանապարհորդ >
ճամփորթ բառերում:

Ծ ա ն ո թ ու թ լ ու ն. — Ճանապարհորդ բառը Մշո բար-
բառում առկա է համխորթ ձևով:

Կ

197. Հայերենի խուլ պայթական կ-ի դիմաց Մշո բարբառը
բառասկզբում ունի կ. կաթեցուցանել > կաթցուցել, կաթիլ > կա-
թիլք, կաթն > կաթ, կաղկանձել > կօղղընձալ, կամուրջ > կարմունջ,
կալծ > կէձ, կանախ > կանէփ, կանգնել > կանել, կալնել, կաշկառ >
կօշկոռ, կապերտ > կարբեդ, կապոյտ > կաբուդ, կոխ > կըռիվ, կրունկ,
կըրուկ > կըրունգ, կցել > կըցել:

198. Բառամիջում կ-ի դիմաց կ կա բարդ և ածանցված բա-
ռերի երկրորդ բաղադրիչ մասում. շատակեր > շաղակեր, անկապ >

անկար, անկարոտ > անկարող, անկնունք > անկրնունք, աչքակա-
պութիւն > աչքակարութիւն, մարդակեր > մարթակեր, բերանակապ >
բէրընկար, մաջկալ > մաչկալ, տկանակապ > ազընկար, երկնակա-
մար > էրզնակամար:

Օ ա ն ո թ ու թ լ ու լ ն . — Այս և մնացած բոլոր նման դեպ-
քերում մեծագույն նշանակութիւն ունի բառի կազմութիւն
և նրա իմաստի ըմբռնման հանգամանքը:

Ածանցյալ և հատկապես բարդ բառերի երկրորդ բա-
ղադրիչ մասի կ-ն (ինչպես և մյուս խուլ պայթականները),
հակառակ վերոնշխարհ պարագրաֆում նշված օրինաչափ
պրոցեսի, ձայնեղանում է, եթե բարդ կամ ածանցյալ բա-
ռի երկրորդ բաղադրիչը բարբառում չի գիտակցվում որպես
առանձին բառ:

Այսպես, օրինակ, համաձայն բարբառում գործող օրի-
նաչափ հնչյունական օրենքի հաւելիք բառի երկրորդ՝
«կիթ» մասի կ-ն պետք է մնար անփոփոխ, մինչդեռ բար-
բառում այն ձայնեղանում է, որովհետեւ կիթ-ը որպես
առանձին բառ չի գիտակցվում, և բառը հանդես է գալիս
հավզիք ձևով: Նույնը պետք է ստել ժամկոչ, կերակուր,
ջրադացպան, տանտիկին բառերի մասին, որոնք բարբա-
ռում ունեն ժամկոչ, կէրպուր, լ, ջ՛ախչբբան, տանդրգին
ձևերը:

199. Խուլ պայթական կ-ին սկի, շկ հնչյունակապակցութիւնների
մեջ համապատասխանում է կ. սկսանիւ > ըսկրսել, մշակութիւն >
մըշկութիւն, մրսկան > մըրսկան, ոսկի > օսկի, օսկր > օսկոր, հաս-
կանալ > հասկընալ, հաստանալ > հաստընալ, տատասկ > տադասկ,
աշակերտ > աշկերդ, իսկ > իսկը, լեաշկ > լըշկ, կաշկատ > կօշկոտ, կաս-
կարալ > կասկարէզ, կուշտ > կուշտ:

200. Որպես օրինաչափ հնչյունափոխական երևույթ, Մշո
բարբառում խուլ պայթական կ-ին բառամիջում մյուս դեպքերում
համապատասխանում է գ-ն.

ա) Երկու ձայնավորների միջև, ձայնավորից հետո. տկա-
նակապ > ազընկար, տկօս > ազօս, բակլալ > բ՛աղլա, բնակել > բ՛ը-
նագել, բ՛ընագրիւ, թիկունք > թիգունք, լալական > լալգան, լտկել >
լըգել, կերակուր > կէրպուր, լ, հակառակ > հադառ, ճկոյթ > ճըգութ:

բ) Բ ձայնորդից հետո. երկաթ > էրգաթ, ուղարկել > իւրրղել,
կարկուտ > կարգուդ, ներկել > նէրգել, փրկիչ > փըրգիչ, երկին > էր-
գինք, երկիր > էրգիր, երկիւղ > էրգուդ, գրկել > գըրգել, գարկանել >

գարգել, երկայն > յէրգէն, դիրկ > գ՛իրգ, էրկու > էրգու, էրգուս,
խարակել > խարգել:

գ) Ն ունգայիցից հետո. ընկեր > յընգեր, անկանել > յընգնալ:

201. Բառակերչում բոլոր դեպքերում, բացի § 199-ում նշված
դեպքերից, կ խուլ պայթականի դիմաց Մշո բարբառում առկա է
ձայնեղ գ. ակն > ազ, անթատակ > յանթէտագ, աղանեակ > էղէփէզ,
էղվընէզ, անառակ > անառագ, առակ > առագ, արձակ > յարցագ, աւե-
լուկ > ավիլուգ, բակ > բ՛ագ, բամբակ > բ՛ամբագ, բլթակ > բ՛րլթագ,
բորակ > բ՛օրագ, դատիկ > զադիգ, լեղակ > լօղագ, լուսնակ > լուս-
նագ, խակ > խագ, խալտառակ > խալդառագ, ծներկ > ծընէփիգ, կո-
կել > կօգել, ձուկն > ձ՛ուգ, պառակ > պառէգ:

Օ ա ն ո թ ու թ լ ու լ ն . — Թալ բառի մեջ բառավերջի խուլ
պայթական կ-ն մնում է անփոփոխ: Այստեղ ևս, ինչպես
և մյուս դեպքերում, նշանակութիւն ունի բառիմաստը.
բարբառում կա 1) քակ, 2) քագ, 3) քաք, բոլորն էլ ունեն
իրենց որոշակի իմաստը. 1) ցորեն ծեծելու գործիք, 2) թա-
գավորի թագ, 3) միայնակ:

202. Կ խուլ պայթականը ենթարկվում է հետևյալ մի քանի
մասնակի հնչյունափոխութիւնների.

ա) Կ-ի դիմաց ք կա կարուան > քարվան, կեղև > քէղև, կե-
ղևել > քէղրել բառերում:

§

203. Հայերենի խուլ պայթական ա-ի դիմաց Մշո բարբառը
բառակերպում ունի ա. տալգր, տազր > տէքըր, տալ > տալվ, տան-
ջանք > տանջանք, տաշտ > տաշտ, տապակ > տաբագ, տապակել >
տաբգել, տասն > տաս, տատակ > տադակ, տեսանել > տէանալ,
տէր > տէր, տիղմ > տիլ, տիրուհի > տիրուլի, տղմաթաթա > տըլ-
թըթախ, տնաշէն > տընաշէն, տնօրէն > տընօրէն, տուտն > տուդ:

204. Բառամիջում ա-ն նույնութիւյամբ պահպանվել է բարդ և
ածանցյալ բառերի երկրորդ բաղադրիչ մասում. մարդատեղ >
մարթատեղ, խ՛հօրեղբորլրտղա > հօխաօրտղա, հոգևտուն > հօքէտուն,
անտէր > անտէր, անտուն > անտուն, ազգատոհմ > ազգատոլմ,
ախն-
տեղ > ինատեղ, ինատելս, երկատեսակ > երգտէսագ, օտնատեղի >
օդացտեղ, տելս, տանուտէր > տանուտէր:

205. Տ խուլ պայթականի դիմաց գտնում ենք ա՛ խ, ս, կ, շ,
խուլերից և շնչեղ խուլերից հետո. խստոր > սըխտոր, տախտակ >
տախտագ, պաշտակ > պաշտել, պատրաստ > պազրաստ, հարուստ >

հարուստ, սաստել > սաստել, ստիպել > ըստիբել, վաստակել > վաստրգել, դաշտ > դաշտ, իմաստուն > յիմաստուն, զգեցող > գ'հատ, ստանալ > ըստանալ, հաստ > հաստ, հաստատ > հաստադ, ուխտ > ուխտ, ուխտաւոր > ըխտաւոր, նստել > նըստել, անբախտ > ամբ'ախտ, հաշտ > հաշտ, պատրաստ > պագրաստ, ապրուստ > արբուստ, սստառ > սստառ, աստուած > աստված, ասված, բախտ > բ'ախտ, խախտել > խախտել, զմբուխտ > զըմբուխտ (կա և զըմբութ), երախտիք > էրախտիք, տաշտ > տաշտ, երաշտ > էրաշտ, կռապաշտ > կըռապաշտ, կուշտ > կուշտ, հրեշտակ > հըրէշտագ, խոստովանել > խոստովանել, յստակ > յիստագ, հարուստ > հարուստ, անպէտ > անպէտք, արեւմուտք > արէվմուտք, հաւատ > հավադ, հավատք, պարտ > պարտք:

206. Բառամիջում ա-ի դիմաց ձայնեղ պայթական դ կա.

ա) Զայնավորների միջև. ազատիչ > ազադիչ, ազատութիւն > ազադութիւն, ատամն > ադամ, ատելի > ադէլի, ատենաճաս > ադէնաճաս, գետառ > գ'էդառ, գետին > գ'էդին, գետնաքար > գ'էդնաքար, գօտի > գ'օդի, խոցոտել > խոցօդել, կատար > կադար, կտաւ > կըդաւադ, կղաւ > կըդաւ, հատիկ > հադիկ:

բ) Ը ձայնավորից հետո. գտանել > գ'ըդնալ, կտոյց > կըդուց, կտրած > կըդրած, կըդրուգ, մտափոխ > մըդափոխ Շհի:

գ) Բ ձայնորդից առաջ և հետո. սրտացաւ > սըրդացաւ, աւետարան > աւէդարան, գորտ > գ'որդ, լորտու > լօրդու, խարտոց > խարդոց, թուխսիրտ > թուխիրդ, սիրտ > սիրդ, ծիրտ > ծիրդ:

207. Բառավերջում խուլ պայթական ա-ի դիմաց առկա է ձայնեղ դ գրեթե բոլոր դեպքերում, բացի § 205-ում նշվածից. պատ > պադ, ազատ > ազադ, մկրատ > մըգրադ, գորտ > գ'որդ, հաւատ > հավադ, խրատ > խըրադ, հօտ > հօդ, փալտ > փէդ, մօտ > մօդ, ճակատ > ճագադ, աղքատ > ախքադ, ամաչկոտ > ամչըգոդ, ամենամօտ > յըմնուց մօդ, անարատ > անարադ, անօդուտ > անօքուդ, արօտ > յարօդ, բորտ > բ'օրոդ, կարօտ > կարօդ:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. — Բացառութիւն կազմում է բ'նուտ «կեր, սնուցում» և զբանից բարդված բ'ըտել «ուժեղ կերակրել» գիրացնելու նպատակով» և փուռ «փտած» բառերը, որտեղ բառավերջի ա-ն մնում է անփոփոխ: Այստեղ նաև դեր է խաղացել բառիմաստը. հակառակ դեպքում վերոհիշյալ բառերը կշփոթվեին այլ բառերի հետ (բ'ութ, փութ):

208. Բացինշված օրինաչափ երևութներից, ա խուլ պայթականը Մշո բարբառում ենթարկվել է մի քանի մասնակի փոփոխութիւնների.

ա) ա-ի դիմաց բ կա. փետուր > փէբուր, փետրահան > փէբրահան.

բ) Տ-ի դիմաց ք կա շիտ > շիթ, լպուտ > լըբութ, հոտոտել > հօնթընթել, պատատուկ > բաթըթուգ, պատել > փաթել բառերում:

գ) Տ-ն դուրս է ընկել վատթար > բէթար, զիտենալ > գ'ինալ, աստուած > ասված բառերում: Վերջիններս գործածական են և ա-ն պահպանված ձևով:

դ) Տ է ավելացել փոխել > փոխտել բառում:

Պ

209. Հայերենի խուլ պայթական ծ-ի դիմաց Մշո բարբառը բառակզրում ունի ծ. ծազել > ծաքել, ծածկել > ծածկել, ծաղիկ > ծաղիգ, ծալր > ծէր, ծանր > ծանդըր, ծանօթ > ծանօթ, ծառայական > ծառագան, ծառանալ > ծառնալ, ծառգարդար > ծառգարթար, ծիծաղել > ձիձղալ, ծղօտ > ծըղօդ, ծնեքեկ > ծընէփիդ, ծնունդ > ծընունդ, ծնօղ > ծընօղ, ծուխ > ծուխ:

210. Բառամիջում ծ-ի դիմաց ծ կա բարդ և ածանցված բառերի երկրորդ բաղադրիչ մասում. ձնծաղիկ > ձ'ընծաղիդ, անծալր > անծէր, անծաղիկ > անծաղիգ, չծամել > չըծամել:

211. Բառամիջում խուլ պայթական ծ-ի դիմաց ձայնեղ պայթական ձ կա.

ա) Զայնավորների միջև, ձայնավորից հետո. ածանել > ածել, անիծանել > անիծել, զմտաւ ածել > մըդածել, ընծալ > ընծա, կալծակ > կէձագ, կծուահամ > կըձաահամ, կծուութիւն > կըձաութիւն, հեծանել > հէձնալ, մածուն > մաձուն:

բ) Բ ձայնավորից հետո. ածելել > արձըլել, ածելի > արձըլի, արածել > արձալ, արծիւ > արձիֆ, բարեգործ > բարէգ'որձ, կործել > կօրձել, պարծանք > պարձանք, պարծենալ > պարձէնալ (առկա են և պարզանք, պարզէնալ ձևերը):

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. — Այս և մնացած բոլոր դեպքերում պետք է նկատի ունենալ, որ տահասարակ բարբառին հատուկ է խուլ պայթականների ձայնեղացումը, սովորաբար բառամիջում: Այդ ձայնեղացումը տեղի կարող է ունենալ հնչյունական այլ դիրքերում ևս: Բառամիջում և

բառավերջում ծ-ին համապատասխանում է ծ միմիայն խուլ շփականներից, պայթականներից և շնչեղ խուլներից առաջ և հետո. անեծք > անէծք, լուծք > լուծք, ծածկել > ծածկել, ծուծ > ծուծք, կրակը ծեցուցանել > կրակը ծցուցել, կծկել > կրծկել և այլն (կարող են և ձայնեղանալ կրծգել և այլն):

212. Բառավերջում բոլոր դիրքերում, բացի նախորդ պարագրաֆում նշվածներից, խուլ պայթական ծ-ի դիմաց բարբառու ունի ձայնեղ պայթականն. արծ > էծ, անդամալուծ > անթամալուծ, անիծ > անիծ, գործ > գ'ործ, լուծ > լուծ, կալծ > կէծ, կսկիծ > կրսկիծ, կոտորած > կոգորած:

213. Բացի նշված օրինաչափություններից, ծ խուլ պայթականը բարբառում կրել է մի քանի մասնակի փոփոխություններ.

ա) բառակերպում ծ-ի դիմաց և կա ծանծաղ > ձանծաղ, ծանծաղել > ձանծղել, ծակ > ձրմա բառերում:

բ) ծ-ի դիմաց՝ և ծիրան > ճիրան, ծկոլթ > ճրգոլթ, ծորալ > ճէվալ, ծորեցուցանել > ճէվցուցել բառերում, և

գ) ծ-ի դիմաց ց. պրծանել > փրըցընալ, պրծուցանել > փըրցըցուցել:

ձ

214. Հայերենի և-ի դիմաց Մշո բարբառը բառակերպում ունի և. ճախարակ > ճախարգ, ճակատ > ճագաղ, ճայթել > ճրթալ, ճանաչել > ճանչընալ, ճանապարհ > ճամփա, ճանրախ, ճանապարհորդ > ճամփորդ, ճամխորթ, ճանկ > ճանգ, ճապաղել > ճարղել, ճարտար > ճարդար, ճրգնաւոր > ճրքնափոր, ճիւղ > ճուղ, ճոկան > ճոգան «գալփաղան», ճրագ > ճրրաք, ճրագու > ճրրաքու:

215. Բառամիջում և խուլ պայթականը նույնութիւնը պահպանվում է բարդ և ածանցյալ բառերի երկրորդ բաղադրիչ մասում. անճար > անճար, անճարութիւն > անճարութեն, անճրագու > անճրաքու, անճրագ > անճրաք, անճանապարհ > անճամփա, անճամբախ:

216. Բառամիջում մնացած դեպքերում խուլ պայթական և-ին համապատասխանում է ջ. դաւաճան > ղալաջան, կարճեցուցանել > կարջըցուցել, կճիճ > կըջուջ, կոճակ > կոջաղ, կրճատ > կըջաղ, հաճար > աջար:

Ծ ա ն ո թ ու թ յ ու լ ն. — Բառամիջում և-ն պահպանվել է կրճել > կըրճրացնել բառում, հակառակ դեպքում կրստացվեր կըրջել, որը այլ իմաստ ունի՝ մի տեղ հավաքված հեղուկը ամանով, մինչև վերջը սպառել, դուրս բերել:

217. Բառավերջում բոլոր դեպքերում և-ին համապատասխանում է ձայնեղ պայթական ջ. աղինճ > էղինջ, աճ > աջ, խիճ > խիջ, կարճ > կարջ, կճիճ > կըջուջ, կոճ > կոջ, կոշկոճ > կոշկոջ, ճանճ > ճանջ, ճենճ > ճենջ, որոճ > որոջ:

218. Բառամիջում և վերջում և-ին համապատասխանում է և միմիայն շփականից հետո. անխիղճ > անխիխճ, խիղճ > խիխճ, խղճալ > խըխճալ:

ձ-ի դիմաց բարբառում ղ կա միմիայն մեկ բառում՝ շիճ, շիճուկ > շըղուգ:

Շ Ն Ձ Ե Ղ Խ Ո Ւ Լ Պ Ա Յ Թ Ա Կ Ա Ն Ն Ե Ր

Փ

219. Հայերենի շնչեղ խուլ պայթական փ-ի դիմաց Մշո բարբառում, բառակերպում գտնում ենք փ. փալլ > փէլք, փալլել > փիլալ, փալլուն > փիլան, փալծաղն > փիճեղ, փաճեղ, փալտալ > փէղէ, փարատել > փարաղել, փեղղ > փեխկ, փին > փէին, փոխանորդ > փոխնորթ, փոխել > փոխակ, փողապատ > փոխապղ, փուռն > փուռ, փուտ > փուտ, փոկ > փոգ, փոք > փոր, փոխինդ > փոխինդ, փոխինձ, փողոց > փողոց «աղբանոց», փոշխառն > փոշէխառ, փոշի > փոշի «մոխիր»:

220. Բառամիջում ևս հին հայերենի փ-ին Մշո բարբառում համապատասխանում է փ-ն. դերփել > գ'ըրփել, ափլափել > ափըրփել, կփել > էփել, խփանել > խըրփել, ծեփուկ > ծէփուգ, միափերթ > մափերթ, ափամէջք > ափամէչ, շամփուր > շամփուր:

221. Փ-ին փ է համապատասխանում և բառավերջում. չափ > չափ, ափ > ափ, անթարթափ > անթարթափ, ափն > ափ, կփ > լիփ, լափ > լափ, խոփ > խոփ, կանափ > կանեփ, խուփ > խուփ, ծափ > ծափ, թեաթափ > թէվաթափ:

222. Փ խուլ շնչեղ պայթականի անփոփոխ մնալու օրինաչափ երևույթի կողքին Մշո բարբառում առկա են այդ հնչյունի մասնակի փոփոխությունների մի քանի դեպքեր, որտեղ փ-ի դիմաց բարբառու, հնչյունական տարբեր դիրքերում, ունի այլ հնչյուններ. եղած օրինակները հետևյալներն են. գրափոխութիւն ենթարկված փետուր > թէբուր բառի մեջ փ-ի դիմաց կա ձայնեղ պայթական ր.

Փ-ի դիմաց ձայնեղ պայթական ր կա և փլած > բըլած, բըլուգ, փլանել > բըլել, փուցանել > բըլցուցել, բըլուցել բառերում:

223. Հայերենի շնչեղ խուլ պայթական ք-ի դիմաց բարբառս ք ունի.

ա) Բառակազմում. քանանալ > քանանա, քաղաքացի > քախքըցի, քաղցր > քախցր, քալ > քէլք, քանգ > քընց, քանի > քընի, քառասուն > քառսուն, քարճիկ > քարաջիկ, քարշիկ > քաշիկ, քեզէն > քըզէն, քերական > քերէգան, քերթիկ > քըրթիկ, քէն > քէն, քիստ > քիստ, քշան > քըշան, քո > քու, քում, քուր > քուր, քուրջ > քըրջ:

բ) Բառամիջում. ինքնագլուխ > ինքնագլուխ, կաքաւ > կաքավ, ձեռնաքաշութիւն > ձեռնաքաշութիւն, աղքատ > ախքաղ, ալղքան > աղքան, իղաքան, ալնքան > ալնքան, ինաքան, գոքան > գոնքան, կրնքանալ > կրնքանէր, կնքաւոր > կրնքավոր:

գ) Բառակազմում. ապրանք > արբանք, արեւիք > արէվիք, բուք > բուք, դարդարանք > դարթարանք, երեք > իրեք, իւրենք > ուրանք, իք > իրք, խեք > խեք, կեանք > կրանք, դարմանք > դարմանք, ամօթանք > ամօթանք:

Մանուկները թուրքերէնէն «տղաներ» բառով բարբառս ք-ի դիմաց ունի կ, իսկ պատ բառով ս. պահք > պաս:

224. Մի քանի բառերում, բառակազմում եզակի թվի դեպքում ավելացել է ք, ուր, սակայն, ք-ն իբրև հոգնակերտ մասնիկ չի գիտակցվում (տես «Հոգնակիների կազմութունը» գլուխը): Բառակազմում ք է ավելացել լի > լիք բառով: Մանուկը բառի մեջ ք-ի դիմաց կա ա՝ սանդուխտ. սակա է և սանդուխք:

225. Հայերենի խուլ շնչեղ պայթական ք-ին Մշո բարբառում օրինաչափորեն համապատասխանում է ք-ն.

ա) Բառակազմում. թաթ > թաթ, թաթուկ > թանթիւն, թաթպան > թաթպան, թաթման, թեւթափ > թէվաթափ, թէ > թէ, թթա > թըթու, թակ > թակ, թագ > թագ, թաւալ > թարալ, թեթեւ > թէթով, թէթով, թառամեւ > թոռմեւ, թողու > թորգեւ, թընթոց > թընթոց:

բ) Բառամիջում. աղթարան > աղթարան, աղքատութիւն > ախքրդութիւն, խալթիկ > խէթիկ, անթի > անթի, անթեղ > անթեղ, անթարթ > անթարթ, անթարթափ > անթարթափ, արիւնա-

թաթախ > արընթըթախ, բլթակ > բըլթակ, ամօթանք > ամօթանք, կթղալ > կըթխալ:

գ) Բառակազմում. կանթ > կանթ, խալթ > խէթ, ամօթ > ամօթ, ծանօթ > ծանօթ, գագաթն > գագաթ, գմբէթ > քումբէթ, անամօթ > անամօթ, կաթն > կաթ, թուր > թուր, ձիւթ > ձութ, նաւթ > նըվթ, նալթ, երկաթ > էրգաթ, արծաթ > արծաթ:

Մանուկները թուրքերէնէն թ-ի դիմաց կա դ:

226. Հայերենի խուլ շնչեղ պայթական ց-ին Մշո բարբառում բոլոր դեպքերում համապատասխանում է ց-ն:

ա) Բառակազմում. ցած > ցածր, ցամաքիկ > ցամքիկ, ցըմքիկ, ցաւ > ցավ, ցաւադար > ցավազար, ցոյց > ցուց, ցորեան > ցորէն, ցուր > ցուրդ, ցրուկ > ցըվրիկ, ցող > ցօղ:

բ) Բառամիջում. գրացութիւն > գրացութիւն, երիցակին > իրիցակին, կցկցել > կըցկըցել, մացառ > մացառ, խոցոտել > խոցօղել, խփուցանել > խըփուցել, խցկել > խըցկել, բերանբացութիւն > բէրնբացութիւն, անցուցանել > յընցուցել, անցաւոր > յընցվոր:

գ) Բառակազմում. ամբարանոց > ամբրոց, բաց > բաց, բոց > բոց, դեղնուց > դէղնուց, երէց > էրէց, թնթոց > թընթոց, իւրեանց > ուրանց, խոց > խոց, ծոց > ծոց:

227. Յ-ի դիմաց ալ հնչյուն կա միայն շրաղաց > ջաղաչ, ց, շրաղացապան > ջախշրան բառերում:

Բառակազմում ց է ավելացել ուրուր > ցուրուր բառով:

228. Հայերենի խուլ շնչեղ պայթական չ-ի դիմաց Մշո բարբառը բոլոր դեպքերում ունի չ.

ա) Բառակազմում. չամիչ > չամիչ, չարախօս > չարախօս, չարչարանք > չարչրանք, չոր > չոր, չորանալ > չօրնալ, չուան > չըվան, չունեոր > չունէվոր, չար > չար, չափ > չափ:

բ) Բառամիջում. աղաչանք > աղաչանք, ամաչել > ամչընալ, աչք > չաչք, խաչապաշտ > խաչապաշտ, կանաչանալ > կանչընալ, կոչնակ > կօչնակ, շնչաւոր > շընչավոր, ոչխար > օխար, չարչարանք > չարչրանք:

դ) Բառավերջում. ինչ>ինչ, խաչ>խաչ, կանաչ>կանաչ, շունչ>շունչ, լուսավորիչ>լուսավորիչ, զոքանչ>զոքաչ, խալթիչ>խէթիչ:

229. Բարբառում չ-ն դարս է ընկել թռչել>թրոնալ բառում: Զ-ի դիմաց ջ կա յօրանչել, յօրանչկտակ>օրօջգրչալ բառում:

ՁԱՅՆԵՂ ՇՓԱԿԱՆՆԵՐ

Ա

230. Գրաբարյան վ ձայնեղ շփակների դիմաց Մշո բարբառը ունի վ.

ա) Բառասկզբում. վազել>վազնել, վալբի, վալբենի>վէբու, վառեակ, վառեկ>վառէգ, վաստակ>վաստագ, վերալ>վըրէն, վըր, վէգ>վէգ, վէճ>վէջ, վկալ>վըգա, վճիւ>վըջիւ, վլաս>վընաս, վալելել>վալէլել, վէլել:

բ) Բառամիջում. ժալովի>ժալովի, խորովել>խօրվել, խոռվկոտ>խըսօվգան, խորոված>խօրօված, խորովել>խօրվել:

գ) Բառավերջում. բով>բ'ով, ծով>ծով, կով>կով, սով>սով:

231. Այս օրինաչափություններից բացի, վ-ն ենթարկվել է մասնակի փոփոխության: Վ-ն դարս է ընկել վիշապ>շուշաբ բառում. վ-ի դիմաց բ կա. վատթար>բէթար բառում:

Տալվ բառում բարբառում պահպանված է հին հնդեվրոպական ձևը՝ talua:

Զ

232. Հայերենի գ ձայնեղ շփականի դիմաց Մշո բարբառը բառասկզբում ունի գ. գանգակ>գանգագ, գատիկ>գադիգ, գարգ>գարթ, գարդնուլ>գարթնել, գարմանալի>գարմանէլի, գաւակ>գավագ, զոքանչ>զօնքաչ, գուտ>գուդըր, գօր>գօրք:

233. Բառամիջում գ-ին համապատասխանում է գ-ն. աղատ>աղաղ, մաղեալ>մաղէ, կակաղել>կաղաղել, աւաղակ>աւաղագ, աւաղան>ավաղան (միայն կրճնական իմաստով), բաղուկ>բ'ագուգ, բղեղ, բղիղ>բըղեղ, զոզի>զ'ըռզիզ, դերեղման>զ'էրէզման:

234. Բառավերջում գ-ի դիմաց կա գտնում ենք գ. գագ>գ'ագ, խոզ>խոզ, աւագ>ավագ, կակաղ>կաղաղ, մաղ>մաղ, ղէզ>զէզ, ընկուղ>գուղ:

235. Բառամիջում և բառավերջում զգ կապակցութունը ամբողջապես հնչյունափոխվել է. գ-ի դիմաց կա ք, և գ-ի դիմաց՝ ա

(տես § 162). ազգ>աօք, ազգական>աօքագան, ազգատուն>ազգատուլ, ազգասէր>աօքասէր, անդամ>անըսքամ, անդամութիւն>անըսքամութեն, անդամեցուցանել>անըսքամցուցել:

236. Բացի վերոհիշյալ օրինաչափ երևութիւններից, գ-ն ենթարկվում է մի քանի մասնակի փոփոխությունների.

ա) Զ-ի դիմաց ձ կա. երազ>էրած, երազահան>էրածահան (գործածական են և էրազ, էրազահան ձևերը):

բ) Զ-ի դիմաց՝ ց. քանզ>քընց, քանց: Զգեստ, զգեստաւորել, զմալլել բառերի սվելի հնագույն ձևերը պահպանված են ք տեսնում բարբառում. գ'եստ, գ'էստավօրել, մալլի:

գ) Սուրբի բառի մեջ գ-ի դիմաց բառասկզբում կա ա. գուքել>սուքել, զուգած>սուքուգ, սուքած շշինած, պատրաստած, զարգարած, շինված, պատրաստված, զարգարված:

Ժ

237. Հայերենի ժ ձայնեղ շփականի դիմաց Մշո բարբառը ունի ժ.

ա) Բառասկզբում. ժախ>ժէխ շաղք, ժալս>ժէս, ժանգառի>ժանգառի, ժժան>ժըժան «խառնված, խառնիճաղանճ», ժոզովել>ժօզվել «հավաքել», ժում>ժում, «ժամանակ, պահ», ժամ>ժամ, ժանգ>ժանգը:

բ) Բառամիջում. բաժան>բ'աժան, բաժանել>բ'աժնել, բաժին>բ'աժին, դժոզք>դըժոխք, դժուար>դըժար:

գ) Բառավերջում. ոյժ>ուժ, ապառաժ>արառաժ, կոյժ>կուժ, խէժ>խէժ:

238. Պատիժ, պատժել բառերը բարբառում կան նաև պատիջ, պատիճ, պատջել, պատճել ձևերով, որտեղ ժ-ի դիմաց կան ջ, և հնչյունները:

Ղ

239. Մշո բարբառում ևս բառասկզբում ղ չկա:

240. Բառամիջում ղ-ի դիմաց բարբառոս ունի ղ. աղանձ>աղանձ, աղաչանք>աղաչանք, աղանենակ>էղէֆուէզ, էղվընէզ, աղաղոց>աղաղոց, աղիք>աղիք, աղինճ>էղինճ, աղու>աղու, աղուէտակ>աղվըսուգ, աղուն>աղուն, աղօթք>աղօթք:

Մ ա ն ո թ ու թ լ ու ն. — Բառամիջում հնչյունական նման գիրքում ձայնեղ ղ-ի դիմաց կա և խուլ լօ. սեղմել>սըխմել:

241. Բառավերջում. ծանծաղ > ծանծաղ, երկիդ > էրգուդ, թաղ > թաղ, գող > գող, թեղ > թեղ, գեւղ, գիւղ, գեօղ > գեղ, գող > գող, խաղաղ > խաղաղ, աղ > աղ, կաղ > կաղ, կակուղ > կագուղ, ամպշող > ամբշող, ասող > ասող:

242. Բառավերջում և բառամիջում ղ-ի դիմաց խուլ շփական խ կա ղբ հնչյունակապակցութեան մեջ, որն ամբողջովին հնչյունափոխութեամբ, դառնում է խպ՝ ղ > խ, բ > պ թուղթ > թուխպ, աղթ > ախպ, աղբանոց > ախպանոց, աղբերակն > յախպըրագ, աղբիւր > յախպուր, ողթ > վոխպ, ողբալ > օխպալ, եղբայր > ախպէր, եղբայրասպան > ախպէրասպան, եղբայրութիւն > ախպըրութեան:

243. Դ-ի դիմաց խ կա և ղջ հնչյունախմբի մեջ, որը ամբողջովին հնչյունափոխակ է խչ-ի. շեղջ > շեխչ, շեղջիւ > շեխչիւ, աղջիկ > ախչիկ, ողջ > վոխչ, ողջութիւն > վոխչութեան, ողջոյն > օխչում:

244. Նույն օրինակափոխութեամբ Դ-ի դիմաց խուլ շփականների, խուլ պալթականների ու շնչեղ խուլների ազդեցութեամբ խ կա. մաղթանք > մախթանք, աղքատ > ախքատ, աղքատութիւն > ախքըրութեան, խաղթ > խախք, խեղդ > խեխտ, խեղդիւ > խեխտիւ, եղա > կեխտ, պղտոր > լրխպոր, բաղձանք > բախցանք, բողկ > բոխկ, գաղթ > գախթ, գաղթական > գախտագան, գաղտուկ > գախտուկ, թուղթ > թուխթ, ժողով > ժոխովք, դժողք > դժոխք, մեղազրել > մեխտըրել, մեղք > մեխք, ճուղք > ճուխք, դաղձն > դախց, խիղճ > խիխճ, շող > շոխք, պղպշալ > բրխպըշալ, պղպշակ > բրխպուշ: Դ-ի դիմաց խ կա և տեխ, ասեխ, աստըխ և մի քանի ալլ բառերում: Առկա են և չհնչյունափոխված ձևերը:

245. Դ-ն դուրս է ընկել. բղխել > բըխալ բառում: Զիլ և աիլ և նրանից բարգված բառերում Մշո բարբառում պահպանված է առավել հնագույն ձևը. ալլապես. տղմաթաթաւ > տըլթըթախ, տղմախառն > տըլախառ, տղմասէր > տըլասէր, տըլմոտ > տըլոդ, տիղմ > աիլ, ջիղ, ջիլ > ջիլ: Դ-ի դիմաց բ կա թող > թոր, քթորդ բառում:

Յ

246. Զայնեղ յ-ն, ինչպես արգեն նշել ենք, հանդիպում է ձայնավորով սկսվող բառերից առաջ. արջ > յըրջ, առաջ > յառեչ, առու > յառու, արծակ > յարցագ, արծակիւ > յարցըգիւ, արտ > յարգ, արօր > յըրօր, արօտ > յարօդ, աւելի > յէվէլի, երեսուն > յէրսուն, իմաստուն > յիմաստուն, իմաց > յիմաց, իմացող > յիմցող:

իջանել > յիջնալ, ուսում > յուսում, ուսումնական > յուսումնագան, ուսաթ > յմւսա, ետին > յէդին: Մինչդեռ, ինչպես նշել ենք, ձայնավորով սկսվող ոչ բոլոր բառերի սկզբում է պահպանում յ ձայնեղը: Զայնավորով սկսվող բազմաթիվ բառեր բարբառում հանդես են գալիս առանց այդ հնչյունի (տես § 5):

247. Զայնեղ յ-ն Մշո բարբառում կայուն հնչյուն չէ. այն սղվում է բառը ձևաբանական, բառակազմական փոփոխութեանների ենթարկվելիս. յիջնալ, բալց՝ չիջնալ, անիջնալ, չիչուցել, յէլնալ, բալց՝ չէլնալ, անէլնալ, յիմնալ, բալց՝ չիմնալ, չիմցուցել և այլն:

ԽՈՒԻ ԾՓԱԿԱՆՆԵՐ

Յ

248. Խուլ շփական Ֆ հնչյունը Մշո բարբառում բառասկզբում առկա է փոխառյալ և բնածայնական բառերում. ֆարասաթ «խելք», ֆայմ «հասկացութիւն», ֆայմել «հասկանալ», ֆըլթել «վրա պրծնել ուտելիքին», ֆըրըդի «թեւ», ֆըրշալ, ֆըսֆըսալ, ֆըրֆըրալ և այլն:

249. Բառամիջում Ֆ կա, երբ վերահիշյալ բառերը բարգվում կամ ածանցվում են. բէֆայմ, անֆայմ «անհասկացող», անֆարասաթ, բէֆարասաթ «անխելք, անշնորհք», չըֆայմել, անֆայմել «չհասկանալ, չհասկանալով» և այլն:

250. Բառավերջում Ֆ կա միայն այն դեպքում, երբ այն արդյունք է ւ-ի հնչյունափոխութեան (տես § 117 դ.):

Ս

251. Հայերենի խուլ շփական ս-ի դիմաց բարբառս բոլոր դիրքերում ունի ս:

252. Ս-ի դիմաց շ կա սալոր > շըլոր, սեամ > շեմք, և ս-ն դուրս է ընկել սկեսուր > կիսուր, սկեսրայր > կէսրէր բառերում:

Շ

253. Հայերենի խուլ շփական շ-ին Մշո բարբառում բոլոր դեպքերում համապատասխանում է շ-ն:

254. Բառասկզբում շ-ի դիմաց ծ կա շարթ > ժաթք, շարթուն > ժաժան բառերում:

255. Հայերենի խուլ շփական խ-ի դիմաց Մշո բարբառում բոլոր դեպքերում գանում ենք խ:

2

256. Հայերենի և խուլ շփականի դիմաց Մշո բարբառում գտնում ենք և՛ բառակերպում և բառամիջում:

257. Բառամիջում և բառակերպում և-ի դիմաց յ կա առձև > աօթ, աիբուհի > Տիրուլի, սահման > սալման, պահել > պախիլ, բահ > բ'ալ, գոհ > գ'ոլ, մահ > մալ, շահ > շալ, շահել > շալել, անմահ > անմալ, թագուհի > թագուլի բառերում:

258. Հ-ն դուրս է ընկել. քահանա > քահանա, խոնարհ > խոնար, ջուհակ > ջուլագ, անհաւատ > անաւագ, անհաւատութիւն > անաւագութեն, ժահր > ժար, շնորհակալ > շընորագալ, շնորհաւոր > շընաւփոր, ճանապարհ > ճանփա, ճանրախ, ճանապարհորդ > ճամփորթ, ճամխորթ, շնորհք > շընորք, հաւատալ > ալղընալ, ալագալ, սանահայր > սանէր, արհեստ > արեստ:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն . — Հաւատալ բառը գործածական է նաև հավաղալ, հավաղամ ձևով, որը միայն կրոնական իմաստ ունի «հավաղամ քրդի Մըշու Սուլթան Սըփի Կարբեղ»:

259. Հ-ի դիմաց խ կա հետ > խըտ, ահ > ախ, դահ > դախ, և սրանցից բարդված բառերում: Ասկա են և սրանց չհնչյունափոխված ձևերը:

260. Բարբառում և է ավելացել. անդ > հանդ, ուլն, ուլուք > հըլու[ն], արբել > հարփել, ալետր > հալիվոր, հալվոր, ալետրութիւն > հալիվորութեն, հալվորութեն:

261. Բացի նշվածներից, և-ն բարբառում ենթարկվել է հետևյալ սակավաթիվ փոփոխութիւնների.

ա) Հ-ի դիմաց շ կա օրհնել > օրշնել բառում, որը կա և օթնել ձևով, որտեղ և-ի դիմաց կա խ:

բ) Հ-ի դիմաց և կա դեհ > դ'են բառում:

ՁԱՅՆՈՐԿՆԵՐ

1

262. Հայերենի լ-ի դիմաց բարբառում բոլոր դեպքերում կա լ:

263. Լ-ն դուրս է ընկել թասալ > թասա «կսկիծ, ցավ» բառում:

Մ

264. Հայերենի և ձայնորդի դիմաց Մշո բարբառում գտնում ենք և թե բառակերպում, թե բառամիջում և թե բառակերպում:

Յ

265. Յ-ն ա ձայնավորի հետ միասին կազմում է յա հնչյունախումբը, որը Մշո բարբառում կա մեծ մասամբ փոխառյալ բառերում. լարաբ «տղլոք», լարա «վերք», լափընջի «այծենակաճ», լադ «օտարական», լալանչի «ծաղրածու», լարանա «կատակ», լա «կամ», լան «կողմ», լախա «օձիք» և այլն:

266. Բառակերպում յօ հնչյունախումբում յ կա դարձյալ փոխառյալ բառերում. յօխուշ «զատիվեր», յօրդան «վերմակ» և այլն:

267. Բառամիջում և բառակերպում ևս յ կիսաձայնը առկա է փոխառյալ բառերում, դարձյալ ա ձայնավորի հետ կազմելով յա հնչյունախումբը. քյասկուն «շիկացած, բարկ», քյասիր «չքափոր, խեղճ, չունկոր», քյալաշ «կարիճ, քաջ, հզոր», քյամալ «արժեք, գին», հուլաթ «սահմանադրութիւն», չինգլանա «անզգամ, ժպիրճ կին», հալլա «հովեր», փալա «պարծանք», փալաչի «պարծենկոտ», խըզմաթքլար «գործ անող, աղախին», սանլաթ «արհեստ», կյառ «խուլ», ասքլար «թուրք գինվոր», մալա «մակարդ», կյաճէ, կյաճկա «քրդուհի»:

268. Բառակերպում յա հնչյունախմբի յ-ն հայերեն բառերում կրել է հետևյալ փոփոխութիւնները.

ա) Յ-ն դուրս է ընկել. լաղթել > ախտել, լաջողակ > աջողագ, Յիսուս > Իսոս, լուղարկել > խըրղել, լուշապ > ուշար, լստակ > Խստագ, լաջողութիւն > աջողութեն, լօն, լօնք > ունք, լօրանչիտել > օրօջըղալ:

բ) Յ-ի դիմաց և կա. լալտնել > հալդնել, լղի > հըղի, լոլս > հուս, լունիս > հունիս, լուշիկ > հուշիկ, լուռնալ > հուռնալ, լոժար > հօժար, լոժարանալ > հօժըրնալ, լառնիկ > հարիկ, լարութիւն > հարութեն, լիշատակ > հիշագակ:

գ) Յ-ի դիմաց յ. լեա > լեդ, լեախն > լեդի:

269. Մնացած բոլոր դեպքերում յ կիսաձայնը հանդես է գալիս երկրաբառների կազմում, որի մասին խոսել ենք «Երկրաբառների հնչյունափոխութիւնը» գլխում:

270. Հայերենի և ձայնորդի դիմաց բարբառս բոլոր զեպքերում ունի և:

271. Բոլոր այն բառերում, որտեղ գրաբարում բառավերջում կա և, բարբառում այդ և-ն դուրս է ընկել. ահն>ադ, աղբերակն> յախպըրագ, ամառն>ամառ, ամբարձումն>համբարցում, որդն> օրթ, որոտումն>օրօղում, որքին>օրքի, փուռն>փուռ, բուռն> բուռ, ափն>ափ, ասեղն>ասելս, դ, բեռն>բեռ, գագաթն>գագաթ, շուրթն>շուրթ, սպն>վոսպ, սան>վոզ[ը], մատն>մազ, մատուռն>մաղուռ, կուռն>կուռ, հարսն>հարս, կաւաղն>կաւղո, բարձումն>բարցում, ձուկն>ձուկ, եղունգն>ըղունգ, էղունգ, եօթն>թթ, երգումն>չէրթում, փայծաղն>փիձիս, փածկս:

272. Ն-ն ենթարկվել է մի քանի մասնակի փոփոխութուններին:

Ն-ի դիմաց ք կա շինել>շիքել, շինուած>շիքած, շիքուզ բառերում:

ա) Ն է ավելացել. վագել>վագնել, մեծ>մեծն, թռչել>թռունալ, թաթաւել>թանթիսել, սվ, վթ>վթն բառերում:

բ) Ն-ն դուրս է ընկել փխրուն>փուխր և ընկոյզ>զուզ բառերում:

273. Մշո բարբառում բառակցում ա կա հին փոխառյալ առան բառում:

Մնացած բոլոր զեպքերում բառակցում ա կա նոր փոխառյալ բառերում. օրինակ. «աստ յիքալ ճհանդիպել», «էս շքլիսվա», «էզել շշարել, կարգավորել, դասավորել», «ազիլ թխալտառակ», «արան թխեղճ», «ամ թխիղճ, խղճահարութիւն», «իշալ Վկորտած և չորացրած դուռ»:

274. Բառամիջում և բառավերջում գրաբարյան ա-ին Մշո բարբառում համապատասխանում է ա. թռչել>թռնալ, գառնալ> գառնալ, բռնաւոր>բրնաւօր, ագոււ>ագոււօ, անասակ>անուագ, անդառնալի>անդառնէլի, առած>առած, առակ>առագ, առաջ>չառէչ, յառաջեալ>չառէչի, առաւօտ>առաւօտ, առնել>առնել, առու>չառու, ամառն>ամառ, փառ>փառ, պալծառ>

պօձառ, ծառ>ծառ, ծուռ>ծուռ, բուրտառ>բուրտառ, ժալո> ժէռ, գետառ>գէղառ, դեռ>դըռ, եռ>չեռ,

275. Ռ-ի դիմաց լ կա շուրջառ>շուրջալ բառում:

276. Մշո բարբառում ր-ով սկսվող բառեր գրեթե չկան: Բնական բառը բարբառում յ-ի հավելմամբ՝ ստացել է յըրօթէ ձևը: Բ-ով սկսվում է բուրիզ ձայնարկութունը, որը սավում է երեխալի օրորոցի մոտ երգվելիս և լալի բառը, որը արալ բառի փոփոխակն է:

277. Բառամիջում հին հայերենի ր-ի դիմաց բարբառս ունի ր. արօտ>չարօղ, արիւն>արուն, գարուն>գարուն, գարի>գարի, գերի>գէրի, կարել>կարել, կարգել>կարքել, ապրանք>արրանք, ալրել>երիցել, էրել:

278. Բառավերջի ր-ի դիմաց ևս բարբառս ունի ր. սար> սար, քար>քար, մեղր>մէղըր, ծաղր>ծաղըր, ջուր>ջուր, ալիւր>ալուր, ամբար>ամբար, անօսր>նօսըր, թուր>թուր, իւր> ուր, խնձոր>խընձոր, ճար>ճար, ապուր>արուր:

279. Թաքթափ բառը բարբառումս կա երկու ձևով, որոնցից յուրաքանչյուրն ունի իր որոշակի իմաստը. քաքթափ թերթիբունք և քառքափ — ժանլակ:

280. Բ ձայնորդը Մշո բարբառում դուրս է ընկել.

ա) շնորհաւոր>շընաւօր, արժել>ըժել, արշառ>աշառ, գետնաքարը>գէղընքաշ, երբ>լիփ, շրաղաց>ջաղաչ, շրաղացպան>ջախշըբան, շարժք>ժաժք, քարշել>քաշել, կարժ>կաժ բառերում.

բ) հրամայական եղանակի եզակի Չ-րդ դիմքում. բեր>բի, կէր>կի, տուր>տու, նստիր>նըստի, կանգնիր>կայնի, կանի և այլն:

281. Բ է ավելացել թող>թորդ, թոր, թողնել>թօրգել, աղութ>աղրութ, իք>իքք, գուտ>զուզըր, ժանգոտ>ժանգըրոդ, բնակել>բընագրել բառերում:

Ա Ն Կ Ո Ի Մ

Ամփոփելով «Բաղաձայնների փոփոխութիւնները» գլխում հնչյունների անկման կապակցութիւմբ սավածները՝ կատանանք հետևյալ պատկերը.

282. Բարբառում ամենից շատ ընկել է և բաղաձայնը:

ա) Անկումը տեղի է ունենում բառամիջում և բառավերջում:

բ) Բառամիջում Բ-ն ընկել է երկու ձայնավորների մեջ և ք ձայնորդից հետո:

դ) Բառավերջում՝ ձայնավորից և ք ձայնորդից հետո. աշխարհ > ախշար, ագահ > աքա:

դ) Ք-ից առաջ. պահք > պաս:

283. Ր ձայնորդը ընկել է. ա) ժ, շ, չ բաղաձայններից առաջ. արժան > էժան, քարշիլ > քաշիլ, արշառ > աշառ:

բ) Լ-ից առաջ. հարհանդ > խախանդ:

գ) Բ-ից առաջ. երբ > յեբ:

դ) Հրամայական եղակի 3-րդ դեմքում ձայնավորներից հետո. թոցուր > թըոցու, խմցուր > խըմցու, բեր > բի, դիր > դի, կեր > կի:

ե) Զ բաղաձայնից հետո. ջրադաց > ջադաց, ջաղաց:

զ) Ն-ն ընկել է. ա) վ-ից առաջ. բոնվել > բ'ըովել, գտնվել > գ'ըթվել:

բ) Զայնավորից առաջ. դնացին > դ'ացին, մնացին > մացին բայերի մեջ:

գ) Կ-ից առաջ. ընկող > գող:

դ) Ք-ից առաջ. ուլունք > հըլու:

284. Տ-ն ընկել է. ա) առ, շա կապակցութունների մեջ. աստված > ասված, պաշտպան > պաշպան բառերում:

Ինչպես երևում է «Բաղաձայնների փոփոխութունը» գլխից, վերջին բառերը կան և ա-ն պահպանած ձևով:

285. Ս-ն ընկել է կ-ից առաջ. սկեսուր > կիսուր, սկեսրայր > կէսրէր:

Հ Ա Վ Ե Լ Ո Ի Մ

Ամենից շատ ավելացել է ձայնեղ յ-ն և Բ-ն.

286. յ-ն և Բ-ն ավելացել են միայն բառասկզբին, ձայնավորներից առաջ:

287. Բ-ն ավելացել է. ա) մք կապակցության մեջ. համարել > համբրել, թմբել > թըմբրել:

278. Կ է ավելացել. ա) նք հնչյունախմբի մեջ. սանք > սանդըր, ծանք > ծանդըր, մանք > մանդըր:

289. Զ է ավելացել. արթուն > զարթուն:

290. Ն է ավելացել. թաթխել > թանթխել, մեծ > մեծն, սիլ > սիլն:

291. Ր է ավելացել. բնակվել > բընագրել, թող > թորդ, էք > էրք, ժանգոտ > ժանգըրդ:

292. Ց է ավելացել ուրուր > ցուրուր բառերում:

Դ Ր Ա Փ Ո Ն Ո Ւ Թ Յ Ո Ի Ն

293. Դրափոխութունները Մշո բարբառում շատ են և բազմատեսակ.

Բ-ի տեղափոխութուն. կամուրջ > կարմունջ, կապերտ > կարբեդ, Գրիգոր > Գ'իրքոր, ցրվել > ցըվրել, սովորել > սօրվել, Մարիամ > Մայրամ:

ա) Ծխ — խշ. աշխատել > ախշադել, աշխատանք > ախշադանք, աշխարհ > ախշար, նշխարք > նըխշարք, բաշխել > բ'ախշել:

բ) Ն-ի դրափոխութուն. ականջ > յանգաջ, զոքանջ > զօնքաջ:

գ) Սխ — խս. փսխել > փըխսել, խստոր > սըխտոր:

դ) Չխ — խչ. ոչխար > օխշար:

ե) Լվ — վլ. լվացք > վըլացք, լվալ > վըլալ:

զ) Թխ — խթ. թթխմոր > թըխթմոր:

է) Պլ — րլ. պլոկել > լըբօդել:

ը) Նչ — չն. ամանչել > ամչընալ:

Կան դրափոխության ալլ դեպքեր. դճել > ճըդել, ձգել > քըցել, ժողով > ժօվող, ուղեղ > դող, էլ > լէ, հանկարծակի > հանդըսկըձի, հանդիպել > հանբիդել, մնացի > մանցի, մնացէք > մանցէք և այլն:

Ս Ղ Ո Ի Մ

294. Սղում բարբառում չափազանց շատ է կատարվել հատկապես հատուկ անուններում: Ամբողջությամբ, լրիվ արտասանվող հատուկ անուններ բարբառում գրեթե չկան: Սղվելով հատուկ անունները քրդերենի նմանությամբ, վերջանում են օ-ով. Անդրասիկ — Անդրօ, Աբրահամ — Ափրօ, Համբարձում — Համբօ, Արմենակ — Արմօ, Սաթենիկ — Սաթօ, Սանթօ, Ադնիվ — Ադնօ, Սոֆիկ — Սօֆօ և այլն:

295. Բացի հատուկ անուններից, բարբառում սղվել են և մի քանի սովորական զործածական բառեր: Բերում ենք սղված բառերի օրինակներ. բ'ամօր — մի բան որ, մըզլօր — մլուս օրը, ամէգ — ամեն մեկը, մընի — կնմանի, հօխպէր — հօրեղբայր, հիդրաց — իրարց հեռ, սամ — ապա մի տեսնեմ, սանք — ապա մի տեսնեմ և այլն:

296. Մշո բարբառի հնչյունափոխութիւն երևուլթներից մեկն էլ առնմանումը և տարնմանումն է:

Ավելորդ համարելով տալ առնմանման և տարնմանման սահմանափակերը, բնորոշել գրանք, նշենք մի քանի օրինակներ, որտեղ գործել են հնչյունաբանական այդ օրենքները:

Անբախտ ածանցաւոր բառը բարբառում սրացել է ամբախտ ձևը, որը պետք է բացատրել ռնգային և-ի վրա ք շրթնային ձայնի ազդեցութեամբ, տեղի է ունեցել հտադարձ, ոչ լրիվ առնմանում՝ և-ն դարձել է վ: Հայերենի քերական բառը առնմանութիւն հետևանքով դարձել է քերեզան: Տեղի է ունեցել առաջընթաց լրիվ առնմանում:

297. Լիակատար հտադարձ և առաջընթաց առնմանման օրինակ է հանդիսանում բարբառային ամեխ — անմեզ բառը, որտեղ վ-ն ազդել է և-ի վրա լրիվ առնմանման ենթարկելով նրան, ապա այդ երկու վ-երը միացել են իրար, բառին տալով այդ՝ ամեխ ձևը:

Ե Ր Կ Ր Ո Ր Գ Մ Ա Ս

ՉԵՎ ԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

ՀՈԳՆԱԿԻԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

298. Մշո բարբառը հայոց լեզվի մյուս բարբառների համեմատութեամբ հարուստ է հոգնակերտ մասնիկներով. զրանց թիվը տասնութ է: Հոգնակերտ մասնիկները հետևյալներն են. ք, էք, եք, ներ, դիք, վըդիք, դանք, վըզանք, ենք, անք, վանք, բանք, ունք, թունք, վի, սաան, էքք, իք:

299. Հոգնակերտ մասնիկները Մշո բարբառում, ինչպես պարզ կերպով երևում է, մեծ մասամբ բաղադրյալ են. վ-դի-ք, դ-ան-ք, վ-ան-ք, ուն-ք, ր-ուն-ք և այլն:

300. Գրեթե բոլոր հոգնակերտ մասնիկները, չնչին բացառութեամբ, վերջից ունեն ք, որպես ամենատարածված հոգնակերտ, սակայն այդ բոլոր մասնիկները առանց ք-ի էլ հավասար չափով գործածական են. դան—դանք, վան—վանք, բան—բանք, թուն—թունք, ան—անք, այսպես՝ յընգէրզան—յընգէրզանք, տիրվըզան—տիրվըզանք, իշվան—իշվանք, գ'էղրան—գ'էղրանք, իձվան—իձվանք, քուրվըզան—քուրվըզանք և այլն: Բացառութիւն են կազմում միայն դիք և վըդիք մասնիկները, որոնք առանց ք-ի կիրառելի չեն. կարելի է ասել թուրվըդիք, ախպըրդիք և ոչ այլ կերպ:

301. Բարբառում հաճախ հոգնակերտ մասնիկները փոխարինվում են մեկը մյուսով. այս կամ այն մասնիկով հոգնակի կազմող բառը կարող է մի այլ մասնիկ ևս ստանալ, սակայն հոգնակերտ մասնիկների գործածութեան մեջ ակնբախ է սահմանազատութիւնը, որի հետեանքով բառերի հատուկ խմբեր հոգնակի թիվ են կազմում որոշակի մասնիկներով:

302. Ք հոգնակերտ մասնիկ ստանում են հայերեն և

փոխառյալ պարզ ու ածանցավոր այն բոլոր բառերը, որոնք վերջանում են ի ձայնավորով. այսպես. գինի > գ'ինի, հզն. գ'ինիք, ածելի, > արծըլի, հզն. արծըլիք, քենի > քենիք, հզն. քենիք, ջորի > ջ'որի, հզն. ջ'որիք, հողի > հօքի, հզն. հօքիք, գարի > գ'արի, հզն. գ'արիք, տարի > տարի, հզն. տարիք, հրշկի «սառնամանիք», հզն. հրշկիք, սինի «սկոտեղ», հզն. սինիք, զօլչի «թմրկահար», հզն. զօլչիք, խուռուխչի «հանդապահ», հզն. խուռուխչիք և այլն:

303. Էք հոգնակերտ մասնիկ ստանում են բոլոր այն միավանկ և բազմավանկ բառերը, որոնք բարբառում վերջանում են ա ձայնավորով. այսպես. սատանայ > սրդանա, հզն. սրդանէք, ճանապարհ > ճամփա, հզն. ճամփէք, երեսայ > էրէխա, հզն. էրէխէք, սողալ > սողա, հզն. սողէք, (նաև տղէկներ), քահանայ > քահանա, հզն. քահանէք, փեսայ > փէսա, հզն. փէսէք, դավա ետղա, հզն. դավէք, թավա «գոմ», հզն. թավէք, բօշա «գնչու», հզն. բօշէք, լանդա «քարցի», հզն. լանդէք:

Ծ ա ն ո թ ու թ լ յ ու ն. — Ինչպես պարզորոշ կերպով ցույց են տալիս բերված օրինակները, էք հոգնակերտի է-ն արգլունք է բառավերջի այ-ի հնչյունափոխության (սատանայ-ք-սրդան-է-ք, փեսայ-ք-փէս-է-ք). այս տեսակետից եթե դիտելու լինենք, ապա պետք է ասել, որ էք հոգնակերտ մասնիկը նույնանում է նախորդի՝ ք-ի հետ:

304. Ի և ա ձայնավորներով վերջացող վերոհիշյալ և այլ բառերի հոգնակի թիվ կարող է արտահայտվել նաև ստան մասնիկով. այսպես, գ'արի, հզն. գ'արէստան, գ'ինի, հզն. գ'ինէստան, օսկի, հզն. օսկէստան, տարի, հզն. տարէստան, էրէխա, հզն. էրէխէստան, քէսի, հզն. քէսէստան, փէսա, հզն. փէսէստան, դավա, հզն. դավէստան, թավա, հզն. թավէստան:

Ծ ա ն ո թ ու թ լ յ ու ն. — Բացառությամբ է կազմում տրղա բառը, որը թեև վերջանում է ա ձայնավորով, բայց ստան մասնիկով հոգնակի չի կազմում: Այս բառի հոգնակի տրղէք ձևից բացի, բարբառում լայն տարածում ունի տրղէկներ ձևը, որը թվում է կրկնակ հոգնակի մասնիկ ստացած տրղա + էք + ներ - տրղէկներ, որտեղ ք-ի դիմաց կա կ:

Գ'եղին բառը, որը չունի ա կամ ի վերջավորություն, սակայն հոգնակին կազմում է նաև ստան-ով. գ'էղին, հզն. գ'էղրստան:

305. Եր հոգնակերտ մասնիկ ստանում են.

ա) Միավանկ բառերը. հաց > հաց, հզն. հացեր, ջուր > ջ'ուր, հզն. ջրեր, տուն > տուն, հզն. տներ, ծուռ > ծուռ, հզն. ծրներ, գոմ > գ'ոմ, հզն. գ'ոմեր:

բ) Բարբառում ք-ով վերջացող մեկ, մեկ և կես, երկու վանկ ունեցող բառերը. այսպես. ձեռն > ձ'եռք, հզն. ձ'եռքեր, ակն > քաչք, հզն. քաչքեր, միտ > միտք, հզն. մըտքեր, խել(ք) > խելք, հզն. խելքեր, պարտ > պարտք, հզն. պարտքեր, բանալի > բանլիք, բանլիս, հզն. բանլրքներ, բանլրսներ:

306. Ներ մասնիկով հոգնակի են կազմում գրաբարում ն-ով վերջացող և բարբառում այն կորցրած բոլոր բառերը. այսպես. գառն > գ'առ, հզն. գ'առներ, դուռն > գ'ուռ, հզն. գ'ուռներ, մասն > մաղ, հզն. մաղներ, բուռն > բուռ, հզն. բըռներ, կուռն > կուռ, հզն. կըռներ, նուռն > նուռ, հզն. նըռներ, մուկն > մուգ, հզն. մըգներ և այլն:

Այս մասնիկով հոգնակի կազմում են երկվանկ և բազմավանկ բարդ և ածանցավոր մի շարք բառեր. օրինակ. ամիս > ամիս, հզն. ամսրներ, զանալ > զանագ, հզն. վանգըներ, անթեղ > անթեղ, հզն. անթըղներ, անիծ > անիծ, հզն. անծըներ, արօր > յըրօր, հզն. յըրօրներ, աւել > ավել, հզն. ավըլներ, աւերակ > ավէրագ, հզն. ավէրագներ և այլն:

Ծ ա ն ո թ ու թ լ յ ու ն. — Իրև ընդհանուր կանոն պետք է նշել, որ եր և ներ հոգնակերտ մասնիկները բարբառում գերակշիռ դեր են կատարում: Բոլոր այն բառերը, որոնք բարբառում հոգնակի իմաստ են արտահայտում այլ մասնիկների միջոցով, կարող են հոգնակի թիվ կազմել նաև վերոհիշյալ երկու մասնիկների օգնությամբ, մինչդեռ այն բառերը, որոնց հոգնակին կազմված է այս մասնիկների միջոցով, ոչ մի դեպքում այլ հոգնակերտ ստանալ չեն կարող:

Ծ ա ն ո թ ու թ լ յ ու ն. — Այս ընդհանուր օրենքից բացառությամբ են կազմում մարմնի կրկնակ անդամների անունները՝ վոաք, ձ'եռք, քաչք, որոնք հոգնակի կարող են կազմել նաև վի մասնիկի միջոցով. այսպես՝ քաչվի, ձ'եռվի, օզվի, որը երկակի թիվ է արտահայտում:

307. Պառը կերպով եր և ներ հոգնակերտ մասնիկներ կարող են ստանալ այն բոլոր բարդ բառերը, որոնց կերի բաղադրիչ բառը միավանկ է. այսպես. հօրքուր, հզն. հօրքուրեր, նաև

հօրքուրներ, սանահէր, հգն. սանահէրներ, նակ սանահէրներ, անէր-
ձաք, հգն. անէրձ'ըքեր, նակ անէրձ'ըքներ, կընքահէր, հգն. կընքա-
հէրներ, նակ կընքահէրներ, քափօրմէր, հգն. քափօրմէրներ, նակ քա-
փօրմէրներ և այլն:

308. Մշո բարբառում դիք հոգնակերտ մասնիկ են ստա-
նում արյունակցական և աղցակցական հարաբերություններ ցույց
տվող հետևյալ բառերը. տալգր > տէքր, հգն. տէքրդիք, եղբայր >
ախպէր, հգն. ախպըրդիք, հօրեղբայր > հօխպէր, հգն. հօխպըրդիք,
մօրաքոյր > մօրքուր, հգն. մօրքըրդիք, հօրաքոյր > հօրքուր, հգն.
հօրքըրդիք, տալգէրկին > տէքօրկընից, հգն. տէքօրկընզըրդիք, կին >
կընից, հգն. կընզըրդիք, տալ > տալվ, հգն. տալվըրդիք և այլն:

Մ ա ն ո թ ու թ յ ու ն . — Վերոհիշյալ բառերի կարգին
գասվող քուր բառի հոգնակին կազմվում է վղիք մասնի-
կով. քուր > քուր, հգն. քուրվըրդիք:

309. Դանք մասնիկ ստանում են համեմատաբար սակավա-
թիվ բառեր. ախպես. ընկեր > չընգեր, հգն. չընգէրզանք, կտօր >
կըզոր, հգն. կըզօրզանք, ոսկր > օսկոր, հգն. օսկըրզանք:

Տեր բառի հոգնակին կազմվում է վըզանք մասնիկով՝ տէր >
տէր, հգն. տիրվըզանք:

Մ ա ն ո թ ու թ յ ու ն . — Վերոհիշյալներից չընգեր և տեր
բառերը հոգնակի կարող են կազմել նակ դիք մասնիկով՝
ախպես. չընգէրզիք, տիրվըզիք:

310. Անք հոգնակերտ մասնիկն են ստանում հետևյալ
բառերը. ձի > ձ'ի, հգն. ձ'իանք, գալլ > գ'էլ, հգն. գ'իլանք, էշ > էշ,
հգն. իշանք, այծ > էձ, հգն. իձանք:

Մ ա ն ո թ ու թ յ ու ն . — Վերջին երկու բառերի հոգնա-
կին կազմվում է նակ վանք մասնիկով. էշ — իշվանք, էձ —
իձվանք:

311. Բացի էշ, էձ բառերից, վանք հոգնակերտ մասնիկ
են ստանում ձեղ «աքաղաղ», հգն. ճիզվանք, ճոթ շըրի ծալր,
քղանցք», հգն. ճօթվանք, ճուղ, հգն. ճըղվանք բառերը:

312. Բանք մասնիկով հոգնակի թիվ են կազմում հետևյալ
գոյականները. գիւղ > գ'էղ, հգն. գ'էղրանք, տեղ > տեխ, դ, հգն.
տէխրանք, գէղ > գ'էղ, հգն. գ'իզրանք, գեղ > վեղ, հգն. գ'էղրանք:

Մ ա ն ո թ ու թ յ ու ն . — Դեղ բառի հոգնակին կազմվում է
նակ բունք մասնիկով՝ գ'էղրունք:

313. Ունք և բունք հոգնակերտ մասնիկ են ստանում որդն >
օրթ, հգն. օրթունք, ծաղիկ > ծաղից, հգն. ծաղիգունք, դեղ >
գ'եղ, գ'էղրունք բառերը:

314. Միակ բառը, որ ստանում է իք հոգնակիակերտ մաս-
նիկը, մարքիք բառն է:

315. Էրք հոգնակերտ մասնիկը բարբառում հանդիպում է մի-
միայն լընգէրք բառի մեջ:

316. Մշո բարբառում մեծ տարածում ունեն բաղադրյալ
հոգնակիները: Թեև բարբառի գրեթե բոլոր հոգնակերտ մասնիկ-
ները, ինչպես նշեցինք, բաղադրյալ են, այնուամենայնիվ արդեն
հոգնակի թիվ արտահայտող շատ բառեր կարող են նորից մի նոր
հոգնակերտ մասնիկ ստանալ, որը հետևանք է հոգնակի իմաստի
միագնման: Մշո բարբառում բաղադրյալ հոգնակիներ կազմում են
ամենից շատ ք և ենք հոգնակերտները այլ մասնիկների վրա ավե-
լանալու միջոցով. ախպես. տէր, հգն., տիրվըզան, տիրվըզանք,
տիրվըզանքներ, ձ'ի, հգն. ձ'իան, ձ'իանք ձ'իանքներ, հօքի, հգն.
հօքէստան, հօքէստանք, հօքէստանքներ, ճէղ, հգն. ճիզվան, ճիզ-
վանք, ճիզվանքներ և այլն:

317. Հավաքական իմաստ արտահայտելու համար բարբա-
ռում կիրառում են անք և ենք մասնիկները. ախպես. անէր-
անէրանք, կիսուր — կիսրանք և Ավիգ — Ավիգենք, Գ'ուշօ — Գ'ուշօենք
և այլն:

ՀՈՒՈՎՆԵՐ ԵՎ ՆՐԱՆՅ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԸ

318. Մշո բարբառն ունի հետևյալ վեց հստակները. ուղղական,
սեռական, արական, հայցական, բացառական և գործիական: Հո-
լովումը բարբառում կատարվում է լսաբ՝ ներքին ճնշունափո-
խությամբ կամ վերջավորություններով (դ'ուռ — գ'ըռան, սեղան —
սեղնի):

319. Ուղղական հոլովը բառի ուղիղ ձևն է:

320. Եղակի սեռականը կազմվում է բառի ուղիղ ձևի վրա
հոլովման վերջավորություններ ավելացնելու միջոցով:

321. Ինչպես արդի գրական հայերենում, այնպես էլ Մշո
բարբառում, արական հոլովը անորոշ առման դեպքում նման է
սեռականին, իսկ որոշյալի դեպքում ավելանում է ն հոլով:

322. Թե՛ շնչավոր, և թե՛ անշունչ առարկաների եղակի հալ-
ցականը բարբառում նման է ուղղականին: Միայն ա-ով վերջա-

ցող բառերի հայցականը տարբերվում է ուղղականից. ուղղ. սրգա-
նա, սեռ. սրգանի, հայց. բզբզանեն:

323. Հայցական հոլովը ունենում է որոշյալ և անորոշ
ատումներ: Որոշյալ հայցականը ստանում է զ նախդիրը: Բաղա-
ձայնով սկսվող բառերից առաջ այն հնչում է ըզ, իսկ ձայնավոր-
ներից առաջ՝ գ: Այսպես. բզտուն, բզհաց, բզշուր, բայց զատ-
ված, զիրիգ, զարբուսա և այլն: Բառերը Ձ նախդիր ստանում են
բոլոր թեք հոլովներում, երբ որոշակի իմաստ ունեն:

324. Բացառական հոլովի եզակին բարբառում կազմվում է
բառի ուղիղ ձևի վրա է, էն, ու, ուց, ից, ա վերջավորութուն-
ները ավելացնելու միջոցով:

Ու և ա հոլովման ենթարկվող բառերի սեռական և բացա-
ռական հոլովները ձևով նման են իրար. այսպես. լես աէսէր իմ
Մըշու դաշա (ես տեսել եմ Մուշի դաշտը). լես Մըշու գ'իքամ (ես
Մուշից եմ գալիս). Խըլաթա հարսներ խորոգ ին (խլաթի հարս-
ները գեղեցիկ են). լես Խըլաթա գ'իքամ (ես խլաթից եմ գալիս):

Մանոթու թ յ ու թ յ ու Ն. — Տվյալ դեպքում, բարբառում հա-
րազատորեն պահպանված են գրաբարի բացառականի ի
նախդիրով ձևը. ի Խլաթալ, ի Մըշու, միայն ի-ն ընկել է:

Բարբառում ա ձայնավորով վերջացող բառերի բացառական
հոլովը կազմվում է միայն ից մասնիկով:

325. Գործիական հոլովի եզակին կազմվում է բառի եզակի
ուղղականի վրա ով վերջավորութունը ավելացնելու միջոցով.
(տուն — տընով, ջուր — ջըրով): Նույն ձևով կազմվում է գործիական
հոլովի հոգնակին, միայն այս դեպքում ով մասնիկը ավելանում է
բառի հոգնակի ձևի վրա. (տան — տըներ — տընէրով, ջուր — ջըրեր —
ջըրէրով):

326. Մշո բարբառը, ինչպես և կը ճյուղի մյուս բարբառ-
ները, ներդրական հոլովի համար հատուկ ձև չունի: Ներդրական
հոլովի իմաստը արտահայտվում է.

ա) Սեռական հոլովով և մէչ — մէչ ետադրությամբ. սեղնի
մէչ, տան մէչ:

բ) Տրական հոլովով և մըչ — մէչ նախադրությամբ. մըչ քախ-
քին, մըչ դէղին:

գ) Հայցական հոլովով. քաղաք, գ'էդ. քաղաք շատ մարթ
կէր — քաղաքում շատ մարդ կար: Իդա գ'էդ շադ խորոգ հարս
կէր — այս գյուղում շատ գեղեցիկ հարս կար:

327. Բառերի հոգնակիները, որոշ բացառություններով, ան-
կախ եզակի սեռականում նրանց ունեցած վերջավորություններից,
հոլովումից և հոգնակերա մասնիկների տեսակից, ենթարկվում
են ու հոլովման:

Մանոթու թ յ ու թ յ ու Ն. — Այս օրենքը չի տարածվում ք, դիք,
էնք և առհասարակ բազադրյալ հոգնակիներ ունեցող այն
բառերի վրա, որոնք վերջանում են ք-ով. դրանցից դիք-ով
հոգնակի կազմող բառերի սեռականը կունենա զոց (քուր-
վըղիք — քուրվըղոց), էնք-ով կազմողներինը՝ ենց (Ավի-
դենք — Ավիդենց), իսկ ք-ով կազմողներինը՝ ոց (գ'արիք —
գ'արէքոց) վերջավորությունները: Վերջինիս համար չի
բացառվում նաև ու հոլովումը:

Հ Ո Լ Ո Վ Ո Ի Մ

328. Մշո բարբառն ունի ութ կանոնավոր հոլովում՝ ու, ի,
ան, վա, ո, ոչ, ա, ց:

329. Եթե գոյականների հոգնակի թվի կազմության մասին
խոսելիս նշեցինք, որ նրանց կիրառման մեջ կա զգալի բազմա-
զանություն, այսինքն՝ միևնույն բառը կարող է երկու, նույնիսկ
ավելի հոգնակերա մասնիկներ ստանալ, ապա մի հոլովիչով հո-
լովվող բառը երբեք այլ հոլովիչ ընդունել չի կարող:

Մանոթու թ յ ու թ յ ու Ն. — Այս օրենքից բացառություն են կազ-
մում աէքքը բառը, որը հոլովվում է երկու կերպ. աէքքը —
սեռ. աէքէր, աէքոր, և ում-ով վերջացող բառերը, որոնք
ի հոլովիչով հոլովվելով հանդերձ՝ կարող են ստանալ ան
հոլովիչը՝ կոգորում — սեռ. կոգորումի, կոգորման:

ԱՌԱՋԻՆ ՀՈԼՈՎՈՒՄ

Ո Ի

330. Ու հոլովումը բարբառում ամենատարածվածն է:

331. Այս հոլովման ենթարկվում են.

ա) Մեկ և ավելի վանկ ունեցող այն բոլոր բառերը, որոնք

վերջանում են ի-ով. ալսպես, ձ'ի, թի, գ'ինի, օսկի, հօքի, խընամի, հալլի, սինի:

Մ ան ո թ ու թ յ ու ն.— Բացառութիւն են կազմում ի-ով վերջացող, ժամանակ ցույց տվող բնուրը:

բ) Գոյականաբար գործածվող բոլոր անորոշ դերբայները. էրթալ, յիքալ, յիլալ, իգալ, մըդնալ:

Մ ան ո թ ու թ յ ու ն.— Գոյականաբար գործածվող անորոշ դերբայները հոգնակի թիվ չունեն:

գ) Ազգութիւնների անունները. ալսպես, հալ, վըբացի, քուրթ, թուրք և այլն:

Մ ան ո թ ու թ յ ու ն.— Բացառութիւն են կազմում ա-սուս, տաջիգ, պարսիգ բառերը, որոնք հոլովվում են ի հոլովիչով:

դ) Էցի, ացի, ցի, չի, ազ վերջածանցներով կազմված մի շարք բառեր, ալսպես. մըշէցի, գ'էդացի, բ'իթլիսցի, գ'օլշի գ'էդագ, գ'ընագ և այլն:

ե) Գոյականաբար գործածվող անիսկական կապերը. ալսպես. մէչ, ներս, կուշա, քով, գ'էհ, հեդ, գ'ուս, յառէչ:

զ) Հատուկ անուններից՝ Քրիստոս և Աբրահամը:

է) Կրօնական իմաստ ունեցող հետևյալ բառերը. աստված, վանք, գ'ըժոխք, գ'ըրախա, էգէդէցի, ժամ, էրէց, խունգ, սուրի, էբիսկօբոս:

ը) Մի շարք կենդանիների անուններ. խոզ, բ'ադ, գ'էլ, կով, մադագ, օց, օզնի, կաքավ, ճեզ, հավ, ուլ, էրինջ, սարէզ, ազուս, լազլագ, քլավիջ, ազվէս, գ'ըմէշ, էձ, ճուգ, գ'էլ Եէգ շուն, յրոշ, աչառ, թուխս, գ'ըրթան, կրուունգ, ճընջղուգ, լաբըստրագ, էզըվէէգ, յանձեղ, արձիֆ և այլն:

թ) Մարդու մարմնի մասերի անուններից. գ'ըլօխ, յանգաջ, ճագագ, փոր, էրես, կուշա «կողք», սիրդ:

ժ) Արլունակցական հարաբերութիւններ ցույց տվող զավագ, էրէխա, ճիժ «երկիսա», պար «հալը», մամ «մալը» բառերը:

ի) Մի շարք նմիականի և ավելի վանի ունեցող բառեր. բ'ուն, ամիս, գ'ոմ, կարօդ, մութ, ջարթ, ծուռ, թուր, քուն, գ'էզ, պոշ, ձ'որ, ջուր, հոր, մուր, սէր, ծով, պառավ, ամօթ, ծարավ, գ'ող, ահ, թաքվոր, նըվթ, կըրագ, կըսկիձ, քուն, ծուխ:

ծոց, ծաղըր «ծիծաղ», կուռք, ինագ, չիր, տիլ «ցիխ», ցավ, չուսոլ, հող, համ, հով, փուշ, ձ'էթ, փող և այլն:

իա) Մի քանի տեղանուններ. Մուշ, Մանագերդ, Տագիշ, Բ'ագիշ, Բ'իթլիս, Ալաշկերդ, Քըրթագօմ և այլն:

իբ) Բնութիւն մի քանի մարմինների և երևութների անուններ. էրգինք, էրգիր, արեվ, լուս, անձրեվ, քամի, մութ, ցարդ, շոք և այլն:

իգ) Ուժ-ով վերջացող էթում «որք» բառը:

իդ) Ամիսներից արբիլը:

332. Այս հոլովման վերջավորութիւններն են.

եզակիի և հոգնակիի համար

ուղղ.	—
սեռ.	ու
տր.	ուն
հայց.	(ըզ) ըն
բաց.	ուց, ից, էն, է
գործ.	ով

333. Այս վերջավորութիւնները ավելանում են բառերի եզակի և հոգնակի թվերի ուղղական հոլովների վրա:

334. Պատկերը ավելի պարզ դարձնելու համար բերենք ու հոլովման մի օրինակ.

	եզակի	հոգնակի
ուղղ.	ջ'ուր	ջ'ըրեր
սեռ.	ջ'ըրու	ջ'ըրերու
տր.	ջ'ըրուն	ջ'ըրերուն
հայց.	ըզջ'ուրըն	ըզջ'ըրերըն
բաց.	ջ'ըրուց, ից, էն, է	ջ'ըրերուց, ից, էն, է
գործ.	ջ'ըրով	ջ'ըրերով

Մ ան ո թ ու թ յ ու ն.— Ինչպես նշել ենք, ք մասնիկով հոգնակի կազմող բառերի հոլովումը տարբերվում է մլուսներից: Երբ բառը ք-ով է հոգնակի կազմում, կամ մի ալ հոգնակին վերջից ստանում է ք. այդ դեպքում հոլովման վերջավորութիւնները կլինեն.

ուղղ.	հայց.	ք	բաց.	ից, է, էն
սեռ.		ոց	գործ.	ով
տրակ.		ոց		

Օրինակ.

ուղղ.	էրէխէք	հայց.	զէրէխէքըն
սեռ.	էրէխէքոց	բաց.	էրէխէքօցէն, ից, է
տր.	էրէխէքոց	գործ.	էրէխէքօցով

Այս և նման ղեպքերում ք հոգնակերտ մասնիկը հոլովական վերջավորութիւններից առաջ կարող է և պահպանվել (էրէխէքոց, էրէխէքօցից) և սղվել (էրէխոց, էրէխօցից):

Մ ա ն ո թ ու թ յ ու լ ն .— Ի-ով վերջացող բառերի որոշյալ հայցականը, զ(ըզ) նախդիրներից բացի, բառավերջում ստանում է նաև ն-հոգը, այն ղեպքում, երբ մյուս հոլովակներին ենթարկվող բառերի որոշյալ առումները արտահայտելու համար բավական է լինում միայն զ (ըզ) նախդիրը: Օրինակ՝ տուն—ըզտուն, քաղաք—ըզքաղաք, հաց—ըզհաց, ջուր—ըզջուր, բայց՝ գարի—ըզգարին, գինի—ըզգինին, սկիւ—ըզսկիւն, հօքի—ըզհօքին:

Անհրաժեշտ է նշել, որ այս կրեուլթը խստութեամբ չի պահպանվում, լինում են և հակառակ ղեպքեր:

ԵՐԿՐՈՐԴ ՀՈՂՈՎՈՒՄ

Ի

335. Ի հոլովումը ու-ից հետո բարբառում ամենատարածվածն է:

336. Այս հոլովմանն են ենթարկվում.

ա) Ու-ով վերջացող բառերը. յառու, կաղու, ճու, լու:

բ) Ազան, էլիք, ութեն, ող, ուզ, իզ, անք, ում վերջածանցներից կազմված բառերը, ինչպես և ազ վերջածանց ունեցող մի քանի բառեր: Բացառութիւն են կազմում իզ-ով վերջացող հատուկ անունները (Մաղիզ, Ալիզ, Մայրիզ), որոնք հոլովվում են ա հոլովմամբ, ազ-ով վերջացող կենդանիների անունները (լազլազ, լարաբազ) և ում-ով վերջացող եթում Շորք բառը, որոնք հոլովվում են ու հոլովիչով:

գ) Բարբառում ա ձայնավորով վերջացող բոլոր բառերը:

դ) Բոլոր ամիսների անունները, բացի մարդ և արբիլ-ից:

ե) Մի շարք բառեր. ախշար, քաղաք, օխշար, օքուզ, ախշազանք, արմադ, աման, արառած, ալազ, աղանձ, հաց, գ'ութան, ճիրան, թիրան, կարաք, թան, պանիր և այլն:

զ) Ուն-ով վերջացող արուն բառը:

Այս հոլովման վերջավորութիւններն են.

	եզակի	հոգնակի
ուղղ.	հայց.	—
սեռ.	ի	ու
տր.	ին	ուն
բաց.	ից, է, էն,	ուց, ից, էն, է
գործ.	ով	ով

337. Ի հոլովման մի օրինակ.

	եզակի	հոգնակի
ուղղ.	գ'ութան	գ'ութներ
սեռ.	գ'ութնի	գ'ութներու
տր.	գ'ութնին	գ'ութներուն
հայց.	ըզգ'ութանըն	ըզգ'ութներըն
բաց.	գ'ութնից, էն, է	գ'ութնուց, ից, էն, է
գործ.	գ'ութնով	գ'ութներով

ԵՐՐՈՐԴ ՀՈՂՈՎՈՒՄ

ՎՍ.

338. Վա հոլովմամբ հոլովվում են ժամանակ ցույց տվող բոլոր բառերը, որոնց թվում և այն բարդ բառերը, որոնց եզրի անդամը ժամանակ ցույց տվող բառ է:

339. Այս հոլովման ենթարկվում են նաև ժամանակ ցույց տվող և գոյականաբար գործածվող բոլոր մակբայները. շուգ շուտ», յանքան շուշ», յավալք շառաշ, հնում»:

340. Վա հոլովմամբ հոլովվող բառերն են. տարի, գ'ախ «ժամանակ», սաբախտան «առափոս», հըրամգա «կեսօր», չիրդան, սուսուդ, հէրու «անցյալ տարի», շուզ, շուդուց «վաղուց», յավալք շափաթ, երգուշարթի, իրէքշափթի, չօրէքշափթի, հինգշափթի, ուրփաթ, կիրագի, ամիս, գաղիզ, թրժատարի «նոր տարի», գ'արունք, ճ'րմեռ, սաաթ «ժամ», վաղ, մըզլօր, վախտ, ժուգ «ժամանակ», ճաշ (ճաշի ժամանակ, կեսօր իմաստով), ժամանագ, հէրըզնամ «նախանցյալ տարի»:

Մ ա ն ո թ ու թ յ ու լ ն .— Նշված բառերից շափաթ և առափոգ բառերը կարող են հոլովվել և ու հոլովիչով:

341. Կես բառը, թեև ժամանակ չի ցույց տալիս, բայց գործածվելով ժամանակ ցույց տվող բառերի հետ, նույնպես հոլովվում է երբորդ

հորովամար. օրուկէս—օրուկիսմա, տարիուկէս—տարիուկիսմա, շափաթուկէս—շափաթուկիսմա, կէսօր—կէսօրմա:

342. Վա հորովամար չեն հորովում ամիսների անունները, թեև ժամանակ են ցույց տալիս: Նրանց մեծ մասը ենթարկվում է ի, մեկը՝ ու, մեկը՝ ա հորովման (տե՛ս այդ հորովումների բաժնում):

343. Վա հորովման վա վերջավորութունը պահպանվում է բոլոր թեք հորովների եզակիում, բացի հայցականից, և դրա վրա ավելանում են մյուս հորովների վերջավորութունները: Կան դեպքեր, երբ վա վերջավորութունը թեք հորովներում չի պահպանվում, և հորովական վերջավորութունները ավելանում են ուղղակի բառահիմքին. տարի—տարվանից—տարվանով բայց և տարուց, տարով:

344. Այս հորովման վերջավորութուններն են.

	եզակի	հոգնակի
ուղղ., հայց.	—	—
սեռ.	վա	ու
ար.	վան	ուն
բաց.	ից, է, էն	ուց, ից, էն, է
գործ.	ով	ով

345. Վա հորովամար բառը հորովվում է այսպես.

	եզակի	հոգնակի
ուղղ.	աշունք	աշունքներ
սեռ.	աշունքվա	աշունքներու
ար.	աշունքվան	աշունքներուն
հայց.	զաշունքըն	զաշունքներըն
բաց.	աշունքվանէ, ից, էն	աշունքներուց, էն, ից, է
գործ.	աշունքվանով	աշունքներով

ՉՈՐՐՈՐԴ ՀՈՂՈՎՈՒՄ

ԱՆ

346. Ան հորովման ենթարկվում են.

ա) Ում-ով վերջացող բոլոր բառերը, որոնք միաժամանակ ենթարկվում են նաև ի հորովման, բացի եթում բառից.

բ) Գրաբարում և ունեցող և բարբառում բառավերջի այդ և-ն կորցրած բառերը. ինչպես. շուրթ, խուփ, լեզ, դ՛ուռ, նուռ, կուռ, սերմ, փուռ, ձ՛րմեռ, ամառ և այլն:

Ծ ա ն ո թ ու թ լ ու ն.—Անհրաժեշտ է նշել, որ գրաբարում ն-ով վերջացող և բարբառում այդ ն-ն կորցրած ոչ բոլոր բառերն են ենթարկվում այս հորովման, նրանք կարող են հորովվել և այլ հորովիչներով. այսպես. խուփ—խըփան, նուռ—նըռան, բայց դ՛ախց—գ՛ախցի, աղամ—աղմի, սասիս—ասիսի և այլն:

գ) Ուն-ով վերջացող բառերը բացառյալ արուն, քուն, բ՛ուն բառերի, որոնք ենթարկվում են ի հորովման:

Ծ ա ն ո թ ու թ լ ու ն.— Այս հորովման ենթարկվող աշուն, գ՛արուն բառերը բարբառում ունեն նաև աշունք, գ՛արունք ձևերը, որոնք հորովվում են վա հորովիչով, ինչպես ժամանակ ցույց տվող մյուս բոլոր բառերը:

դ) Մի շարք ստորական միավանկ բառեր. ճուռ, «գիսա», ճուղ, ճոթ թծալը, քղանցք», ըղունգ, էղունգ, թեռ թեծ ջվալ», թութ, հէրթ ճհարգ», վիղ, նուշ, չոք թծունկ», դուղ ընկուղ» գ՛ունգ, սինձ, մաղ, զըրբ ճհարված», կուբըր, կըբուց, կուժ, լինդ, թառ, կուդ, բ՛ութ, կալ, ծառ, ծիլ, լուձ, սէլ և այլն:

ե) Կենդանիների անուններից գ՛որդ բառը:

347. Ան հորովման վերջավորութուններն են.

	եզակի	հոգնակի
ուղղ., հայց.	—	—
սեռ.	ան	ու, ուն
ար.	ան	ուն
բաց.	ից, էն	ուց, ից, է, էն
գործ.	ով	ով

348. Ան հորովամար բառը հորովվում է այսպես.

	եզակի	հոգնակի
ուղղ.	զըրբ (հատված)	զըրբեր
սեռ.	զըրբան	զըրբերու
ար.	զըրբան	զըրբերուն
հայց.	ըզըրբըն	ըզըրբերըն
բաց.	զըրբէն, էն	զըրբերուց, է, էն, ից
գործ.	զըրբով	զըրբերով

ՈԶ

349. Մշո բարբառում ոչ հոլովման ենթարկվում են ազգակցական հարաբերություններ ցույց տվող և զբանցից բարդված այն բառերը, որոնց եզրի անդամը ազգակցական հարաբերություն ցույց տվող բառն է, ինչպես նաև մի քանի այլ բառեր. այսպես. քուր, տալվ, կիսուր, աներ, յընգեր, աէր, մօրքուր, հօրքուր, քավօրքուր և այլն:

Մ ան ո թ ու թ լ ու ն 1.— Տեքքը և նրանով բարդված բառերը ոչ հոլովմամբ հոլովվելով հանդերձ կարող են հոլովվել նաև աեքիբ ձևով:

Մ ան ո թ ու թ լ ու ն 2.— Այս հոլովման սեռական և տրական հոլովների եզակիները ևս նման են իրար:

350. Այս հոլովման վերջավորություններն են.

Եզակի		Տոգնակի	
ուղղ., հայց.	—	—	—
սեռ.	ոչ	ու	—
տր.	ոչ	ու	—
բաց.	էն, ից	ուց, էն, ից, է	—
գործ.	ով	ով	—

Օրինակ՝

	Եզակի	Տոգնակի
ուղղ.	կիսուր	կիսըրներ
սեռ.	կիսրոչ	կիսըրնէրու
տր.	կիսրոչ	կիսըրնէրուն
հայց.	ըզկիսուրըն	ըզկիսըրնէրըն
բաց.	կիսրօչէ, էն, ից	կիսըրնէրուց, ից, է, էն
գործ.	կիսրօչով	կիսըրնէրով

ՎԵՅԵՐՈՐԴ ԼՈՂՈՎՈՒՄ

Ա.

351. Ա հոլովման Մշո բարբառում ենթարկվում են.

ա) Իգ-ով վերջացող մի շարք հատուկ անուններ. Հօվսիգ, Ավիգ, Մայրիգ, Մաղիգ, Լուսիգ, Թաթիգ. բացի զբանցից, իգ-ով վերջացող երեք բառ ախչիգ, իրիգ, կընիգ.

- բ) Մաագ, Մէսրոփ հատուկ անունները.
- գ) Մի շարք անդանուններ. Խըլաթ, Կոփ, յիւզըռում, վան՝ Սասուն, Հացիգ, Բուլանըխ, Յաբըրուհար:
- դ) Ամիսների անուններից մարզը.

352. Այս հոլովման վերջավորություններն են.

	Եզակի	Տոգնակի
ուղղ., հայց.	—	—
սեռ.	ա	ու
տր.	ին	ուն
բաց.	ա, էն, է	ուց, է, էն
գործ.	ով	ով

353. Ա հոլովման մի օրինակ.

ուղղ.	Խըլաթ
սեռ.	Խըլաթա
տր.	Խըլաթին
հայց.	ըզլաթըն
բաց.	Խըլաթա, ից, էն
գործ.	Խըլաթով

ՅՈՒԹԵՐՈՐԴ ԼՈՂՈՎՈՒՄ

Ո

354. Ո հոլովման ենթարկվում են. հեք, մէք, ախպեր և սրանցից բարդված այն բառերը, որոնց մեջ վերոհիշյալները կազմում են բարդության երկրորդ անդամը:

355. Այս հոլովման վերջավորություններն են.

	Եզակի	Տոգնակի
ուղղ., հայց.	—	—
սեռ.	որ	ու
տր.	որ	ուն
բաց.	է, էն, ից	ուց, ից, է, էն
գործ.	ով	ով

356. Ո հոլովման բառը հոլովվում է հետևյալ կերպ.

	եզակի	հոգնակի
ուղղ.	մէք	մէքեր
սեռ.	մոր	մէրէրու
տր.	մոր	մէրէրուն
հայց.	ըզմէրըն	ըզմէրերըն
բաց.	մօրից, է, էն	մէրէրուց, ից, է, էն
գործ.	մօրով	մէրէրով

ՈՒԹԵՐՈՐԴ ՀՈՒՈՎՈՒՄ

8

357. Յ հոլովման Մշո բարբառում ենթարկվում են ենթով վերջացող հավաքական գոյականները. Ավիզենք, Արմօենք, Գիրքօրենք և այլն:

358. Այս հոլովման վերջավորութուններն են.

ուղղ., հայց.	—	բաց.	ից, է, էն
սեռ.	ց	գործ.	ով
տրակ.	ց		

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.—Այս հոլովման բացառականը շուհի ուց տարածված վերջավորութունը:

359. Սեռականի ենց վերջավորութունը պահպանվում է մյուս թեք հոլովներում:

Բերենք այս հոլովման մի օրինակ.

ուղղ.	Ավիզենք	հայց.	զԱվիզենքըն
սեռ.	Ավիզենց	բաց.	Ավիզէնցից, է, էն
տր.	Ավիզենց	գործ.	Ավիզէնցով:

360. Բացի վերոհիշյալ որոշակի հոլովակերտ մասնիկներից, Մշո բարբառին հատուկ որոշ բառաձևերում և արտահայտություններում առկա են գրաբարյան քարացած հոլովաձևեր. այսպես.

- Քո մեղաց տակ մըղավ.
- Ընի իմ ձեռաց տագ է մէձցի.
- Խեղաց կըղուր է քու ըսուգ.
- Ընի խոսաց տագ չըմնա.
- Քու ըսուզն էլ իմ մըղաց գ'ացէր է.
- Իմ օղաց տագ.
- Սերման սոխ և այլն:

361. Ինչպես տեսնում ենք, ընդգծված բառերը գրաբարյան հոգնակի սեռականն են, այդ նույն ձևերն են պահպանել նաև կողքաց, կամաց, ձեռաց'ազիր բառաձևերում, ինչպես նաև օրավուր արտահայտության մեջ:

2. ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

362. Մշո բարբառում ածականը գրվում է գոյականից առաջ. գոյականի հետ թվով չի համաձայնվում, հոգ չի ստանում, չի հոլովվում: Այն հոլովվում է միմիայն գոյականաբար գործածվելու և ենթարկվում է ի հոլովման:

ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ
ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

363. Ածական անունները Մշո բարբառում, ինչպես և բարբառների մեծ մասում ու արդի հայերենում, լինում են երկու սեռակի.

ա) որական, բ) հարաբերական.

364. Որական ածականների օրինակ. գ'էջ «տղեղ», խօրոզ «գեղեցիկ», պըզղիզ «փոքր», չոչ «մեծ», շաղ, մանղըր, ծանղըր, կարմիր, բ'օրօշիզ «գորշավուն», անորոշ գույնի», չ'օնրիի «գորշավուն»:

365. Որական ածականը Մշո բարբառում ևս ունի համեմատության երեք աստիճան.

ա) գրական, բ) բաղդատական, գ) գերազրական.

366. Դրականը ածականի ուղիղ ձևն է. գ'էջ ախշիզ, խօրոզ «բղա», ծուռ կընիզ, բ'օրօշիզ շաբիզ, չ'օնրիի միզար և այլն:

367. Որականը ածականի բաղդատական աստիճանը կազմվում է.

ա) Գոյականի ուղղական հոլովը մի այլ կամ նույն գոյականի բացառական հոլովի հետ համեմատելու միջոցով. Իդա կընիզ ինա կընղընէն խօրոզ է (Այս կինը այն կնոջից գեղեցիկ է): Իդա շաբիզ ինա միզրէն բ'օրօշիզ է (Այս շապիկը այն գոզոցից գորշ է):

բ) էլ բառի միջոցով. Իդա գ'էզ էլ մէնձ է. Իզրա խելք էլ շաղ է.

գ) յեվելի բառի միջոցով. Իդա գ'էզ յեվէլի մենձ է. Իզրա խելք յեվէլի շաղ է.

դ) Միաժամանակ էլ ու յեվելի բառերով. Իդա գ'էզ էլ յեվէլի մենձ է. Իզրա խելք էլ յեվէլի շաղ է:

368. Որակական ածականի դերադրական աստիճանը կազմվում է յըմնուց բառի օգնությամբ. իդր գ'էդ յըմնուց մենձ է. իդրա խելք յըմնուց շազ է:

Մ ան ո թ ու թ լ ու լ ն.— Հայերենի որոշ բարբառներում ածականների դերադրական աստիճանը կազմվում է դրական աստիճանի վրա զանազան մասնիկներ ավելացնելու միջոցով: Այսպես. Համշենի բարբառում ածականի զրական աստիճանի վրա ավելացնում են եօդ, եդ մասնիկները. կարմրեօդ. սեվեգ կնշանակի ամենից կարմիր, ամենից սև¹: Պոլսո բարբառում այդ նույն նպատակի համար օգտագործվում է գեգ—մասնիկը. սեվգեգ, կարմրգեգ: Կնշանակի ամենից սև, ամենից կարմիր²:

369. Մշո բարբառում ևս օգտագործվում են որոշ բառեր, մասնիկներ, որոնք գրվելով ածականի վրա, ավելի սաստկացնում են նրա իմաստը:

Աէվ—բայց ճընգրիգ սէվ—շատ սև: Թըժա (նոր), բայց թոփ թըժա—բոլորովին նոր, սիվգազ, բայց սիփսիվգազ—շատ սպիտակ, կարմիր, բայց կաւ կարմիր—շատ կարմիր:

370. Հարաբերական ածականները Մշո բարբառում կազմվում են գոյականների վրա և վերջավորութունը ավելացնելու միջոցով. քարէ պադ, օսկէ մադնիք, արձըթէ ժընջիլ (շղթա):

Մ ան ո թ ու թ լ ու լ ն.— Այս ե-ն ոչ ալ ինչ է, եթե ոչ գրաբարյան յա ածանցը, որը բարբառին հատուկ հնչյունափոխական օրենքներին ենթարկվելով, դարձել է ե. եա > է. քարեա > քարէ, երկաթեա > էրգըթէ, փայտեա > փեդէ և այլն:

371. Հարաբերական ածականի իմաստ արտահայտելու համար բարբառում օգտագործում են նաև գոյականների ուղղական, սեռական ու բացառական հոլովները. էրձաթ, էրձըթի, էրձըթից զընջիլ «շղթա», օսկի, օսկու, օսկուց մադնիք, քարի, քարից, քարէ պադ, էրգաթ, էրգըթի, էրգըթից գ'ըթալ:

¹ 2. Անառյան, Համշենի բարբառ:

² 2. Անառյան, Պոլսո բարբառ:

3. ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

372. Մշո բարբառում թվականները միշտ գրվում են գոյականից առաջ, չեն հոլովվում, թվով գոյականի հետ չեն համաձայնվում:

Գոյականաբար գործածվելիս թվական անունների եզակիները ենթարկվում են ի' իսկ հոգնակիները՝ ու հոլովման:

373. Մշո բարբառում կան հետևյալ թվականները.

ա) Քանակական, բ) դասական, գ) բաշխական, դ) բազմապատկական, ե) չափական:

374. Մշո բարբառում ևս քանակական թվականները լինում են պարզ, բարդ և բաղադրյալ:

375. Պարզ քանակական թվականներն են. մէգ, էրգու(ս), իրեք, չորս, հինգ, վեց, յօթ, ութ, ինը, տաս, քրսան, յէրսուն, քասսուն, հիսուն, վաթսուն, յօթանասուն, ութանասուն, ինըսուն, հարիւր, հըզար:

376. Բարդ քանակական թվականներն են. տըսնումէգ, տըսվէրգուս, տըսվիրեք, տըսնուչորս, տըսնուհինգ, տըսնուվեց, տըսնույօթ, տըսնէվութ, տըսնէվին, քըսանումէգ, քըսանվէրգուս, քըսանվիրեք, քըսանուչորս, քըսանուհինգ, քըսանուվեց, քըսանույօթ, քըսանէվութ, քըսանէվին:

Մ ան ո թ ու թ լ ու լ ն.— Ինչպես երևում է բերված օրինակներից, բարդ թվականների մեջ ու-ն ավելանալով որպես շաղկապ մնում է անփոփոխ, եթե հաջորդ թվականը սկսվում է բաղաձայնով և դառնում է վ և եվ, եթե սկսվում է ձայնավորով:

Այսպես. տըսնումէգ, տըսնուչորս, տըսնուվեց, բայց՝ տըսվէրգուս, տըսվիրեք, տըսնէվութ, տըսնէվին:

377. Բաղադրյալ թվականների մեջ մանող բարդ թվականները կազմվում են նույն սկզբունքով: Բարդ թվականի և հազարավորի միջև գրվում է ու շաղկապը, որը, սակայն, չի գրվում հազարավորի և հարյուրավորի մեջ. հըզար ու տըսնէվութ, հըզար ու տըսնէվին, հըզար ու քըսանուչորս, հըզար ու քըսանուհինգ, բայց՝ հըզար հարիւր տըսնէվութ, հըզար հարիւր տըսնէվին, հըզար հարիւր քըսանուչորս, հըզար հարիւր քըսանուհինգ:

Մ ան ո թ ու թ լ ու լ ն.— Ինչպես բարդ, այնպես էլ բաղադրյալ թվականները բարբառում կազմվում են կցական սիստեմով:

378. Մշո բարբառը գասական թվականների համար հատուկ ձև չունի: Բացառություն է կազմում յառչի—առաջին բառը:

379. Դասական թվականների իմաստը բարբառու արտահայտում է վեր—վրա նախադրությունը թվականների տրական հոլովի վրա ավելացնելու միջոցով:

- Վը՛ր իրէքին օր աէսա... «Երրորդ անգամ որ տեսա...»
- Վը՛ր չօրսին օր էգավ... «չորրորդ անգամ որ եկավ...»
- Վը՛ր հըրիբին օր չըլսեց «հարյուրերորդ անգամ որ չլսեց...»
- Վը՛ր հընգին օր գացի... «հինգերորդ անգամ որ գացի...»
- Վը՛ր չօրսըն օր էգավ... «չորրորդը որ եկավ...»
- Վը՛ր իրէքըն օր աէսա «Երրորդը որ տեսա...»

380. Բարբառու չունի նաև գրարարի անձներական թվականներին համադր ձևեր: Անձներական թվականների իմաստը արտահայտվում է լի մասնիկը քանակական թվականների վրա ավելացնելու միջոցով. էրգուս լէ—երկուքին, երկուքեան, իրեք լէ—երեքին, երեքեան, չորս լէ—չորեքին, չորեքեան:

381. Բարբառու բաշխական թվականների համար հատուկ ձև չունի:

Բաշխական թվականների իմաստը արտահայտում է քանակականների կրկնություն միջոցով. էրգուս-էրգուս—երկուական, տաս-տաս—ասական, քըսան-քըսան—քսանական, հարիր-հարիր—հարյուրական:

382. Բազմապատկական թվականները բարբառում կազմվում են տազ և պաղիզ մասնիկների օգնությամբ: Տազ-ը ավելանում է պարզ, բարդ և բազադրյալ թվականներին, իսկ պաղիզ-ը միայն պարզ թվականներին. Իրեք տազ—երեք անգամ, չորս տազ—չորս անգամ, հինգ տազ—հինգ անգամ, քըսան տազ—քսան անգամ, հըրիր ու քըսան տազ—հարյուր քըսան անգամ, հըզար հարիր ու չէրսուն տազ—հազար հարյուր երեսուն անգամ, չօրսապաղիզ—չորս անգամ, հընգապաղիզ—հինգ անգամ, քըսանապաղիզ—քսան անգամ, հըզարապաղիզ—հազար անգամ:

Բայց գործածական չէ էրգու հըզարապաղիզ, էրգու հազար իրեք հարիրապաղիզ և այլն: Այս դեպքերում, ինչպես արդեն նշվել է, նախորդ §-ում գործ է ածվում միայն տազ մասնիկը:

383. Չափական թվականները բարբառում կազմվում են քանակական թվականների եզակի ուղղականի վրա նոց- մասնիկը ավելացնելու միջոցով. մէգնոց, իրէքնոց, վէցնոց, հընգնոց, յօթնոց, տըսնոց:

Մանոթություն.—1. Չափական թվականների, ինչպես նաև առհասարակ մյուս բոլոր թվականների, կազմություն, հոլովման ու հոգնակի դարձնելու ժամանակ գործում են ձայնավորների, երկբարբառների և բազաձայնների հնչյունափոխության բոլոր օրենքները:

Մանոթություն.—2. Չափական թվականների կազմության ժամանակ ա հոդակապը չի դրվում:

Մանոթություն.—3. Երգուս (երկու) պարզ թվականը բարբառում, վերջում ունի ս: Այդ ս-ն պահպանվում է, եթե երգուս-ը կազմում է բազադրյալ թվականի եզրի անգամը և սղվում է, եթե կազմում է առաջին կամ միջին անգամը: Քըսանվէրգուս, քառասունվէրգուս, արսվէրգուս, բայց՝ էրգու հարիր, էրգու հազար, հըզար էրգու հարիր և այլն:

4. Գ Ե Ր Ա Ն Ո Ի Ն Ն Ե Ր Ը

384. Մշո բարբառն ունի 9 տեսակի դերանուն. անձնական, ցուցական, սաացական, հարցական, հարաբերական, փոխադարձ, որոշյալ, անորոշ, միտական:

385. Անձնական դերանուններն են. կզակի—յես, դո՛ւ, ընի, չինք—ինքն: Հոգնակի—մենք, դ՛ուք, ընդոնք, ընոնք—նրանք, ուրանք—իրենք:

386. Անձնական դերանունները բարբառում հոլովվում են հետևյալ կերպ.

		կզակի		
ուղղ.	լիս	դ՛ու	ընի	
սեռ.	իմ, իմուն	քու, քումուն	ընդրա	
տր.	ընձի, ընձիդ,	քզդի, քզդիդ	ընդրան	
հայց.	դիս, զընձի	ըզքզդի	զընդրան	
բաց.	ընձնէ, ընձնէն,	քզզնէ, քզզնէն	ընդըրնէ, ընդըրնէն,	
	ընձնից	քզզնից	ընդըրնից	
գործ.	ընձնով, ընձանով	քզզնով, քզզանով	ընդըրնով, ընդրանով	
		հոգնակի		
ուղղ.	մենք	դ՛ուք	ընդոնք	ընդոնք
սեռ.	մեր, մերուն	ձ՛եր, ձ՛երուն	ընդոնց	ընոնց

տր.	մըզի	ձ'ըզի	ընդոնց	ընոնց
հայց.	ըզմըզի	ըզձ'ըզի	զընդոնք	զընոնք,
բաց.	մըզնէ, էն, ից	ձ'ըզնէ, էն, ից	ընդոնցնէ, ընոնցնէ, էն, ից	էն, ից
գործ.	մըզնով, մէզանով	ձ'ըզնով	ընդոնցով	ընոնցով

ուղղ.	ուրանք
սևո.	ուրանց
տր.	ուրանց
հայց.	զուրանց
բաց.	ուրընցնէ, էն, ից
գործ.	ուրընցնով

387. Անձնական գերանունների սեռական և տրական հոլովները, ի տարբերություն գոյականների, զանազանվում են իրարից: Անձնական գերանունների 1-ին և 2-րդ դեմքերի եզակի սեռական և տրական հոլովները ունեն կրկնակ ձևեր (սեռ. իմ, իմուն, քում, քումուն, տրակ. բնձի, բնձիգ, բըզի, բըզիգ) հոգնակիում կրկնակի ձև ունի միայն սեռականը (մեր, մերուն, ձ'եր, ձ'երուն):

388. Անձնական գերանունների բացառական հոլովը թե՛ եզակիում և թե՛ հոգնակիում ունենում է միայն է, են, ից վերջավորությունները, հակառակ գոյականների, որոնք, ինչպես տեսանք, կարող են ունենալ նաև ու, ուց, ա վերջավորությունները:

389. Յուցական գերանուններն են. եզակի իզա, ըզի,—այս, այգ, ինա, բնի—այն և սրանցից բարդվածները. իզաանդ—այստեղ, ինաանիս—այնտեղ, իզաքան—այսքան, ինաքան—այնքան, իզաչիչիգ—այսկերպ, ինաչիչիգ—այնկերպ, իզամլա—այսպես, ինամլա—այնպես: Հոգնակի. իզոնք—սրանք, ինոնք—նրանք:

Ծանոթություն.—Այս և սրանք յուցական գերանունների համար բարբառու հատակ ձև չունի, դրա փոխարեն կերպովում է իզա, իզոնք, որը միաժամանակ նշանակում է այս, այգ, սրանք, դրանք:

390. Յուցական գերանունները հոլովվում են հետևյալ կերպ.

ե զ ա կ ի		
ուղղ.	իզա	ինա
սևո.	իզոր	ընդոր

եզակի

տր.	իզոր	ընդոր
հայց.	զիզա	զինա
բաց.	իզըրնէ, էն, ից	ընդըրնէ, էն, ից
գործ.	իզըրնով	ընդըրնով

հոգնակի

ուղղ.	իզոնք	ընդոնք
սևո.	իզոնց	ընդոնց
տրակ.	իզոնց	ընդոնց
հայց.	զիզոնք	զընդոնք
բաց.	իզընցնէ, էն, ից	ընդընցնէ, էն, ից
գործ.	իզընցնով	ընդընցնով

Ծանոթություն.—Յուցական գերանունների եզակի բացառականը ունենում է ըրնէ, ըրնից, ըրնէն վերջավորությունները:

391. Մշո բարբառում անձնական գերանունների սեռական հոլովները ծառայում են որպես ստացական գերանուններ (իմ, իմուն—իմ, քու, քում, քումուն—քո, բնզոր—նրա, մեր, մերուն—մեր, ձ'ըր, ձ'եր, ձ'երուն—ձեր, բնզոնց—նրանց):

Ծանոթություն.—Այս գերանունների երկրորդական ձևերը գործ են ածվում որոշյալ առման դեպքում, բայց սա չի խանգարում, որ նրանք զարձյալ որոշիչ հոդ ստանան: Իմուն, զիմուն, քումուն, բըքումուն:

392. Ստացական գերանունները Մշո բարբառում հոլովվում են հետևյալ կերպ.

եզակի

սևո.	իմ,	իմուն	քում,	քումուն	էնոր
տր.	իմ,	իմուն	քում,	քումուն	էնոր
հայց.	զիմ,	զիմուն	բզքում,	բզքումուն	զէնոր
բաց.	իմունէ, էն, ից		քումունէ, էն, ից		էնորէ, էն, ից
գործ.	իմունով		քումունով		էնորով

Ծանոթություն.—Ընզոր ստացական գերանունը չի հոլովվում.

հոգնակի

սեռ.	մըր, մեր,	մէրուն	ձ'ըր, ձ'եր,	ձ'էրուն	էնոնց
ար.	մըր, մեր,	մէրուն	ձ'ըր, ձ'եր,	ձ'էրուն	էնոնց
հայց.	ըզմըր, մեր,	մէրուն	ձ'ըր, ձ'եր,	ձ'էրուն	զէնոնց
բաց.	մըզնէ, էն, ից,	մէրուն	ձ'ըզնէ, էն,	ձ'էրունէ,	էնոնցէն, է, ից
		նէ, էն, ից	ից	էն, ից	
գործ.	մըրնով,	մէրունով	ձ'ըրնով	ձ'էրունով	էնոնցով

Մանսթուխուն.— Ինչպես արդեն նշվել է, «Ձախնափորների փոփոխութիւնները» գլխում գերանունների ձայնափորների գիմաց բարբառ ունի ը (մըր, ձ'ըր), սակայն գործ է սծում նաև չհնչյունափոխված ձևերը՝ մեր, ձ'եր:

393. Դերանունների կրկնակի ձևերից առաջինները՝ իմ, քում, մըր, մեր, ձ'ըր, ձ'եր, չեն կիրառվում բացառական և գործիական հոլովների կազմելու ժամանակ. այդ հոլովները միշտ կազմվում են երկրորդ ձևերի (իմուն, քումուն, մերուն, ձ'երուն) վրա հոլովական վերջավորութիւնները ավելացնելու միջոցով (իմունից, իմունով, մերունից, մերունով):

394. Ստացական գերանունների բացառական հոլովը ու, ուց վերջավորութիւններ չի ստանում:

395. Ստացական գերանունները որպես հասկացուցիչ միշտ դրվում են հասկացալից առաջ: Հասկացալից առաջ դրվելով, նրանք չեն հոլովվում, թվով, գեմքով չեն համաձայնվում գոյականի հետ: Օրինակ՝ զիմ տուն, զիմ աան, զիմ արևեկ, զիմ արևեկով և այլն:

396. Ստացական, ինչպես և մյուս բոլոր գերանունների որոշյալ հայցական և մյուս հոլովները Մշո բարբառում ստանում են գ, ըզ նախորդը նույն օրենքներով, ինչ գոյականները (տես § 323):

397. Մշո բարբառում ստացական գերանվան իմաստը արտահայտվում է նաև մի, ձի՛ բառերի և անձնական գերանունների հոգնակի տրական հոլովի օգնութիւմը՝ օղներ մի—իմ, մեր օաքերը, ձ'էներ մի—իմ, մեր ձեաքերը, արներ ձ'ի—ձեր աները, շօքեր ձ'ի—ձեր շօքերը, խելք մի—իմ, մեր խելքը:

¹ Ամենայն հավանականութիւմը այս ձևերը ծագել են մեր, ձեր բառերից, որոնք վեր են անցնում մասնիկների:

խելք ձ'ի—ձեր խելքը, օղներ մըզի—իմ, մեր օաքերը, ձ'էներ մըզի—իմ, մեր ձեաքերը, արներ ձ'ըզի—ձեր աները, շօքեր ձ'ըզի—ձեր շօքերը, խելք մըզի—իմ, մեր խելքը, խելք ձ'ըզի—ձեր խելքը:

398. Մշո բարբառի հարցական գերանուններն են. օ՞վ, վո՞ն—օ՞վ, ի՞նչ, վո՞ր—ո՞ր, վո՞ր մեզ—ո՞ր մեկը, յո՞րի, յընչի՞—ինչո՞ւ, իմա՞լ—ինչպե՞ս, յու՞ր, դո՞ր—ո՞ւր, յե՞փ, քը՞նի, ի՞նչըզըզը—որքա՞ն, ի՞նչախս—ո՞րտեղ, ի՞նչչէշիզ—ի՞նչկերպ և այլն:

399. Հարցական գերանունները Մշո բարբառում հոլովվում են հետևյալ կերպ.

եզակի

ուղղ.	օ՞վ,	հայց.	(զ)օ՞վ,
սեռ.	յո՞ւմ	բաց.	յու՞ննէ, էն, ից
ար.	յո՞ւմ	գործ.	յու՞ննով

Օ՞վ, վո՞ն հարցական գերանունները բարբառում հոգնակի չունեն: Հոգնակիի իմաստ արտահայտելու համար գործ է սծում նույն գերանվան եզակին: Վո՞ն էզավ, վո՞ն էզավ, օ՞վ էզավ, օ՞վ էզան:

400. Մյուս հարցական գերանունները հոլովվում են հետևյալ կերպ.

եզակի հոգնակի

ուղղ.	ի՞նչ	վո՞ն	վո՞ր մէզ	ը՞նչեր
սեռ.	ը՞նչի	վի՞ր	վո՞ր մէգու	ը՞նչէրու
ար.	ը՞նչին	վին	վո՞ր մէգուն	ը՞նչէրուն
հայց.	(զ)ի՞նչ(ըն)	(զ)վո՞ն	(ըզ)վո՞ր մէզ(ըն)	(զ)ը՞նչեր(ըն)
բաց.	ը՞նչէն, ընչնէ,	վի՞րնէ, էն,	վո՞ր մէզէ,	ը՞նչէրէն, է, ից
	ից	ից	էն, ից	
գործ.	ը՞նչով	վի՞րնով	վո՞ր մէգով	ը՞նչէրով

401. Յօրի՞, յընչի՞, իմա՞լ հարցական գերանունները չեն հոլովվում:

402. Ի՞նչըզըզը, ի՞նչախս, ի՞նչչէշիզ բաղադրյալ հարցական գերանունները հոլովվում են այնպես, ինչպես նրանց կազմութիւն մեջ մտնող կզրի անդամները՝ իըզըզը (ի), ախս (աց, ի), չէշիզ (ի) բառերը:

403. Մշո բարբառում որպես հարաբերական գերանուններ ծառայում են նույն հարցական գերանունները առանց հարցական

նշանների: Հարաբերական դերանունները հոլովվում են հարցական դերանունների նման:

404. Բարբառիս փոխադարձ դերանուններն են. մեզմէզու—մեկմեկի, յիրար, յիրուր—իրար: Փոխադարձ դերանունները հոլովվում են հետևյալ կերպ.

սեռ.	մէզմէզու	յիրուր
տր.	մէզմէզուն	յիրուր
հայց.	մէզ(ըզ)մէզու(ն)	(զ)իրուր
բաց.	մէզմէզէ, էն, ուց	յիրուրէ, էն, ից
գործ.	մէզմէզով	յիրուրով

405. Փոխադարձ դերանուններից մեզմէզու դերանվան որոշյալ առումը արասհայտելու համար զ(ըզ) նախդիրը ավելանում է ոչ թե բառի սկզբից, այլ գրվում է դերանվան երկու բաղկացուցիչ մասերի մեջտեղը՝ մէզըզմէզու, և ապա հոլովվում է այնպես ինչպես անորոշ առման դեպքում:

406. Փոխադարձ դերանունները հոգնակի չունեն:

407. Բարբառիս որոշյալ դերանուններն են. յըմմեն—ամեն, մեզել—մյուս, սախ—ամբողջ:

408. Որոշյալ դերանունները հոլովվում են հետևյալ կերպ.

եզակի

ուղղ.	յըմէն	սախ
սեռ.	յըմու	սախի
տր.	յըմուն	սախին
հայց.	(զ)ըմմէն	(ըզ)սախ(ըն)
բաց.	յըմուց	սախէն, ից
գործ.	յըմուով	սախով

եզակի

հոգնակի

ուղղ.	մըզէլ	մըզըլներ
սեռ.	մըզէլի	մըզըլներու
տր.	մըզէլին	մըզըլներուն
հայց.	(ըզ)մըզէլ(ըն)	(ըզ)մըզըլներ(ըն)
բաց.	մըզէլէն, ից	մըզըլներուց, ից, էն
գործ.	մըզէլով	մըզըլներով

409. Որոշյալ դերանուններից յըմմեն-ը և սախ-ը հոգնակի չունեն:

410. Մշո բարբառի անորոշ դերանունն է մե, մը, մեզ—մի: Անորոշ դերանունը գոյականի հետ կարող է գրվել թե՛ նախադաս և թե՛ վերջադաս:

Մե մարք, մարք մե, մարք մը:

Եթե անորոշ մե, մը դերանուններին հաջորդող գոյականը սկսվում է ե ձայնավորով, այն դեպքում անորոշ դերանվան է, ը-ն սղվում են. մարք մ'եզավ, մարք մ'եքսով տեսա, իսկ եթե սկսվում է այլ ձայնավորով կամ բաղաձայնով, ապա ե, ը-ն պահպանվում են. մարք մե իզա գ'եղեկ ընծի տեսավ, մարք մե գ'ընաց բաղաբ: Մարք մը տեսա:

411. Ինչպես նշվեց, որպես անորոշ դերանուն բարբառումս գործ է ածվում նաև մեզ—մեկ թվականը, որը գոյականի հետ գրվում է թե՛ նախադաս և թե՛ վերջադաս: Նախադաս գրվելիս այն պահանջում է գոյականի ուղղական, իսկ վերջադաս գրվելիս՝ տրական հոլովը:

Մեզ մարք:

Մարքու մեզ:

412. Մեզ-ը որպես անորոշ դերանուն գործ է ածվում նաև մը, մ, մե-ի հետ միասին.

Մեզ մարք մե տեսա, մեզ մարք մ'եզավ, մեզ մարք մը տեսա:

Մշո բարբառի ժխտական դերանուններն են. հեչմեզ, վոչ մեզ (ոչ ոք), հեչ, հեչ բ'ան (ոչինչ):

413. Այս դերանունները հոլովվելիս՝ հոլովվում են միայն նրանց եզրի անդամները, որոնք գոյականներ են և ունեն իրենց որոշակի հոլովիչները:

5. Հ Ո Վ

414. Մշո բարբառը ունի հետևյալ հոգերը.

ա) Որոշիչ, բ) սասցական, գ) դիմորոշ, դ) ցուցական:

415. Բարբառիս որոշիչ հոգերն են ը, և:

416. Ն որոշիչ հոգը գրվում է ձայնավորով վերջացող բառերից հետո. ձ'ին, կաղուն, լուն, գ'ինին, յատուն, քէսին:

417. Ը որոշիչ հոգը գրվում է բաղաձայնով վերջացող բառերից հետո. տունը, շունը, քաղաքը, գ'էղը, հէրը, ախշարքը:

418. Երբ որոշիչ ը հոգը սասցած բառին հաջորդում է

ձայնավորով սկսվող բառ, այն դեպքում ը-ն, հակառակ աշխարհաբարի, չի դասնում ն: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ հաջորդող բառը լե—էլ է. այն դեպքում որոշյալ ը հոգին ավելանում է ն. գերգու հացըն լէ կերավ, ըզջ'ուրըն լէ խմէց ու գ'ընաց: Կամ՝ գերգու ախպէրըն լէ գ'ացին սալդաթ և այլն:

419. Բարբառում հաճախ ն որոշիչ հոգերից առաջ ավելանում է բառի վրա ը ձայնավորը, երբ բառը վերջանում է բաղաձայնով. այսպես. տունըն, շունըն, քաղաքըն, գ'էղըն, հէրըն, ախշարքըն:

420. Որոշիչ հոգը ձևաբանական կարևոր նշանակություն ունի բարբառում: Այն հաճախ փոխում է հարադիր բառերի իմաստը, բոլորովին խախտում հարադրությունը: Բերենք մի քանի օրինակ.

Յանգաջ քրցել—լսել, իսկ յանգաջը քրցել—մեկին լուր հասցրնել: Ջեռ քաշել—ստորագրել, իսկ ձ'էսը քաշել—լուի Ֆիզիկական իմաստով՝ ձեռքը մի բանից վերցնել: Ջ'եռ իղալ—շահավետ, արդյունավետ լինել, իսկ ձ'էսը իղալ—բարեկել, ձեռքը սեղմելու միջոցով: Գ'ըլօս գ'ընել—մեկին ընկերանալ, մեկի հետ գործ բռնել, իսկ գ'ըլօխըն գ'ընել—լուի Ֆիզիկական իմաստ ունի, փոս յընգնալ—նշանակում է խորտակվել, իսկ փոսըն յընգնալ՝ Ֆիզիկական իմաստ ունի:

421. Պատկանելություն արտահայտելու համար, ինչպես արդեն նշեցինք գերանունների մասին խոսելիս, բարբառս գործ է ածում ստացական գերանուններ, սակայն շատ հաճախ արդ իմաստը արտահայտելու համար կիրառվում են ստացական հոգերը:

422. Բարբառիս ստացական հոգերն են.
1-ին գ. ս(ի)— գ'իրքսի, գ'ըրքերսի—գիրքս, գրքերս:
2-րդ գ. ա(ի)— գ'իրքաի, գ'ըրքերաի—գիրքգ, գրքերգ
3-րդ ն-ն գ'իրքըն, գ'ըրքերըն—գիրքն, գրքերն:

423. Ստացական ս, ա(դ) հոգերը Մշո բարբառում ինքնուրույնաբար չեն ավելանում բառերին. նրանցից հետո, իբրև աճական ավելանում է ի ձայնավորը. ա'եաքսի—ձեռքս, օգսի—ոտքս, խեքսի—խելքս, գ'ըլօխսի—գլուխս, մերսի—մայրս, էրքալսի—գնալս, ուղեխի—ուտելս, աունաի—աունգ, մերաի—մայրգ, պապաի—հայրգ, աղեաի—տղագ, խաղալաի—խաղալգ, քաշեաի—քաշիլգ:

424. Ստացական հոգերի հետ բարբառում միաժամանակ կարող են կիրառվել և ստացական գերանունները. իմ աունսի, քու գ'իրքսի, իմ օգսի, քու օգսի և այլն:

Ն ստացական հոգը դրվում է բաղաձայնով և ձայնավորով վերջացող բառերի վրա. բաղաձայնով վերջացող բառը, ինչպես սովեց, հոգից առաջ ստանում է ը այսպես.

Կաղուն, յառուն, ա'ուն, քամին, քեռին, գ'իրքըն, աունըն, կընիզըն:

425. Նույն ստացական հոգերը բարբառում ծառայում են որպես դիմորոշ հոգեր:

426. Բարբառիս ցուցական հոգն է ն-ն, որը հավասարապես կարող է գործածվել և՛ այս և՛ այն գերանունների իմաստն արտահայտելու համար:

Փ'իրքըն, աունըն, միաժամանակ նշանակում է և այս գիրքը, այս տունը և այն գիրքը, այն տունը:

6. Բ Ա Յ

ԴԵՐԲԱՅՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՅ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

427. Մշո բարբառում ևս բալը հանգես է գալիս գերբայական և դիմավոր ձևերով:

428. Բայի անդամ ձևերը՝ գերբայները յոթն են. անորոշ (խրմել, խաղալ), ապառնի (խրմէլու, խաղալու), վաղակատար (խրմէր, խաղացեր, խաղցեր), հարակատար (խրմուգ, խրմաձ, խաղցուգ, խաղցաձ), ենթակայական (խմոց, խաղցոց), միտման կամ ըզձական (չըմ խրմի, խաղա, քէլէ) և ընթացակցական (խրմէլէն, խաղալէն, վազման, վազմանց)¹:

429. Արգի հալերենի համեմատությամբ բարբառում բացակայում է անկատար գերբայի հիմնական ձևը՝ ում և երկրորդական ձևերը՝ էլիս, ալիս վերջավորություններով: Այդ իմաստները արտահայտվում են նկարագրական եղանակով. այն է՝ ապառնի գերբայով (խրմէլու, խաղալու) և գալիս վախտ, ինչպես նաև ժամանագ բառերով, որոնք բոլորն էլ նույն իմաստն ունեն. այսպես. չընգնելու գ'ախ ընի ա'եմ ետուր—ընկնելիս նա ձայն տվեց. էրբըլու վախտ ընի կըքեքըլգեր—գնալիս նա սալթաքում էր:

¹ Ընթացակցական տերմինը գործ ենք ածել Ա. Ա. Արբանյանի «Հայերենի գերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» աշխատության նմանոգությամբ: Երևան, 1953, ՀՄՄԻ ԳԱ Հրատարակչություն:

430. Անկատար դերբայի երկրորդական ձևերի իմաստը բարբառում արտահայտվում է նաև անորոշ դերբայի սեռական, արական հոլովներով և հետ, խըտ կապով:

Ծ ա ն ո թ ու թ յ ու լ ն.— Հետ, խըտ կապը բարբառում թե՛ նախադաս և թե՛ վերջադաս գործածություն ունի: Նախադաս գործածության դեպքում պահանջում է արական հոլովով, իսկ վերջադաս գործածվելիս՝ սեռական հոլովով խնդիրներ. ընի կերթեր, խըտ էրթըլուն լե գ'իլեր ու կըօրմըբեր—նա գնում էր, գնալիս էլ լալիս ու մորմոքում էր. ընի հեքյաթ կըսեր, հեքյաթ բսելու հեղ ունուշ ձ'ենով խաղ կըսեր—նա հեքիաթ էր պատմում, հեքիաթ պատմելիս էլ գուրեկան, քաղցր ձայնով երգում էր:

Ծ ա ն ո թ ու թ յ ու լ ն.— Բացի այս ամենատարածված գործածությունից, հեղ, խըտ կապը անորոշ դերբայի հետ գործածվելիս արտահայտում է նաև մի գործողության գաղափար, որը անմիջապես հաջորդում է նախորդին և նման է այն իմաստին, որը արդի հայերենում արտահայտվում է պես, հենց կապերով. խըտ նըստելուն ըսեց—հենց որ նստեց, նստելուն պես ասաց. խըտ գ'ալուն յուզեց—հենց որ եկավ, գալուն պես ասաց:

Ծ ա ն ո թ ու թ յ ու լ ն.— Այս դեպքում կապի վերջադաս գործածությունը բացառված է:

431. Անորոշ դերբայը Մշո բարբառում ունի ել, ալ վերջավորությունները (գ'ըրեկ, ուզել, խաղալ կարթալ):

432. Բարբառում տարածված երևույթ է անորոշ դերբայի վերջավորությունների մեկը մյուսով փոխարինվելը: Շատ հաճախ գրական հայերենի ել դերբայական վերջավորություն փոխարեն բարբառում հանդես է գալիս ալ-ը. այսպես. փայլել > փիլալ, ցավել > ցավալ, աղերսել > աղէրսալ Եմեկից մի բան սպասել, կսկծել > կըսկծալ, հաչել > հաչալ, փրփրել > փըրփըրալ և այլն:

Ծ ա ն ո թ ու թ յ ու լ ն.— Վերոհիշյալ դերբայներից մի քանիսը հանդիպում են նաև նույն ել վերջավորությամբ այսպես. հաչել, կսկըձել, փըրփըրել և այլն:

433. Ն սոսկածանց ունեցող որոշ բայերի անորոշ դերբայները հանդես են գալիս դերբայական զուգահեռ՝ ել, ալ վերջավոր-

րություններով. դ'իբնել—դ'իբնալ, թըռնել—թըռնալ, կըբնել—կըբնալ, չընցնել—չընցնալ, գ'ըզնել—գ'ըզնալ, գ'ըննել—գ'ըննալ, չընգնել—չընգնալ, չիչնել—չիչնալ, էզնել—էզնալ, մըզնել—մըզնալ, տէսնել—տեսնալ, հէձնել—հէձնալ, փըրցընել—փըրցընալ և այլն:

434. Այս և նման այլ բայեր խոնարհվում են ի, ե, ա խոնարհիչներով:

435. Ն սոսկածանցավոր բայերի մի մասն էլ հանդես է գալիս բացառապես միայն ել կամ ալ դերբայական վերջավորություններով. բ'ուսնել, թորգել, հասնել, մէճնել, տանել, սոսնել, բ'առնալ, չիմալ, գ'առնալ, սէվնալ և այլն:

Մինչև այդ դերբայի տարբեր վերջավորություններով հանդես գալը նկատված է և գրաբարում. միջին հայերենում այդ ավելի քան նկատելի է. օրինակ. իջնել, իջնուլ, իջանիլ, իջանել, մտանել, մտնուլ, մտնիլ և այլն: Արդի գրական լեզվում այն բացակայում է:

436. Մշո բարբառում, հաճախ, ներգործական սեռի բայերի անորոշ դերբայները նույն ձևով կարող են նաև կրավորական իմաստ արտահայտել:

Թարխոզել նշանակում է թարախոտել, թարախոտվել, մըրոզել՝ մրոտել, մրոտվել, կըխոզել՝ կեղտոտել, կեղտոտվել, ջ'արթել՝ ջարդել, ջարդվել, փըշրել՝ փշրել, փշրվել, ջ'ընչխել՝ ջախջախել, ջախջախվել, կոզրել՝ կոտրել, կոտրվել և այլն:

Ծ ա ն ո թ ու թ յ ու լ ն.— Տարբերությունը պետք է զգացվի խոսքի մեջ. եթե բային հաջորդում է ուղիղ խնդիր, ուրեմն բայը ներգործական սեռի է, հակառակ դեպքում՝ կրավորական է: Օրինակ. ես կըկոզրիմ գ'արդե—ես կոտորվում, ընկճվում եմ վշտից. բայց ես կըկոզրիմ ըզ քար—ես ջարդում եմ քարը:

437. Անորոշ դերբայը գոյականաբար գործածվելիս, ժամանակակից հայերենի նման, ենթարկվում է ու հոլովման:

438. Անորոշ դերբայի բացառական հոլովի ձևերից մեկը նման է ընթացակցական դերբային (էրթըլէն, գ'ըբէլէն) և խոսքի մեջ կիրառվում է որպես ձևի, երբեմն նաև որպես պատճառի պարագա. այդ ձևերի դիմաց գրական հայերենը կիրառում է անորոշ դերբայի գործիական և բացառական հոլովները, օրինակ՝ էրէ-խէն ուզելէն կըխաղէր—երեխան ուտելով խաղում էր: էրէխէն շաք ուզելէն հիվընդցավ—երեխան շատ ուտելուց հիվանդացավ:

439. Անորոշ դերբայը թե՛ դրական և թե՛ ժխտական խոնարհու մեծերի ժամանակ, եղանակավորիչ գ'իցամ, կյառցամ (գիտեմ, կարող եմ) բառերի հետ խոնարհվելիս, հաճախ գործ է ածվում առանց դեմքի վերջավորութունների. չի բացառվում նաև դեմքի վերջավորութուններով կիրառվելը.

եզակի

լես գ'ինամ խօսա(մ)	չըմ գ'ինա խօսա(մ)
գ'ու գ'ինաս խօսա(ս)	չըս գ'ինա խօսա(ս)
ընի գ'ինա խօսա	չը գ'ինա խօսա

հոգնակի

մենք գ'ինանք խօսա(նք)	չընք գ'ինա խօսա(նք) —
դուք գ'ինաք խօսա(ք)	չըք գ'ինա խօսա(ք)
ընդոնք գ'ինան խօսա(ն)	չըն գ'ինա խօսա(ն)

եզակի

լես գ'ինամ գ'ըրի(մ)	չըմ գ'ինա գ'ըրի(մ)
գ'ու գ'ինաս գ'ըրի(ս)	չըս գ'ինա գ'ըրի(ս)
ընի գ'ինա գ'ըրէ, ա	չըն գ'ինա գ'ըրէ, ա

հոգնակի

մենք գ'ինանք գ'ըրի(նք)	չընք գ'ինա գ'ըրի(նք)
դուք գ'ինաք գ'ըրի(ք)	չըք գ'ինա գ'ըրի(ք)
ընդոնք գ'ինան գ'ըրի(ն)	չըն գ'ինա գ'ըրի(ն)

440. Գալ, տալ, լալ անորոշ դերբայներից առաջ, Մշո բարբառում, որպես աճական ավելանում է ի ձայնավորը, և այդ դեպքում բայերը հանդես են գալիս չիլալ, իղալ, չիքալ ձևերով:

441. Ապառնի դերբայը բարբառում ունի ու վերջավորութունը, որը բոլոր դեպքերում ավելանում է անորոշ դերբայի վրա. էրթալ—էրթըու, խաղալ—խաղալու, իղալ—իղալու, մըղանալ—մըղնալու, ազաղել—ազաղելու և այլն:

442. Մշո բարբառում չափազանց տարածված է ապառնի դերբայի իք վերջավորությամբ ձևը.

Շաղ բան մընաց ըսելիք, շաղ խօսք մընաց ըսելիք, չարդմէ խող ունիմ ճընձեղիք, Աշխար մէ գ'որձ ունիմ ենեղիք.

Այս դեպքում նա հանդես է գալիս նաև որպես գոյական որոշիչ. Ընի ընձի աալիք է—նա ինձ պարտք է, աալիքսի աղվի փըրցա—պարտքս աղի, վերջացրի, գու ընձիգ աալիք մանցիր—դու ինձ պարտք մնացիր:

443. Ապառնի դերբայը Մշո բարբառում կարող է մասնակցել բայի եղանակային ձևերի կազմությանը և օժանդակ բայի համապատասխան ձևերի հետ միասին կազմել ապառնի ներկա և անցյալ ժամանակները. այսպես.

Ն ե ր կ ա

եզակի

հոգնակի

լես էրթըու իմ	մենք էրթըու ինք
գ'ու էրթըու իս	գ'ուք էրթըու իք
ընի էրթըու է	ընդոնք էրթըու ին

Ա ճ ց յ ա լ

եզակի

հոգնակի

լես էրթըու ի	մենք էրթըու ինք
գ'ու էրթըու իր	գ'ուք էրթըու իք
ընի էրթըու էր	ընդոնք էրթըու ին

Սակայն այս ձևը բարբառում տարածված կիրառություն չունի, որի պատճառով և խոնարհման ազդեականներում չենք հիշատակել: Այդ իմաստը բարբառում հիմնականում արտահայտվում է բըղի—պիտի մասնիկով և բղձական եղանակի համապատասխան ձևերով, ինչպես և սահմանականի ներկայով:

444. Ապառնի դերբայը բարբառում լայն կիրառություն ունի որպես որոշիչ, ուղեկու հաց, խըմելու ջուր, քընելու տեխ, յուղելու ախչիգ, կարքելու տըղա և այլն:

445. Վաղակատար դերբայի վերջավորությունն է եր. գ'ըրեր—գրել, խըմեր—խմել, եզեր—եկել, գ'ացեր, գ'ընացեր—գնացել, լացեր—լացել, մանցեր, մընացեր—մնացել:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. — 1. Բարբառի վաղակատար դերբայի եր վերջավորությունը համապատասխանում է գրաբարի անցյալ դերբայի եալ վերջավորությանը: Այն առաջացել է հնչյունափոխության ենթարկվելու հետևանքով. եա > է (տես § 118), որը բարբառում ընդհանրացած, օրինաչափ երևույթ է, և է > ր:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. — 2. Վաղակատար դերբայի եր վերջավորության ձևին հանդիպում ենք նաև միջին հայերենում, արևմտահայ գրական լեզվում, ինչպես և կը ճյուղի մյուս բարբառներում:

446. Վաղակատար դերբայը բարբառում կազմվում է ներկայի և անցյալ կատարյալի հիմքից:

Յլ գերբայական վերջավորութիւնն և բայածանց չունեցող բայերի վաղակատար գերբայը կազմվում է ներկայի հիմքի վրա էր վերջավորութիւնը ավելացնելու միջոցով. գ'ըրել—գ'ըրէր, խըմել—խըմէր, ըսել—ըսէր, կէրել—կէրէր, քընել—քընէր:

447. Նախն գերբայական վերջավորութիւնը ունեցող կրավորական և բազմապատկական ածանց ունեցող բայերի վաղակատար գերբայները կազմվում են բայածանց չունեցողների սկզբունքով. ծըովել—ծըովէր, մէրվել—մէրվէր, ծագվել—ծագվէր, կողբրդել—կողբրդէր, կողբրվել—կողբրվէր, ջ'արթըրդել—ջ'արթըրդէր, ջ'արթըրդվել—ջ'արթըրդվէր:

448. Սոսկածանց ունեցող բայերի վաղակատար գերբայը կազմվում է ներկայի հիմքի վրա էր վերջավորութիւնը ավելացնելու միջոցով. հասնել—հասէր, տեսնել, տեսնալ—տեսէր, մըղնել, մըղնալ—մըղէր, չընգնել, չընգնալ—չընգէր, մէռնել, մէռնալ—մէռնէր, թըռնել, թըռնալ—թըռնէր:

449. Ալ խոնարհման բայերի վաղակատար գերբայը կազմվում է անցյալ կատարյալի հիմքին գերբայի էր վերջավորութիւնը ավելացնելու միջոցով. խաղալ—խաղաց—խաղացէր—խաղցէր, կարթալ—կարթաց—կարթացէր—կարթըցէր, մընալ—մընաց—մընացէր—մանցէր:

450. Պատճառական կերպի բայերի վաղակատար գերբայը բոլոր դեպքերում կազմվում է անցյալ կատարյալի հիմքին գերբայի էր վերջավորութիւնը ավելացնելու միջոցով. քէլցընել—քէլցուցուց—քէլցըրէց—քէլցուցէր—քէլցըրէր. նըստընել—նըստըցուց—նըստըցրէց—նըստըցուցէր—նըստըցրէր. խըմցընել—խըմցուց—խըմցըրէց—խըմցըրէցէր—խըմցուցէր—խըմցըրէր. հաքցընել—հաքցուց—հաքցըրէց—հաքցուցէր—հաքցըրէր:

451. Վաղակատար գերբայը մասնակցում է բայի եղանակալին ձևերի կազմութիւնը և օժանդակ բայի հետ հարադրվելով կազմում է սահմանական եղանակի վաղակատար և անցյալի վաղակատար ժամանակները.

լես գ'ըրէր իմ, ի,
մենք գ'ըրէր ինք

լես կարթըցէր իմ, ի
մենք կարթըցէր ինք

452. Մշո բարբառում ևս, ինչպես և մեր գրական լեզվում, վաղակատար գերբայը դրվում է եղանակալին ձևերի վրա և այսպիսի դեպքերում ցույց է տալիս մի տրիշ գործողութիւն, որը հարակից է հիմնական գործողութիւնը: Այդ դեպքում կիրառելի են միայն գերբայը կամ գերբայը և օժանդակ բայը.

Նըստեր հաց կուզին—նստել հաց (ճաշ) են ուտում: Կայներ կըզըրուցին—կանգնել զրուցում են: Պարզեր կըմեզին—պարկել մտածում են: Քօմեր ին կը զըրուցին—հալաքվել զրուցում են: Չօքեր ին կաղօթին—ծնկաչօք են եղել, աղոթում են: Շօքեր ուրանց հաներ ին, կըլօղզընան—իրենց շորերը հանել, լողանում են:

Այսպիսի դեպքերում, ինչպես երևում է բացատրութիւններին, արդի հայերենը կիրառում է անորոշ գերբայը:

Վաղակատար ներկայի օրինակ

Մէտէր գ'ացէր է, չընգէր մէտէր է, նըստէր մանցէր է, կալնէր մանցէր է, թօղէր գ'ացէր է:

Վաղակատար անցյալ

Մէտէր գ'ացէր էր, կայնէր մանցէր էր, նըստէր մանցէր էր, թօղէր գ'ացէր էր, չընգէր մէտէր էր:

Այս երևույթը նկատված է արդի հայերենում ընկ. Ա. Ա. Արբանյանի կողմից¹:

453. Հարակատար գերբայը Մշո բարբառում ձևակերպվում է ուզ (ուկ) և ած (ած) գերբայական մասնիկների միջոցով:

454. Հարակատար գերբայը բարբառում կազմվում է ներգործական և չեզոք սեռի բայերին. գ'ըրել—գ'ըրուզ—գ'ըրած, խըմել—խըմուզ—խըմած, ջ'արթել—ջ'արթուզ—ջ'արթած, նըստել—նըստուզ—նըստած, քընել—քընուզ—քընած:

455. Ներգործական սեռի բայերի հարակատար գերբայները առանց վ ածանցի արտահայտում են նաև կրավորական իմաստ:

Այս երևույթը, ինչպես տեսանք, պարզորոշ կերպով նկատվում էր և անորոշ գերբայի մեջ: Սակայն այս կոնկրետ հարցի տեսակետից անորոշ գերբայը հարակատարից տարբերվում է նրանով, որ թեև անորոշ գերբայը առանց վ ածանցի կրավորական իմաստ կարող է արտահայտել, բայց նա այդ իմաստը արտահայտում է նաև վ ածանցով, ապա հարակատար գերբայը բարբառում վ կրավորական ածանց, հիմնականում, չի պատնում:

¹ Ա. Արբանյան, Հայերենի գերբայները և նրանց ձևարանական արժեքը, էջ 366:

Մ անոթութուն — Վ ածանցի բացակայութեամբ կրավորական իմաստ արտահայտելը հասկանալի է մեր լեզվի հնագույն վիճակին: Մեսրոպյան շրջանում գրել նշանակել է և գրել և գրվել: Այս բանը պահպանված է և Մշո բարբառում և հանդիսանում է նրա հետաքրքրական առանձնահատկություններից մեկը:

456. Թեև հարակատար զերբայը բարբառում հանդես է գալիս ուզ և ան վերջավորություններով, բայց ավելի տարածված է ուզ-ը:

457. Դերբայական այս ձևերը գործ են ածվում նաև ածականի նշանակությամբ:

458. Ուզ վերջավորությամբ զերբայական ձևը Մշո բարբառում ներգործական նշանակությամբ չի գործածվում. կիրառելի է կրավորական և չեզոք իմաստով. այսպես, ջ'արթուզ իմ, պարզուզ իմ, քընուզ իմ: Այդպիսի կիրառությամբ, սակայն, նրանք չեն կորցնում իրենց բայական նշանակությունը:

459. Հարակատար զերբայով և համապատասխան օժանդակ բայով բարբառս արտահայտում է նաև վաղակատարի (ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի) իմաստները:

Այս դեպքում կիրառելի է միայն ան վերջավորությունը. Մըշու եզրն է, մըր գ'եղ ախչիզ է հավնա՞ — Մուշից եկել են մեր գյուղը, աղջիկ են հովանել: Գ'ացա՞ն է յարդ վարա՞ն է, գ'արցա՞ն է կա՞ն է գ'եղ ուրանց բ'արեկըմներու տընեք քընա՞ն է — գ'նացել են արտը վարել են, վերադարձել եկել են գյուղ, իրենց բարեկամների աները քնել են և այլն:

Այս դեպքում, ինչպես և նման այլ դեպքերում, եղակի ձևը բացառված է:

Ընդոնք տեսած ին Մըշու Սուլթան Սըփ Կարաբեդու գորուքեն — նրանք տեսել էին, տեսել են Մշու Սուլթան Սուլթ Կարապետի դորությունը: Հարսընքվորներ կերան, խըման ին, օր ընի եզավ — Հարսանիքավորները կերել, խմել էին, որ նա կկամ:

Եթե վաղակատար զերբայը համապատասխան օժանդակ բայերի հետ հարադրվելով կազմում է վաղակատար, անցյալի վաղակատար ժամանակները միայն, ապա հարակատար զերբայը նույն եղանակով բայի հարակատար, անցյալի հարակատար ժամանակները կազմելիս, հանդես է գալիս նաև որպես վաղակատար, անցյալի վաղակատար ժամանակների իմաստներ արտահայտողի դերով, ինչպես նաև որպես գոյական որոշիչ:

460. Ել լծորդության պարզ կրավորական ինչպես և բազմապատկական բայերի հարակատար զերբայը կազմվում է ներկայի հիմքի վրա զերբայի ուզ, ան վերջավորությունները ավելացնելու միջոցով, կամ այլ կերպ ասած՝ անորոշ զերբայի վերջավորության փոխարեն հարակատար զերբայի վերջավորությունը դնելու միջոցով. գ'ըրել — գ'ըրուզ, գ'ըրան, խըմել — խըմուզ, խըման, քընել — քընուզ, քընան, ըսել — ըսուզ, ըսան. ծըռել — ծըռուզ, ծըռան, ջ'ըրել — ջ'ըրուզ, ջ'ըրան, կողըրդել — կողըրդուզ, կողըրդան, ջ'արթըրդել — ջ'արթըրդուզ, ջ'արթըրդան:

461. Ն սոսկածանց ունեցող բայերի հարակատար զերբայը կազմվում է նույն խոնարհման կրավորական և բազմապատկական ածանց ունեցող բայերի երկրորդ եղանակով՝ բայահիմքի վրա ուզ, ան վերջավորությունները ավելացնելով. մըղնել — մըղուզ, մըղան, տէսնել — տէսուզ, տէսան, յընդնել — յընդուզ, յընդան:

462. Էն սոսկածանց ունեցող բայերի հարակատար զերբայը կազմվում է անցյալ կատարյալի հիմքի վրա զերբայի ուզ, ան վերջավորությունները ավելացնելու միջոցով. հէոէնալ — հէոէնցավ — հէոէնցուզ — հէոէնցան, մօղէնալ — մօղէնցավ — մօղէնցուզ, մօղէնցան, նէղէնալ — նէղէնցավ, նէղէնցուզ — նէղէնցան:

463. Անկանոն բայերի վաղակատար, ինչպես և հարակատար զերբայները կազմվում են անցյալ կատարյալի հիմքի վրա զերբայի համապատասխան վերջավորությունները ավելացնելու միջոցով. ուղել — կէրավ — կէրէր — կէրուզ — կէրան, էրթավ — գ'ընաց — գ'ընացէր — գ'ացէր — գ'ացուզ — գ'ընացուզ — գ'ացան — գ'ընացան. իդալ — տըվէց — տըվէր — տըվուզ — տըվան, յիլալ — լաց — լացէր — լացուզ — լացան, յիքալ — էգավ — էգէր — էգուզ — էգան:

464. Ալ լծորդության պարզ բայերի հարակատար զերբայը կազմվում է զերբայի ուզ, ան վերջավորությունները անցյալ կատարյալի հիմքի վրա ավելացնելու միջոցով. խաղալ — խաղաց — խաղացուզ — խաղցուզ — խաղացան — խաղցան. մընալ — մընաց — մընացուզ — մընացան — մանցուզ — մանցան:

465. Պատճառական կերպի բայերի հարակատար զերբայը կազմվում է անցյալ կատարյալի հիմքի վրա հարակատարի ուզ, ան վերջավորությունները ավելացնելու միջոցով. քէլցընել — քէլցուց — քէլցըրէց — քէլցուզ — քէլցըրուզ — քէլցըրան, նըստըցնել — նըստըցուց — նըստըցրէց — նըստըցուզ — նըստըցան — նըստըցուզ — նըստըցրան:

Ծ ա ն ո թ ու թ յ ու լ ն .— Պատճառական կերպի բայերի ուզ վերջավորութունն ունեցող հարակատար դերբայը կարող է լինել և առանց ր-ի. քէլցուզ, խաղցուզ, կարթըցուզ, որը կարող է նշանակել և խաղացած, և խաղացըրած, և կարգացած, և կարգացրած:

466. Հարակատար դերբայը մասնակցում է բայի եղանակային ձևերի կազմութեանը և օժանդակ բայի հետ կազմում է սահմանական եղանակի հարակատար և անցյալի հարակատար ժամանակները. քընուզ իմ, քընած իմ, նըստուզ իմ, նստած իմ:

467. Հարակատար դերբայը որպես փոխանուն գործածվելիս ենթարկվում է ի հոլովման:

468. Ենթակալական դերբայը Մշո բարբառում, ինչպես աշխարհաբարում և հայերենի բարբառների մեծ մասում կազմվում, է ող վերջավորութեամբ: Գրաբարում ող և օղ վերջավորութունները հանդիպում են գրեթե հայասար, իսկ Մշո բարբառին հատուկ է միայն ող-ը:

Ծ ա ն ո թ ու թ յ ու լ ն .— Բարբառային այս օրինաչափութունը իրավունք է տալիս ստելու, որ գրաբարում ևս տարածված ճիշտ ձևը եղել է ող-ը, որին և համապատասխանում է բարբառային ող-ը:

469. Ել լծորդութեան բայածանց չունեցող բայերի ենթակալական դերբայը կազմվում է ներկայի հիմքի վրա դերբայի ող վերջավորութունը ավելացնելու միջոցով: Գ'ըրել—գ'ըրող, խըմել—խըմող, քընել—քընող, ջ'արթել—ջ'արթող:

470. Ն սոսկածանց ունեցող բայերի ենթակալական դերբայը կազմվում է անորոշ դերբայից, ել, ալ վերջավորութունը դերբայի ող վերջավորութեամբ փոխարինելու միջոցով. մըղնել—մըղնող, գ'ըղնել—գ'ըղնող, տեսնել—տեսնող, չընգնել—չընգնող:

471. Էն սոսկածանց ունեցող բայերի ենթակալական դերբայը կազմվում է անցյալ կատարյալի հիմքի վրա դերբայի ող վերջավորութունը ավելացնելու միջոցով. հեռանալ—հեռեցավ—հեռեցող, մօղէնալ—մօղէցավ—մօղէցող, նէղէնալ—նէղէցավ—նէղէցող:

472. Ել լծորդութեան կրավորական և բազմապատկական ածանց ունեցող բայերի հարակատար դերբայը կազմվում է սոսկածանց ունեցողի ձևով՝ անորոշ դերբայի ել վերջավորութեան

դիմաց դերբայի ող վերջավորութունը գնելու միջոցով. ծըովել—ծըովող, ջ'ըրվել—ջ'ըրվող, կողբողել—կողբողող, կողբողվել—կողբողվող, ջ'արթըրվել—ջ'արթըրվող, ջ'արթըրողել—ջ'արթըրողող:

473. Ալ խոնարհման բայերի ենթակալական դերբայը կազմվում է անցյալ կատարյալի հիմքի վրա դերբայի ող վերջավորութունը ավելացնելու միջոցով. կարթալ—կարթաց—կարթացող—կարթըցող, մընալ—մընաց—մընացող—մանցող, խաղալ—խաղաց—խաղացող—խաղցող, չիմնալ—չիմցավ—չիմացող—չիմցող:

474. Պատճառական կերպի բայերի ենթակալական դերբայը կազմվում է անորոշ դերբայից ել վերջավորութեան փոխարեն ող գնելու միջոցով. քէլցընել—քէլցընող, նըստըցնել—նըստըցնող, խաղցընել—խաղցընող, կարթըցնել—կարթըցնող:

Ծ ա ն ո թ ու թ յ ու լ ն .— Վերջավորութեան ն-ի դիմաց հաճախ կարող է լինել ր. քէլցըրող, նըստըցրող, խաղցըրող, կարթըցրող:

475. Անկանոն բայերի ենթակալական դերբայը Մշո բարբառում կազմվում է երկու եղանակով:

476. Կրավորական սեռի բայերի համար՝ ներկայի հիմքի վրա դերբայի ող վերջավորութունը ավելացնելու միջոցով. ուղէլ—ուղող, էնել—էնող—էրող, տանել—տանող—տարող, գ'ընէլ—գ'ընող—գ'ըրող:

477. Չնդոք սեռի բայերի համար՝ անցյալ կատարյալի հիմքի վրա ող վերջավորութունը ավելացնելու միջոցով. չիլալ—լաց—լացող, էրթալ—գ'ընաց—գ'ընացող կամ զացող, մընալ—մընաց—մընացող կամ մանցող:

478. Ենթակալական դերբայը, որպես փոխանուն գործածելիս, հոլովվում է, ենթարկվելով ի հոլովման:

ե զ ա կ ի		ն ո գ ն ա կ ի
ուղղ.	ուղող	ուղողներ
սեռ.	ուղողի	ուղողներու
տր.	ուղողին	ուղողներուն
հալց.	ղուղողըն	ղուղողներըն
բաց.	ուղողից, է, էն	ուղողներից, ից, է, էն
գործ.	ուղողով	ուղողներով
ուղղ.	խաղցող	խաղցողներ
սեռ.	խաղցողի	խաղցողներու

տր.	խաղցողին	խաղցողներուն
հայց.	ըզխաղցողըն	ըզխաղցողներըն
բաց.	խաղցողէն, ից, է	խաղցողներուց, էն, է, ից
գործ.	խաղցողով	խաղցողներով

479. Ենթակայական դերբայը բալի եղանակային ձևերի կազմութիւնը չի մասնակցում: Այն, բարբառում, ինչպես և գրական հայերենում, խոսքի մեջ լայն տարածում ունի որպես որոշիչ-ուղղող, խըմող մարթէ. Էնող, զ'արցող կընիգ է և այլն:

480. Ըղձական կամ ժխտման դերբայը ՄՂո բարբառում ունի ի, ա, և վերջավորութիւնները:

481. Ա վերջավորութիւն են ունենում ալ լծորդութիւն չեզոք և ներգործական սեռի բայերի ժխտման դերբայները. ալսպես. խաղալ—(չըմ) խաղա, խօսալ—(չըմ) խօսա, մընալ—(չըմ) մընա, գ'օհանալ—(չըմ) գ'օհանա, էրթալ—(չըմ) էրթա, կարթալ—(չըմ) կարթա, իղալ—(չըմ) իղա և այլն:

482. Ի վերջավորութիւններ են ունենում ել լծորդութիւն չեզոք և ներգործական սեռի բայածանց չունեցող բայերի ժըխտման դերբայները: Այդ վերջավորութիւնները որպես կանոն, ավելանում են բալի ներկայի հիմքի վրա. ալսպես, քելիլ—(չըմ) քէլիլ, քընիլ—(չըմ) քընիլ, նըստիլ—(չըմ) նըստի, ուղիլ (չըմ) ուղիլ, խըմիլ—(չըմ) խըմիլ, ջ'արթիլ—(չըմ) ջ'արթիլ, ըսիլ—(չըմ) ըսիլ, քէլիլ (չըմ) քէլիլ:

483. Ել լծորդութիւն ներգործական սեռի բայերի ժխտման դերբայները ունենում են նաև և վերջավորութիւնը. ջ'արթիլ—չըմ ջ'արթէ, գ'ըրիլ—չըմ գ'ըրէ, խըմիլ—չըմ խըմէ, ուղիլ—չըմ ուղէ, քէլիլ—(չըմ) քէլէ, ըսիլ—(չըմ) ըսէ և այլն:

484. Ինչպես երևում է § 482-ից, ալ լծորդութիւն ներգործական և չեզոք սեռի պարզ բայերի ըղձական դերբայը կազմվում է անորոշ դերբայից՝ լ-ի անկմամբ. խաղալ—(չըմ) խաղա, կարդալ—(չըմ) կարթա, մընալ—(չըմ) մընա, խօսալ—(չըմ) խօսա, էրթալ—(չըմ) էրթա, իղալ—(չըմ) իղա:

485. Սոսկածանց ունեցող բայերի ըղձական դերբայը կազմվում է անորոշ դերբայից՝ ել, ալ վերջավորութիւնների փոխարեն ի, ա դնելու միջոցով. մըղնիլ—մըղնալ (չըմ) մըղնի, մըղնա, տէսնիլ—տէսնալ (չըմ) տէսնի, տէսնա, յընգնիլ—յընգնալ, (չըմ) յընգնի, յընգնա, յէլնիլ—յէլնալ (չըմ) յէլնի, յէլնա, թըռնիլ—թըռնալ (չըմ) թըռնի, թըռնա:

486. Ի, ե խոնարհման կրավորական և բազմապատկական ածանց ունեցող բայերի ըղձական դերբայը կազմվում է սոսկածանց ունեցողների ձևով, այն տարբերութիւնով, որ այս դեպքում չի կիրառվում ա վերջավորութիւնը. ծըռիլ—(չըմ) ծըռիլ, ջ'ըրիլ—(չըմ) ջ'ըրիլ, կօղըրիլ—(չըմ) կօղըրիլ, կօղըրիլ—(չըմ) կօղըրիլ, ջ'արթըրիլ—(չըմ) ջ'արթըրիլ, ջ'արթըրիլ—(չըմ) ջ'արթըրիլ:

Ծանոթութիւն.— Ըղձական դերբայի կրավորական ածանց չունեցող ձևը, ներգործական իմաստ արտահայտելուց բացի, արտահայտում է նաև կրավորական իմաստ. ծըռի, ջ'արթի նշանակում է միաժամանակ և՛ ծռելի, և՛ ծռվելի, և՛ ջարդելի և՛ ջարդվելի: Նույն բանը պետք է ասել և բազմապատկական ածանց ունեցող բայերի մասին՝ ջ'արթըրիլ, կօղըրիլ նշանակում է, և՛ ջարդարելի, և՛ ջարդըրվելի, և՛ կտրարելի, և՛ կտրարվելի:

487. Ըղձական դերբայը գործ է ածվում միայն օժանդակ բալի ժխտական ձևի հետ և մասնակցում է բայերի ժխտական խոնարհման սահմանական եղանակի ներկա, անցյալ անկատար, ապառնի, անցյալի ապառնի ժամանակների, ինչպես նաև պայմանական, հարկադրական, ըղձական եղանակների կազմութիւն մեջ:

488. Ընթացակցական դերբայը բարբառում համապատասխանում է աշխարհաբարի անորոշ դերբայի գործիական հոլովին և արտահայտում է նույն իմաստը, այն տարբերութիւնով, որ նա, ով վերջավորութիւնից բացի, բարբառում ունի նաև և, ևն, ինչպես նաև ման, մանց վերջավորութիւնները:

489. Ով վերջավորութիւնը ավելանում է առանց բացառութիւն բոլոր բայերի անորոշ դերբայներին. օրինակ՝ էրթալ—էրթըրով, իղալ—տալով, յիքալ—գ'ալով, պաղիլ—պաղէրով, լօրղիլ—լօրղէրով, թալիլ—թալէրով և այլն:

490. Ե, Էն դերբայական մասնիկները նույնպես ավելանում են անորոշ դերբայի վրա. գ'ըրիլ—գ'ըրէլէ, գ'ըրէլէն, ուղիլ—ուղէլէ, ուղէլէն, խաղալ—խաղալէ, խաղալէն, կարթալ—կարթալէ, կարթալէն, իսկ ման և մանց մասնիկները՝ բայահիմքի վրա. վաղիլ—վաղման—վաղմանց, քէլիլ—քէլման, քէլմանց, էոալ—էոման, էոմանց, օխպալ—օխպաման, օխպամանց, նըստիլ—նըստման, նըստմանց:

491. Ընթացակցական դերբայը բալի եղանակային ձևերի կազմութիւն մեջ հանդես չի գալիս:

ԲԱՅԱԿԱՆ ՍԵՌԵՐԸ ՄՇՈ ԲԱՐԲԱՌՈՒՄ

492. Ինչպես մեր հին գրական լեզվում, արդի հայերենում և բարբառներում, այնպես էլ Մշո բարբառում բալերը լինում են երեք սեռի. ներգործական, կրավորական և չեզոք:

Եթե գրաբարում ներգործական և կրավորական սեռերը բնորոշվում էին խոնարհիչների տարբերութեամբ, իսկ արդի հայերենում Վ անձնի անկալութեամբ, ապա Մշո բարբառում այդ տարբերությունները, ներգործական և կրավորական սեռերի մեջ, որոշակի չեն ընդգծված: Ինչպես հետագայում պարզ կերպով կերևա բալերի «Խոնարհիչ և խոնարհում» գլխից, մի բայը նույն ձևով կարող է արտահայտել և ներգործական և կրավորական իմաստ, երբեմն էլ միայն ներգործական կամ միայն կրավորական իմաստ: Այսպես «կըջ'արթիմ» նշանակում է «ջարդում եմ» և «ջարդվում եմ» մի դեպքում այն խոնարհվում է «ի», մյուս դեպքում «ե» խոնարհիչով. «կիրիցիմ» բայը նշանակում է «այլում եմ», իսկ ներգործականի իմաստ արտահայտում է «կիրիցեմ» ձևով:

ԽՈՆԱՐՀԻՉ ԵՎ ԽՈՆԱՐՀՈՒՄ

493. Մշո բարբառում բալերը ունեն չորս խոնարհիչ՝ ա, ե, ի, ու: Թեև, ինչպես ասացինք, բարբառում խոնարհիչները չորսն են, բայց անորոշ դերբայը բարբառում ունի միայն երկու՝ ել, ալ վերջավորութիւն:

494. Անորոշ դերբայում ձևով իրար հետ նույնանում են ե, ի, ու խոնարհիչներ ունեցող բալերը, նրանք տարբերվում են իրարից խոնարհման ձևերում և հատկապես սահմանական եղանակի ներկա ժամանակում:

495. Նկատի ունենալով բալերի խոնարհման արտաքին ձևը, խոնարհումը բարբառում բաժանվում է երկու խմբի՝ ներգործած և կրավորած, որոնք չպետք է շփոթել բալերի սեռերի հետ:

Եթե գրաբարի մասին ասում ենք, թե խոնարհման այս ձևերը չպետք է շփոթել բալերի սեռերի հետ, որովհետև միշտ չէ,

որ ձևը համապատասխանում է խոնարհվող բալի սեռին, ապա Մշո բարբառում բալերի ձևը և սեռը իրար բնավ չեն համապատասխանում:

496. Բարբառում, ինչպես ցույց են տալիս բալերի խոնարհման աղյուսակները, նույն բայը կարող է խոնարհվել և կրավորած և ներգործած ու լինել չեզոք սեռի բայ: Այսպես, չեզոք սեռի քելել բայը. յես կըքելիմ, յես կըքելեմ, կամ՝ ներգործական սեռի բայը կխոնարհվի և ներգործած և կրավորած և երկու դեպքում էլ կպահպանի իր ներգործական իմաստը. այսպես, ուղեղ, յես կուղիմ, յես կուղեմ և այլն:

Սակայն բարբառում կան բալեր, որոնք խոնարհվում են և կրավորած և ներգործած և մի դեպքում կրավորական, մյուս դեպքում ներգործական իմաստ են արտահայտում. այսպես՝ յես կիրիցիմ «այլում եմ» և յես կիրիցեմ «այլում եմ»:

Ել լծորդութեան բալերը իրենց ե-ն պահպանում են միայն անորոշ դերբայում, խոնարհման ժամանակ նրանք բոլորն էլ խոնարհվում են ի խոնարհիչով՝ կըզ'ըրիմ, կըզ'ըրիս և այլն: Թեև, ինչպես նշեցինք, կա նաև կըզ'ըրեմ, կըզ'ըրես և այլն, խոնարհման տախտակներում նպատակահարմար ենք համարել բերել միայն տարածված՝ ի-ով ձևերը:

497. Մշո բարբառը ևս ունի բալի խոնարհման պարզ ու բաղադրյալ ժամանակները:

498. Բաղադրյալ ժամանակները բարբառում կազմվում են դերբայի և օժանդակ բալի հարադրութեամբ:

499. Հակառակ աշխարհաբարի, որն անհամեմատ շատ ունի բաղադրյալ ժամանակներ (սահմանական եղանակի ներկա, անցյալ անկատար, ապառնի, ապառնի անցյալ, վաղակատար, վաղակատար անցյալ, հարակատար, հարակատար անցյալ) և ավելի քիչ պարզ ժամանակներ (սահմ. եղ. անց. կատ. ժամ., հրամայական, ըղձական, պայմանական, հարկադրական եղանակների ժամանակները), Մշո բարբառում մեծ թիվ են կազմում պարզ ժամանակները: Բաղադրյալ եղանակով կազմվում են միայն վաղակատար, վաղակատար անցյալ, հարակատար, հարակատար անցյալ ժամանակները. մնացած բոլոր ժամանակները պարզ կազմութիւն ունեն:

Այդ տեսակետից բարբառը ավելի նման է գրաբարի բալի խոնարհմանը, որտեղ ևս ավելի շատ են պարզ ժամանակները:

500. Մշո բարբառը ունի բայի հետևյալ եղանակային ձևերը. սահմանական, հրամայական, ըղձական, հարկադրական, պայմանական:

501. Սահմանական եղանակը բարբառում ունի 9 ժամանակ՝ ներկա, անցյալի անկատար, ապառնի, անցյալի ապառնի, վաղակատար, անցյալի վաղակատար, հարակատար, անցյալի հարակատար և անցյալ կատարյալ:

502. Սահմանական եղանակի ներկա ժամանակը կազմվում է ըղձական եղանակի ապառնի ժամանակի սկզբից կը (զը) եղանակիչը ավելացնելու միջոցով.

Այսպես.

Ը Ղ Ա Կ Ա Ն Ը

եզակի	հոգնակի
գ'ըրիմ	գ'ըրինք
գ'ըրիս	գ'ըրիք
գ'ըրէ	գ'ըրին
կարթամ	կարթանք
կարթաս	կարթաք
կարթա	կարթան

Սահմանականի ներկան

եզակի	հոգնակի
կըգ'ըրիմ	կըգ'ըրինք
կըգ'ըրիս	կըգ'ըրիք
կըգ'ըրէ	կըգ'ըրին
կըկարթամ	կըկարթանք
կըկարթաս	կըկարթաք
կըկարթա	կըկարթան

Օ ա ն ո թ ու թ յ ու լ ն. — Սահմանական եղանակի ներկա ժամանակի կըգ'ըրիմ, կըկարթամ, անցյալ անկատարի՝ կըգ'ըրի, կըկարթի ձևերը բարբառում գործ են անվում նաև ապառնի ժամանակը և պայմանական եղանակը արտահայտելու համար: կըգ'ըրիմ, կըկարթամ, կըգ'ըրի, կըկարթի բացի գրում են, էի, կարգում են, էի նշանակելուց՝ նշանակում են նաև գրելու են, կարգալու են, գրելու էի, կար-

գալու էի, այսինքն արտահայտում են ապառնիի իմաստ և կգրեմ, կկարգամ, կգրեի, կըկարգայի այսինքն՝ պայմանականի իմաստ¹:

503. Կը եղանակիչի կ-ն բարբառում ձայնավորներից առաջ ձայնեղանում է՝ զիքամ—կգամ, զընգնամ—կնկնեմ, զիլամ—լաց կլինեմ, զուզիմ—կուզեմ: Սակայն այս օրենքը բարբառում բացարձակ չէ: Ձայնավորով սկսվող այլ բազմաթիվ բառներից առաջ կը եղանակիչի կ-ն չի ձայնեղանում. կուդիմ—կուռեմ, կիդամ—կտամ, կըսիմ—կասեմ, կառնիմ—կառնեմ, կադիմ—կատեմ, կազադիմ—կազատվեմ:

504. Կը եղանակիչը բարբառումս առանց բացառություն և շեղման գրվում է բայից առաջ: Այդ նույն օրենքը գրսևորվում է և հարադիր կազմութունների մեջ. գ'ըլօխ կիդամ, սիրդ կիդամ, մօղ գիքամ, գ'ըլօխ կիդամ, ձ'էոաց ջ'ուր գըլնամ և այլն:

ԱՆՅՅԱԼԻ ԱՆԿԱՏԱՐ

505. Անցյալի անկատար ժամանակում դեմքի վերջավորութուններն են.

եզակի	հոգնակի
ի, իր, էր	ինք, իք, ին

506. Այս վերջավորութունները բոլոր լծորգութունների բայերի, ինչպես և բոլոր սեռերի համար ընդհանուր են. այսպես.

Ե Ղ Ա Կ Ի

կըգ'ըրի	կըթըքի	կըկարթի	կըքէլի
կըգ'ըրիր	կըթըքիր	կըկարթիր	կըքէլիր
կըգ'ըրէր	կըթըքէր	կըկարթէր	կըքէլէր

Տ Ո Ղ Ա Ն Ի

կըգ'ըրինք	կըթըքինք	կըկարթինք	կըքէլինք
կըգ'ըրիք	կըթըքիք	կըկարթիք	կըքէլիք
կըգ'ըրին	կըթըքին	կըկարթին	կըքէլին

¹ Այս հանգամանքը լիովին իրավունք է տալիս մեզ կըկնությունից խուսափելու համար՝ արտաքին ձևով իրար նման այդ եղանակները և ժամանակները դուրս թողնել խոնարհման տախտակներից, սակայն, խոնարհման պատկերը ավելի պարզ ու հստակ դարձնելու համար գրանք բերված են:

507. Սահմանական եղանակի ապառնի իմաստը բարբառում հիմնականում արտահայտվում է բըզի—պիտի մասնիկով և բայի ըզձական եղանակի համապատասխան ձևերով:

508. Սահմանական եղանակի ապառնի ժամանակի իմաստը արտահայտելու համար բարբառը գործ է ածում սահմանական եղանակի ներկա ժամանակը. կըգ՛ըրիմ, կըգ՛ըրիս և այլն, որը, ինչպես տեսանք, բարբառում լայն կիրառություն ունի:

Ն ե ր կ ա

եզակի		հոգնակի	
բըզի գ՛ըրիմ	բըզի կարթամ	բըզի գ՛ըրինք	բըզի կարթինք
բըզի գ՛ըրիս	բըզի կարթաս	բըզի գ՛ըրիք	բըզի կարթիք
բըզի գ՛ըրէ	բըզի կարթա	բըզի գ՛ըրին	բըզի կարթին

509. Ե խոնարհման բայերի սահմանական եղանակի անցյալ անկատար ժամանակի հոգնակի թիվը ձևով չի տարբերվում նույն եղանակի ներկայի հոգնակի թվից: Տարբերելու համար պետք է ելնել խոսքի մեջ նրանց արտահայտած իմաստից՝ բերենք մի քանի օրինակ.

Մենք հաց կուզինք—մենք հաց (ճաշ) ենք ուտում. հէրու մենք հաց կուզինք, ընի էգ՛ազ. անցյալ տարի մենք հաց (ճաշ) էինք ուտում, նա եկազ: Դուք հաց կուզիք—նշանակում է, դուք հաց (ճաշ) եք ուտում, և՛ դուք հաց էիք ուտում:

510. Ապառնու անցյալի ձևերը կազմվում են նույն սկզբունքով, ինչպես և նույն եղանակի ներկա ձևերը. կըգ՛ըրի, կըգըրիր:

եզակի	հոգնակի
բըզի գ՛ըրի	բըզի գ՛ըրինք
բըզի գ՛ըրիր	բըզի գ՛ըրիք
բըզի գ՛ըրէր	բըզի գ՛ըրին

եզակի	հոգնակի
բըզի կարթի	բըզի կարթինք
բըզի կարթիր	բըզի կարթիք
բըզի կարթէր	բըզի կարթին

511. Սահմանական եղանակի վաղակատարի ներկա ժամանակը կազմվում է վաղակատար դերբայի և օժանդակ բայի ներկայով.

եզակի		հոգնակի	
գ՛ըրէր իմ	կարթըցէր իմ	գ՛ըրէր ինք	կարթըցէր ինք
գ՛ըրէր իս	կարթըցէր իս	գ՛ըրէր իք	կարթըցէր իք
գ՛ըրէր է	կարթըցէր է	գ՛ըրէր ին	կարթըցէր ին

512. Սահմանական եղանակի անցյալի վաղակատար ժամանակը կազմվում է վաղակատար դերբայով և օժանդակ բայի անցյալով.

եզակի		հոգնակի	
գ՛ըրէր ի	կարթըցէր ի	գ՛ըրէր ինք	կարթըցէր ինք
գ՛ըրէր իր	կարթըցէր իր	գ՛ըրէր իք	կարթըցէր իք
գ՛ըրէր էր	կարթըցէր էր	գ՛ըրէր ին	կարթըցէր ին

513. Սահմանական եղանակի հարակատար ժամանակը կազմվում է հարակատար դերբայով և օժանդակ բայի ներկայով.

եզակի		հոգնակի	
նըստուգ իմ	նըստամ իմ	նըստուգ ինք	նըստամ ինք
նըստուգ իս	նըստամ իս	նըստուգ իք	նըստամ իք
նըստուգ է	նըստամ է	նըստուգ ին	նըստամ ին
խաղցուգ իմ	խաղցամ իմ	խաղցուգ ինք	խաղցամ ինք
խաղցուգ իս	խաղցամ իս	խաղցուգ իք	խաղցամ իք
խաղցուգ է	խաղցամ է	խաղցուգ ին	խաղցամ ին

514. Սահմանական եղանակի վաղակատար, անցյալի վաղակատար, հարակատար, անցյալի հարակատար ժամանակների կազմութիւնն ժամանակ համապատասխան օժանդակ բայերը վաղակատար և հարակատար դերբայների հետ միաժամանակ կարող են կրկնվել թե նախադաս և թե վերջադաս.

լիս իմ գ՛ըրէր իմ	մենք ինք գ՛ըրէր ինք
գ՛ու իս գ՛ըրէր իս	դ՛ուք իք գ՛ըրէր իք
ընի է գ՛ըրէր է	ընդոնք ին գ՛ըրէր ին

լես իմ խաղցէր իմ
 դու իս խաղցէր իս
 ընի է խաղցէր է

մենք ինք խաղցէր ինք
 դուք իք խաղցէր իք
 ընդոնք ին խաղցէր ին

515. Սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակը բարբառում ունի հետևյալ վերջավորութունները.

եզակի	հոգնակի
ի, ա	ինք, անք
իր, ար	իք, արք
էց, ավ	ին, ան

516. Ել լծորդության բայերի սահմանական եղանակի անցյալ կատարյալը կազմելու համար ի, իր, եց, ինք, իք, ին վերջավորութունները մի գեպքում ավելանում են բայահիմքի վրա՝ գ'ըրի, գ'ըրիք, գ'ըրեց, գ'ըրեք, գ'ըրին, մյուս գեպքում՝ անցյալ կատարյալի հիմքի վրա, որը միշտ ցույցական է լինում՝ գ'ըրեցի, գ'ըրեցիր, գ'ըրեց, գ'ըրեցինք, գ'ըրեցիք, գ'ըրեցին: Կազմության երկրորդ ձևը գրական լեզվի ազգեցութեամբ պետք է բացատրել:

517. Այլ լծորդության բայերը անցյալ կատարյալում կարող են ունենալ երկու տեսակի վերջավորություն.

եզակի	հոգնակի
ա ի	անք ինք
ար իր	արք իք
ավ աց	ան ին

կարթըցա	կարթըցի	կարթըցանք	կարթըցինք
կարթըցար	կարթըցիր	կարթըցարք	կարթըցիրք
կարթըցավ	կարթաց	կարթըցան	կարթըցին

518. Սահմանական եղանակի անցյալ կատարյալի եզակի 3-րդ դեմքի միավանկ ձևերից առաջ, Մշո բարբառում, գրաբարի նմանությամբ, ավելանում է Կ-ն իբրև աճական. է'բաց—բացեց, էլից,—լցրեց, է'բեր—բերեց, էառ—տվեց, էհան—հանեց:

519. Հրամայական եղանակը բարբառում ունի երկու ձև՝ պարզ և բարդ:

520. Հրամայական եղանակի պարզ ձևը ունի միայն եզակի և հոգնակի 2-րդ դեմք:

521. Ել լծորդության պարզ բայերի հրամայական եղանակի պարզ ձևը կազմվում է բայահիմքի վրա եզակիում՝ ա, ի կամ ե, հոգնակիում՝ էք վերջավորութունները ավելացնելու միջոցով՝

գ'ըրել	գ'ըրէ	գ'ըրա	գ'ըրէք
նրստել	նստի	—	նստէք
խըմել	խըմէ	խըմա	խըմէք

522. Այլ լծորդության պարզ բայերի հրամայական եղանակի պարզ ձևի եզակին կազմվում է անորոշ գերբայից՝ ա, ի ավելացնելու միջոցով, իսկ հոգնակի հրամայականը՝ անցյալ կատարյալի հիմքի վրա էք վերջավորութունները ավելացնելու միջոցով. կարթալ—կարթալ—կարթըցի—կարթըցէք, խաղալ—խաղալ—խաղցի—խաղցէք, մընալ—մընալ—մընացի—մանցի—մանցէք—մընացէք:

523. Մշո բարբառում ել լծորդության բայերի համար որպես եզակի հրամայական կարող է ծառայել նաև անորոշ գերբայի հիմքը: Այդ գեպքերում հոգնակի հրամայականը կազմվում է այդ բայահիմքի վրա էք վերջավորութունը ավելացնելու միջոցով. բ'էրել—բ'եր—բ'էրէք, տէսնել—տես—տէսէք, առնել—առ—առէք:

524. Արգելական հրամայականը բարբառում կազմվում է պարզ հրամայականի սկզբից մը արգելականը ավելացնելու միջոցով. մըգ'ըրա—մըգ'ըրէ—մըգ'ըրէք, մընրստի—մընրստէք, մըլսըմա—մըլսըմէ—մըլսըմէք, մըկարթա—մըկարթըցի—մըկարթըցէք, մըլխաղա—մըլխախցի—մըլխախցէք, մըմընա—մըմանցի—մըմանցէք:

525. Հրամայական եղանակի 2-րդ, բարդ ձևը բարբառում ունի ներկա և անցյալ ժամանակներ: Թե ներկա, թե անցյալ ժամանակը ունի 2 դեմք՝ 2-րդ և 3-րդ:

526. Հրամայական եղանակի իմաստը բարբառում արտահայտվում է թըլս մասնիկը ըզձական եղանակի համապատասխան ժամանակների և դեմքերի վրա դնելու միջոցով.

թըն գ'ըրիս	թըն գ'ըրիք	թըն գ'ըրիը	թըն գ'ըրիք
թըն գ'ըրէ	թըն գ'ըրին	թըն գ'ըրէը	թըն գ'ըրին

527. Ըղձական եղանակը բարբառում ունի ներկա ապառնի և անցյալի ապառնի ժամանակները:

528. Ըղձական եղանակի ներկա ապառնի ժամանակը կազմվում է հիմքի վրա գեմքերի վերջավորութունները իմ, իս, ե, ինք, իք, ին, աճ ավելացնելու միջոցով:

Եզակի

Տոգնակի

գ'ըրիմ	կարթամ	գ'ըրինք	կարթանք
գ'ըրիս	կարթաս	գ'ըրիք	կարթաք
գ'ըրէ	կարթա	գ'ըրին	կարթան

529. Անցյալ ապառնին կազմվում է նույն հիմքով, միայն ավելանում են ի, իր, էր, ինք, իք, ին վերջավորութունները:

Եզակի

Տոգնակի

գ'ըրի	կարթի	գ'ըրինք	կարթինք
գ'ըրիը	կարթիը	գ'ըրիք	կարթիք
գ'ըրէր	կարթէր	գ'ըրին	կարթին

530. Ենթադրական կամ պայմանական եղանակը բարբառում տարբերիչ հատուկ ձև չունի:

531. Պայմանական եղանակի ապառնին Մշո բարբառում ձևով նման է սահմանական եղանակի ներկային. կըգ'ըրիմ—գրում եմ, կզրեմ. կըխաղամ—խաղում եմ, կխաղամ. կըգ'ըրինք—գրում ենք, գրում էինք, կզրենք. կըխաղանք—խաղում ենք, կխաղանք:

Իսկ անցյալի ապառնին՝ սահմանական եղանակի անցյալի անկատարին. կըգ'ըրի—գրում էի, կզրեի. կըխաղի—խաղում էի, կխաղայի. կըգ'ըրինք—գրում էինք, կզրեինք. կըխաղինք—խաղում էինք, կխաղայինք:

532. Հարկադրական եղանակը բարբառում ունի երկու ժամանակ՝ ապառնի և անցյալի ապառնի:

533. Հարկադրական եղանակի ապառնի ժամանակի ներկան բարբառում կազմվում է ըղձական եղանակի ապառնի ժամանակի սկզբից բըդի—պիտի եղանակիչը ավելացնելով:

Ղակի

Տոգնակի

բըդի գ'ըրիմ	բըդի կարթամ	բըդի գ'ըրինք	բըդի կարթանք
բըդի գ'ըրիս	բըդի կարթաս	բըդի գ'ըրիք	բըդի կարթաք
բըդի գ'ըրէ	բըդի կարթա	բըդի գ'ըրին	բըդի կարթան:

534. Հարկադրական եղանակի անցյալի ապառնին կազմվում է ըղձական եղանակի անցյալի ապառնի ձևերով և բըդի—պիտի եղանակիչով: Ընդի—պիտի եղանակիչը Մշո բարբառում միշտ և բացառապես բայից առաջ է դրվում:

Եզակի

Տոգնակի

բըդի գ'ըրի	բըդի գ'ըրինք
բըդի գ'ըրիը	բըդի գ'ըրիք
բըդի գ'ըրէր	բըդի գ'ըրին

535. Ներգործական սեռի ել լծորդության բալերը բարբառում կարող են խոնարհվել և՛ ի և՛ ե խոնարհիչներով: Այս դեպքում որոշակի են հետևյալ խմբավորումը.

ա) Կան ներգործական սեռի բալեր, որոնք և՛ ի և՛ ե խոնարհիչներով խոնարհվելու դեպքում արտահայտում են միայն ներգործական իմաստ. անթէղել—կանթէղիմ—կանթէղեմ, անիձել—կանիձիմ—կանիձեմ, աղունել—կաղունիմ—կաղունեմ, ազօսել—կազօսիմ—կազօսեմ, արձըլել—կարձըլիմ—կարձըլեմ, աղընձել—կաղընձիմ—կաղընձեմ, —բ'աժնել—կըբ'աժնիմ—կըբ'աժնեմ, բ'ամփել—կըբ'ամփիմ—կըբ'ամփեմ, բ'անդել—կըբ'անդիմ—կըբ'անդեմ, բ'ախշել—կըբ'ախշիմ—կըբ'ախշեմ, բ'արցել—կըբ'արցիմ—կըբ'արցեմ, բ'ացել—կըբ'ացիմ—կըբ'ացեմ, բ'երել—կըբ'երիմ—կըբ'երեմ, բ'օվել—կըբ'օվիմ—կըբ'օվեմ, բըռնել—կըբըռնիմ—կըբըռնեմ, բ'ըթէլ—կըբ'ըթիմ—կըբ'ըթեմ, գ'ըլիսել—կըգ'ըլիսիմ—կըգ'ըլիսեմ, գ'ընդել—կըգ'ընդիմ—կըգ'ընդեմ, գ'օրձել—կըգ'օրձիմ—կըգ'օրձեմ, գ'ըրիլել—կըգ'ըրիլիմ—կըգ'ըրիլեմ, թալել—կըթալիմ—կըթալեմ, դ'արգել—կըդ'արգիմ—կըդ'արգեմ, դ'արմընել—կըդ'արմընիմ—կըդ'արմընեմ, դ'իզել—կըդ'իզիմ—կըդ'իզեմ, էրնել—կէրնիմ—կէրնեմ Վարդախառն

ցորենը քամուն տալ՝ գտելու նպատակով», էրէսել—կէրէսիմ—կէրէսեմ, իրէքարդել—կիրէքարդիմ—կիրէքարդեմ, զայթիլ—կըզայթիմ—կըզայթեմ, զարթըրել—կըզարթըրիմ—կըզարթըրեմ, զարգել—կըզարգիմ, կըզարգեմ, սուքել—կըսուքիմ—կըսուքեմ, զըզել—կըզըզիմ—կըզըզեմ, թալնել—կըթալնիմ—կըթալնեմ, թաղել—կըթաղիմ—կըթաղեմ, թամքել—կըթամքիմ—կըթամքեմ, թարթել—կըթարթիմ—կըթարթեմ, թարսել—կըթարսիմ—կըթարսեմ, թափել—կըթափիմ—կըթափեմ, թէլել—կըթէլիմ—կըթէլեմ, թէղել—կըթէղիմ—կըթէղեմ, թըխել—կըթըխիմ—կըթըխեմ, լիզել—կըլիզիմ—կըլիզեմ, լըծել—կըլըծիմ—կըլըծեմ:

Ծանոթութիւն.— Ել լծորդութեան ծըռել բային բարբառում հանդիպում ենք խոնարհված ու, ի, Ե խոնարհիչով: Յես կըծըռում, գ'ու կըծըռուս, ընի կըծըռու, որտեղ բայը ունի ներգործական իմաստ. Ես ծռում եմ, կծում և այլն: Յես կըծըռեմ, գ'ու կըծըռես, ընի կըծըռե, զարծլալ՝ Ես ծռում եմ, կծում և այլն, որտեղ Ես բայը ունի ներգործական իմաստ: Յես կըծըռիմ, գ'ու կըծըռիս, ընի կըծըռի, Ես խելագարվում եմ, կխելագարվիմ և այլն, որտեղ բայը չհզոք սեռի է:

բ) Ել լծորդութեան ներգործական սեռի բայեր, որոնք Ես խոնարհվում են Ե, ի խոնարհիչներով, առաջին դեպքում նրանք արտահայտում են ներգործական, իսկ երկրորդ դեպքում՝ կրավորական իմաստ, այսպես. ազադել—կազադեմ, աղբօտել—կաղբօտեմ, իրիցել—կիրիցեմ, ջ'արթել—կըջարթեմ, արնօղել—կարնօղեմ, գ'ըլզօրել—կըգըլզօրեմ, գ'աղել—կըգ'աղեմ, գ'էղօղել—կըգ'էղօղեմ, թաղքել—կըթաղքեմ, խաշել—կըխաշեմ, խէխտել—կըխէխտեմ և այլ բայեր, որոնք տվյալ խոնարհմամբ բացառապես ներգործական իմաստ ունեն:

գ) Այս նույն բայերը ի խոնարհիչով խոնարհվելիս արտահայտում են կրավորական իմաստ. կաղբօղիմ, կիրիցիմ, կըջ'արթիմ, կարնօղիմ, կըգ'ըլզօրիմ կըգ'աղիմ, կըգ'էղօղիմ, կըթախքիմ, կըխաշիմ, կըխէխտիմ:

Ծանոթութիւն.— Բարբառի տվյալ երևույթի ճշգրտիտ և համեմատաբար սպառիչ պատկերումը տալու համար անհրաժեշտ է նշել, որ մերթ ընդ մերթ բայերը ի խոնարհիչով խոնարհվելիս կարող են արտահայտել և ար-

տահայտում են նաև ներգործական իմաստ, բայց ոչ մի դեպքում, եթե նրանք խոնարհվում են Ե խոնարհիչով կրավորական իմաստ արտահայտել չեն կարող:

536. Ի խոնարհիչով խոնարհվելու դեպքում լիակատար որոշակիութուն գոյություն ունի երրորդ դեմքերի մեջ, որոնց վերջավորութիւնը միանգամայն համապատասխանում է բայի սեռին:

Վերոհիշյալ բայերը սահմանական եղանակի, ներկա ժամանակի երրորդ դեմքում ունենում են Ե, ի երբեմն էլ ա վերջավորութիւնները: Ի-ով վերջանալու դեպքում նրանք բացառապես կրավորական իմաստ են արտահայտում. այսպես՝ կազադի, կաղբօղի, կիրիցի, կըջ'արթի, կարնօղի, կըգ'ըլզօրի, կըգ'աղի, կըգ'էղօղի, կըթախքի, կըխաշի, կըխէխտի, նշանակում է ազատվում է, կազատվի, աղբօտվում է, կաղբօտվի, այրվում է, կայրվի, ջարդվում է, կջարդվի, արյունոտվում է, կարյունոտվի, գլորվում է, կըգլորվի, խաշվում է, կըխաշվի, կեղտոտվում է, կըկեղտոտվի և այլն, իսկ Ե-ով վերջանալու դեպքում բացառապես ներգործական իմաստ են արտահայտում. այսպես՝ կազադէ, կաղբօղէ, կերիցէ, կըջ'արթէ, կարնօղէ, կըգ'աղէ և այլն նշանակում է ազատում է, կազատի, աղբօտում է, կաղբօտի, այրում է, կայրի, ջարդում է, կջարթի, արյունոտում է, կարյունոտի, գաղում է, կըգ'աղի և այլն:

Այս բայերը վերոհիշյալ դեմքում և թվում կարող են ունենալ և ա վերջավորութիւնը, որի դեպքում Ես բացառապես ներգործական իմաստ կարտահայտեն. այսպես. կազադա, կաղբօղա, կիրիցա, կըջ'առթա, կարնօղա և այլն:

Այս առումով բարբառի այս կարգի բայերը հիշեցնում են դրաբարի հասարակ, ընդհանուր բայերին, բայց և նրանցից տարբերվում են նրանով, որ, ինչպես տեսանք, ունեն իրենց զուգահեռ ձևերը, մինչդեռ դրաբարի հասարակ բայերը նույն ձևով արտահայտում են և կրավորական և ներգործական իմաստ:

537. Չհզոք սեռի Ել լծորդութեան պարզ բայերը խոնարհվում են միայն ի խոնարհիչով. գ'անգըղել, հարփել, ըծել, թէզըրել, գ'ազըղել, գ'ախտել, ծըռել լ«խելագարվել», զարթնել, նըստել, զըբուցել, ախշադել, փօշմընել, փրչել, քելել, քըրդընել, սիվղըզել, վազել, պաղել, պահվտել, պառզել, պաբանծել, սաղգել, տըրաքել, փըքվել, քացխել, քօսօղել, ցընդել և այլն:

Ծանոթութիւն. — 1. Բացառութիւն է կազմում բըբել չեզոք սեռի բայը, որը բարբառում միաժամանակ հանդես է գալիս ի, ե կ ու խոնարհիչներով, կըթըքիմ, կըթըքում, «թըքում եմ, կըթըքեմ»:

595. Մշո բարբառը հարուստ է մակրայններով: Մակրայնների մեծ մասը բուն բարբառի են. զգալի թիվ են կազմում թուրքերենից, ինչպես նաև պարսկերենից ու այլ լեզուներից փոխառնված մակրայնները, որոնք հաճախ ունենում են և իրենց տեղական, բարբառային տարատեսակները:

596. Մակրայնները ըստ կազմության բաժանվում են հետևյալ տեսակների.

ա) Բուն մակրայններ. սոր — այսօր, խա, հա — այո, չէ — ոչ, մըգա — հիմա, հէրու — անցյալ տարի, հէրըզնամ — նախանցյալ տարի:

բ) Գոյականների, ածականների կամ խոսքի այլ մասերի կրկնություններ կազմված մակրայններ. օրբըզօր — օրեցօր, տարի բրտարի — տարեց տարի, գ'ըլէգ'ըլօխ — ծալրից ծալր, շազ — շազ, մենձ — մենձ, իրեք — իրեք, գ'էշ — գ'էշ:

գ) Գոյականների և չեշիդ, պէս, շենք (կերպ) բառերի հարադրություններ կազմված մակրայններ. գ'իլու չէշիդ, (նաև շենք, պէս), պապու չէշիդ (շենք, պէս), մարթու չէշիդ, (նաև շենք, պէս), աղվրսու չէշիդ (շենք, պէս):

Ծ ա ն ո թ ու թ չ ու ն. — Մակրայ կազմելիս գոյականը չէշիդ, շենք, պէս բառերի հետ զրվում է սեռական հոլովով:

դ) Գոյականների և վար, վարի, նազ, ման, մանց, հանա մակրայակերտ ածանցների հարադրություններ կազմված մակրայններ. վըրացվար, ուռուսվար, մարթավարի, քախքըվարի, վազման, վազմանց, զըրացնազ, դուշմըննազ, գ'ըշէրհանա:

597. Ըստ իմաստի Մշո բարբառում մակրայնները լինում են տեղ, ժամանակ, քանակ, ձև ցուլց տվող:

598. Մակրայնները բարբառում զրվում են թե՛ բալից առաջ և թե՛ բալից հետո:

599. Առանց ըստ իմաստի և ըստ կազմության տարբերակելու տալիս ենք Մշո բարբառի ամենից ավելի շատ գործածական մակրայնների ընդարձակ ցանկը, որի մեջ տեղ են գտել նաև այլ լեզուներից փոխառնվածները:

անջախ — հազիվ, հազիվ հազ,	սարախտան — առավոտյան
դժվարություն	կէսօրին — կեսօրին
աջի՞ր — արդյո՞ք, մի՞թե	չիրգուն } — հրեկոյան
ախաշքարա — ակնհայտնի, բացարձակ, բացահայտ	հըրամգա } — հրաման
չավալ — առաջ, անցյալում	վո՞ն գ'ինա — ո՞վ գիտի, դուցե, երևի
ափալ-թափալ — շտապ, հապճեպ	ավագա — երևի, կարող է պատահել
այան — բացարձակ, բացահայտ, ակնհայտի	կըսիս թե } — կարծես, թվում է իմալ օր
մըգա — այժմ, հիմա	ուհու — բոլորովին, իսպառ
օրբըզօր — օրեցօր, գնալով	ժըխօ — հենց, արդեն
շուդուց — վաղուց, անցյալում	աջալա } — շտապ
մըզօր — անցյալ օր	վրադ } — շտապ
լսթախ	բ'ոլ — բավականին, առատ
իդա գ'ախ } — այժմ, հիմա	զոո — դժվար, ծանր
իդա ժուզ }	որհաթ — հեշտ, դյուրին, հանդիստ
էլ — այլևս	փըշում(մէ) } — սակավ, քիչ,
ընօրի — այն պատճառով, նրա համար	մազըմ(մէ) } — աննշան
շ'օրով — հազիվ, դժվարություններ	թողըմ(մէ) }
	բ'էրան — բերանացի, անգիր

բազի — բիր } երբեմն, ստեպ-
 բազի } տեպ, հազվադեպ
 բէթար } վատ, վատթար
 բէթուր }
 գ'ուա — իբր
 խուզլան } երանի
 խուջամանի }
 խըի — երևի
 խղամլա — ալսպես
 ինամլա — ալսպես
 իղաչէշիղ — ալսպես
 իղախըղըր — ալսքան
 ինախըղըր — ալսքան
 բունդասօրա — ալսուհետե,
 սրանից հետո
 թաքիլան — միայն թե
 օխպաման } ողբալով
 օխպամանց }
 լալման } լացով
 լալմանց }
 զաթի — հենց
 զուր — իզուր
 խղախըղըր — ալսքան
 իղապալտ — ալս պահին
 ըսթախ — ալթմ
 գ'ախ - գ'ախ } երբեմն
 վախտ - վախտ }
 բէվախտ — անծամանակ, ուշ
 բ'էրնէ-բ'էրան — լիուլի
 հեչ — բնավ
 հալբաթ — երևի
 բէլու — ակնհայտի, երեսցող
 մէզէն — միանգամից
 յուշիգ — կամաց, մեղմ, անշտապ
 յուշիգ-յուշիգ — մեղմ, անշտապ,
 աստիճանաբար
 մըլահիմ } մեղմ
 մարմանդ }

մէզտեխ — միասին
 յիտադ — բոլորովին
 էփէի } բավականին
 էփէջա }
 մէզոցմէզ — միանգամից
 կուշտ մէ } բավականին
 բ'օլ մէ }
 զուգըր — զուտ, ամբողջովին
 սախ — ամբողջ (ովին)
 ընօքի — դրա համար, ալդ
 պատճառով
 ինա գ'իուց — ալս կողմից
 իղա գ'իուց — ալս կողմից
 օլին-զօլին — սեթեթ
 բաղլավա — ձրի, անվարձ, վատ
 բալի } թերևս
 բալքի }
 հանքակղուր — շնչակտուր,
 շնչահեղձ
 կըղման(ց) — կոացած
 նըստման(ց) — նստած
 գ'ըսըման(ց) — գետնի վրալով
 սողալով
 չէշիգ - չէշիգ — տեսակ - տե-
 սակ, դանադանակերպ
 ամբախ-դամբախ — անիմաստ,
 անմիտ, վայրիվերո
 գ'օղզուց — գաղանի, ծածուկ
 գաղմա — հասարակ, անարժեք,
 էծանագին
 գ'ըլխըվէր — գառիվեր
 հըլա — դեռ
 չուրմըգա — մինչև այժմ
 մըզալընէ — ալթմ վանից
 սօրվընէ — ալսօրվանից
 հէրվընէ — անցյալ տարվանից

հէրըզնըմ վընէ — նախանցյալ
 տարվանից
 յիրգվօրնէ — երեկոյանից
 ձ'էուաց — իսկույն
 զօսագի } բռնութամբ
 զօսովէն }
 էմլան — նորից
 թըծաղան — նորից
 էրթըլէն — գնալով, հետզհետե,
 աստիճանաբար
 թեզ — շուտ
 յօրի — ինչու
 յօրից — որտեղից
 իմալ — ինչպես
 գ'ըլխուվի — լիուլի
 հա — ալո
 հեղ }
 դան } անգամ, տակ
 վիաթ }
 տադ }
 հալբաթ — երևի, զուցե
 թաքուն }
 գ'օղզուգ } գաղտնի, թաքան,
 գ'օղզուց } ծածուկ
 օղորթ }
 օղորթման } ճշմարիտ
 մազլար — արդյոք
 ժուգ-ժուգ } երբեմն
 մէզ-մէզ }
 ֆըրըզի — թեև
 հունքուր-հունքուր — դառնագին
 մէհախ — միանգամից
 մէզչէշիղ — միակերպ, միապա-
 դաղ, միաձև
 մէզալա — միապադաղ
 միամիգ — միամիտ

բիրդան — հանկարծակի, ան-
 սպասելի
 միջագ — մեհակ
 անաղա } բոլորովին
 անուն }
 տըզէվանց — տակից
 էրսանց — երեսից
 վըրավանց — վրալից
 գ'ըլխանց — սկզբից
 օրթըլախ — մեջտեղ
 մէչ-մէչ — երբեմն
 յըմէն վախտ }
 յըմէն գ'ախ } միշտ
 յըմէն ժուգ }
 մօղիգուց — մոտից
 լանի — իբր
 լարար — արդյոք
 յէզէվանց — ետևից
 յառչէվանց — առաջից
 կըշտընգի — մի կողմի, կողքի
 վրա թեքված
 գ'ուշմըննագ — թշնամավարի
 բ'արէկամաղ — բարեկամավարի,
 բարեկամի պես
 ճըժնագ — երեսալավարի, երե-
 իսալակերպ, երեսալի պես
 ջօչնագ — մեծավարի, մեծի պես,
 նման
 պառվընագ — պառավի պես, կերպ,
 նման
 յավալըվընէ — առաջուց
 նէ-նէ — ոչ-ոչ
 նըհախ — իզուր
 քիչ — քիչ
 չէ — ոչ
 չորս բօլոր — ամեն տեղ, շուրջը

<p> $\left. \begin{array}{l} \text{ջ'օչութ} \\ \text{ջ'օչուց} \end{array} \right\} \text{մեծութիան ժամանակ}$ $\left. \begin{array}{l} \text{պըստըկութ} \\ \text{պըստըկուց} \\ \text{մանկութ} \\ \text{մանկուց} \end{array} \right\} \text{մանկութ}$ սաղա — ամբողջովին, գլխովին սամթին — անդին, ժամանակին, ըստ հարմարավուն $\left. \begin{array}{l} \text{տէխագ} \\ \text{տեխ} \end{array} \right\} \text{փոխարեն}$ հանդէ — ահա քոսխագի — անդդարար քրթթէվար — քրդերեն </p>	<p> սըրզանց — անկեղծ գ'իշէրհանա — գիշերով քոս ու փօշման — գղջալով բիբինջի — լավ, առաջնակարգ լավ — լավ հարդնի — հարսնի յէվէլի — ավելի բ'աղալէն — փոխարեն քըսէն — հաշվից իսկ ու իսկ — իսկական շուդ-շուդ — հաճախ մըշտագան — միշտ մէնձապէս — շատ </p>
--	---

8. Կ Ա Պ Ե Ր

600. Մշո բարբառի կապերն են.

<p> $\left. \begin{array}{l} \text{խըա} \\ \text{հեգ} \end{array} \right\} \text{հեա}$ վըր — վըրա $\left. \begin{array}{l} \text{խըչ} \\ \text{մօդ} \end{array} \right\} \text{մոա}$ $\left. \begin{array}{l} \text{հըրի} \\ \text{չուրի} \end{array} \right\} \text{մինչ, մինչև}$ $\left. \begin{array}{l} \text{բիլա} \\ \text{առանց} \end{array} \right\} \text{առանց}$ սավալի — բացի </p>	<p> գ'ըրա — դեպի $\left. \begin{array}{l} \text{հարով} \\ \text{համար} \end{array} \right\} \text{համար}$ գ'էմ — դեմ յառէչ — առաջ յէդեվ — ետև տադ — տակ $\left. \begin{array}{l} \text{քով} \\ \text{կուշտ} \end{array} \right\} \text{կողքը}$ բ'օլոր — շուրջ </p>
--	---

601. Կապերը Մշո բարբառում լինում են թե՛ նախագաս և թե՛ վերջագաս:

602. Կապերի մի մասը, որոնք ժամանակակից հայոց լեզվում բացառապես հանդես են գալիս որպես ետադրութուններ, Մշո բարբառում կարող են գործածվել և ետագաս, և նախագաս: Այդպիսի կապեր են վըր, հեգ, խըչ, մեչ, օրինակ՝ քու խեգ — խըա քըգի, սեղնի վըրեհ — վըր սեղնիհ, սեղնի մեչ — մըչ սեղնիհ, մըչ քըգի, քու մեչ, մըչ ընդրան, ընդրա մեչ, ընդրա հեգ — խըա ընդրան:

603. Բացառապես որպես նախադրութուններ են գործածվում՝ բիլա, չուրի, գ'ըրա, սավայի, հըրի, առանց կապերը:

604. Որպես ետադրութուններ են գործածվում մօդ, համար, յառէչ, յեդեվ, աագ, քով, կուշտ, գ'եմ, գ'իմաց, ցաճըր, բ'օլոր, կապերը:

Վըր, հեգ, խըչ, մեչ կապերը, ինչպես նշվեց, գոյականի հետ զրվելիս կարող են գործածվել թե՛ նախագաս և թե՛ ետագաս: Նախագաս զրվելիս պահանջում են տրական հոլովով, իսկ ետագաս զրվելիս՝ սեռական հոլովով կապի խնդիրներ:

605. Բացառապես որպես նախադրութուններ կիրառվող կապերից պահանջում են.

բիլա — հայցական և սեռական հոլովներ.

բիլա երեխա — բիլա երեխու.

չուր

հըրի

գ'ըրա

հայցական հոլով.

չուրի առն, հըրի գ'եղ, գ'ըրա քաղաք.

սավայի՝ բացառական հոլով.

սավայի աընից, սավայի աընեհ.

առանց՝ աղղական, սեռական հոլով.

առանց առն, առանց երեխա,

առանց տան, առանց երեխու, երեխի:

606. Բոլոր ետադրութունները առանց բացառութիան պահանջում են սեռական հոլովով կապի խնդիրներ՝ առն մօդ, գ'եղի աագ քախքի քով, ամբոցի կուշտ, կալի գ'եմ, գ'իմաց, գ'եղի բ'օլոր:

9. Շ Ա Ղ Կ Ա Պ Ն Ե Ր

607. Մշո բարբառում գործածվող շաղկապներն են.

ու — ու	օր — որ
է — էլ	թէ — թէ
լէփօր — երբոր	համա
լեփ — երբ	բ'ըլէ — բաց
կամ	քընի — մինչև, քանի դեռ,
լա	քանի որ

10. ՉԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

608. Մշո բարբառի ձայնարկութիւններն են.

ա՛խ, վա՛լ, ամա՛ն, լամա՛ն, օ՛ֆ—վիշտ, ցալ, կսկիծ արտա-
հայտող ձայնարկութիւններ

օխա՛լ } հաճուլք, հիացմունք, բավարարվածութիւն
օխն՛չ } արտահայտող ձայնարկութիւններ

դ՛է

դ՛է՛-դ՛է՛—արգելող ձայնարկութիւններ

թա՛

թը՛չ

հէ՛լ զիղի—վալ, ափսոս } ափսոսանք, զղշում արտահայտող
հալ զիղի, } ձայնարկութիւններ

հէլ վախ

էխ ֆալաք

հա՛-հա՛-հա՛

ա՛հ

} արհամարհանքի ձայնարկութիւն

հօ՛—անասուններին կանգնեցնող ձայնարկութիւն

չո՛չ—էշք քշելու ձայնարկութիւն

քըչ—հավը քշելու ձայնարկութիւն

հըսի՛—սլխարը քշելու ձայնարկութիւն և այլն:

ԵՐԲՐԳ ՄԱՍ

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. ՄՇՈ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԸ

Ամեն մի բարբառի հետազոտութեան մեջ նշանակալից անդ է գրավում բառային կազմի, բառիմաստային իրողութիւնների, բառակազմական հնարավորութեան խնդիրը: Անշուշտ, դժվար է մի աշխատութեան սահմաններում տալ մի բարբառի վերոհիշյալ բոլոր իրողութիւնների մանրամասն ու հանդամանալից քննարկութիւնը, աչնուամենայնիւ, կփորձենք, հնարավորին սահմաններում, բնորոշել, թե որո՞նք են Մշո բարբառի բառային կազմի շերտերը, տալ Մշո բարբառի բառային կազմի ընդհանուր նկարագիրը:

Լեզուն հասարակական երևութ է: Հասարակութիւնից զուրս լեզու չկա և չի կարող լինել: Հետևապես լեզվի, տվյալ զեպքում, բարբառի պատմութեան, նրա ընդհանուր նկարագրի մեջ շատ ցայտուն կերպով կարող են արտացոլվել այդ բարբառը կրողների հասարակական, քաղաքական, կուլտուրական կյանքի կողմերը, այդ բարբառը կրող ժողովրդի կյանքի, կենցաղի, կուլտուրական ու անասական զարգացման աստիճանի հետ կապված բազմազան հարցերի մասին կարելի է եզրակացութիւնների հանդէլ նաև բարբառի բառակազմի ուսումնասիրութիւնից ելնելով: Գրաբարի, ինչպես և ժամանակակից գրական հայերենի համեմատութեամբ Մշո բարբառի բառային կազմը աղքատ է, շնայած աչն հանգամանքին, որ Սովետական Հայաստանում Մշո բարբառը իր զարգացման արդի էտապով պայմանավորվող մի շարք անդաշարժերի հետ միասին, մեծագույն փոփոխութիւններ է կրել. նրա բառային կազմը համալրվել է նոր՝ հասարակական, քաղաքական, անասական հարաբերութիւնները արանհայտող բառերով, գիտութեանը, տեխնիկային հատուկ տերմիններով:

Բարբառի բառային կազմում բազմաթիւ են երկրագործական

գործիքների, կազմե ամանների, անասնապահութեան հետ կապվող տերմիններն ու բառերը:

Բավական է նշել, որ կազմե զանազան անոթների համար Մշո բարբառը ունի հետևյալ տերմինները. ջօխաւրբիգ, պուլիգ, ծափիգ, կարաս, ջ'ըսա, պուղուգ, կարսի ճ'աք, խընդըլիգ, քըթոց, բ'ըղըղիգ, կուժ, փարչ, բ'ըղիգ, սաֆէգ, կոչիգ, ուխալ: Նույն բանը կարելի է ասել երկրագործական գործիքների, անասնապահութեան հետ առնչակցվող տերմինների մասին:

ՄՇՈ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մշո բարբառի, ինչպես և մեր լեզվի տերիտորիալ մյուս բարբառների, բառակազմի ամենահիմնական շերտն են կազմում ընդհանուր հայկական բառերը: Դրանք այն բառերն են, որոնք գոյաթիւն են ունեցել մեր լեզվի զարգացման բոլոր էտապներում՝ գրաբարում, միջին հայերենում, արդի աշխարհաբարում: Այդպիսի բառերի թիւը բավականին մեծ է, և մենք չենք թվարկի դրանք: Այդ ընդհանուր հայկական բառերը Մշո բարբառում մեծ մասամբ պահպանված են գրեթե առանց իմաստափոխութեան:

Սակայն, արդ ընդհանուր հայկական բառերը, ամբողջութեան մեջ վերցրած, բարբառում մի քանի փոփոխութեաններ են կրել: Երբ մենք բարբառի բառապանծը համեմատում ենք գրաբարի բառապաշարի հետ, ապա ստանում ենք մի պատկեր, որի համառոտ բնութագիրը, ամենարեղծանուր գծերով հետևյալն է:

Ինչպես նշեցինք հին հայերենի բառաֆոնդի և բառակազմի հետ համեմատելու դեպքում աչքի է ընկնում նրա անհամեմատ աղքատութեանը¹:

Հին հայերենի բառաֆոնդի բազմաթիւ բառերը բացակայում են բարբառում: Այսպես. բարբառում չկան արիոն, ագապ, ագարակ, ազի, ագոն, ազդ, ակամա, ամբաստանել, աղարտ, ախոյան, գալարել, գալթ, գալու, գեղմե, գեղջուկ, գոլ, գորով, գամբարան, գեսպան, գժնի, դիակ, դիաւարութիւն, դիւցազն, դրժել, դրոշմ, դրուատել, եղենի, եղէզն, եղեամ, եղենն, եղծ, եղծում, զազիր, զրօսանք, զգօն, զմալլանք, էական, ըղձալ, ըղձական, ըմ-

¹ Հին հայերենի բառաֆոնդի և բառակազմի մասին խոսելիս բոլոր դեպքերում ելակետ ենք ընդունել «Առձեռն» բառարանը:

բոսա, թաղանթ, թափանցիկ, ժխակ, իմաստ, լանջ, լաստ, լերկ, լուրջ, խանդ, խելագար, խնջոլք, խոհ, խոյակ, խոնջանք, խոշաանգիլ, խոտոր, ծունդ, կական, կալակ, կալաստ, կանոն, կապիկ, կառափն, կարեկցել, կարծի, կալաս, կոթող, կոտորակ, կրկին, կըրպակ, հալածել, համեղ, համեստ, համր, հախոլիկ, հանդես, հանճար, հառաչել, հեղ, ձանձրանալ, ճաճանջ, ճարպ, ճօխ, մախաղ, մախիչ, մախող, մաս, մասախուղ, մեղմ, մերժել, մետ, մթար, մթերք, մեղաղ, միութեան, նաժիշտ, նանիր, նալ, նեարդ, նետ, նուստ, նեմ, նպաստ, նուրբ, պատմութեան, պատշաճ, պատըզամբ, պատուհաս, պերճ, ունայն, պակշոտ, պաճոյճ, պատանդ, պաշտօն, պատգամավոր, պատգարակ, պատեհ, ջահ, ջերմ, սաղարթ, սաղմ, սեւ, սէգ, սին, սմբակ, սնտիտո, սուղ, սպանալ, սպեղանի, սդոտ, սրունք, սիտիանք, սքանչելի, սքողել, վարս, վաւաշ, վաւեր, վեհ, վհատ, վիշտ, վտանգ, վախա, տաղնապ, տենչ, տեսարան, ախիզիք, սհաճ, տրտունջ, տրիանք, տօթ, տօն, ցասում, ցնծալ, ցնցել, ցոփ, փարթամ, փարաւոն, շուայտ, փութկոտ, քանքար, քսակ, քու, քուրմ, շփոթ, շքեղ, ողորկ, ողոք, որպայթ, որովհետեւ, որջ և այլ բառեր:

Մշո բարբառում բացակայող բառերի այսքան ընդարձակ ցանկը մեջ բերելով այս դիտում, մենք նպատակ ունենք ցույց տալու, որ բարբառում, հիմնականում, բացակայում են վերացական, հավաքական, ընդհանուր զաղափար արտահայտող բառեր: Շատ մեծ է զգացմունքներ, ապրումներ արտահայտող բառերի պակասը:

Բարբառի բառակազմի անհամեմատ աղքատութեանը տվելի քան ակնբախ է դառնում, երբ մենք նկատի ենք ունենում, որ վերոհիշյալ բառերից բառաքանչյուրը մեր լեզվում հանդես է գալիս բարդութեաններով ու անհարմարութեամբ:

Սակայն միանգամայն սխալ կլինի, և բարբառի պատկերը լրիվ տված չենք լինի, եթե նշենք, որ այս և շատ ուրիշ բառեր, որոնք նույնպես չկան բարբառում՝ առհասարակ բացակայում են: Կասկած չկա, որ վերոհիշյալ բառերի մեջ մեծ թիւ են կազմում առհասարակ բարբառի բառակազմում բացակայող բառերը, սակայն այդ ցանկի մեջ կան և մի այլ կարգի բառեր, որոնք թեև չեն պահպանված, բայց որոնց իմաստը բարբառում արտահայտվում է բարբառային տարատեսակներով. այսպես՝ փարթամ—թրփուղի, վիշտ—դարդ, օձիք—փոխպաղ, փոքր—պըստիկ, վատ—գէշ, փիս, սառ—պաղ, սեխ—փըթիկ, նալ—դճմի, ճարպ—ճըրաքո, ճառագայթ—

ըրժ, կապիկ — մալմուն, մէլմուն, ծնօտ — չանա, ծուլ — դ'օթի, թշնամի — դ'ուշման, ևրախ — ք'էրան, դիւր — հէշտ, գեղեցիկ — խօրոզ, դանդազ — կամաց, հուշիկ, դալակ — ծըծմէր, դիակ — լեշ, կաղամբ — քալամ, կաղ — չօլախ, ողիղ — դ'ուզ, որոնել — դ'աշել, շտապ — վրոպ, փորձել — ջ'ըրբել և այլն:

Պակասներով հանդերձ, բարբառում մեծ մասամբ պահպանվել են հին հայերենի արմատներն ու արմատական բառերը, սակայն նրանք պահպանվել են միայն արմատական ձևով և բարբառում գրեթե չկան, կամ շատ փոքր թիվ են կազմում այդպիսի բառերից կազմված բարդութիւնները, կամ անանցյալ բառերը, որոնք աչնքան շատ են մեր հին գրական հայերենում, ինչպես նաև արդի աշխարհաբարում:

Պատկերը ավելի քան պարզ դարձնելու համար բերենք օրինակների մի բավականին ընդարձակ շարք:

Բարբառում կա յըմեն — ամէն բար, բայց եթե «Առձեռն» բառարանում այլ արմատից կազմված բարդութիւնների թիվը չորսհարյուրից ավելի է, ապա բարբառում դրանք շատ սակավ են: Աստուած բառից կազմված բարդութիւնների և անանցումի թիվը «Առձեռն» բառարանում մոտենում է ևրեք հարյուրի, մինչդեռ բարբառում դրանք չեն հասնում մեկ տասնյակի:

Գեղեցիկ-ից կազմված բառերի թիվը վերահիշյալ բառարանում մոտենում է երկու հարյուրի, մինչդեռ բարբառում նրան փոխարինող խօրոզ բառից կազմված են միայն խօրոզիզ, խօրոզութեն, խօրոզընալ և էլի մի երկու բառ:

Մեծ, չար, քաջ յուրաքանչյուր բառից մեր հին հայերենում կազմված երկու և կես հարյուրակից ավելի բառերի զիմաց բարբառում սակա են մի քանի միավորներ միայն. քար, յօրն, լուս, խառն, մարդ, փրփուր, քսան, քաղցր, քրիստոս և այլ բառեր, որոնցից կազմված բառաբարդութիւններն ու անանցումները անցնում են մեկ և կես հարյուրակից, բարբառում շատ սահմանափակ բարդութիւնների կամ անանցների մեջ են մտնում:

Այլ նույնը վերաբերում է այնպիսի բառերի, ինչպիսիք են՝ գիշեր, գլուխ, գինի, դալար, ժանգ, ժառանգ, ոտն, երգումն, գարշել, եղբայր, դժոխք, ծով, կենդան, հակառակ, դառ, հեշտ, խավար, խնամի, խունկ, կայծակ, ձայն, ձեռք, ձի, մահ, պտուղ, պսակ, պայծառ, օգուտ, օղ, օրէնք, օտար և այլ բառերի, որոնք մեր լեզվի բառակազմական զանազան միջոցներով բազմաթիվ նոր բառեր կազմելու հիմքում են ընկած, իսկ բարբառում նրանց մի

մասը կազմում են մի քանի միավոր բառեր, իսկ մյուս մասը գրեթե զուրութիւն ունեն միայնակ և ոչ մի բարդութիւն կամ անանցման հիմքում չեն ընկած:

Այս հանգամանքը անշուշտ բարբառի բառապաշարի անհամեմատ աղքատ լինելու պատճառներից մեկն է:

Նկատելի է մի տրիշ երևույթ ևս. այս կամ այն արմատից բարբառում բարդվելու կամ անանցվելու ուղիով կազմվել են նոր բառեր, որոնք չկան Առձեռնում. այսպես Աղամ — բառից բարբառում կազմվել է աթամամութ, աթամապրոչուզ, աթամապրուզ, որոնք չկան Առձեռնում, բայց ընդհակառակը այնտեղ կան ազամազգեստ, ազամածին, ազամածնութիւն և այլ բառեր, որոնցից և ոչ մեկին չենք հանդիպում բարբառում:

Բարբառում բացակայում են հին հայերենի և ընդհանրապես մեր լեզվի բազմաթիվ նախածանցներ, հետևապես նրանցից կազմված բառերը. այսպես՝ գեր, դեր, ապ, դիւր (250-ից ավելի)¹, տար (300), ինքնա (300), գուզ (150-ից ավելի), համ, մակ (130), միւս (300), նախ (500-ից ավելի), ներ (200-ից ավելի), պար, արար (120-ից ավելի), վեր (400-ից ավելի), վար (41), ենթա, ետա, երկ, երա, ընդ, հեռ, շար և այլն:

Այս հանգամանքը ևս բարբառի բառազանձի աղքատութիւն պատճառներից մեկը պետք է համարվի:

Բարբառի բառակազմի աղքատութիւնը մյուս կողմից պայմանավորված է նրանով, որ մեր լեզվի նույն բառի երբեմն մի քանի հոմանիշների զիմաց բարբառում սակա է միայն մի բառ կամ երբեմն և ոչ մի բառ. այսպես, օրինակ. զութ, զորով, կարեկցանք, վշտակցութիւն, կարեկցութիւն բառերի զիմաց բարբառը ունի միայն խիտն բառը: Զգվելի, դազիւր, դարշելի, արգահատելի բառերի զիմաց՝ դարշել, ըղձալ, տենչալ, ցանկանալ բառերի զիմաց՝ յուղել, ունայն, սնամեշ, դատարկ, սին բառերի զիմաց՝ փուշ, դարդազ և այլն:

Սակայն սխալ կլինի ասել, որ բարբառը ընդհանրապես չունի հոմանիշներ կամ շատ աղքատ է դրանցով. ահա մի օրինակ. վտիտ բառի իմաստը բարբառում արտահայտվում է լըդար, զանանեզ, զըբուն, տուգազ, քօլթափ բառերով:

Բարբառի բառակազմի մյուս հիմնական շերտն էլ բարբառային բառերն են, որոնք իրենց հերթին բաժանվում են տարաշերտերի:

¹ Այստեղ փակագծերում նշված թվերը ցույց են տալիս, թե այդ մասնիկները որքան անանցյալ բառեր են կազմում գրաբարում (բառ Առձեռն բառարանի):

1) Ընդհանուր բարբառային բառեր, որոնք Մշո բարբառին հատուկ լինելով, միաժամանակ հատուկ են նույն կը կամ մյուս ճյուղերին պատկանող բարբառներին և 2) բարբառային բառեր, որոնք հատուկ են միայն այս (գույն հնչյունափոխված ձևով նաև Սասունի) բարբառին:

Մեր լեզվի բոլոր բարբառների կամ նրանց մեծ մասի բառարանների բացակայություն պատճառով մենք հնարավորություն չունենցանք ամբողջական խուսափելուց սալ, թե որոնք են Մշո բարբառի բուն սեփականությունը կազմող բառերը, որոնք չկան հայերենի մյուս բարբառներում, սակայն ձևաքի տակ ունենցած բառարանների՝ «Առձևան բառարան հայկազյան լեզվի», «Ճախերենի բացատրական բառարանի», «Գավառական բառարանի» և Մշո բարբառի բառարանի համեմատությունը մեղ իրավունք է տալիս ասելու, որ բավականին մեծ թվով բառեր ու նոր կազմություններ, ինչպես և ոճեր ու արտահայտություններ, որոնք կան Մշո բարբառում՝ առկա չեն վերոհիշյալ բառարաններում: Այդպիսիների թվին են պատկանում. ազլաիզ «ազահ», ամամազլուզ «վատ, փաստակար ուտելիք», ալուզալ էզնալ «հանկարծակի անհրաժեշտալ, կորչել», ախթաման թոաքի ապարանջան», ախոթիզ «գլուխը բարձր դանալ, բորբոքվել», ամալ-թամալ «ինչք, հարատվություն», ամպհեձ «անձրևոտ և մութ գիշեր», անկրնէզ «ցորեն, որը աճել է անցած հնձին թափված հատիկներից», անկուն «գործ, արդյունք», անսիր «անհանգիստ», աշբատես «տղեղ, ալլանդակ», աշլադեր «աարօրինակ, զարմանալի», անըրվել «միտրվորվել», ասքակօրանք «ազգը խալտաակող», ալլուքաշ «ավազի միջից բխած աղբյուր», ափզել «չորեքթաթ քայլել», բ'արա «ձևաքի մասերը իրենից հեռացնելով մեկին զսպել», բ'ազ բ'ըռնել «լուսնի և առասարակ մի ալլուսատուի խավարելը», բ'ածգընոց «հասակի չափով, հասակի բարձրությունը», բ'ամփոսիզ «կազամբի միջուկ», բ'անցբափբբուչի «մեծամիտ», բ'աս էնել «մեկի մասին խոսել, անունը տալ», բ'արդու «անգործ, պղերգ, ծուլ», բ'արգթափ «թոնրի շիկացած լինելուց հացի թափվելը», բ'արվար «զալարապատույտ ճանապարհ», բ'ըրզել «պալթել», բ'ըրիզ «աննշան լույս, շող», բ'ըրբրիչ «լեզու», բ'ըրզինչք «կարճ, փշատակալ բույս», բ'ըր 1) «ոչխարի հոտի մասերի բաժանվելը, 2) խաղի տեսակ, 3) շատ, բազմաթիվ», բ'ըրբխալ «փայլել», բ'ուլզել «երար վրա հավաքել, կիտել», բ'ուզակեր «որկրամուր», բ'ուի, «խողովակ», գ'ազըն «բողոք», գ'ավարս «կորեկի

տեսակ», գ'ափել «մի բանի վրա չորս թաթով կուսնալ», գ'եղընբուք, գ'էզնափբչիզ «պատուակահողմ», գ'եղընմընա «տղեղ աղջիկ», որը տանն է մնում, չի ամուսնանում», գ'եղավրիչ «չափազանց փաստակար մի մոլախոտ», գ'եչկուն «բարկ, շիկացած», գ'ըրբի հօր գ'անդ «շատ մաշված, չլված իր», գ'ըխալ «չարագուշակ բաներ խոսել», գ'ըրմընել «տաքանալ և քնել», գ'ըրբըրոզ «չափազանց տղեղ, աննշան, քոտոտ», գ'ըրբուրիզ «փոքր, անունի կավե աման», գ'իզի «հսկա շուն, հսկա անճոռնի մարդ», գ'ոնդիզ «կծկված, կուչ եկած, փոքր», գ'ազմա «վատ, հասարակ», գ'արբըրոբ «տղեղ, ալլանդակ, վատ», գ'էլըքել «զառանցել տաքություն մեջ», գ'էրիզձել «զանազան դեղեր տալով հիվանդին թուլացնել», գ'էմ յընգնալ «խոճալ, կարեկցել», գ'էմազ «ուրեմ», գ'ըմարնալ «լացակամել, խոճահարվել», գ'ըրբըր «ասելիք, պատմելիք, հոչակելիք», գ'ընդ հօքուն չիդալ «բանի տեղ չգնել», գ'ընա «1. անասունների մեջքին, մաշկի տակ գոլացած կարծր պալար, 2. կոշտ կոպիտ բան», գ'ըրունգա, «հարթ տեղ ձլան վրա, որտեղ ձմեռը խոտ են տալիս անասուններին», գ'իզա «այս կողմը», գ'օլ «ճեշտ, դյուրին», գ'օփել, «տակը շատ միզել, առասարակ, շատ թրջել», գ'օփակ «զլիսի վրա ընկնել» և այլն:

Այսպես կարելի է շարունակել այն բառերի ցանկը, որոնց չենք հանդիպել մեր լեզվի գոյություն ունեցող բառարանում, իհարկե, չենք ժխտում, որ դրանց մի մասը կարող է գոյություն ունենալ այս կամ այն բարբառում, բայց, ինչպես նշեցինք, այդ բանը պարզել դժվար է, դրանք գրանցված չեն, բարբառների մեծ մասի ընդարձակ բառարանների բացակայություն պատճառով:

Մշո բարբառի բառակազմի մյուս շերտն էլ օտար լեզուներից՝ պարսկերենից, տաճկերենից, արաբերենից, թուրքերենից, քրդերենից և այլ լեզուներից փոխառված բառերն են:

Ավելորդ համարելով թվարկել վերոհիշյալ բոլոր լեզուներից փոխառյալ բառերի լրիվ ցանկը՝ բերում ենք այդ լեզուներից փոխառված բառերի մի քանի օրինակներ.

Պարսկերենից փոխառյալ բառեր

բախուշ	papuş	«կոշիկի մի տեսակ»
բանդ	band	«արգելք, առվի ափին, ջրի առջև»
բէխաբար	bixaber	«անտեղյակ, անլուր, լուր չունեցող»

✓ քէչարա	bēčāra	«անճար»
քէթար	bēdār	«վատ, շատ վատ»
✓ արուռ	ābrū, ābirū	«ամոթ, ամոթի, պատվի զղացում»
աղանուն	āgāh	«տեղակ, գիտեցող, իմացող»
աթաշէն	ātašak	«ծանր վերք»
ալաֆ	alav	«բոց»
ալան-թալան	talan	«կողոպուտ»
գահ, գախ	gāh	«ժամանակ»
արախչի	arakgin	«զլխի թասակ»
լավանդ	lavand	«անկարգ, ապերասան մարդ»
լալ	lāl	«թանկարժեք քար»
լաչագ	lačak	«զլխաշոր»
լավել	lāv	«աղաչել»
լուլա	lūla	«խոզովակ»
ժանգառի	žangari	«պղնձի ժանգ»
ժժան	žāžān	«զզզզված»
բուխաան	buhtēn	«իզուր», գործ է անվում «զուր ու բախ- տան» կապակցութիւն մեջ
դամ	dām	«շունչ, ձայնակցութիւն»
դան	dan, dāna	«հատիկ, հատ»
մայա	maje	«մերան»
ճոկան	čogān	«ղավաղան»
խալվար	xalvār	«ժանրութիւն չափ»
խօջա	xoǰa	«մեծ, հսկայական»
ջադու	gadū	«վհուկ»
շիլա	silā	«ճաշի տեսակ»
նուբար	nūbar	«նոր դուրս եկած պողի նմուշ»

Արաբերենից փոխառյալ բառեր

բարաքլաթ	baraket	«լիութիւն, օգտակարութիւն»
ալիբ	ayb	«ամոթ, պախառութիւն, թերութիւն»
ամանաթ	amanat	«պահ տված բան»
ալան	ajan	«հայանի»
ալվան	alvan	«դուլներ»
աշիրաթ	aširra	«քրդ. ցեղ»
աջալ	agal	«վերջ, կլանքի վերջ, մահ»
լազաթ	lazzat	«հաճույք»
զայ	zaiy	«ֆլաս»

զադ	zad	«բան, ուսելիք»
զարբ	zarb	«ուժեղ, արձակ»
զուլում	zalum	«աղետ, դժբախտութիւն»
մալ	māl	«սպրանք»
թադարուք	tedaruk	«պատրաստութիւն»
թամահ	tama	«մի բան ունենալու ցանկութիւն, սխորժակ»
թամամ	tamam	«լրիվ»
թամաշա	temāšā	«տեսարան, հանդես»
թարկել	tark	«վերջ տալ»
հազրբ	hazər	«պատրաստ»
հալ	hal	«վիճակ»
կալբ	kalb	«կեղծ»
կալեբ	kaləb	«կաղապար»
խաթբ	xatər	«հարգ, պատիվ»
ռեյս	reis	«զլխալոր, զլուղապետ»
սակաթ	sakat	«հաշմված»
նաշ	naš	«գի»

Տանկերենից փոխառյալ բառեր

բայխուշ	baykuš	«բու, անբան, անպտուղ»
բաշլեղ	bašlək	«զլխանոց, կնդուղ»
բէշարել	begarmek	«մշակել, խնամել»
ազիզ	aziz	«սիրելի, թանկագին»
աթուրմա	aturma	«խաղի տեսակ»
արթուրմա		
ադաթ	ādet	«կարգ, օրենք»
աղըլ	agāl	«ցանկապատած տեղ, որ- տեղ զիշերը մակաղում են կղջ. անասունները»
ադու	agu	«թուխ»
ազաբ	azab	«ամուրի, չամուսնացած»
ախսրբ	achar	«չէ որ»
ալան-թալան	alan	«առնել տանել»
ակիշ	egiš	«երկաթից հարմարանք, որով թոնրից ամաններ են հանում»
անջախ	ang'ak	«հազիվ, հազիվհազ»
լհեմ	lehim	«անագի կարճճի խառնուրդ»
լանգառի	langer	«պղնձյա ափսե»

բոլ	bol	«առատ»
դաբագ	dabag	«խոշոր եղջ. անասունների հիվանդութիւն»
յախա	yaxa	«օձիք»
յակու	yaky	«ամբողջնոց սպեղանի»
էթիմ	yetim	«որք»
մաշա	meze	«աղանդեր, որ ուտում են խմիչքից հետո»
մուշտուլուզ	muždelik	«նվեր, աչքալուսի»
դալին	kalən	«խիա, ստվար»
դարաչի	garaçi	«աղմկարար կին»
դափազ	kapak	«խուփ, ծածկոց»
դօլայ	kolay	«հեշտ, գլուրին»
չափալախ	šapalak	«սպտակ»
չափալ	čatal	«երկնչուզ»
դաթըր	katər	«ջորի»

Քուրքեբեհից փոխառյալ բառեր

արխալըխ	arkaləx	«կանանց և ազամարդկանց՝ մինչև ծնկները հասնող զվեստ»
պասամ	basma	«տափարի կու, տափիկեցրած, կըտրելու պատրաստ»
ալըխ	ayek	«սթափ, արթուն»
լազան	laken	«փոքրիկ կոնք»
էմիշ	yemis	«միրդ, պտուղ»
յարա	yara	«վերք»
յարալու	yaralu	«վերափոր»
բուդ	buγ	«գոլորշի»
լէշ	leš	«դիակ»
խոչ	qeč	«դոչ»

Քրդեբեհից փոխառյալ բառեր

ադէ	ade	«մայր»
լաո	lāo	«մանչ, տղա, կոչական բառ»
ճեոք	cerok	«հեքիաթ, երկար, ձանձրալի խոսակցութիւն»
ճալավ	čalav	«ախոռների մեջ փորված փոս, որտեղ թափվում է կեղտաջուրը»
լամուզ	lamuk	«տղա, քրդի տղա»

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մշո բարբառի շարահյուսութիւնը հիմնականում չի տարբերվում գրական հայերենի շարահյուսութիւնից. սակայն այն աչքի է ընկնում մի քանի առանձնահատկութիւններով, որոնք անհրաժեշտ ենք համարում նշել:

Ինչպես արդի գրական հայերենում, այնպես էլ Մշո բարբառում ենթական ու ստորոգրյալը թվով, դեմքով համաձայնվում են իրար հետ. այսպես. լես կուզիմ, դ՛ու կուզիս, ընի կուզէ, մենք կուզինք, դ՛ուք կուզիք, ընդոնք կուզին. սակայն բարբառիս չափազանց բնորոշ է ենթակալի և ստորոգրյալի անհամաձայնութիւն, եզակի ենթակալի հետ ստորոգրյալի հոգնակի թվի կիրառման դեպքեր: Բերենք մի քանի օրինակ.

լես ջաղաչ նըստուզ էնք, ինք.

լես մըր աուն քընուզ էնք, ինք.

լես դէդի մէշ կախուզ էնք, ինք.

Ինչպես պարզ երևում է, այս օրինակներում ենթակալի եզակի 1-ին դեմքի հետ (լես) գործ է սծված ստորոգրյալի հոգնակի 1-ին դեմքը (նըստուզ էնք, քընուզ էնք, կախուզ էնք, ինք):

Այս երևույթը բարբառում շարահյուսական հիմնական օրենքից շեղման կամ բացառութիւն ձևով չի հանդես գալիս: Բոլոր այն դեպքերում, երբ մշեցին որևէ բան է պատմում իր մասին և արդ անցյալին է վերաբերում, ապա նա կիրառում է խոսքի վերոհիշյալ ձևը:

Ոչ պակաս հետաքրքրական և առանձնահատուկ երևույթ պետք է համարել բարբառիս շարահյուսութիւնի մեջ գերբայների և բալի եղանակային ձևերից մեկը մլոսի փոխարեն կիրառելը:

Նպատակի պարագան բարբառում անորոշ գերբալի արական հոլովի փոխարեն արտահայտվում է ըղձական եղանակի համապատասխան դեմքով. այսպես.

Հէրու չէ հէրըզնամ ընի էգաւ մըր գ'էղէն ախչիգ տանէր:

Այս նախագասուութիւնը կ'ընենք մանկի ալսպէս՝

Անցյալ չէ նախանցյալ տարին նա եկաւ մեր գլուղից աղջիկ տանելու (համար):

Կամ՝

Ընի գ'ընաց Խըլաթ ցորէն բ'էրէր—նա գնաց Խըլաթ ցորեն բերելու (համար): Էգաւ Մըշու գէնք տանէր—եկաւ Մուշից գէնք տանելու (համար):

Բալի անցյալ կատարյալ ժամանակը (ցոյական վերջավորութիւն) խոսքի մեջ հաճախ կիրաւում է անորոշ գերբալի փոխարեն օրինակ՝ գնացին չու, չըկատոցան վարեցին—գնացին դաշու, չկարողացան վարել. յօրթ չըկատոցար ծէձէցիր—ինչու չկարողացար ծեծել. հինգ մարթ քաշին, չըկատոցան հանէցին—հինգ մարդ քաշեցին չկարողացան հանել, ընի չըկատոցաւ խըմէց—նա չկարողացաւ խմել, լես չըկատոցա քընա—ես չկարողացա քնել:

Բալի սահմանական եղանակի անցյալ վաղակատար ժամանակի տեղ հաճախ գործ է անում հարակատարը, օրինակ՝ ընդոնք հանած է—նրանք հանել են. ընդոնք կէրած է, խըմած է, քընած է—նրանք կերել են, խմել են, քնել են:

Հաճախ հոգնակի ենթակալի հետ գործ է անում եզակի ստորոգյալ:

Բարբառում բալերի անցյալ կատարյալը հաճախ գործ է անում ըզձական եղանակի փոխարեն. օրինակ՝

Ինչ էրին չէրին, ընի չըթօրգէց լես խոսացի—ինչ արին չարին, նա չըթօրգէց, որ լես խոսելի. մէտաւ աղաչէլէն, մամ չըթօրգէց, ընի գ'ընաց—մեռաւ աղաչելով, մայրը չըթօրգէց, որ նա գնա. անօթնէ իմ ուշք յընցաւ, ընի կըզօր մէ հաց չըտըվէց լես կէրա—քաղցից իմ ուշքը գնաց, նա մի կտոր հաց չտուցից, որ ես ուտելի. սալս գ'իշէր ընի լաց, չըթօրգէց լես քընա—ամբողջ գիշերը նա լաց եղաւ, չըթօրգէց, որ լես քնելի:

ՄՇՈ ԲԱՐԲԱՌԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Առնասարակ դժվար է խոսել Մշո բարբառի արդի վիճակի մասին: Բազմաշարժար հալ ժողովրդի մի բեկորը հանդիսացող մշեցիք, Տաճկահայաստանից գաղթելուց հետո, ցրվել են այս ու՛ ալն կողմ, այլևայլ վայրեր:

Ուսումնասիրութիւններն ու շրջագայութիւնները այն բազմաթիւ վայրերում թե՛ մեր սեպուղիքի կալի սահմաններում (Լեւինական Փամբակ, Ապարան, Ալաղլաղ, Թալին, Աշտարակ, Հոկտեմբերյան Վաղարշապատ) և թե՛ Ռեսպուբլիկայի սահմաններից դուրս (Թրիլիսի, Ախալքալաքի, Բողղանովկա) պարզ գարձրին, որ զանազան վայրերում, այլևայլ միջավայրում Մշո բարբառի արդի վիճակը տարբեր է: Մշո բարբառը ավելի ուժեղ փոփոխութիւնների և գրեթե անհետացման է ենթարկվել Ռեսպուբլիկայից դուրս, որտեղ նա կրել է այլ լեզուների և բարբառների ուժեղ ազդեցութիւնը և որտեղ նույն վայրում, իրար հետ ապրող բարբառախոս հայերի թիվը ավելի փոքր է:

Այսպէս, օրինակ, Վրացական ՍՍՌ Բողղանովկայի շրջանի Դիլիֆ գյուղում, ըստ տարեց բնակիչների վկայութիւնների, շատերը գաղթել են Մուշ քաղաքից: Գաղթի սկզբնական տարիներին՝ 15—16 թվականներին բնիկները նրանց չեն հասկացել, և բանը հասել է ալնտեղ, որ «քլուրդ են» անվանել: Մշո բարբառով խոսողներին այդ նույն գյուղում այժմ գրեթե մատների վրա կարելի է հաշվել. նրանցից մեծ մասը չի պահպանել բարբառի սահադարտութիւնը: 98-ամյա դատավալ ձերուճի Բազրատ Մանվելյանը, որն իր մասին պատմում էր, թե «ծընվէր իմ Մշու սուլթան Սըրի Կարաբէղու հայաթ», խոսակցութեան ընթացքում մեծ քանակութեամբ այլ բարբառներից (Կարնո), նույնիսկ վրաց լեզվից անցած բառեր ու բառաձևեր էր օգտագործում:

Ռեսպուբլիկայի սահմաններում՝ Թալինի, Լեւինականի շրջան-

ների մի շարք գլուղերում, Ապարանում, Ալաղյազում բարբառս պահպանվել է անհամեմատ ավելի անաղարտ վիճակում՝ ծերերի, պառավների, նույնիսկ երեխաների մեջ:

Չնայած այս հանգամանքին, այնուամենայնիվ կան ընդհանուր, բնորոշ գծեր, որոնք հատուկ են բարբառիս արդի վիճակին, կան փոփոխություններ, որոնց այս կամ այն չափով, ավելի մեծ կամ փոքր ուժով, գրեթե ամենուր, ենթարկվել է Մշո բարբառը իր արդի վիճակում:

Ամենից առաջ զգալի փոփոխություն է կրել բարբառիս բառային կազմը:

Բարբառի բառային կազմից դուրս են ընկել մեծ քանակությամբ հնացած բառեր, որոնց անկալությունը պայմանավորված էր սոցիալ-անտեսական, հասարակական-քաղաքական որոշ հարաբերությունների գոյությունով: Այդպիսի բառերի թվին են պատկանում՝ ուէս, գ'ըզիր, զաբութ, քլոխվա, տանուտեր, լոււարար, ժամ-դոշ, աընօրնէք, խաչհամբուր, խոււնգ, նըշխարք, ժամհար, փաշա, նազիր, վէզիր, պաղարաք, պաս, ծոմ, փաշալըխ և այլն: Այս և նման շատ բառեր, ինչպես արդեն նշեցինք, դուրս են ընկել բարբառիս բառային կազմից, դրանք չեն գործածվում նույնիսկ բարբառախոս այն մշեցիների կողմից, որոնք գրեթե անաղարտությամբ պահպանել են իրենց բարբառը, սակայն այստեղ նկատվել է մի հանգամանք, որի մասին ցանկանում ենք հիշատակել:

Եթե վերոհիշյալ և նման այլ բառեր չեն կիրառվում իրենց նախնական, իսկական իմաստներով, ապա հարատևում և գործ են ածվում փոխարեքական իմաստներով, դարձվածքների, ասացվածքների, առածների և պատկերավոր խոսքի մեջ: Բերենք մի քանի օրինակ:

Մեկին բնորոշելու, գնահատելու, ծաղրելու համար բարբառախոս մշեցին շատ հաճախ է գործ ածում՝ «չըմալ կըքէլէ, կըսիս գ'էղի տանուտէրն է», «չըմալ կըբօռա, կըսիս գ'էղի ուէսն է», «գ'էստավօրվէր էր, ըսիս ժամ կէրթէր», «չընգէր է տներ, կըսիս աընօրնէք է», «սաբախտըփէ հըրի չիրգուն ման գիքա, իմալ օր գէղի գ'ըզիր էղի», «իւրշումէ հաց տըվէց, ըսիս նըխարք է» և այլն:

Բարբառիս բառային կազմը համարվել է զգալի քանակությամբ նոր բառերով ու արտահայտություններով, որոնք առաջացան սոցիալիստական նոր արտադրությունների, նոր պետությունների, սոցիալիստական նոր կուլտուրայի, նոր հասարակու-

թյան, մորալի երևան գալու կապակցությամբ, վերջապես տեխնիկայի ու գիտությունների աճման կապակցությամբ:

Այնպիսի բառեր ինչպիսիք են՝ սոցիալիզմ, կոմունիզմ, կոլխոզ, սովխոզ, կատարածու, ցրիչ, նախագահ, գլուղսովետ, աշխօր, կոմբայն, սերմնացան, զրասենյակ, կոոպերատիվ, վերաստուգիչ, վաճառք, զերածախս, հաշվառք, մթերում, դիմում, ղեպուտատ, կոմունալ, քաղվաճակ, նիստ, սերգազ, տրակտոր, հեռախոս, ուսկոմ, պրիոմնիկ, փոխանցել, գուլք, բալանս, կարգապահություն, միություն և այլն դարձել են գործածական բառեր:

Հնչյունաբանական բոլոր երևույթները, որոնց մասին մասնաբանաբան խոսվել է «Հնչյունափոխություն» գլխում, գրեթե պահպանվել են մինչև այժմ: Բարբառախոս հայերի արտասանական ունակությունները համարյա չեն փոխվել, և բոլոր նոր բառերը, որոնք մտել են բարբառի բառային կազմի մեջ, ենթարկված են բարբառին՝ հատուկ հնչյունափոխության:

Բերենք մի քանի օրինակ.

Կատարածուն արտասանվում է կաղարածու, կոոպերատիվը՝ կօբէրաղ, նախագահը՝ նախագալ, ղեպուտատը՝ դէբուդաղ և այլն:

Մեծ դիմացկունություն են ցուցաբերել քերականական-ձեվաբանական միջոցները: Գրեթե նույնությամբ պահպանվել են հոգնակերտ մասնիկները, հոլովումները, խոնարհումը, բայի կերպերը, բայի կազմության եղանակները, հոգերը, ածանցները և այլն: Դեռ այսօր էլ մշեցին, որի բարբառային բառապաշարը զգալի փոփոխությունների է ենթարկվել և որը ձգտում է գրեթե գրական հայերենով խոսել, անպայմանորեն խոսքի մեջ կօդտագործի իձան, ձիան, նախագէստան, ծօվու, արդէրու, գ'ացի, գ'ացինք, ցուցուցի, մօղէցուցի, գ'ըրուգ, բ'ընուդ, կօբէրաղչի, յընդրութեն և այլ բառերը, որոնց մեջ պահպանված են բարբառի քերականական և հնչյունաբանական հիմնական առանձնահատկությունը: Բարբառս արդի վիճակում գրեթե նույնությամբ պահպանել է շարահյուսական այն բոլոր առանձնահատկությունները, որոնց մասին խոսվեց «Շարահյուսական մի քանի դիտողություններ» գլխում:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Յ

1. ՏԵՔՍՏԵՐ

ԳՒՐԲՈՐ

(Հատված)

Գ'էղացի Համբո տուն կրտիվ էր յընդի: Համբոն գուգէր գուր տըսվէրգու տարէգան Գ'իրքորին տանէր քաղաք, գ'օրձիմէ իղէր, օր մարթ գ'անէր, գ'աղէր ու բ'անէր:

Կընիգ չուգէր:

—Ձէ, չըմ յուգի, իմ մաղղաշ ճըժուն ինա գուլում ախշար մը թալէ, չուգիմ,—գիւէր կընիգ:

Բըլէ Համբոն չըլըսէց:

Աղօթբան էր, դալիւ աղօթբան մէ:

Տընէցիք ու գ'ըրղըցնէր էգան հըրի գ'էղի ծէր, Գ'իրքորի թըշնէր պաքէցին ու ճամփու գ'ըրին: Քուր Զանին գիւէր: Պըղղիգ ախպէր՝ Գալօն մոր գ'ըրղէն կըբօռէր:

—Գ'իրքոր, ըգի գ'ո՞ր է կէրթաս, հէլ Գ'իրքոր:

Գ'իրքոր շուգ-շուգ լիգ կըգ'անէր, կըՖըբէր, կըտէսնար, օր գ'էղի ծէր կախուգ ին ընոնք ու ուր մամ գուր միգրով կըսըրիէր յաչքեր: Էմլան հօր կըշտով կըվազնէր, լա թէ չէ յասեչ գընդնէր: Մէգ լէ գուր յէղիվ իրիշկէց՝ գ'էղ չէրէվէր, մանցէր էր գ'արի յէղիվ: Ընդուց լիգ Գ'իրքոր լիգ գընդնէր:

—Արի, Գ'իրքոր ջ'ան, արի, հասանք, հա հասանք,— իսնչէլէն Համբոն գուր տըղէն՝ կէրթէր: Փիշին թալուգ էր խորշին մէ, մըչ խուրշընին քլանի մէ հաց, պանիր ու էրգու դաստա թութուն: Յիրգվան, սարէր օր գընցնէն, մէգ հաղ լէ էրէվաց ուրանց գ'էղ, մըժի մէչ, հէռուն:

—Ալ, ախօ, մըր տուն հէն է հա,—ցուցուց Գ'իրքոր մաղ գ'ըբա գ'էղ տընգէլէն:

Գէղ չէրէվէր: Ուրանք յընցան:

Յառչի յիրգուն խօնախ էղան գէղ մէ: Տան տէր Համբօ հին ծանօթըն էր: Գէղին սամավար կըթըշէր վըր թախտի ծէրին: Ձէէլ ախչից մէ խաաքներ շըրըխօցով-թըրըխօցով գըվըլանէր ու չալ կըստքէր:

Ընի կարմիր, խօրոզ շոր մէ ունէր դուր վըրէն: Գիրքոր յօնի դուր մըղաց մէչ էղի՝ լիփ օր քաղքի մէչ փարա վաստըգէ, Չանու համար էղ չէշիգ շոր առնէ, խըրգէ:

Մէղէլ օր քաղաք մըղան, յիչան չարսուն:

—Բ'իձա, իդա ճըծուն խըզմաթքլար չըս՞ իդա,—գուքնի միչէն հարցուց վաջառագան մէ:

—Հըրամանք իս,—ըսէց Համբօն ու Գիրքօրին հըլօնդէց ընդրա գ'ին:

—Բ'ի, տուր զիս, լիս կըվէրցում,—ըսէց գուքընչին: Ընդրան կըսէն շոր ծախոզ Արդեմ:

—Հինգ տարի գ'ըն փարա չիգամ,—ըսէց գուքընչին պահման կարէլու վախտ: Թէ գուզիս օղորթ յիմնաս, հըլա բ'ան մը լէ դու բըղի իդաս, օր քու օրթին բ'ան սօրվի, ախըր ունու զադ չըգ'ինա:

—Յո՞ւստ բըղի յիմնա, ադա ջան,—խեխճ-խեխճ ըսէց Համբօն: Օր գ'ինէր յօ՞րի կըբ'էրէնք յօդա, լիս լէ բ'էրինք օր բ'ան սօրվի:

—Կըսօրվի, հըմէն բ'ան լէ կըսօրվի:

—Իմ գ'արդ լէ էն է, ադա ջան, օր մարթ գ'անուս, լէզու սօրվի, գ'ըրի սէվ ու սըվդազ ջ'օգէ, նըստել-կախնել սօրվի, մարթ ձանչընա, օր ախշըրքի մէչ իմ պէս խեխճ ու կըրագ չըմընա:

Գուքընչին ըզՀամբօն միամըզուց: Յէլավ գ'ուրս, բանցըր ձ'էնով հրաման էտու:

—Չալ բ'էրէք, հաց բ'էրէք իդոց հարով:

Հէր ու օրթի նըստուգ ին հացատուն:

—Դէ մըղա քըղի տէսնամ, Գիրքօր, խուրբան, իշկիմ սանք ի՞նչ ջ'ուսա տըղա բըղի գ'ուս յէլնա քըզնէ: Հըմալ բըղի էնիս օր, լիս ինչ գ'ինամ:

Վախտ-բէվախտ յուդա-յունա չընգնաս, ձ'էտի յընգուգ փարէն քոռ ու փուչ չէնիս, հըզար ու մէգ պագաս-պագասթեն ունինք: Բըղի լէ լավ պալէ: Գ'իշեր չըբ'ացվիս, չըմըրսիս: Հացի կըզօրդանք ու քարթուն կիդան, կէրագըրի մանցուգ, շադ վախտ լէ ուրանք կուգին, քըղի չըն իդա, բ'ան չըկա, կարք ըզմալ է: Ի՞նչ էնինք, լաս, օր է, կըմըթնա, գընցնա:

Ու իղըմլա հէր խըրագ կիդէր ուր տըղուն: Բըլէ Գ'իրքօր թիզնէր էր ուր հոր ու քընէր էր*:

ԳՐԴԱՁՈՒՐԻԳ ՓԱՐԷՆ

ՍըռըՖուգ, ըխտիար, բուդալա հալ մէ գէլնա Մըշու, կէրթա Սըլաթ: Ճամփու մէչ կընըստի դուրան մէ, օր փըշումէ բին առի, մէգ լէ կըտէսնա, հանդէ ուր կուշտ ջ'ըվալ մէ օսկի է գ'ըբուգ: Հիրըմիշ կէղի, չըգ'ինա ի՞նչ էնէ: Ըսի մըջ ուր մըղաց կըմէգէ.

—Լիս ի՞մալ էնիմ իդա օսկիք. տանիմ Մուշ, յըմէնք լէ գ'իւնան, օր լիս փարա չունիմ, գիքան, կըզարգին գ'ըլխուսի, կառին, կըսին. լա գ'օղցէր իս, լա լէ չէ գ'ըղէր իս:

Իղըմլա ընի ուր մըտքէրու մէչ սըզուգ էր, մէգ լէ ձ'իավոր մէ էն գիուց կէրէվա, գիքա, ձ'ին կըկալնըցու ընդրա յառէչ, կըհարցու.

—Հալ, յօ՞րին իս իղըմլա շիվարուգ նըստի:

—Ադա,—կըսա ընի,—քըզնէ պալիմ, ասուց ի՞նչ պալիմ: Գ'ըղէր իմ իդա ջըվալ օսկին, չիշխընամ տանիմ Մուշ: Գ'ըլխուսի կիդան, կառին ընձնէ:

—Վէրու, խըտ յիրուր էրթանք, հեչ լէ մըվախէնա, յըմէնք լէ գ'ինան, օր լիս գանգին իմ ու շատ փարա, օսկէստան ունիմ:

Գէլնան ընդոնք, կէրթան Սըլաթ: Կըմըղին խալթախանէմէ: Ադէն օսկէստան կըտանէ, կըպախէ վէրի գ'իս, յինք գիքա, կընըստի խալթախանէն, կուշտ մէ կուգէ, կըլսմէ, ու խեխճ հալուն հեչ լէ յիսնի ախիս չըղ'նէ: Յեփ օր ուր ուղիլ-խըմել կըվըրցնա, կըհանէ քիսու միչէն պըլիգ մէ, կիդա խուարուն, կըսէ.

—Իդա լէ քու բ'էրօխէք, խեխճ մարթ իս, քըզի հացի փարա կէնիս:

Սեխճ, ըխտիար հալըն լէ գիլա, կօխպա ու իղըմլա լալման-օխպաման՝ կէրթա կընըստի ժամու գ'ուս: Մէգ օղօրմութեն կիդա, մէգ՝ չիդա: Բըլէ ընի տան լէ գիլա, չիդան լէ գիլա:

Շարագա կընիգ մէ կըտէսնա, օր իդա խեխճ հալ գիլա ու գիլա, արտսունք էղէր է ծով, կէրթա, մօզ գիքա, կըհարցու.

—Յօ՞րի գիլաս, հալ, հըլբաթ քըզի դարդ մէ կա:

* Բարբառի վերածեց Մշո Հացեկաց գյուղացի Սալաղը (Հացեկա Սալաղ), բնակվում է Թալինի շըջանի Յամաքասար (Սուխըզ) գյուղում:

Հայ թարիֆ կէնէ ուր գ'ըլխու յընցուգ, կընգան նըշանց կիզա աղի տեխ: Կընիգ գ'ու կընիգ էղիս, ըմալ կընիգ է, օր տասա տըղամարթ ըժէ, կընաքի տըղամարթու հայալ, գիքա խալֆախանէն, կընըստի աղի կուշու:

— Ի՞նչ տէղէն իս, — կընարցու կընիգ:

— Բ'ուլանըխա իմ, — կըսա աղէն:

— Բ'ուլանըխա մէգ մէ ըսիմ կընա՞նչընաս:

— Յօրի՞ չըմ ճանչընաս:

— Բ'ուլանըխա բազըրղընին կընանչընաս՞: Յօղա ընդրան իրեք ախչիգ կա: (Ըսիմ, օր չըմօռնամ, կընիգ յիմցէր էր, օր աղէն բազըրղընի տըղէն է):

— Ի՞նչ կըսես, լես լէ բազըրղընի տըղէն իմ:

— Յըբա իմա՞լ չըս գ'ինա քու քուրվըղոց տեխ:

— Իմ յառչի մամ մէտէր է, իմ յէգի մամ լէ ձի օր չըսըվէր է, թարիֆ չէրէր է, լես յո՞ւստ յիմնամ:

— Լալ, — կըսէ կընիգ, — գ'ու մանցի յօղի, լես էրթամ ըզքու քուրվըղոց բ'էրիմ:

Կընիգ կէրթա, էմլան կընաքի ուր շօրեր, խութնին ու գ'ալմէն, չուխա միգար, կըկարէ ուր սըրգանոց, կառի էրգու կընիգ լէ ուրիշ, ուրանց դ'ըրղըցնէրուց ու գիքա խալֆախանէն: Կըպաքին աղի յերսըններ, գընդնան ընդրա վըղոլ: Մենձ քուր կըսէ. իմ անուն «Գէշ է», մէգէլ ք'ուր կըսէ. իմ անուն «Յըմնուց գ'էշ է», մէգէլ լէ կըսէ. իմ անուն «Յնըր խաղամ է»:

Աղէն լէ ուր մարիֆաթ կըցուցու. կըբ'էրա, սէղան կըբ'անա, կուղին-կըխմին: Աղէն յըմալ կըխըմէ, օր էլ չըկլառնա ուր օղաց վըրէն կալնի, օղներ գէմմէ կէրթան, գըլօխ՝ դ'էմմէ:

Գէլնան քուրէր, կըաղըլօղցուն գաղէն, բուխէրիղէն մուր կըբ'էրին, կըքըսին աղի ջ'ան ու ջ'անդադ, յերսըններ, ծամեր կըբ'ըրի-ըրշկըցուն, կառին գօսկէստան, կէրթան, կիզան ուր տիրոջ:

Լուսու դ'էմ խալֆախանչին գիքա, օր օթիւըններ յիսարգէ, աղէն գիմնա, բաղին ու գինին թափէր է գըլխուց:

— Յու՞ր է Գէշ, — կըսէ խալֆախանչուն:

— Գէշ դու իս, քըզնէ գէշ էլ վո՞ն է, — կըսէ խալֆաչին:

— Յո՞ւր է Յըմնուց գէշ:

— Յըմնուց գէշ լէ դու իս:

— Հըբը՞ Յո՞ւր խաղա՞մ:

— Յուր գուղիս խաղցի, ծըռուն խաղաուն կըպա՞կաի, — կըսէ խալֆախանչին ու կէրթա ուր գօրծին*:

ՅԻՄԱՍՏՈՒՆ ՄԱՐԹԸՆ

Կէղնի շաղ փայաչի մարթ մէ: Ըգի յըմէն գ'ախ ուրին յիմաստունի տեխ կըղընէ, կըսէ.

— Յես էրգինք ու գէղինք քընընէր իմ. օրըրէր իմ. գինամ թէ հօղաղընդի վըրէն քընի տէսագ հաշիպներ կէղնի:

Օր մը լէ, տուն մէ խօնախ կէղնի, էմլան կըկըցէ ուր գըլօխ գօլալ: Տանտէր կըսէ.

— Շաղ աղէգ, մըղա կըտէսնանք:

Կըխանչէ ուր կընիգ ուր մօղ, թամբի կէնէ, օր ընի բէրէ էրգու բ'ափուշ, էրգու գըթալ ու քասէմէ մաձուն: Կընիգ կըբ'էրէ էղ չըմէն, խօնըխին կըսէ. դու քու բ'ափուշ բ'ըրթէ, լես իմ բ'ափուշ: Էրգուս լէ կըբ'ըրթին ուրանց բ'ափըջներ: Օր կըբ'ըրթին, կըթըմին, տանտէր լալ կըխասունէ ըզբ'ըրթուգ քասս մաձուն ու խօնխին կըսէ.

— Գու քու բը՛րթուգ կի, լես լէ՛ իմ:

Յիմաստուն կըսէ.

— լես բ'ըրթուգներ յիրարուց իմա՞լ բըղի ջ'օղիմ:

— Է, — կըսէ տանտէր, — գ'ու օր էրգու բ'ըրթուգ բ'ափուշ չըկլառնաս ջ'օղիս, հըբա իմա՞լ բըրղի ջ'օղիս հօղաղընդի հաշիպներ**:

ՓՈՒՇ՝ ՓՈՒՇ Է, Բ'ԸԼԷ ԻՔՐԱՄ ԱՆՈՒՇ Է

Էրգու գէվա խըա յիրուր կարձէն: Դէվէստանուց մէկ փուշ քաղէց, տըվէց ուր յընգէրուշ: Յընգեր շիվարուգ մընաց, գ'աղցալ հարցուց.

— Էղ փուշ յօ՞րի տըվիր ընձիգ, լես լէ էղ փըշէն է կուղիմ: Էն մէգէլ գէվէն դաոցալ, ըսեց.

— Գինամ դ'ու լէ էղ փըշէն է կուղիս, օղորթ է, փուշ՝ փուշ է, բըլէ իքրամ անուշ է***:

* Պատմեց Մշո Հուրընոց (Օրղընոց) գյուղացի Ափրո Մելրոնյանը (82 տարեկան), բնակվում է Աշտարակի շրջանի Ավան գյուղում:

** Պատմեց Մշո Մգրագոմ գյուղացի Աղնիվ Մելրոնյանը (80 տարեկան), բնակվում է Աշտարակի շրջանի Ավան գյուղում:

*** Պատմեց նույնը:

Կէղի ախքաղ մարթու կընիգ մէ: Բ՛օլուք մէ ճիժ կէղի ըզ-
րանց: Էդ կընիգ կըպարզի, թրժա տըղէմ լէ կըբ՛էրէ. ուրանց պա-
բագան քավոր կըկընքէ ըզտըղէն. օր մը լէ գիքա, սանամօր հար-
ցու, թէ ըսի ուր սըրդով ի՞նչ հագլա գուղէ, ի՞նչ բ՛էրէ ուրին
քավոր:

Կընիգ օր կըտէսնա քավոր մըղալ գ՛ըսու գ՛ընէն, յինք լէ
ուհու մերգ ու ուպրիան, շոր չըկա ուր հաք, հըղըղուգ միղար մէ
կարուգ է յառէչ, ամօթու կըմըղնա թունդիր:

Քավոր գիքա, կընըստի, կիրիշկէ չորս գ՛են, սանամէր չէրէ-
վա, բըլէ քավոր գ՛ընէն տէսէր էր, օր սանամէր մըղալ թունդիր:

Փըշումէ կընստի, ձէն կիդա, սանամէր թունդրէն ձէն կըհա-
նէ, կըզըրուցին, քավոր կըհարցու.

— Իմա՞ խութնի բէրիմ քըզի, սանամէր, օր քու սըրդով էղի:

— Իմալ կըբէրիս, բի, քավոր, քու օդաց մէտիմ, բըլէ փշու-
մէ բըրագ էղի,— ձէն կիդա սանամէր:

Քավոր լէ աղէգ գինա, որ սանամէր ուհու շոր մէ չունի ուր
հաք, ուհու մերգ ու չըփլախ է, ըզրա յարով է մըղի թունդիր.
կըսէ.— Սանամէր բըրագ, բըրագ, խընչ թունդրան կօղե՞ր լէ բըրագ*:

ԱՓՕ, ՔՐՆԻ՝Մ ՈՒ ՔԱՂԵՄ...

Մըշու Հացիգ գէղ մարթ մէ կէղի, էդ մարթուն բուդալա,
գօթի տըղէ մէ կէղի: Էդ տըղէն ուհու չուղէ խըղմարթ էնէ, խուա-
րա, խըռըֆուգ հէր միշագ էդ տան յըմէն գործ կէնէ, հալէն զըն-
զընա, գիքա տուն:

Մարթու յարգ հասէր է, չըկլառնա միշագ քաղէ. օր մը լէ
տըղէն կառնի, կըտանի, ուր հեդ յարգ, կըսէ, օր բըղի քաղինք:

Տըղէն կըկալնի մըչ յարդին, կըսէ.

— Ափօ, կալնի՞մ ու քաղիմ:

— Քաղէ, լաօ, իմալ գինաս, քաղէ.

Էրզու գէրընդի կըզարգէ տըղէն, կըդառնա, հօր կըսէ.

— Ափօ, նըստի՞մ ու քաղիմ:

— Քաղէ, լաօ, իմալ ք՛աղիս, քաղէ:

Կընըստի տըղէն, քընի մէ գէրընդի չէշիգ մէ կըզըրգէ ու
կըդառնա, ուր հօր կըսէ.

* Պատմեց Բուլանիսի Կոփ գյուղացի Իֆօ Սուրբուզի Տոնեյանը (Թա-
փայցյանը), 92 տարեկան, բնակվում էր Երևանում:

— Ափօ, պարզի՞մ ու քաղիմ:

— Քաղէ, լաօ, քըզի խուբան, իմալ գինաս, քաղէ:
Բ՛իմ լէ զընցնա, տըղէն կըսէ հօր.

— Ափօ, քընի՞մ ու քաղիմ:

— Քաղէ, քաղէ, քու պարու պատեգ...,— կըսէ պար, քաղէ,
իմալ գինաս, քաղէ*:

ՎՈՆ ԿԷՐԷՐ Է ՓՐԼԼՎ...

Ալաշկերդա մէչ մարթ մէ կէղի: Էդ մարթուն մէգ թաք
տըղա կէղի: Տըղէն լէ պըզդիդ, տըսվիրեք տարէգան: Մարթ ու կը-
նիգ կըմէզին տըղին շուգ կարքին, օր օշխի մուխ վառ պալէ, ու-
րանց յանգաջ լէ թօռան ձէն յընգնա: Կէրթան, ուրանց գ՛ըրացու
ախշիգ գուղին էդ տըղին:

Գիքա հարսնըքի օր: Խեղճ պըզդիդ տըղէն հա հուդա կըվազ-
նէ հա՛ հունա:

— Տղա, Բ՛ըրսօ, քէլա սանամօր խանչա:

— Տըղա, Բ՛ըրսօ, լօ՞րի չը գացիր հօրքուրօջտի տուն:

— Տըղա Բ՛ըրսօ, լաօ, գ՛անցիր Սըրքէ տուն:

Իզըմլա՛ տըղա հա տըղա, տըղա հա տըղա:

Կէս գիշեր կէղնի, անշախ բուդալա տըղէն կընստի քուրսու
վըրէն՝ անօթի, բէզըրուգ: Ինչ կա չըկա, ճաշ, փըլալ յըմէն բան
կերած ին, յիստըղի. կընստի, ու չըբ՛ինա՛ ի՞նչ էնէ:

Լուս բացվելուն մօդ կէղնի, խօնըխներ կէրթան: Տըղի մամ
գիքա, կըսէ տըղին.

— Տըղա լաօ, յօրին՞իս նըստէր իս, քէլէ, գընա հարսի մօդ
քընի, քէլէ, լաօ, քէլէ:

Դանագ օսկըռին է հասի: Էլ տըղէն չըբ՛ինա ի՞նչ էնէ, հէր-
սօդէր է.

— Գընա,— կըսէ մամուն,— յիզըմլա ու յիզըմլա, լիս լօ՞րին
էրթամ հարսի մօդ քընիմ, վոն կէրէր է փըլալ, ընի լէ թըլս էր-
թա քընի**:

* * *

Նոր նոր նօրէ գիս,
Կօզոճ յէլի կուղէ գիս,
Կըզրէ-թալ, չուղէ գիս:

* Պատմեց մշեցի Ափրո Նարեյանը (89 տարեկան), բնակվում է Ալազյազի
չըջանի Գյոզալդարա գյուղում:

** Պատմեց մշեցի Բազրատ Մանվելյանը, 98 տարեկան, բնակվում
է Վրացական ՍՍՌ Բողզանովկայի շըջանի Դիլիֆ գյուղում:

Հարան լարան,
Մազէ լարան,
Յըմնուն տարան,
Քըզի չըտարան:

ՎԱՅ ՊԱՌԷԳՍԻ...

Խեխճ, բուզալա, օրվա հացի կարօզ մարթ մէ կէդի. ուր օր մը չ-
կութեն էնէլէն գընցու:

Օրէրուց օր մը լէ իդրա տէր լանդէմէ կըզարգա ըզրա փօրուն:
Իդա մարթ կըթօրգա գուր փոր, կըբ'ընա գուր պառեզ ու կըճըվա.

—Վալ լըմընօ, իմ պառեզ ջ'արթավ,— ու գիլա:

Գիքան, կըթօղվըվին, կըհարցուն.

—Հալ, գու ի՞մալ կըսիս վալ իմ պառեզ ջարթավ, մենք հօ-
դա կալնուզ ինք, ընի քու փօրուն գարգէց:

—Է,—կըսէ մարթըն,—օր իմ պառեզ խալիմ էզներ, վո՞ն կըո-
նէր իմ փօրուն գըրգէր, պառեզ չունիմ, ըզրա հարով լէ կըզըրգին
փօրունի*:

ԳԻՆՆ ՎԸՐ ԳՐՄԳԻՆ Է

Մըշու մարթ մէ գիքա, կէրթա Խընուս, վըր ճամփուն գէդէ-
մէ չընցանալու գախ կիրիշիէ, յանդէ, տանմէ կուշու, կանաչ յար-
դի մէ մէչ գառ չընգուզ կարձա.

—Հալ, յօ՞րին իս թօրգի, խօրօղիզ յարդ կարձա,—կըսա տի-
րուն:

—Հոք մուդէ, ախպէր,—կըսա տանտէր,—գին վըր գըմգին է**

ՍԱՆԳ ՎԸՐ ԹՈՒՆԴԻՐԱՆ

Յես Աբըլըուարա իմ: Մըր գէդ Յըրօնքա լէ կան: Յըրօնք ու
Աբըլըուար իմալ օր իդա տէխէն, մըր գէդէն՝ Սուխըզվա էրթաս:
Չարընջի, բըլէ մըր էրդիր գուրան էր, հօդա մըր հօքու հօքին յէ-
լավ իդա քար ու քըռի մէչ: Օր կըսիս, քըզի բան մէ թարֆ էնիմ,
գու գ'ըրա մը զ'ըրքէրուն: Չըմ գ'ինա, լըսէ՞ր իս, թը չըլըսէր իս

* Պատմեց Ռըստամ Գէդուկ գյուղացի Գուշո Տոննի Խուրշուդյանը,
70 տարեկան, բնակվում է Թալինի շրջանի Ցամաքասար գյուղում:

** Պատմեց նույնը:

Աբըլըուարա Ալօ խըսէն: Թէ չըլըսէր իս, լես խըսա էնիմ, գու յան-
գաշ էրա:

Ալօն օր կէր, զիմ պարէն էր: Ընի օր ըմալ գօր ու գօրըն-
դեզ էր ընդընէ էր, օր տարէգան հինգ հազ կէրթէր Սըփի Կարբեզ,
մէննիմ էնոր գօրութէնին: Օր մը լէ Սըփի Կարաբէզու գիքա, ուր
հեզ խօնըխներ կըբերա տուն: Օլոր օր գէլնան, խօնըխներ, կըսին օր
մենք արէվմըղօցին կէրթանք: Ալօ մամ կըբերա գ'աթա կըհուն-
ցա. խօրիս կէնա, բըլէ էզ չըմէն յուշիզ-յուշիզ կէնա, իմ հօքին չը
կօրում, չըմ գինա յօրի կանքըցու:

Գընցնա վախա մէ, խօնխըներ գէլնան վըր օդաց, Ալօն կըսէ
ուր մամուն.

—Մամօ, գ'աթէք գ'օր ին:

Մամ կըսա:

—Ալօ, լաօ, գ'աթէք թունդիրն ին, գըռ չըն էփէր ի:

—Հըդմալ,—կըսա Ալօն,—Յօրի շուզ չըկօղիր, գու գինէր օր
խօնխըներ կէրթէն:

Իմ հօր տուն սանդ մէ կեր, օր տաս գ'ըմէշ չըկլառնէն հա-
նէն գուս. կուշամանի, կըվէրու ըզսանդ ու կըգ'ընա թունդրան վը-
րէն, գէլնա գուս:

Տընէցիք գիքան՝ կէդնին վաթսուն-յօթանասուն ջան արդա-
մարթ, գիքան, տէսնան ինչ, տէսնան օր սանդ հանդէ թունդրան
վըրէն գըրուզ, գ'աթէք ալաֆլամիշ, բոց չընգի ուրանց, կըվա-
սին:

—Ալօ,—կըսէ ուր մամ,—կարիմ ըզքօ պագանք, սանդ յօ-
րին իս գըրէր իս վըր թունդրան:

—Լավ իմ էրի,—կըսէ Ալօն,—յօրի՞ գ'աթէք վախտին չը-
կօղիր, օր հասնէր խօնըխներուն:

Ինչ կէնին-չէնին, սանդ չըվերու: Հանդէ, հարի սօր լէ սանդ
գըրուզ վըր թունդրան*:

ԱԲՐԷՐՈՒԱՐԱ ԱԼՕՆ ՈՒ ՓԱՅԼԷՎԸՆԵՐ

Մըր գեն բէզըզ էր, թաքավոր չըկէր. բամէ օր կէդէր, գիքէն
բ'էզի կուշու. կըհարցուցէն, ընի իմալ օր կըսէր, ըմալ կէնէն:

Օր մը լէ, էրգըրէն մէ բէզի մէ փալլեվան գիքա, մըր բ'էզին
կըսա.

* Պատմեց Մշո Աբըլըուար գյուղացի Ազազնի Օհանի Հակօրյանը (70
տարեկան): Բնակվում է Թալինի շրջանի Ցամաքասար (հին՝ Սուխըզ) գյուղում:

— Մըզի լա գուլաշ կիդաս, լա՛ մաշ (հող, տերխորիա):

Մըբ բ՛էգ էլ զիդա-զինա չիբիշկա, գիքա զէմ ու գ՛ուզ Ալօ մօզ, կասա.

— Ալօ, համլա-համլա բան. փալէվըներ էգաձ ա, կըսին մըզի լա գուլաշ կիդաս, լա՛ մաշ. չըմ գ՛ինա, իմալ էնիմ, ինչ ջուար իդամ:

Ալօն կասա.

— Գընա, ճամփըցու, թըխ յիքան յօդա:

Բէգ կէրթա, ըզոնց կըճամփըցու, գիքան մըբ գ՛էգ:

Է, գ՛արուն է, չըթվան յէլաձ է դաշտ. քու տիրոջ տուն ադօլի, դաշտ զէմ ու դուզ, յօնցկա հարի յօնի էրթիբ հարիբ յախապուր գէնար քու յառէչ. յախպուր լէ ինչ յախպուր, չըկառնիր կըթխէմէ խըմիր:

Հա, մօոցա, ինչ է կըսէնք. Գիքան փալէվըներ, կըտէսնան օր հանդէ օանչպըրներ չութ է կէնին: Ալօն լէ չըթվանու հեզ կէրթա, գիքա մըչ դաշտին:

Գիքան փալէվըներ, կըհարցուն.

— Տղէկներ, լաօ, դուք չը՞ք գ՛ինա Ալօ տուն դոր է:

Ալօն էլ չըկալնի, կըվէրու յարօր էզներով ուր աչ ձ՛եռք ու կըցուցու, կըսա.

— Հանդէ, իդա զէմի խուրէն օր կէրէվա ըզի է Ալօ տուն: Փալէվըներ, օր կըտեսնան, ուրանց գ՛ըլսու խուրէն կըվէրցըվի: Հըմը հօնցկա կըգ՛տանան, կէրթան ուրանց գ՛էգ*:

* * *

Լաօ, քըզիզ ըսիմ, օր ավդընաս. մընք մէր էրզիր ծուռ, քոռ, քաչալ չընք տէսէր ի: Հուռլաթի տարին լես թամամ տըղա էնք, իմալ օր սօր, միտքսի գիքա, լես գ՛ացէր էնք Մըփ Կարաբըղա վանք. մեհնիմ ընդոր զօրութէնին: Ծուռ մէ բէրին, յըմալ կըթըխտըփէր, հըմալ կըթըխտըփէր, իմալ օր դու ըզ տավար մօրթիս. թամամ լէ, չըմօրթիս. կիսազ մօրթիս ու թալիս գ՛էգին:

Ժօղօվուրթ յըմալ էր լըքցուզ, յըմալ էր լըքցուք, օր ասելի թալէր, տեխ չէնէր:

Էզ ծուռ թըխտըփաց, թըխտըփաց, մէգ լէ տէսանք, յէլալ, կալնալ վըբ օդաց, ինչ օր մօրէ մէգ էզնէր, ինչ օր ունա հիվըն-

* Պատմեց մշեցի էլիկ Գրիգորյանը 102 տարեկան: Բնակվում է Թալինի շրջանի Յամաքասար գյուղում:

գութեն տեսուգ չէզնէր: Գօմուզներ մացին ուրանց տեխ կալնուզ, չըն գ՛ինէ ինչ էնին*:

Կ Օ Դ Օ Բ Ո Ի Մ

Իդա բ՛իձէն Սօրդա է, լես Գ՛ունդամիրա իմ: Սօրդէն Մըփ Կարաբէղու բանցըբն էր, Գ՛ունդամիր լէ Մըփ Կարաբէղու ցածըբն էր:

Տըսնուհինգ թիվըն էր. վարթէվըրին մըզի կօզօրին, իդա գ՛ախ էր: Մըբ տուն տըսվերգու ջան ինք, միշազ լես իմ փըրցէր իմ, լես լէ ինչ հալով իմ փըրցի:

Առավօղն է, քըզի օր ըսիմ, մօղիզ էրգու հրզար, իրեք հըզար ջան էգան, չըկառցան գ՛էզ գալթէցին, բըլէ, թախտըփէցին, ինչ կէր-չըկէր տարան, աբրանք տարան, մալ ու տավար տարան, քըզիզ օր թարիֆ էնիմ, պըղընձներ լէ կառնէն, կէրթէն: Նէ ամօթ կէր, նէ՛ պաղիվ, նէ՛ թասիր, նէ լէ՛ խիխձ:

Մըբ գ՛էզ էրգու-իրեք հարիր տուն ին. փինաս պըզգի՞զ գ՛էզ էր, չէ թալինու լէ մեհնձ էր:

Օլօր օր մարթ մէ էգավ. քուրթ էր, ըսէց.

— Յես ձ՛ըզի ձ՛եռ չիդամ, ձ՛ըզի թասլիմ էրէք ընձիզ:

Առավ հինգ հարիր օխչար, հինգ հարիր օսկի, չորս խըսարազ ձի:

Ըզըրնէ ամիս մէ լէզ ըզի լօթանասուն ձ՛իվօրներ ուր յէզիվ քըցուզ, էգավ մըբ գ՛էզ:

Ժօղվէց յըմնուն, ըսէց.

— Մընք ձ՛ըզի ձ՛եռ չիդանք, ձ՛ըբ գ՛էրգաստան կըպալինք, մինազ տըղամարթիք թըխ յէլնան գ՛էզէն, մըզի զօրք է պետք:

Էզ հազ իրեք հարիր ջան տարավ, հազ մը լէ էգավ, էլի տարավ, հազ մը լէ էգավ, էլի տարավ. օր հարիր ջ՛ան, օր հիսուն ջ՛ան կըտանէն, էլ զինչ զըրուցիմ, տըղամարթոց քոք բէրէց:

Վախտ մէ յընցավ, տէսանք, հանդէ քըրթէրու հաք մըբ գէզացոց խըլըզներ, յիմցանք, օր յըմնուն տարաձ է մըբ գ՛էզի տագ, թըվընքաձ է:

Օր մը լէ էգան, աղօթըրնին, ժօղվին կընիզ, ճիժ: Մարթու միս օսկըրին ձ՛էն կիդա, օր միտք մըզի գընդնա: Լըցին մարքըրներ, գագազին լըցին վըբ ուրանց, վասին: Էրզինք ու գ՛էզինք կը

* Պատմեց Մշո Գվարս գյուղացի Համբարձում Ավետիսի Մկրտչյանը, 75 տարեկան: Բնակվում է Թալինի շրջանի Ջորագյուղում (հին՝ Թուրքի Փերթիքյան):

թըզէր, ձէն կիզէր, բըլէ ինչ ըսիմ, օր էդ անոամ, անաստված-
նեք, կախուղ՝ կըծիճղէն:

Հարի մեռնիմ, հարի թիզ մէ կանանչ յէլնա վըր իմ գ'երէզ-
մընին, լես չըմ մօռնա գէն, զինչ օր տէսէր իմ*:

ԸԶՔԷԼԸՆ ՈՒ ԶՅԵԶԱՐ

Գէլ գէլնա կօնդան գ'ըլօխ, ուր ձ'աք յէդէվէն: Գէլնան կօն-
դան գ'ըլօխ, կիշին, օխչըրի սուրուն հանդէ կարձա:

Ջաք կը հարցու մօր մօղէն.

— Մէրեզ ըզի ի՞նչ ին յօդա կըզըվըրնին.

Մէր կըսա.

— Ըզի մըր խօրագն է. զիքանք, մէգ-մէգ հազ կըզ'օղնանք,
կըսանինք, կուզինք, կարբըվինք:

Ջաք զարցավ, հարցուց.

— Հըբը մենք հօբի չընք շողնա. իզըմա քիչ ինք. չընք
էզնի իզրա խըզըր, էրզուսս ինք:

Մամ ըսէց ձ'աքուն.

— Էդ սիրդ օր իմ ու քու վըրէն կա մենք յօբի բըզի շադ-
նանք. իզա լէ շադ է, օր կանք**:

ԳՒԷՂԱՅԻՆ ՈՒ ՔԱԽՔԸՅԻՆ

Մէզ քախքըցի, մէզ գ'էզդացի կէզնին: Գէլնա գ'էզդացին հարի
օխչար կառնի, կիզա քախքըցուն պա, կըսէ. — պալա, ընձիգ քը-
զիգ կիսօլի: Մընաց գ'արուն, գ'էզդացին շիքէց քուլաք մէ մաձուն
բէրէց: Բ'էրէց, էգավ քաղաք: Քախքըցին տէսավ ըզմաձուն, շազ
ուրախցավ. հանդէ, կիշէ, սէր վըր էրսին:

Ըսէց.

— Գլալօ, մըր օխչար իմալ ին:

Քախքըցին զարցավ, ըսէց.

* Պատմեց Մշո Գունդամիբ գյուղացի Ներսես Բարսեղի Մովսիսյանը, 70 տարեկան: Բնակվում է Թալինի շրջանի Ջորագյուղում (հին՝ Թուրքի փրթիբյանդ):

** Պատմեց Բիթլիսի Արփի գյուղացի Ղազար Ղազարի կարապետյանը, 75 տարեկան: Բնակվում է Թալինի շրջանի Շղարշիկ (հին՝ Սըզարշի) գյուղում:

— Մըր օխչա՞ր, էլ մը հարցու. անքամ մէ էրզինք օրօրաց
ինքսուն հազ, — ըսէց, — սադգան, — ըսէց, — մացին տաս հազ. վեց
հազ տըվի խասբին, օր էս ինքսուն հազ օխչար մօրթէց, քըրթէց.
Իրեք հազ լէ հաշիվ մէնի, մը հաշիվէ, — ըսէց, — մանցէր է մէզ
հազ, զէդ լէ հանդէ, իմ տըզէն հըլուն շարէր է վըր ճագղին,
հեզ կըխաղա:

Քախքըցու սիրդ յէլավ, վերցուց ըզ քուլաք մաձուն, դարդ
վըր բիձու գ'ըլխուն, կօրձէց վըր գ'ըլխուն:

Քախքըցին ըզգ'ըլօխ շախիէց, ըզմուրքէն մաձուն էգավ թա-
փավ, — ըսէց, — փասք քըզի, ասված, մըր էրես էմլան սիվազ էղավ*:

ՏԷՐՏԷՐՆ ՈՒ ՄՕԼԷՆ

Տէրտէր յաչք կունէնա մօլի կընիգ:

Կըզըրուցա խըա մօլին, կըսա.

— Մըր ավէղրան էլ գօրէդ է քընց ձ'ըր խուռան:

Մօլէն կըդառնա, կըսէ.

— Ձէ, ըզի օղորթ չէ, մըր խուռնի պէս գօր ու գըրընդիդ
հեչ մէզ ասքութէնի մէչ լէ չըկա:

— Լավ, — կըսէ տէրտէր. — լես կարթամ ըզմեր ավիզրան, գ'ու
լէ կարթըցի ըզձ'ըր խուռան: Մըր կընզըզիք թըխ կախին, յանգաջ
զընին: Թէ զիմ կարթըլու վախա քու կընիգ էգավ զըրա ձ'ի, մըր
ավէղրան է գօրեդ, թէ իմ կընիգ էգավ զըրա քի, ձ'ըր խուռան
էլ գօրեդ է:

Ըսիմ, օր տէրտէր մօլի կընգա հեզ խօք մէզ էր. էրաձ:

— Լավ, — կըսա մօլէն:

Կըկախին զիս մէ իրիցկընիգ ու թըրքու զըռէն, գիխ մը լէ
մօլէն ու տէրտէր:

Մօլէն կըկարթա, գիբք կըխըլըսի: Հա թըխ կարթա մօլէն, իրից-
կընիգ՝ որ տէխէն չըզընդա:

Մէզէլ հազ տէրտէր կըկըցա կարթալ. օր կըկըցա կարթալ,
մօլի զըռէն հէզէն-հէզէն զիքա զըրա տէրտէր: Ընի կըկարթա ու
ըսի զիքա, տէրտէր կըկարթա ու զըռէն զիքա. զիքա, զիքա, կը-
նըստի տէրաբրոչ խեչ**:

* Պատմեց Մշո Հունան գյուղացի Արփի Մկրտչի Գրիգորյանը, 77 տարեկան: Բնակվում է Թալինի շրջանի Սուսեր (Ղլիջթաթաղ) գյուղում:

** Պատմեց Մշո Փըրիտու գյուղացի Հասրաթ Բաղդասարի Բաղդասար-
յանը, 68 տարեկան. բնակվում էր Թրիխիսիում:

2. ԱՌԱՄՆԵՐ, ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ, ԱՂՈԹՔՆԵՐ ԵՎ
ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՇՈ ԲԱՐԲԱՌՈՎ

Ս.

Աղէց յեզ լըձան տադ րէլու կէնէ:
Ագռավ յուղէց սինամհապքու շէշիդ քէլէր, համ զուր մօո-
ցավ, համ՝ զընդրրան:
Ամէգուն հէր, ասված էթմուն տէր:
Ախշար իմա՞լ գինաս. — իմ պէս:
Ախքադ իրիցու քարոզ մարթ չըլըսէ:
Անալուր խախք էր, մընաց՝ ալրօղավ:
Ախշար արօդ, յես մէչ կարօդ:
Անէժք էրգու բէրնէն սուր է:
Ախշըրքին էղա գէլ ու գազան, ըզբըզնէ ի՞նչ կէրա:
Ասված, գու թեկ էնիս, չըկըղրիս:
Ասպած ազադ էնէ իշու քուֆթից, լաբըստրըզու շուֆթից:
Աղվըսու փոբ սանշու զընդընա, փըշուր մէ կըմընա օր սադ-
գի, կըսին.
— Աղվէս իմա՞լ իս. կըսէ. — ըզտընիէսից օր լավ իմ:
Արեկ էղի, մարթու վըրէն չառնէ:
Արառիկ խըմոդ մարթ, էրգու գիր կըքէֆօզնա:
Ախշար օր վառի, մէչ մէզ խօրոմ խոզ չունի:
Ամէգու ճին ուր բախտի գօրա կըսիախի:
Ախքադ զախքադ չըսիրէ, ասված՝ զէրգուս:
Ասված օր կամէնա կադ լէ, կուր լէ հարս կէղինս:
Ասպած դարդ արվէր, դարման լէ արվէր է:

Ասված օր իղա, չըհարցու վի՞ր արղէն իս:
Ասպած հըրի գուռ մէ չըբ՛անա, մէզէլ՝ չըվազէ:
Ասված օր իղա մաղէմէ կիղա, օր չիղա,
ըզգութնի բ՛ընադից լէ կըկըզրէ, կըթալէ:
Ախշըրի մալ ախշարն է մանցի:
Անիրալ անէժք զուր տիրուն է:
Ախչիդ խըլղի տան ճըրաք է:
Ազար ախչիդ առ, օր ըզարբիցտի մըղնա:
Ավէր քախքին, շէն անուն:
Արախչիսի թօզոզ տէսար, գիցար ջ՛ախշըրա՞ն իմ:
Ամըւման արէվէն ի՞նչ հասկըցա, օր ճըմօղվա արէվէն ի՞նչ
հասկընամ:
Աբուր լէ թըլս արուր էղի, թըլս մարթու բէրան իրիցէ:
Ասված հախ չիղա նըհախին:
Ասալաձամոր տաղմէր էղա, հօղշոր ընձնէ յուղէց:
Ասխի ծըզէն յընցնաս:
Ախ էնիս, օխեշ չէնիս:
Ախշար խէր ու խընդում քու սիրդ չառնէ:
Ախշըզան օր մընա, լա ըզդըժօլչուն կառնէ, լա՛ զուռնըչուն:
Ասխի քըզի զարդ, նոր մախաթ՝ խըլղին:
Անճաշ կէղնի, անհաց չէղնի:
Ասեզ արնդիս, հով նըստիս:
Ախշըզա տուն զըժօլ ու զուռնա, արդու տուն ճէն-ճուն չըկա:
Ախչիդ օր կա ծագուզ հըլու է, գէղին չըմընա:
Ախչիդ մամուն կըրագ է, արղէն պարուն ճըրաք է:
Անաշխատ ճեռ յըմէն վախտ անօթի փօբու վըրէն է:
Անօթի մարթ քարն ա ծամէ:
Ախշար ալիրիլ դօլա է, բըլէ շիքիլ՝ չաթին:
Արէվով անձրիվ գիքա, գ՛էլ ի շուզէն ժուռ գիքա:
Ագըրվու բէրնով գարուն չիքա:
Աղէց արղին մէզ խաբար, աղէց ձիուն մէզ զանդու:
Ալըրի պարգ քընի զըրգիս, ալուր գէլնա:
Ախքադ զուր բով հաշաթ գինա:

Ամէզ հազք վըր ուր էրմին:
Ամէզ լեզ մէզ վարօցով չըքըշին:
Անդէզ մարթու հարով շըրն ու շաքար մէզ է:
Ասված շիքէ իմ հօր տուն՝ կեր ու կօրծէ,
ասված ավիրէ իմ կիսրոջ տուն՝ կեր ու վըլա:
Ամէզ ուրին հավան է, միզար ուրին ճավան է:
Ալնուն ճար կա, աղուն՝ չըկա:
Ամըովա շօքուն կըճէնջըրդա մըշկու հօքին:
Արուն արնով չըվլանան:
Աշնան ցուրդ գըմադ է, գ'արնան ցուրտ գանադ է:
Ադէզ տըղուն տուն մըշիքէ, գէլնա, կըշիքա, գ'էշ տըղուն
տուն մավիրէ, գէլնա, կավիրա:
Ախչիգ ոէսի տուն, ուր յաչք տիրու տուն:
Ամառ պարզիմ հօվեր, ճըմեռ խաղին կօվեր:
Անձրեվ ինչ կէնէ քարին, օր խըրադ ինչ էնէ չարին:
Ախլըրութէնի գ'ախ ախօր չէշիդ, առուտուրի վախա օգա-
րի չէշիդ:
Ադէզ մանուգ էդէր, ուր հոր պաղէն կախուգ կէդէր:
Անձրեվ օր հավէրուն ջ'ուր տըվող շադ կէդի:
Անօթութեն—անամօթութեն:
Անճեդ լէ լուս կըքացվի:
Ադէզ լօղվոր ճըգան փորըն է:
Ասված օր զարդըտուն լըսէ, վարթէվըրին ճուն կըգընէ:
Ագոի կեխտ ըգփօրուն գեղ չէնէ:
Ասված սար տէսէր է, ճուն գըրէր է վըրէն:
Անվլա բուրթ, անէփեղ միս, անհալել լեզ մարթ ուր իրգան
նշանց չիգա:
Անճար կէրէր է ըգբանշար:
Ախչիգ օր կա անկըդրել ճըմերուգ է:
Ասու բ'արէլագան կըրադ թափի վըէտի:
Ասու աչիգն ու խաչիգըն վըրէն էդի:

Ասված իդա հաց ու թան, գ'արման ու ցան:
Ասված յըմէն մէգուն ուր սըրդով իդա:
Անաստված տեխ նըստի, անմարթ տեխ մընըստի:
Արտսունք զարտսունք կըքէրէ, քուն՝ ըղքուն:
Անբախտ ախչիգ վըլացք էրէց, վարթէվըրին ճ'ուն էգալ:
Ախքըդի կով թըխ հըղի էդնի, լեփ կըժընի, թըխ ժընի:
Ալնի էր, խանձրահամ լէ վըրէն տըվէց:
Ամէզ մարթ կըրադ ուր բ'աղըրջի տագ կըքաշէ:
Անէր ու փէսէն, վալ թըթվի քասէն:
Աձան հավ կըշկըշան կէդի:
Արէստ օր կա, էփուգ հաց է, մարթու ծոց գ'ըրուգ:
Արուն ջ'ուր չըդառնա:

Բ

Բուրթ կընդէր է, յընգէր է գ'առներ:
Բան օրվա մէ, խօսք տարվա մէ:
Բախտ հարցուց մարթուց.—ջ'օ՞չուց յիքամ թէ՛ պըստըկուց.
ըսէց.—ջ'օչուց յիքաս լավ է քանց՝ պըստըկուց:
Բէք'ախտ մարթու ճ'ին շատ չըփախի:
Բօշի ախչըգան տարան, գ'ըրին վըր թ.սքվօրի թախտին,
ըսէց.—յո՞ւր է իմ տուրիդ:
Բուխէրիգ ծուռ լէ էդի, ծուխ շիդագ գէլնա:
Բըրին ուր տիրուն ցավ կիդա:
Բէրէր է, դավին ըգգըթըով կըջ'ըրէ:
Բախտսի գիլու ցէդէն էր, գ'որ գացի, «հալ, հալ»-ն յէ-
դէվըն էր:
Բէրանսի մենձ, քիթսի ագուգա, ինչ օր ըսին, վըրէսի գիքա:
Բօխ ինչ խըզըր սէլրագ ցանխս, բ'նդ գըլօխ գիքա:
Բուք ու սըխսըխ, ախքըդի կէրուգ սոխ:
Բօշի տո՞ւն ու նըխշուն սո՞ւն:
Բըրին բըրին կըքանա:
Բարէկամ չէրթալ գալով խագալ, լագ էրթալ գալով ք'արէ-
կամ ցալ:

Բարեկամ գրվածքի կիրիշիէ, դուշման՝ գողնէրուտի:
Բէրնէ բ'երան, հըզար բ'երան:
Բըզու գրվածքն գամփօսով չըզըրգին:
Բօրից վոզ չըմէն գ'ախ լէ սօլկըրի գ'ուռն է:

Գ

Գինոզ օր գ'ինա, խըչ մագ կըր'արգընա, չըգ'ինոզ օր չըգ'ի-
նա՝ խըչ գ'երան կը հասարնա:
Գըթլով քօմի, շէրփով ցըվրի:
Գագրէն սավաձ կիդա, բըլէ մարթ բըդի քօմէ:
Գընա լօթ հէվու վըրէն, մէրթա մէզ սէվու վըրէն:
Գէդի մէռէլ գ'էզ կըթադին:
Գուրիս շան գ'ըլօս գ'իլու փորըն է:
Գէդի տըդին, գ'էդի ախչից գուզին:
Գորձ իշու պէս բ'ան մէ, քըշիս՝ կէրթա, թօրգիս՝ կըկախի:
Գոզ օր տընէն էդի, լիզ յէթըզէն գէլնա:
Գէդի օսկոս գ'էդի շան կըհասի:
Գէլ թալէց մըչ օխչըրին,
ըսին.—վալ մէգի տիրուն:
Գէլ ինչ գ'ինա, օր ջ'օրին գ'ին ունի, կըզարգէ, փոր կըթափէ:
Գիդունին գ'էրի էդի, անգէդին սիրէլի մէդի:
Գուս քօզու մէչ քըվզէ (բէլու է):
Գէչ կընից նազ կէնա, գ'ինա իրից հազ կէնա:
Գըմշուն ըսին.—ի'նչ խըզըր կարրիս. ըսէց.—ձ'էթն ու ջ'ուր
գ'ինան:
Գըրոզ էձ յախպըրի ազ ջ'ուր կըխըմէ:
Գօթի մարթու լէզուն յէրգէն կէդի:
Գէլ պառվու էձ կէրավ, պառավ ըզթաքավոր անիձէց:
Գէչ պահոզ գ'օղան չընգիւր է:
Գիշէրվա քուն գ'ըմագ է, ցէրէգվա քուն գ'անագ է:
Գիքա լօթ սարի տըզէն, չիքա մէզ քարի տըզէն:

Գօմշատիրոջ կաշի փոխ կիդան:
Գըդէր է անշուն գ'էզ, անփէզ ման գիքա:
Գիդուն աղվէս էրգու օգնով գ'ընգնա տօմըկ:
Գըզիր մըհանէ սէսի շալագ:
Գոզ վըր խըզին շըքով է:
Գարէ հաց, թըթու թան, պարէն ուզէ, էրթա գ'ուլթան:
Գէզ վըր գ'էդին կէդի, տուն վըր տան չէդնի:
Գիլու ձ'աք տան մաղըրս չէդի:
Գագ մէ չէդի, մագ մէ կէդնի:
Գիլու հեզ գ'առ կուզէ, աիրու հեզ քվալ լըմընօ» կըսէ:
Գէչ գ'ըրգից գ'ըրգիցին հաշըթի տէր կէնէ:
Գիլու ընուն ու օսկոս:
Գիլու անուն է յէլի, աղվըսներ ուրանց դըրբ գարգաձ է:
Գիլու ոըրիս ուր օգնէրու վըրէն է:
Գէլ անօթնէ չկլառնա սար յէլնա, կըսին.—միրաթ յիմալ է
կէրի, օր չկլառնա սար յէլնա:
Գէչ տիս պարգոզ գ'էչ էրաձ կըսէնա:
Գահ իշուն կորմիր հըրուն:
Գօլ լէ ուր ձ'եռն է, գ'օպալ լէ. ուր յուզուզի չէշիզ կըզարգէ
ու կըխաղա:
Գէվին ըսին.—վոն կրագ թալէց քու ջ'ան, ըսէց.—լիս.—Գէ
քաշէ, հօքիտի յէլնա:
Գէվին ըսին.—քու վիզ ծուս է. ըսէց.—իմ ի'նչն է գ'ուզ օր
իմ վիզ ծուս է:
Գէվին հէձէր է, կուզէկուզ կըխափի:
Գուզ խօսք լա գ'էդի ծըսուց գիմնաս, լա՝ ճըծուց:
Գուզ խօսք իշուն կըսին:
Գարցէր ին օց ու լաղլագ:
Գըսէն էզէր է, ըզնէրսուն գ'ուրս կէնէ:
Գէվին հարի գըծոխք չըցուցուն, արքալուլթին ուր միզ
չընգնա:
Գուշմընիս մեռնիլ մըսէ, ախպօրէն բ'աժվիլ ըսէ:
Գարգագ սէլ շաղ ձ'էն կըհանա:

Դէվէն զուր փաշնից կուղէ:
Դանգըրին զանագ չէղի:
Դարդ վըր դարդին, Հօռոմ լէ պարգի, ախչիդ է բ'էրի:
Դանագ ուր կոթ չըտաշէ:
Դէվէն ուր վոդ շադ է տէսի բօքիդ:
Դուռտի փագ պալէ, դ'ըրգըցին գ'ոդ մըհանէ:
Դուզ խօսողի ձ'ին բըզի թամքուզ էղի:
Դէվէն ինչխըղըր սագգի, կաշին իշաքեռ կէղնի:
Դանգի կըզրուզ կըսախնա, լեզվի կըզրուզ չըսախնա:
Դօվաթ օր կա, խօղի խըրցան տագ է:
Դըռ դ'ո՞ր է ընդոր ին թըմի տաս:
Դու չըքարար ընծիդ, ես բարա քըզիդ:
Դըմզով օչխար իս, քու յէդեմ ծաձգէ:
Դէվին փուշ պէտք գիքա, թըխ ուր վիզ յէրգընցու:
Դէղին ջ'ըրհր քաշվին քըզնէ:
Դարդագ տօբըրգին էշ չըզըռա:

Ձ

Ձօռքին սինօռ չըկա:
Ձուռնէսի չըփըչիմ, ինչ է թէ քու էշ հո՞ւշա կէղնի:
Ձարգին լօրուն, քիսամ ջ'օրուն:

Է

Էրէրում-տարդարում էղնիս:
Էշ իշուն տեսամ՝ զըռաց:
Էրթալտի էղի, գ'ալտի չէղի:
Էղէր ին կաթ ու կօրէգ:
Էշն արէվուն անուն կըզ'ընա:
Էրգու օդ գ'ըրէց մըջ մէգ սօլին:
Էշ պաղամ գ'արու հոր. ըսէց. — Իդա աղէգ էր, խընչ իմ մօր
փոր:
Էշ յըռքէր է չուղէ խոդ, կառին դաստմալ, կէրթան մօդ:
Էշ կէրէր է, էշ մէնձըցի:

Էշ վըր ախօռին կըզըռա:
Էձ գարեմ գիլա, խասար՝ ըզ ճըրաքուն:
Էձն օր էձ է, յուր տեխ կըսուքէ, նոր կընըսախ:
Էն ճըրաք օր լուս կիդա, մուղաթ էղի:
Էրգու ծըռուն խէլքով մէ պետք է:
Էն ամիս, օր ընծի պետք չէ, չըհարցում:
Էշ կըտէսին, խաթուն կըսին:
Էրգուս լէ մէգ սանդրի կըզամ ին:
Էրես էրսէն կամչընա:
Էփուգ արբին ջ'ուր չըլնան:
Էշ օր յընգնա մըջ տըլուն, տէր կըժըրգընա:
Էրգու ան մէգ մահ է:
Էթմուն հաց տըվող չըկա, խըրադ՝ շադ:
Էրգու գ'ըմշու գ'ըլօխ պուզգի մէ մէջ չէփի:
Էրգու էրնէգ տեխ մէ չէղի:
Էշ-էշ է, մարթ լէ կա, իշուց գ'էշ է:
Էշ հեձնալ մէգ ալիք է, յիչնալ՝ էրգու:
Էրնէգ քըզի նըխշուն բըլթուլ,
չըտէսէր իս ջ'իզրի մըրմուռ,
չըթափէր իս նըխշուն թէքուր,
օր տեսար ջ'իզրի մըրմուռ՝
կըթափի քու նըխշուն թէքուր:
Էթում ըսէց. — Իմ ծառ կանչըցամ. ասված ըսէց. — Երբը լիս
գ'ո՞ր իմ:
Էրսանց՝ հալի տըգէվանց՝ արձըլի:
Էձ ուր օղնէն կըկախին, օչխար՝ ուր:
Էձ իձու համար լամ է, քընց սուրու մէ օխչար:
Էշ մաղաղ չէղի. բըլէ ուր գ'ին մաղաղ կէղի:
Էդ սէվիդ շադ է տեսի էդ մըրիդ:
Էրգու խիլ յիրուր խաշուզ:
Էշըն հըմլան էն էշըն է, փալանըն է փօխուզ:
Էն յախպուր օր էղէր է, հա բըզի յիքա:
Էն լէ էն շընէն, էրգուս մէգ տընէն:

էն խրգըր է փարչ կողրի կըժան յառէչ:
էրգու իշու գ'արի չկառնա ջ'օղէ:
էն կալի խեր կըրի, օր յառչի կամ կով է լըձուգ:

Ը

Ընդրա ջ'ըրու վըրէն փըլավ չէցկըվի:
Ըսէր ին առ ու տուր, չըսէր ին առ ու կուր:
Ընձնէ յէլի, ընձից լօղզընալ կըսօլըրցու:
Ըսողին լըսօղ լէ պեաք է:
Ընի օր տուն չըսուքէր է գ'ինա սուն ու գ'երան մէչըն է
բ'ուսի:
Ըսէլու ու էնէլու մէչ սար ու ձ'որ կա:

Թ

Թէ լավ կընիդ ունիս, ինչ բ'ան ունիս հարսընքտուն, հարս-
նիս իս ու կաս, թէ վագ կընգա տէր իս, ինչ բ'ան ու-
նիս սըքու տուն, սուք իս ու կաս:
Թուիս էր, թուիս ամբ լէ տըվէց վըրէն:
Թըքուցին գ'օրգան էրես, ըսէց. — անձրիվ է գիքա:
Թիլ մէ քաշիս, հըզար փինա կըթափի:
Թաց աղուն լցէր է վըր քարին:
Թափուգ լից չըժօղվըվի:
Թէ պըլից էղավ փարա, գ'ու լէ կէղիս իմ բարա:
Թէ իշու պոչ հասավ գ'էգին, քու խօսք լէ գընցնա:
Թըժա ավիլ լավ կավլէ:
Թաքավօրի հէգէվէն թաքավօրի հէր լէ կըքըֆրին:
Թօրգէր է ըզ շիգագ, կըրէր է ըզըրիշագ:
Թազին յինքն է, նէչիլ խըլղին նըշանց կիդա:
Թօրգէց գավէղրան, առավ ըզտամբուրէն:
Թէ խաչըն իմուն է, զօրութեն լիս գ'ինամ:
Թէ գ'ըլօի մըղից մընա, գ'ըլօի կընդիլ խօլա է:
Թըլս ծառ էղի, թըլս ծուռ էղի:
Թուլթ յէլնա քու լէգուն:

Թըլս ըսին գ'էշ է, չըսին էշ է:
Թըլս տընէն էղի, թըլս տըլէն էղնի:

Ճ

Ճար ինչ խրգըր խառնիս, հոգ գիքա:
Ճամէն լիս գիքամ տէրօղօրմէն, գ'ու կըսիս:
Ճամ սուքվավ, մընաց ըզքումբէթ:

Ի

Ինչ իլիգ, ինչ խիբիլիգ, ինչ սըղընէն, ինչ ուր կընիգ:
Իգա խըմոր շաղ ջ'ուր կըվէրցու (կըվէրու):
Իշուն ըսին. — գ'ու լօղզընալ գ'ինա՞ս. ըսէց. — լօթ լոզ գ'ինամ.
բէրին, գ'ըրին ըզջ'ըրու մէչ, ըզ լօթ լոզ լէ մօոցավ:
Իշուն հէձնալ մէզ ալիք է, յիչնալ՝ էրգու:
Իշվանք գ'ադին, ձ'իանք ուղին:
Իշուն՝ փալան, մարթուն՝ հալավ:
Իմ ձ'եռ քու փէշ, քում՝ աստըձուն:
Իշուն ըսին. — աչքըտի լուս, քըղի քուռագ էղավ. ըսէց.
— բ'ամ օր իմ բ'եռ իմ պատէգէն չիչնա:
Իշուն ըսին. — մարիֆաթտի ինչ է. ըզվոդ վէրուց, լանգէմէ
զըրգէց:
Իմ պար գ'արի է ծախի, իմ վիզ օսկի է կախի:
Իմ մամ հալնավ ալվընին, ընձի տըվէց հարվընին:
Ինչ խաղ կէր խաղաց, շավթալոր լից մընաց:
Իրգան ու կընգան բ'ան ու փէղադ յիրարուց չըջ'օղէ:
Իմալ օր շիլ կիրիշկէ առ ասված, յըմալ լէ ասված կիրիշկէ
ըզըլուեն:
Իշու բնո քանի ծանգըր էղնի, աղէգ կէրթա:
Իմ բ'ան աչ ա, վոն գուգա թըլս հաչա:
Ինչ քավօրոչ խօնալի յիքալ, ինչ սանամօր ցավ բ'ըննիլ:
Ինչ թալին վըր իմ թէվուն, թըլս յիչնա վըր քու թէվուն:
Իմալ գ'էղի նախիր, պառվու մօղից լէ հեղ:

Իրից կընից կըսվան, ծուռ գ'իցավ բ'ածվան:
Ինչ տուն օր ջ'ոչ չէրի, ջ'ոչ քար մէ կըր'ընին տեխ:
Իշու գըռալու մըհանէն ճանգ մէ գ'արին է:
Իշու փոք մանիշագով չըլըցվի:

Լ

«Լօլօ, լօլօ» քըրթու տըղին լէ՞ «լօլօ»:
Լավ է զանուն բ'արի, քանց ըզ գ'անձ ախշըրի:
Լուն ըսէր է. — սախ մարթու ձ'եռ յընգնամ, քոռու ձ'եռ
չընգնամ:
Լէն փօրից յընդէր է նեղ օրից:
Լաց ըզ լաց կըր'երէ, արցունք՝ զարցունք:
Լէզուն մէզ կըխօսս, հաց՝ զէրգուս:
Լավ է գ'էղի կաղուն, խընչ գ'ըրսու խաթուն:
Լագըզու ումբըր «Լախ-լախով» գընցնա:
Լեզվի սագ օսկոռ չըկա, օր սուտ ըսիս, ծագէ:
Լըվան հարով ըզկարբեց չիբիցին:
Լավ ձ'ին ուր յեմ գէվէլցու, վագ ձ'ին՝ ուր խամշին:

Խ

Սուփ գ'ըլօրավ, առավ ըզպուղուզ:
Սուրբան էղիմ էն տաշտին, օր տաշամ լէ կա վըր կըշտին:
Սասէն յիչա խամ, խամ լէ չըծածգէ ծամ:
Սէլոք մէծօն էրգու մամ կըծըձէ:
Սօրօղի մամ խօրոզ քուն, գ'իշու մամ՝ էրէրում:
Սաչ տէր զօրավոր կէնէ:
Սաչ իմուն է, զօրութեն լեռ գ'ինամ:
Սօրօզուլթեն հացի հեղ չըկէրած է:
Սաձան շան ագոէք կըհանին:
Սըլղի հարով լացող ուր աչից լուսուց կըմընա մալրում:
Սըլավ գ'առ սուր չախվի է լախի:
Սոփ սուր է, բըլէ յարդ կիսրար է:
Սըլղի վըրէն շուն կըհաչա, մըր վըրէն՝ կաղու:

Սաթէն օր եգավ՝ յիրուր յեղէվէն գիքա:
Սագուզ կով կաթնով կէղի:
Սաղ շագ գ'ինամ, բըլի ձ'էնսի չիքա:
Սըլընքօղին մուխն է մըհանէն:
Սօնախ խօնխին չըսիրա, տանտէր՝ գէրգուս:
Սիլ լէլավ, յաչք յիստըգավ:
Սօնախ տանտիրոջ հացին չիբիշկա, յաչք ու ընքին կիրիշկա:
Սեր կամէցի, որ խէրու աստ յիքաս:
Սունգ ըզ խաչըն կըվալիլէ:
Սըլղի յաչք քըզի լուս չիղա:
Սունգ ծըխօղի յեղէվէն կէրթա:
Սիրէն թալած է շան, շուն չըկէրէր է:
Սօսք ըզխօսք կըրէրէ:
Սեւք ջ'ոչ ու պըզտից չըհարցու:
Սըլղի յաչք օր մըզի լուս իղէր, ամէզ դուր յաչք կըթալէր:

Պ

Մըռու աղուն աստված է աղցի:
Մուս ագօս ջ'ոչ էգնէն է:
Մըռու հաց խէլօքի փորըն է:
Մուս քար մէ թալէց հոր, քառսուն խէլքով չըկլառցան հա-
նէցին:
Մըռուն տարան հարսընքտուն, ըսէց. — ըսի լավ էր քընց
մըր տուն:
Մուս ախչից ծուռ հարս կէղի, ծուռ հարս լէ՞ ծուռ կընից,
ծուռ կընից լէ՞ ծուռ պառավ:
Մասէղէր է, օր քամի չըքիտէր է, ձոր էղէր է, օր աղվես
չընցէր է:
Մէձէ սըխտոր, օր խաչ ուզիս:
Մուս մարթ լա հարսընքտուն բէլու կէնէ, լա՞ մէռէլտուն:
Մառ կղիս՝ ճուղ իղաս, վարթ էղիս՝ թուփ իղաս:
Մագ-ծագ շարից հաքիս:
Մագուզ հըլուն գ'էղին չըմընա:

Ծառ կայնէն գ'ընաց աստու մօզ գ'անգաղ. ասված ըսէց.
— պոչ քրդնէն է:

Ծրու չըմնով հոր մըմըգնա:

Ծուռ չամչընա, ծրու տէր կամչընա:

Ծրուեն յծուռ կըսին, ծրու գ'ամըրներ կըժաժան:

4

Կալէն ի^նչ հասկըցա, որ կալատագէն զի^նչ հասկընամ:

Կաթի հեղ մըղուգ, հօքու հեղ յէլուգ:

Կեր յընգնա քու օսէք:

Կլալ մաքին ըսէր է, — իմ տէր թըխ ունենա չորս օխչար
օր լիս մէջ էրէվամ.

Կուռ մաքին ըսէր է, — իմ տէր թըխ ունենա ճուղ մէ
օխչար, օր լիս մէջ չէրէվամ:

Կըզոր մէ միս հըզար ալիք կըծածգէ:

Կարթալ օսկի բ'ըլագուգ է էցկուգ մարթու ձ'կու:

Կարմիր կով ուր կաշուց չէլնա:

Կով մէ յուգէ քու գըրգըցին, օր ասված քրդի էրգուս իգա:

Կոշտ նըստէր է, քարի դարգ գիլա:

Կարքվոզ գ'ինէր լօշու մէջ հալվա կէր:

Կաղվի մանգղիլ հըրի մարաքն է:

Կաղուգ շան գ'եղ ըսպաննըն է:

Կաղվին խաղ է, մըզան մալ է:

Կընիգ կա իրգան կըհանա էրգնու էրես, կընիգ լէ կա՝ կըթալա
աըլու մէջ:

Կընիգ կա տուն կըսուքա, կընիգ լէ կա տուն կալիրա:

Կակուգ ըզ չոր կը տանէ:

Կընգա սուքն ի սէղան, իրգան՝ ի փօղան:

Կըթըքում վէրեմ ունքըս է, կըթըքում ներքեմ մուրուքըս է:

Կուշտըն զանօթուն մանդըր կըթըրթէ:

Կըխաղա կըշտափօրիգ, չըխաղա կարմիրօրիգ:

Կարգուգ ծէճուգ տեխ կըծէճէ:

Կարջ մարթու մըտքէն օրագան տաս գիր թաքալօրութեն
զընցնա:

Կամ կալէն հանել:

Կըմընիս թանի ճանջ, յըմէն բ'անի մէջ գընգնաս:

Կաքվուն ըսին. — հօրին օղներ տի կարմիր է, ըսէց. — ցուրդ է
ընօքի. ըսին.

— հա մընք քրդի ամառ լէ գ'ինանք:

Կըսկըձու՝ փառք աստըձու:

Կիսրոջ բախտ, հարսին թախտ:

Կընգա բ'էրուգ բ'ան, դ'ըռան վէրեմ կախուգ զանգուլազ է, էր-
թըցոզ-չիքացօղի ճագղին կըղիրնա, ձ'էն կիղա:

Կալի լեզ կալէն կուգէ:

Կիրագի բ'անոզ էրգուշափթի պարար է մանցի:

Կաղ իշով քարվան կըխաուվի:

Կաղվին ըսին. — կէխտըտի գ'եղ է. կըղզօղէց, անթըղէց:

2

Հասկըցօղին մէզ ըսէ, չըհասկըցօղին՝ հըզար ու մէզ ըսէ:

Հաստ ու բ'ըրագ մեզ գ'ին է, վալ բ'ըրագ մանօղին:

Հըրի հաստ բ'արգընա, բ'արդի հօքին գէլնա:

Հալհալ գ'ացէր է, վալվալըն է մանցի:

Հալ թըռալ մըսուր, հարս յէլալ կիսուր:

Հէռէվանց զուռնի ձ'էն անուշ գիքա:

Համ նալին կըզըրգէ, համ՝ մըխին:

Հալ գ'իգի բօղազ, ինչ տէսնաս կըգօղաս:

Հարըստի կովըն է կաթնով, ախքըղի՝ կընիգ:

Հում կաթ ուզօղին ըխտիրար չըկա:

Հարս՝ մէրոց, կիսուր՝ ծածոց:

Հըզար կըմէնի, մէզ չըշիվարի, մէզ կըմէսի, հըզար կը-
շիվարի:

Հասօն գ'ինա ուր էշ հօրի կըթօփըլկա:

Հավքերու մէջ քոռ յանձըղուն է հալխաձ:

Հաց հօրէն էղի, աըղէն՝ փօրէն:

Հարի կով նախըն յիքա, հալ թառէն խօնախ կըճամփըցու:

Հարի չընըմանի՝ չէղի խնամի:

Հաց ոսնչալըրին տու, մէզ լէ՛ յէվէլի:
Հըրի մարթ գաստված չըմօննա, զուր պարաք չըմօննա:
Հուշիգ քէլիմ կըսին թուլ է, շուղ-շուղ քէլիմ կըսին ծուռ է:
Հաց դըրուզ, գ'որձ՝ անհձուգ:
Հէսէվանց էլի յաչք կըճանա, մօզիզանց՝ տիրոջ:
Հըզար սահիս գ'ուլթանի մէ խոփ չէզի:
Հուսով արրող անհաց է մեռի:
Հըրի խէլոք կըմէզէ, ծուռ զուր տըզէն կըկարքէ:
Հարամ գիքա, ըզհալալ լէ կըտանէ:
Հավգիթ վըր ծիրուն չըկայնի:
Հըրի չիքա հէզին, չը հիշվի յառչին:
Հէզին խախքութեն ծածգէց յասչի առագութեն:

Յ

Յէզի-յառչի քընկէ եզնի:
Յուզողի մէզ էրեսըն է սէվ, չըտվըողին՝ էրգուս:
Յըմէն բ'ան բ'արզընալէն կըկըզրի, մարթ՝ հաստընալէն:
Յըմէն ծաղզէն հող մէ գիքա:
Յըմէն հավք խըտ ուր էրամին:
Յըմէն մարթու զարդ ուրին ցավ կիդա:
Յըմէն մարթ ուր յիմցուզ կըխօսա:
Յըմէն քօլզի տագ գ'ըլօխ մէ կա:
Յէժան մըսու շուրվէն չուզվի:
Յէվէլի բ'ըրթուշ յաչք չըծագէ:
Յաչք ինչ խըզըր մէնձընա, ընքէն վէրեվ չէլնա:
Յինք էզէր է տիգ, խըլղին էրէր է բ'երան:
Յինքն ու ուր բ'ազրիգ ճեղ, էն լէ խօրվէց, տարավ, հեզ:
Յէրուսաղեմ լէ շուն շագ կա:
Յուր ջուր, ջաղաչ լէ հօնի կըսուքին:
Յինք քընուզ է, ուր բ'ախտ զարթուն է:
Յըմէն մարթ ուր խըսմաթ կուզէ:
Յըմէն բ'ան օր կըփիլա, օսկի չէ:
Յըմալ գ'էշ է, օր էրսի վըրէն ճ'ըվածեխ էփիս, չուզվի:
Յէզի բ'անիգ՝ հօքէհանիգ:

Յըռչ ու գ'օլը՞նդ վո՞ն է տէսի:
Յասու մէ, օր ջ'ուր էզէր է, հա բըղի յիքա:
Յանթէտագ ճ'ըմէրուզ է գ'ըրի:
Յիրզըվան լացիգ, խըլըսվան ծաղրիգ:
Յասչի խօսող օր յիմնա հէզին ինչ կըսէ, ընի ուր բէրան չըր'անա:
Յասչի մարթ յէզի մարթուն կարմունջ կէզի:
Յէվէլի բըրթուշ շան կըթալին:
Յըմիօր սարի գ'ըլօխ բ'ուք չէզի, օրմ լէ կանուշէ:
Յըմէն մարթու բէրան խունջանսի չէ, օր կարիմ:
Յէրզէն մարթու խելք ուր չօքերըն է:
Յընաս թունգիր, շօրխախող չիքա:

Զ

Զ'իու վըրէն ծընիս:
Զ'ուն գիքա, օր ախքըզի բօբիգ օղներ մըրսի:
Զ'իու վըրալուց պաղող չըմէնի, իշու վըրալուց պաղող կըմէնի:
Զ'եռք վըր ճ'էուաց ուսա է:
Զ'ին կըխաղա, ըզձ'իավոր կըգ'օլան թուր, կը կըզրէ, ըզ ճ'եռք կըգ'օլան:
Զ'ըմեռ բըթէ, ամառ կըթէ:
Զ'իուց յիչնամ, հէձիմ դէշ:
Զ'ի չըկա, մըսուր կըկարէ:
Զ'ուզ բընօղի օղներ կըաըզին:
Զ'իան նալէցին, իշվան լէ դուրանց օղներ վէրուցին:
Զ'ին ու ջ'օրին կըսվան, էշ գ'ընաց օղաց տագ:
Զ'ին ճ'իու մօզ կարին, լա աքցան կէզի լա՛ կըձան:
Զ'եռ, օր չըկասնաս կըզրիս, պաքէ, դիր վըր գ'ըլխուտի:
Զ'ուզ գ'ըլխէն է հօզուզ:
Զ'եռ ճ'եռ կըվլա, էրգուս՝ էրես:

Ղ

Ղաթրին հարցուցին հէրտի վո՞ն է. ըսէց. — մէրսի ճ'ին է:

Ճիժ մըհանա, մամ կըշտանա:
 Ճըրաք ուր տագ լուս չիգա:
 Ճըժուն գ'օրձի քըցա, յէդէվէն գ'ընա:
 Ճաշի էրեսըն է ադէգ, փըլավի՛ տագ, կըուլու՛ վերջ:
 Ճիժ, օր պարուն լա մամուն չըքաշէ, գ'օղածաուրիգ կէդի:

Մ

Մադով մըղարգէ դըրացու դըռան, օր ասված թուի ու գլուխ
 լով չըզարգէ ըզբու դըռան:
 Մէգ չըկա ձ'ըցմէ իմ ձ'ըցում, լես էրթէնք ձ'ըցմէնք ուխտ
 ձ'ըցում:
 Մարդի վեց՝ ձ'ուն ձ'ան ցեց:
 Մարդի ին՝ լազլագ վըր թընին:
 Մարդի տաս, կանգաուրն ի պաս:
 Մարդի քըսան՝ լըցքեր յարդեր կըպըսպըսան:
 Մարթու հօքէսա լէ թըխ բեգ էդի, օր անքամ մէ հօքին առի:
 Մադնօցի մէջ տէղավօրիս:
 Մարթ մէ ինչ խըդըր խէլքով էդի, ծըռուց թըխ խօսք հարցու:
 Մարթ օր կըզի, հէձնոց չըկա:
 Մըզի մէգ տուն, թէ տաշուդ է սուն, յիմցի, օր ծուռ կա տունտ
 Մըգան շես լէ ջախչին ֆայդա է:
 Մարթու ինչ տեխ ցավաց, հօքին հօնի է:
 Մանկութ դադում, ջ'օջութ գ'ավագան է:
 Մենք գ'ացինք գ'օղութէնի, լուսնագ յառչի յիրդուն յէլավ:
 Մըչ պարըն մըդնոց բըզի շօրօրա:
 Մէսիմ քըզի գ'արէ փըշուր, թըռար, կըրար տաշտի պըռունգ:
 Մամու գ'օվուգ ախչիգ թող ու փախի, դըրացու գ'օվուգ
 ախչիգ առ ու փախի:
 Մալին տէր, օրթուն հէր:
 Մարթըն ի հալավ, էշըն ի փալան:

Մարթ օր ուր խավաթ չիմնա, գլուխը չըր'ըռնէ:
 Մաքու յառչէվէն գ'առ չըվէրուն:
 Մէգ մէգով, էրգուս՝ ասաըժով:
 Մըռչըման թընի բ'օլոր լման չըր'ուսնի:
 Մէգ քարով էրգու գուգ չըջ'արթըվի:
 Մաձնի մանանէն, թանի թանթանէն:
 Մխ ուգոց դըշի կըզուց կես կէդի:
 Միրուք չունիմ, խօսքըսի չընցնա:
 Մէգ կա հըզար աժէ, հըզար կա մէգ չըժէ:
 Մուգ լէ՞ ադանձ ուղել գ'իմա:
 Մէզի լեղևի դուս է էդի, մըզէլ կըսէ՝ տուր, տանիմ կազլիսի:
 Մըր տուն կուգ կուդէ, խըլիսի տուն ձ'ու կաձա:
 Մարմանդ ջ'ըրէն վախէցի, գըմփըմփան ջ'ըրէն մըվախէնա:
 Մալ, օր տիրուն չըքաշէց, լա, գ'օղածուրիգ է լա՝ գ'ըզածուրիգ:
 Մէգ կէզի դանդագ, մէզէլ կէզի բամբագ:
 Մարթու յաչք յէլնա, անուն չէլնա:
 Մէգ մէգու բաս էնա, լա դուռն ա լա՝ յէրթիգ:
 Մըրէն յէլավ, յընգավ մըրչուր:
 Մէզըն ի կօվէն, տասն ի ծօվէն:
 Մարթ յախպըրէմէ օր ջ'ուր կըխըմէ, էգ յախպըրին քար
 չըթալէ:
 Մէգ մէգու բաղ մէ կիւլա, մէգ մէգու ճութ մէ խաղոց չիդա:
 Մէգ ամօթու ձէն չհանէ, մէզէլ կըսէ. ընձնէ գըվախէնա:
 Մէր ըզմանուգ մօոցավ:
 Մխըն օսկըսին ձ'են կիդա:

Մուխսի Թըմէն
 Նըստի ձըմէն,
 Յինքն ուր քըմէն,
 Կըժէ յըմէն:

Մէգ սանդրի կըզավ ին:
 Մըզար մըչ նախրին, քու իշու ճագա՞դ պաքէցեր:
 Մուգ ծագ չըմըգնա, ցախավել լէ պօչէն կըկարին:

Միս անօսկոս չէղնի:

Մարթ ուր տան սրս մարթու թարիֆ չէնէ:

Մէգ արնով չինք, մէգ հալով ինք:

Մուգ բամէ չէ, բըլէ զընգնա կարաս, կըմըրզըլէ:

Մարթու մարթ թըլս մարթ էղի, հըզար թուման թըլս պարտք էղի:

Մէղրից մազ-մազ, չամչից հազ-հազ, գ'ացինք տէսանք, մէչ գ'արգագ:

Մեղըր ծախող ուր մազ գըլիզէ:

Յ

Յէփոր պըլից էղավ փարա, դու լէ կէղիս իմ բարա:

Յարալու մարթու քուն գիքա, անօթի մարթուն՝ չիքա:

Յօթ օրթու տէր մանցէր է փօղոց:

Յա կուզ ու ջ'ուր, լա դանազ ու սուր:

Յօթ բէրող, լօթ աշեր է տէսի:

Յօթ բաշանաղ ճամբախ կէրթան, կըսին. —մարթ մէ չըկա, հեզ գըրուցինք:

Յօթ սըրփու տըփուզ է:

Յօթ չափէ, նոր մէզ կըղրէ:

Ն

Նալաթ չիքա նըփսին, թուք չըր'երէ էրսին:

Նուշ հիշելիք ա, կըշտանէլիք չէ:

Նէ ճ'ըր արնին իմ, նէ ճ'ըր գ'էղէն:

Նէ տուր, էղի լափամարթ, նէ առ, էղի վաղամարթ:

Նէ դու արի, նէ էն բարի, զէրգուսըզ լէ մէզ յարդի գ'արի:

Նէ հարսնիս է, նէ զաղից, ծուռն է հաքի շալէ շարից:

Նէ դի ու լացի, նէ առ ու փախի:

Նամուս թալէր ին շան, շուռն չըկէրէր է:

Նէ էձ ունինք, նէ՝ ուլ, սըդանի յանգաշ խուլ:

Նէ կուղիմ ձըր հիրիսէն, նէ կըխառսլիմ ձըր խըսէն:

Նէ քաղցըր էղի, օր կըլուռն, նէ լէղի էղի, օր թըքուռն

Նըհախ մարթու կէրուզ, ասու սըրգին լէ չընըսաի:

Նըհախ մարթու հախից ասփաձ գիքա:

Նէ հին բարէկամ՝ դուշման, նէ լէ հին դուշման բարէկամ կէղի:

Նըսախմ գ'օքաի, փէզիմ միրուքաի:

Շ

Շուն էղնիս՝ ջ'ոչ տան շուն էղնիս:

Շուն էղնիս, պըզզից չէղնիս:

Շազ դագողին շալէ շարից, քիչ դագողին արըրըմէ շարից:

Շան հարսընքին հարսնախալէր կըհմրցուն:

Շաքար ա, շան բ'երան ա:

Շազ դարդի տէր շաա կըզըրուցէ:

Շազ վըր շաղին, իշու պըսոշ լէ ախքըզին:

Շօրէրսի հին է, խօսքըսի անգ'ին է:

Շոր պախէ բօխչի մէչ, օր քըզի հանէ մարթու մէչ:

Շուն հաչալէն չըփիզնա:

Շուն լէ գ'արուն գէլնա, բըլէ վալ կաշուն:

Շուն պառգէր է դիզու հով, գ'ինա ուր հովըն է:

Շօխէ գ'առ թէ՛ դուր մամ կըծըձա, թէ՛՛ գէլուն:

Շուն մարթ շան ճամփով կէրթա:

Շէն տանդըզին շեր կէղի:

Շան պոչ ինչ խըզըր կաղթար դընիս, չըշիզգի:

Շըրիք օր աղէզ էղեր, մէզ լէ ասփաձ ուրին կըշիքէր:

Շուլէֆից շուն ուր պոչ յըմէն բանու մէչ կըփօխա:

Շազփօրի շուրվէն ալնի գիքա:

Շէն անուն վըր ափեր քախքին:

Շուն դարփընօցէն լինչ բըզի տանէ:

Շան հեզ ախալըրութեն էրէ, բըլէ փէզ քու ճէոնէն մըթալէ:

Շուն շան միս չուզէ:

Շան կըզարգին, տիրուն խաթըր կէնին:

Շուն լէ կըր'ընիս ուր չընս հարցու:

Շուզ տէխէն յէլնող, շուզ աղրապ ուզող, շուզ կարքըվող չըփօշմընի:

Շուն մէզ գըրբով չըխաղի:
Շան հաչալով էղէղէցին չըմըրգըլի:
Շագ խաղ գ'իմամ, բըլէ ձ'էնսի չիքա:

Զ

Չըտէսէր էր պաղէն ի կախ, տէսավ ճակտէն ի կախ:
Չօրու հեղ թաց լէ կիրիցի:
Չըտէսանք քօխքըն վըր էրսին, տէսանք կուժըն վըր թէվին:
Չուգօղաց մալ՝ ուգօղաց հալալ է:
Չուր ասու մօգ լէ մարթուն մարթ պիտք է:
Չոր կիխա մարթու փեշ չըկըբնա:
Չօբնի սիրգ օր չուղէց, օրց մաքուց լէ լիզ կըհանէ:
Չախմախ արէվու յառէչ ք'նչ բըղի էնէ:

Պ

Պաս ուղիմ պաս, էն լէ ժածի՞գ:
Պանգուզ շան քար չըթալին:
Պասվու սէր սարէրով ու ձ'օրէրով է:
Պարգէցող պարգըն է մըղի:
Պէձ մէ կըրագով գուգա ծով վառա:
Պուգուզ ինչ խըղըր էոա, ուր վըրէն կըթափի:
Պար շըլոր է կէրի, թօռան ագոէքըն ին ասփի:
Պարաք օր կա գալի ձ'աք է, քլանի մընա, կըջ'օջնա:
Պարաք իգալով, մեխք յիլալով:
Պուգուզ ըսէց.—իմ տագ օսկի է. շէրեփ ըսէց.—լես լնւտի
գիքամ:

Ջ

Ջ'ըրուն ըսին՝— յօրին քու ձ'են գիքա. ըսէց.—իմ տագ քարոզ է:
Ջ'ուր լըցվալ շօղատն, յէլավ թալէց ալըրտուն:
Ջ'ըրուզ թան լավ է, քանց չըջ'ըրուզ մաձուն:
Ջ'ուր ըզ'աղաչն է տարի, դու ըզ'ախչըխու յէղէվի իս յընգի:
Ջ'ուր տեխ մէ օր շագ մընաց՝ կըհօգի:
Ջ'ուր չըտէսուզ կըթօրգընա:

Ջ'ուր կերթա, ալագ կըմընա:
Ջ'օրին ըզ'ալիբն է կէրի, յըոչ՝ գախշար:
Ջ'ախչըբան ալրոզ կէղի:
Ջ'օջի ըսուգ, պըղըղի լըսուգ:
Ջ'ոչ չըճանչըցող ասվաձ լէ չըճանչընա:

Բ

Բէսի վըրէն լուս է յիչի.—վո՞ն տէսավ.— գ'ըղիր:
Բէսի թանի մէչ լէ ճանջ գընգնա:

Ս

Սար ու ձոր տէրաըրոչ փոր:
Սըղընի տուն խոնց ու մոմ:
Սուգ ըսողի տուն կըրագ յընգավ, վառավ, չավըցան:
Սարախտվան արէվուց օր չըտաքցա, յիրգըվան արէվոնց
բըղի տաքնամ:
Սէվ կաղու է յընցի ուրանց մէչ:
Սըղընին հըրի գըժոխք նըշանց չիդաս, չըգինա, օր գըրախա
լէ կա վըր ախշըրքին:
Սէր ու սավղէն դարգէր է գավղէն:
Սօխին լէ քախցըր կա:
Սուր ի սուր խառվի, արուն ջ'ուր կըղ'անա:
Սէվ փուշի թալիս գ'ըլխուտի:
Սէվալօրիս քու ջ'անի վըրէն:
Սօրվա փուշ, վաղվա նուշ:
Սիվղագ շուն լէ բամբագ ծախօղին վընաս է:
Սըղանի չարուխ շուգ կըմաշի:
Սէվ ներս էնել, սիվղագ՝ գուս:
Սէվ փոստ թալիս տակաի:
Սօխի կուշտ սըխտոր չըծէձին:
Սիրգ սուփրա չէ, որ յըմէն մարթու յառէչ բ'ացվի:
Սինամհավք ուր յըմէն տէխուն կիրիշկա՝ կըխընդանա, օր-
ներուն կիրիշկա՝ կըտըրգըմի:

Սէր սօրվուզըն է կէրի, թան՝ մօլըրուզ:
Սըզանի մալ, սըզանի ճամփով կէրթա:
Սօրվուզ ձ'ես չըկախի:
Սըզանի յարդ կարգըդինն է:
Սոխ չըկէրէր իս, սիրդըտի յօրթ կըմըրմըռա:
Սանդ լէ ուր ձ'եսըն է, վարսանդ լէ:
Սոխ ուզողի բէրան կըմըրմըռա:
Սէվ քարով շարվէր իդա դուռ, օր. գու չըմըդնէր իդա տուն:
Սէլ չըբօռա, սէլվոր կըբօռա:
Սըրփու տուն լէ խունդ ու մոմ կըպակսի:

Վ

Վոտք քէլման էդի, հօքին յէլման էդի:
Վըռազող կընիդ տըզա չըբէրէ:
Վէրէվէն ինչ խըզըր օր անձրեւի յիքա, գ'էդին բըդի տանէ:
Վար վարէր է, վարոց թալէր է:
Վըր սօխին դու լէ սըխտոր կըծէձիս:
Վէրի թաղի անթրոց է, նէրքի թաղի թընթոց է:
Վոն օր խըղի կարբըդով վոտք պարզա, օդնէր բաց կըմընան:
Վախէցի ընդըրնէ, օր չըվախէնա աստուց:
Վոն սես, իմ հալըն էլ էս:
Վոն է տէսի, վոն է լըսի, օր չոր քարէն օսկի բուսի:
Վաշառագան օր կողըր դընգնա, վէրասէքու դավթըրնէր ուր
միդ կըթալէ:
Վոչ էն արի, վոչ էն բարի, էրգուսըն լէ մէզ յարդի գ'արի:
Վարթըն ի յիս, փուշըն ի կըրագ:
Վոն ունի հօրով մէ հաց, ընի չուդէ փօրով մէ հաց:
Վալ քըդի գ'էդ, օր ըզքօ սես Մըզօն է:
Վոն կէրավ ըզհզն ու ճըմուռ, վոն գարգէց գ'ըլօխըն ի դուռ:
Վոն կըխաղա, ընի կըկաղա:

Տ

Տաշտ ու մաղ կախէր է:
Տընով տէխով օր յընաս թունդի, շօրխախող չիքա:

Տաշուզ քար գ'էդին չըմընա:
Տան տիրոջ «օրշնյա ի տէր» չըկա:
Տուն չըկա ցան ու փօշի, գ'ըլօխ կըկարէ Անդըլու փուշի:
Տէս շօրէրու շարվէն, ըզըդընդնէրու հինէն:
Տանիս անիմ հողն ա վըրէն, թանդի ունիմ բովըն ա վըրէն:
Տուն թէ վառավ, մըզնէրուն լէ չըմնա:
Տան ու գ'ըրսուն մէզ խիլք թնչ բըդի էնէ:
Տըզամարթ օր կա դըսու պաղ է, կընիգ' նէրսու:
Տուն մէ էրգու կընիդ էդի, տախտ անավլի կըմընա:
Տէրսէր ըզ մէզ գ'ինա, իրիցկին՝ գէրգուս:
Տէս ընձիդ, օդօրմա քըզիդ:
Տամբուրով գ'ըմշու գ'ըլխուն չիդան:
Տընէ-տուն՝ տուն կավիբի, գ'էդոց-գ'էդ՝ գ'էդ կավիբի:
Տավար կարով կըկարին, մարթ՝ լէզվով:
Տուն իմ տուն չէ, տան դուռ բացողին է:

Յ

Յավ տըված է սարէրուն ու ձ'օրէրուն, չըտարած է, տված է
մարթուն, տարէր է:
Յավ քաշօղին կիդա ասված:
Յաձըր նըստի, օր բանցըրնաս, բանցըր մընըստի, օր ցա-
ձըրնաս:
Յէրէզ ձ'ութ կըծամէ, գ'իշէր ձ'էթ կըվառէ:

Ո

Ուր պար օր չըտէսնէր, գ'ինէր թէ յինք փաշի տըզա էր:
Ուրին գ'ըրէր է սուզ ծըռու տեղ, վանքի հավեր կուդէ:
Ուրուս-մուրուս, լիս կըշիքիմ, դու կըբըլուս:
Ուրիշ տեխ մէզ-մէզ ծուռ, մըշէցիք յըմէն ին ծուռ:
Ուր պաղիվ չիմցող խըղի պաղիվ ունու չիմնա:
Ուր գ'ըլօխ չըկլառնա կարէ, գուդէ հարսընքտուն հարսի
գ'ըլօխ կարէ:
Ուդէ լէ գիլա, չուդէ լէ գիլա:

Ուլ քըթօցի տագ չըմընա:
Ուն մագղըշութ կօլըրին:
Ուրախութենէն մագ գընդնա, դարդէն՝ ըղանդ:
Ուր շիշ խօրօվածի յարով դըրացու լեզ կըմօրթա:

❖

Փէդի ցեց ուրնէ կէդի:
Փէշագ յիմցող՝ հըրի կէսօր անօթի կըմընա, չիմցող՝ հըրի յիրգուն:
Փարէն կըստիցու ըզլարէն:
Փառչ շըրու ճամբախ կըկօղրի:
Փէդ վէրուս, գ'ող շուն գ'ինա:
Փէսի շըվաք—փըշի շըվաք:
Փոր մէ հաց կըկօրցու հոր մէ հաց:
Փօրու մէ էրգու մունաթ չէդնի:
Փուշ՝ փուշ է, բըլէ մարիֆաթ անուշ է:
Փախի ընդըրնէ, օր քըզի կըծիձղըցու, մըփախնի ընդըրնէ, օր քըզի կըլացըցու:

❖

Քուն ըզ քուն կըբէրէ, արցունք՝ դարցունք:
Քու խունգ ու մոմ թըխ քըզի էդի, թաքիլան դու մըր ժամ միքա:
Քոք ու բուս չէ, առ ու ուս է:
Քար ու կիր դագաժօրի դու կըմէզնին:
Քոռ իշկիմ իդա ճըրաքին:
Քոռ դու մընա յօդի, սախ էղամ՝ լավ, չէղամ՝ չըմըն-չըմըն դու կաս ու կաս:
Քօռու ինչ վէշըն է, թէ մոմ թանգ է:
Քօռու ձ'ն լու է պաղի:
Քօռու յաչից արցո՞ւնք, իրիցու տընէն ճաշ:

Քամին էզարգ վարթագէդի կընգուզ տարավ. ըսէց.—ինչ լավ, օր ընձնէ յէլավ:
Քոռ մուզ ինչ խըզըր հող փօրէ, ուր գ'ըլխուն կիդա:
Քիչ թարցի, շուգ գ'արցի:
Քամին քարէն բան չըտանէ:
Քլասիբուժեն օր կա դավա է, չըմէն մարթու դու կըշօքի:
Քիչ կար դէվ ի դիմնոց մէզ լէ յիշավ յէրթըգուց:
Քու լիք քասէն մըզարգէ խըլղի դարգագ քասին:
Քաշալ իս, արախշիտի գ'ըլխտի պալա:
Քու լոթ թագին գիմ մէզ աղվէս չըկլաննա բըրնա:
Քանի անօթնա, բարկէնթընի գ'աթէն միաք գընդնա:
Քուր ըսէց.—ընձի ախպէր կա. ախպէր ըսէց.—ընձիք քուր չըկա:
Քու վասարգուզ քո բարցի տագ ուզիս:
Քամին մէսավ ցըրգու:
Քիչ կէր շօղաուն, դու լէ էզար պաղար ալըրաուն:
Քըզնէ բիմ յէլնոզ չէդի:
Քոռ իշուն՝ քոռ նալբանդ:
Քօռու յառէչ հըզար տարի ճըրաք վառէ:
Քամու բէրուզ քամին լէ կըտանէ:
Քալ քարշու պէս կըկըրնա մարթու բոգ:
Քըշալ դեզ էնդող էդի՝ ուր գ'ըլխուն կէնէ:
Քարթ ուր թանին թըթու չըսէ:
Քըզի մէռիմ թանարուր, դու լէ էզար կէրագուր:
Քոլ իձուն կօղոշ չըկա, գ'ինա հէրվան ուլուլիզըն է:
Քո արէվուց զըրգ ու բըրգ էդիս:
Քո սէվ-խարա խարարըն յիքա:
Քու յառեչ-յէզիվ կանաչ էդի:
Քու թէվեր թափի:
Քու թէվէրու միաըն ուզիս:
Քօլոզ դընիս վըր քու գ'ըլխուն:
Քու դու դըրվի, քու յէրթիզ կալվի:
Քոխքըն էր էրսին.—էրնեզ փէսին. քոխքըն վէրցուցին.—սէվ գ'ա վըր փէսին:

Օսկին մանգրը է, բըլէ ուր գ'ին ծանգըր է:
 Օցու գ'ըլօս օր կըցալա, գ'իքա, ճամփու օրթըլախ կըպարգի:
 Օր սոխ չըկէրէր իս, սիրդաի յօրի կըմըմըռա:
 Օրթուն հէր, մալին՝ աէր:
 Օդնէրաի քու օրդընի գօրա պարգա:
 Օջախ չէդի պուջախ:
 Օր թօրդին, կօրէդ լէ կէրթա Յէրուսաղեմ:
 Օր կըքօջիս, ճամփու էրդու դեն լէ ցանա:
 Օրց կալըու դանգի հարով է:
 Օր գ'ացած, խաթէն մացած:
 Օլըրդան աղվէս պարգուզ աւլանէն շադ բան գ'ինա:
 Օրթունք յէլնա քու ջան ու ջանդագ:
 Օսկին աըլու մէչ լէ կըփիլա:
 Օցու խէթուզ չըփնէն կըվախէնա:
 Օդով յընգի, օր յէլնաս, լէզվով մընգնա, օր չէլնաս:
 Օտքով պաղող դէլնա օդաց, լիզվով պաղող չէլնա օդաց:
 Օց յըմէն տեխ օդօր ման գիքա, ուր բընու յառեչ կըշիդգի:
 Օց դախցէն կըփախի, դախց գիքա, օցու բընու յառեչ կըրնուսի:
 Օցըն օր օց ա ջ'ուր խըմէլու գ'ախ մարթու չըխէթա:

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

ՀԱՎԵԼՎԱԾԻ ՆՅՈՒԹԵՐՈՒՄ ՀԱՆԳԻՊՈՂ
 ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ

Ա.

ազոէք առվել—թթու բան ուտե-
 լուց ատամները ազդվել
 ալաֆլամիշ—հրակեղ, բոցակեղ,
 հրաճարակ
 ալըրտուն—ջրադացում, ջրադաց-
 քարերի առջև դրված արկղը,
 ուր լցվում է աղացած ալուրը
 աղօթբան—լուսաբաց, արշալույս
 ալիբ.—արատ, թերություն
 ալվան—տուն, ունեցվածք
 անթըղել—մոխրով կամ հողով
 ծածկել, պահել, պահպանել
 (հիմնականում կրակը)
 անթըրոց—վախից պատրաստ-
 ված հարմարանք, որով խառ-
 նում են թոնրի կրակը
 անոամ—անխիղճ, դաժան, անզգա
 առնել—կպչել, հասնել
 արախչի—փոքր, թեթև գլխարկ,
 ծածկում է գաղաթը

բաս էնել—խոսել, ակնարկել մե-
 կի, մի բանի մասին
 բարա—չափ
 բարել—հավասարվել, հավասա-
 րել, հավասարեցնել
 բափուջ—կոր հաց, բաղարջի, բո-
 քնի նման
 բ'եդ—խոշոր, մեծ
 բէբախտ—ապերախտ, երախտա-
 մոտ
 բէզըդ—բեզերի իշխանություն,
 աիրապետություն
 բէլու էնել—երեւալ, նշմարվել
 բ'էբօխչէք—բերելավարձ
 բ'ըթել—ուժեղ կեր տալ, սնել, գի-
 րացնելու նպատակով
 բըլազուգ—ապարանջան
 բըլէ—բալց
 բ'ընադա—դուլթանի շղթա
 բըրին—վերք
 բըրիշագ—ավերակ
 բըփըլըկցուցել—գզել, գզգզել(մա-
 գերը)
 բին—շունչ

Բ.

բ'ագրիդ (ճեդ)—երկու տարեկան
 աքլորաճուտ

բին առնել—շունչ քաշել, հան-
զըստանալ
բուզալա—խեղճ, անճար, ծուլ
բ'օլուք—խուճր, շատ
բօշա—գնչու, մուրացիկ, մուրող,
(վիրավորական բառ հատկա-
պես կանանց համար գործած-
վող)

Գ

գաղաղի—հավթ
գամփոս (ց)—բուռնցք, բոնցքա-
հարված
գ'էրդաստան—ընտանիք
գ'ըղաձուրիգ—գտած, գտնված իր,
ինչք
գ'ըլխու խուբէն վերցըվել—շատ
զարմանալ, ապշել, ցնցվել

գ'ըսող—քոսոս
գ'ինին գ'ըլխուց թափել—զգաս-
տանալ, գինսվութլունը անցնել
գլալո—արդյունք
գլուլաշ—բռնցքամարտ, մենա-
մարտ
գլուլլա—հրացանի գնդակ
գուրեխ—գալլախեղդ
գօպալ—գալլազան, թմբուկին

հարվածող հարմարանք
գ'ողաձուրիգ—գողացած, գողաց-
ված իր, ինչք
գօվընդ—շուրջպար
գօրա—չափ

Դ

դալիլ—դախիլ — տխուր-տրտում,
վշտահար
դալմա—կանացի, երկար, կերպաս-
լա վերարկու

դամար—ջիղ, երակ
դ'անդըրար—զանակ պատրաստող
դաստըմալ—թաշկինակ
դամթար—մատյան
դ'եխ } կողմ
դ'են }
դէվա—ուխտ
զընդալ—շարժվել
զըսա—թրքուհի
զ'իդա—ալս կողմ
զ'ինա—ալն կողմ
զ'իր—անգամ
զ'իուց—կողմից
զօր—ուր, որակղ, հերթ
զ'ուրան—հարթ, հարթութլուն,
հարթավայր
զօվլաթ—ինչք, հարստութլուն

Զ

զազ—բան, ուտելիք, ճաշ
զանդին—հզոր, հարուստ, բռնա-
կալ
զըմփզըմփան—վարարուն, ազմը-
կահուլղ (ջուր)

Է

էթիմ (ում)—որբ
էմլան—նորից, կրկին
էրէրում-տարդարում — անհան-
գիստ, անօթևան

Ը

ըխտիար—ծեր, գառամլալ
ըխտիբար—հավատ, վստահու-
թլուն
ըմալ—ալնպես

Թ

թազի—որսի շուն
թալել—զցել
թախտըփել—թափ տալ, ողջ ու-
նեցվածքը, ինչքը տանել, կո-
ղոպտել
թամամ տըղա—կատարլալ, հա-
սունացած տղա
թամբի էնել—պատվիրել, ապըս-
պըրել, հանձնարարել
թասիր—ամոթ, պատիվ
թասլիմ էնել—ապավինել, հանձ-
նել, տալ
թարիֆ էնել—պատմել, զրուցել
թաք—միակ, միալնակ
թաքիլան—միալն թե
թըխտըփալ—թփրտալ, ջղախա-
նալ, գալրանալ
թընթոց—երկար փալտ, ծալը
տափակ, որով խառնում են
թոնրի մեջ զրած հերխան
թիղ մէ կանանչ բուսնալ գ'ըրէզ-
մընին—շատ երկար ժամանակ
անցնել
թոփ—թնդանոթ
թութ—վերք
թօփըղալ—կաղալ

Ժ

ժար—կեղտ
ժուռ յիքալ—զրոսնել, որոնել

Ի

իդամլա—ալսպես
իմալ—ինչպես
ինամլա—ալնպես
իշկել, իրիշկել—նախել
իրիգ—ամուսին
իքրամ—պատիվ, հլուրասիրու-
թլուն

Խ

խազել—սատկել
խամ—անփորձ, հասարակ
խամչի—մտրակ
խալֆախանա—սրճարան
խալֆախանչի (խալֆաչի)—սըր-
ճարանատեր
խաս—թանկարժեք, թանկագին,
լավորակ, ընտիր
խեչ—մոտ, կողքը
խըղըր—չափ
խըղմաթ—գործ, աշխատանք
խըղմաթքլար—ծառս, սպասա-
վոր, աղախին
խըլըղ—հագուստ
խըլըսել—վերջանալ, սպառվել
խըլըսուն—մլուս լուսարացին,
առավոտյան
խըլղ—ուրիշ, օտար
խըրըֆուզ—զառամլալ, ծեր
խըսա—զրույց, խոսակցութլուն
խըսա էնել—զրուցել, խոսել
խիրիլիգ—իլիկի գլխին ամբարցրած
փոքր, երկաթլա հարմարանք,
որից կապում են թելը՝ մանելիս
խիլ—շլուղ
խիրա—նամուս, թասիր, պատիլ
խուրա—ծածկ, կաուր
խութի—կանացի վերնազգեստ
խունջան—ներքնավարտիկ
խօրազ—կեր, կերակուր, ուտելիք
խօրոմ—խուրձ
խօրօգութեն—զեղեցկութլուն
խօրօղիգ—զեղեցիկ

Պ

ժածղոց—մի բան ծածկելու հար-
մարանք, աման, որով ծածկում
են մերած մածուը
ժուռ—խենթ, խելագար, անզուսպ

կալատապ—կալի տակի մնացորդը,
չնչին, անսխտան բան
կաշուց յինսալ—փոխվել, ալա-
կերպվել
կարմիրոտիզ—լավ հագնված, դուզ-
ված
կընդել—խուղել
կըցել—սկսել
կլալ—անսոչ
կոնդ—բլուր, անդամալուծ
կոշա—քուզ, հողակոշա
կուշա—կողք, մոտ
կողել—թխել (հաց)
կոծոծ—մաշկի վրալ առաջացած
կոշտակ, դորսնակ

հարով—համար
հաղլա—նվեր
հազ էնել—սիրել
հալ—վիճակ, դրուժլուն
հալավ—հազուստ
հալրաթ—երեկ
հախ—հասանելիք, իրավունք
հացատուն—գլուղում՝ տների ալն
մասը, որտեղ հորած է թոնիրը
և հաց են թխում, քաղաքում՝
ճաշասենյակը
հեղ—անգամ
հէղէն-հէղէն—աստիճանաբար
հէվի—ամուսնու երկրորդ կինը,
երբ կենդանի է և տանն է՝
առաջինը
հէրսողել—զալրանալ
հըրը—ապա
հըզըզուզ—զզզգած, զզզված
հըլօնդել—շարտել, նետել

հիրըմիշ էղնալ—շատ զարմանալ,
ապշել
հիզումլա—այսպես
հուդա—այտեղ
հունա—այնտեղ
հուռլաթ—թուրքական սահմա-
նադրութլունը (1907 թ.)
հոք ուղել—մտահոգվել, մտա-
տանջվել
հողշոր—շոր, որի մեջ լցնում են
բոված և սառեցրած հողը՝ բա-
րուրվող երևխալի տակը դնելու
համար
հօքին կօրուցել—կեղծել, սուտ
խոսել, վատ բան անել
հօքու-հօքին յինսալ—շատ տան-
ջըվել, տառապել

յէլման—զալրացած, վարարուն,
ելնելիս
յըմըն—մի բան որ
յըրըքել—նեղանալ, խոռվել
յիսան—մարդ
յօրի—ինչո՞ւ

ձ'ըցում—խնոցի
ձ'ըցմել—խնոցի հարել
ձ'ի, ձ'իդ—ինձ

ղաթըր—շորի
ղարդառ—ազուավ
ղօլա—հեշտ, դլուրին

ճամփըցուցել—ուղարկել, ճանա-
պարհել

ճավան—անստույգ բառ
ճեղ—աքաղաղ
ճէնջըրդալ—ճարպի հալվելու ժա-
մանակ ձախ հանելը
ճիժ—երեսա

մատղաշ—մատաղահասակ, փոքր,
դալար
մալլում մընալ—զրկվել, զուրկ
մնալ

մանանա—մի բանի հլուժը, էու-
թլունը
մաշ—հող, տերիտորիա
մարիֆաթ—շնորհք
մէղել—մտածել, խորհել
մէժօ—նորածին, փոքր գառ, որի
մալր ոչխարը սատկել է
մէրոց—աման, որով մածուն են
մերում

մըզա—հիմա, ալժմ
մըժ—մառախուղ, մշուշ
մըրզըրել—կեղտոտել, կեղտոտվել
միզար—գողնոց
միս օսկըսին ձեն իդալ—զարհու-
րելի բաներ տեսնելուց՝ սար-
սափելի հուզվել, տառապել
միրաթ—անտեր, անսխտան
մուղաթ կենալ—հսկել, հետեւել
մօրէն մէզ էղնալ—ապաքինվել,
լավանալ, բոլոր վշտերից
ազատվել

լա—կամ
լադ—օտար, օտարակաջ
լադնալ—օտարանալ, խորթանալ
լան—կողմ
լարալու—վերավոր, վերք ունեցող
լեմ—կեր

նալաթ—նզովք, անեծք
նալբանդ—պալտառ
նէ, նա—ոչ
նէչիր—որս

նըհախ—անիրավացի, անարժան
տեղը
նըշանց իդալ—ցույց տալ
նըստել—ապրել, բնակվել
նոր—լուսնի մահիկը

շավթալոր—պարի տեսակ
շարադա—խելք, բանխմաց, հա-
մեստ
շափխել—շփել
շեր—առատածեղ
շըրիք—մրցակից, նախանձախըն-
դիր կողմ
շըքով էղնալ—կասկածել, կասկա-
ծամտել

շուլէֆիդ—աներես, սանձարձակ,
ամեն բանի մեջ ընկնող
շուրվա—ապուր, մսով կամ ա-
ռանց մսի
շօղտուն—շաղացքարի մասերից
մեկը
շօրխախող—շորի ալրվելուց առա-
ջացած հոտը, խանձահոտը

չաթին—դժվար, հուզիչ
չախչախ—ջրադացքարի վրա
փալտի հարմարանք, որը չըխ-
չոխկալով ազդարարում է ջրա-
դացքարի աշխատելը
չախու—դանակ
չալիր—մարգագետին
չարսու—շուկա
չարուխ—տրեխ
չէշիդ—տեսակ, կերպ, պես, նման

չըջըռըռուգ—չփորձված, չփորձած
չըվան—պարան, թիկ
չըփլախ—մերկ
չիշխընալ—չհամարձակվել
չուֆթա—աքացի

Պ

պաղանք կարել (լիս քու պա-
ղանք կարիմ)—անեծք է, նշա-
նակում է մեռնես

պաղել—ընկնել
պառեգ—մեջք
պարգել—ագատվել, երեսա ունե-
նալ

պըլիգ—գրոշ, չնչին, աննշան
գումար

պըսպըսալ—անկայծել

Ջ

ջան—մարմին, անձ
ջընս—ցեղ, ծագում, ազգակցու-
թյուն, տոհմ

ջոչ—մեծ
ջուռա—տեսակ, կերպ

Ռ

ռաստ լիքալ—հանդիպել

Ս

սանք—տեսնենք
սամպա—սեր
սելրագ—նոսր
սէվ—որր
սըխսըխ—սառնամանիք
սըրդանոց—կրծկալ
սըռ—գաղտնիք, սառնամանիք
սինոս—սահման
սուրու—հոտ (ոչխարի), շատ

սուքել—սարքել, պատրաստել
սուկար—կօշկակար

Վ

վախտ-բէվախտ — ժամանակ-ան-
ժամանակ

վարոց—ճիպոտ
վարսանդ—փայտից հարմարանք,
մեծ մուրճի նման, որով ձե-
ծում են սանդի մեջ լցված ցո-
րենը

վէրասա—ապսուխ

Տ

տախտ—հատակ, գետին
տամբուրա—նվագարան
տըղգել—թրջել, թրջվել
տուրիգ—պարկ, տոպրակ
տոմլըկ—թակարկ

Յ

ցան—չորացրած և կտորներով
կտրտած անասնակեղտ, վառում
են գլուղերում, թոնիրներում
(աթար)

Ու

ուհու—բոլորովին
ուպրիան—մերկ, բոլորովին մերկ,
աղքատ

Փ

փոստ—մորթի
փուշի—շղարշ
փօշի—մոխիր
փայան—համես
փայաչի—պարծենկոտ, սնապարծ
փարա—փող, գրամ

փէջ—ուս, թիկունք
փինա—կարկատան

Ք

քաշել—տանել, դիմանալ
քար ու քըռա—քարքարոտ, ան-
հարթ տեղ, քարաշատ վալը

քարջի—խակ պտուղ
քէֆօվնալ—հարբել, գվարճանալ,
ուրախանալ

քէլման—քալելով, քալելիս
քըֆշել—երևալ, թվալ

քի—քեղ
քուլաք—հողի մեծ աման, մածուն
մերկլու համար

քոզ—հոտ, խումբ
քոլ—առանց պողերի
քոք ու բուս—ծնունդը, ծագումը
քօլոզ—փոքր գլխարկ
քօմել—հավաքել, հավաքվել

Յ

ֆըքրել—նախել, ուշադիր դիտել
ֆարա—օգուտ

Օ

օլըրդան—շատ ման եկող, զրոս-
նող
օլոր օր—հետևյալ օրը

*Khalec
noe?*

Բ Ա Ռ Ա Յ Ա Ն Կ

ԳՐԱԲԱՐԻՑ—ՄՇՈ ԲԱՐԲԱՌԻ

Ա.

աղխել — աղբխել
 աղուէսաքուն — աղվըսքուն
 աղուէս — աղվէս
 աղուէսուկ — աղվըսուկ «փոքր,
 խեղճ աղվէս»
 աղուիթ — աղրուիթ «թանկարժեք
 քար, հակինթ»
 աղուն — աղուն
 աղջիկ — ախչիկ
 աղտ — կեխտ
 աղքատ — ախքաղ
 աղքատացուցանել — ախքըտցուցել
 աղքատութիւն — ախքըղութիւն
 աղօթք — աղօթք
 աճ — աջ
 աման — աման
 ամաչել — ամչընալ
 ամաչեցուցանել — ամչըցուցել
 ամաչկոտ — ամչըդոդ
 ամառն — ամառ
 ամբար — ամբար
 ամբարել — ամբըրել
 ամբարձումն — համբարցում

ամեն — յըմէն
 ամենարարի — յըմնուց բարի
 ամենաբարձր — յըմնուց բ'անցըր
 ամենագէտ — ամէնագ'էղ
 ամենազօր — ամէնազօր, յըմնուց
 զօրավոր
 ամենամօտ — յըմնուց մօղ
 ամիրալ — ամիրա
 ամսլ — ամբ
 ամոլ[ք] — ամոլ «լուծ քաշող,
 երկրորդ եզը»
 ամպաշող — ամբշող «ամպամած
 և շող օր»
 ամօթ — ամօթ
 ամօթանք — ամօթանք
 ալբ — ալբ¹
 ալբ — ըղի, իղա, էղ
 ալբչափ — ըղաչափ, իղաչափ
 ալբպէս — ըղապէս, իղապէս,
 իղաչէչիղ
 ալբքան — ըղաքան, իղաքան
 ալլ — էլ
 ալլօր — էլօր

ալծ — էձ
 այն — ընի, ինա, էն
 այն ինչ — էն ինչ
 այնօր — յընօր, էնօր
 այնպէս — էնպէս, ընպէս
 այնտեղ — ինտեղ, ընտեղ
 այնքան — ինաքան, ընաքան
 ալսպէս — ըսպէս, իղապէս
 ալսքան — իղաքան, ըսքան
 ալսօր — յըսօր, սօր
 ալր — իրիկ «ամուսին»
 ալրաթող — իրգաթող, «ամուսնա-
 լուծ»
 ալրել — էրել, իրիցել
 ալրի — օրփէլէրի
 անագան — յանքան «ուշ»
 անագանել — յանքընալ «ուշանալ»
 անալանալ — ալնընալ
 անալի — ալնի
 անամօթ — անամօթ
 անառակ — անառակ
 անասուն — անասուն «խեղճ»
 անարատ — անարաղ 1. առանց
 թիբութիւն մարդ, 2. մաքուր,
 չզտված կաթնեղեն, մթերք
 անարդար — անարթար
 անբարեկամ — անբարէկամ
 անգ — անգ «ծուլ, պղերդ»
 անբախտ — անբ'ախտ
 անբան — անբ'ան
 անգէտ — անգ'էղ
 անդիւղ, անդիւղ — անգ'էղ
 անզղ — յանզղղ, յանձեղ
 անզոթ — անգ'ոթ
 անզօտի — անգ'օղի

անդ — հանդ
 անդամալուծ — անթամալուծ
 անդառնալի — անդ'առնէլի
 անդարձ — անգ'արց
 անդէն — ընդին, ինադէն
 անդունդք — յանդունդք¹
 անզգամ — անըսքամ
 անզգամութիւն — անըսքամութիւն
 անզգամեցուցանել — անըսքամ-
 ցուցել
